Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

354
2-24

1923

ՊՐՈԼԵՏԱՐՆԵ՛Ր ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

30 JUL 2010
354 Հ-24
300 1434-Հ4
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ С.С.Р.А Публичная Библиотека 7/XI 1922 имени А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1003 12034

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ 1920-1922 Թ. Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Ս. Խ. Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի

1923
ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

Հ. Ս. Խ. Հ. Կենտգործկոմի նախագահության ժողովում վորոշվեց կազմակերպել մի խմբագրական հանձնաժողով հրատարակելու ժողովրդական կոմիսարիատների յերկու տարվա գործունեության հաշվետվությունը: Հանձնաժողովը կազմակերպվեց ը. Ա. Կարինյանի նախագահությամբ յեվ ը. ը. Դ. Շահվերդյանի յեվ Ա. Արաբեկյանի անդամակցությամբ: Թեյեվ դժվար, այնուամենայնիվ կոմիսարիատներին աջողվեց ներկայացնել իրենց զեկուցումները: Դըժվար եր նրա համար, վոր նախընթացները չկային յեվ կոմիսարիատները յերկու տարվա ընթացքում ապրել եյին կազմակերպական արագ շրջան: Այս գործն ել բնականաբար ունի իր վորոշ թերությունները, բայց կծառայի պատմության նյութ յեվ որինակ՝ հետագա հաշվետվությունների.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1923 թ. հոկտ. 27.

Յերեվան

# ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## 1920—22 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հ. Ս. Խ. Հ. Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը կազմակերպվել է Խորհրդային Հանրապետության հաստատման օրից, այսինքն 1920 թվի դեկտեմբերի 1-ից, Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսար ընկեր Իսահակ Դովլաթյանի գլխավորությամբ։ Ներքգործժողկոմատի 1920 թվի դեկտեմբեր 12-ի № 1 հրամանով նախկին ներքին գործոց նախարարությունը յենթարկվեց լուծարքի և բոլոր պաշտոնյաները համարվեցին արձակված իրենց պաշտոններից, սակայն նրանց հրահանգվեց մնալ իրենց տեղերում նախկին նախարարության գործերը Ներքգործժողկոմատին հանձնելու համար։ Մինչև Հայաստանի Ս. Խ. Հ. Սահմանադրության մշակվելը, Ներքգործժողկոմատի 1920 թվի դեկտեմբեր 12-ի № 2 հրամանով հաստատվեցին Ներքգործժողկոմատի վերաբերյալ հետևյալ կանոնները։

1. Ներքգործժողկոմատը ներկայանում է բարձրագույն վարչական մարմին հանրապետության մեջ, որի միջոցով Հայաստանի Հեղափոխական Կոմիտեն կառավարում է յերկիրը.

2. Ներքգործժողկոմատի պարտականությունն է յեղել ա) տեղական իշխանության կազմակերպումը, բ) յերկրի ամբողջ կառավարչական ապպարատի կենտրոնացումը և գ) բոլոր պետական հիմնարկությունների վարչական հսկողությունը։

3. Վարչական կարգով բոլոր տեղական հեղկոմները ինչպես գավառներում, նույնպես և քաղաքներում, այդ թվում և Յերևանի քաղաքում, յենթարկվում են Ներքգործժողկոմատին։

4. Բոլոր Հեղկոմների կողմից հրատարակվող ներքին, կառավարության վերաբերվող, հրամաններն ու վորոշումները, ի բաց առյալ այնպիսիների, վորոնցով բացատրվում եր կենտրոնական իշխանությունների հրամաններն ու վորոշումները, հաստատվում եյին Ներքգործժողկոմատի կողմից։

5. Ներքգործժողկոմատը իրավունք ուներ Հայաստանի Հե-

ղափոխական Կոմիտեյի համաձայնությամբ հեռացնել և նշանակել տեղական Հեղկոմների բոլոր անդամներին մինչև Խորհրդի ընտրությունը։

Համաձայն Ներքգործժողկոմատի 1920 թվի դեկտեմբեր 13-ի № 3 հրամանի վերացվեցին հետևյալ հիմնարկներն և պաշտոնյաները. նահանգապետությունները, քաղաքային ինքնավարությունները, գավառական կոմիսարները, նախկին Ներքին Գործերի Նախարարության արտակարգ լիազորները, միլիցիայի տեսուչները, նահանգական ատյանները, հանրապետության միլիցիայի պահեստը բոլոր դրանց մոտ գտնված գրասենյակներով և շտատներով։

Նույն 1920 թվի դեկտեմբեր 14-ի № 4 հրամանով նախկին Ներքին Գործոց Մինիստրության զինվորական գործերի դեպարտամենտը Յերևանի, Եջմիածնի, Նոր-Բայազետի, և Դիլիջանի գավառական զինվորական ատյանները հանձնվեցին Զինվորական Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին։ Նախկին զինվորական գործերի դեպարտամենտը և Յերևանի գավառական զինվորական ատյանը հանձնեցին իրենց գործերը անմիջականորեն Հ. Ս. Խ. Հ. Զինվորական Գործերի Ժողկոմիսարիատին, իսկ մնացած բոլոր վայրերում յեղած զինվորական ատյանները տեղական Հեղկոմներին։

Ներքգործժողկոմատի կազմակերպման հետ զուգընթաց կազմակերպվում եյին գավառական հեղկոմներ, վորոնք և իրենց հերթին հետզհետե կազմակերպեցին շրջհեղկոմներ ապա և գյուղհեղկոմներ։

Ներքգործժողկոմատի առաջադրած խնդիրները ծանր եյին և դժվարին, Ներքգործժողկոմատը պետք է լարեր իր ուժերը բոլոր հինը խորտակելու և դրա փլատակների վրա նոր պետականություն կառուցելու, կազմակերպելու և ընդարձակելու իր աշխատանքները ապա և միաժամանակ պայքարելու հակահեղափոխական տարրերի դեմ։ Ներքգործժողկոմատը դեռ նոր եր մտնում իր կազմակերպչական հունի մեջ, յերբ փետրվարյան հակահեղափոխությունը գլուխ բարձրացրեց, վորը և մեծ խոչընդոտ հանդիսացավ թե աշխատավորության յեվ թե տարվող կազմակերպչական աշխատանքներին։

Փետրվարյան հակահեղափոխության տապալումից հետո, այսինքն 1921 թվի ապրիլ 2-ին, նորից վերսկսվեցին Ներքգործժողկոմատի աշխատանքները. 1921 թվի ապրիլի 4-ի № 1



հրամանի համաձայն փետրվար 18-ից մինչև ապրիլ 2-ը նախկին Ներքին Գործոց մինիստրության բոլոր հրամանները և կարգադրությունները համարվեցին վերացված և նրանց գործադրությունը լիկվիդացիայի յենթարկված։ Նույն հրամանով կարգադրվեց Ներքգործժողկոմատի և նրան յենթակա հաստատությունների բոլոր այն աշխատակիցներին, վորոնք հրավիրված են յեղել պաշտոնի մինչև փետրվար 18-ը՝ մնան իրենց տեղերում և անցնեն իրենց պարտականությունների կատարման։

Կոմիսարիատի աշխատանքների վերսկսման առաջին որերից մոտավորապես մայիսի 7-ին, Ժողկոմխորհի հանձնարարությամբ և Ներքգործժողկոմատի ձեռնարկությամբ հրավիրվեց տնտեսական խորհրդակցություն, վորի նպատակն եր հետզհետե զարգացնել յերկրի քայքայման տնտեսական դրությունը։ Խորհրդակցության որակարգի հարցերն եյին 1. Յերկրի տնտեսական զարգացումը 2. Տնտեսական Կոմիսարիատների միացնելու խնդիրը և 3. Հայաստանի կոոպերացիան։ Խորհրդակցությունը ունեցավ ընդամենը 2 նիստ. կազմվեց համապատասխան արձանագրություն և ներկայացվեց Ժողկոմխորհ։

Գավառների հետ կապը պահպանելու, տեղերում իշխանության կազմակերպության և գավառների պարզ պատկերն ունենալու նպատակով Ներքգործժողկոմատի ձեռնարկությամբ հրավիրվեց Գավհեղկոմների վարչական բաժինների վարիչների առաջին համագումարը, վորը ունեցավ չորս նիստ. համագումարի որակարգի հարցերն եյին.

1. Տեղերում իշխանության կազմակերպումը.
2. Միլիցիայի կազմակերպման խնդիրը.
3. Կապը կենտրոնի հետ։
4. Ընթացիկ հարցեր.

Մինչև Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրության մշակումը տեղերում կազմակերպված Հեղափոխական Կոմիտեների համար Ներքգործժողկոմատի միջնորդությամբ 1921 թվի հունիսի 20-ին Ժողկոմխորհի կողմից հաստատվեց Գավհեղկոմների ժամանակավոր կանոնների վերաբերյալ դեկրետը, վորը և ուղարկվեց Գավհեղկոմներին ի ղեկավարություն։

1921 թվի հունիսի 20-ի Ներքգործժողկոմատի միջնորդությամբ Ժողկոմխորհի կողմից հաստատվեց Հայաստանի վարչական վերաբաժանումների վերաբերյալ դեկրետը, վորի հիման վրա Հանրապետության այժմյան տերիտորիան կառավարչական բո-

լոր ճյուղերի համար վարչական տեսակետից բաժանվում է հետևյալ 33 գավառամասերի։

I. 1. Ղամարլուի, 2. Հախամղալուի, 3. Բաշգյառնիի, 4. Կոտայքի, (կենտրոնը Քանաքեռ) 5. Զանգիբասարի (կենտրոնը Փարաքար) 6. Ախտայի, 7. Սամաղարի, 8. Աշտարակի, 9. Աբարանի (կենտրոնը Ալիքուչակ), 10. Սարդարաբատի (կենտրոնը Ղուրդուղուլի), 11. Թալինի, 12. Մոլլա-Գյոքչայի, 13. Քավթառլուի, 14. Դուզքենտի, 15. Ղզլխչի, 16. Աղբաբայի (կենտրոնը Ղարանամազ), 17.Ջալալողլուի, 18 Ալլահվերդիի, 19. Ուզունլարի, 20. Դողսի, 21. Ղարաքիլիսի, 22. Համամլուի, ·23. Բոզի Քենդի, 24. Դիլիջանի, 25. Իջևանի, 26. Կողքենդի, 27. Շամշադինի (կենտրոնը Թաուզղալա), 28. Կարմիր գյուղի, 29. Բասար-Գեչարի, 30. Ղարանլուղի, 31. Նոր-Բայազեդի, 32. Քեշիշքենդի, 33. Գնդեվազի։

II. Առաջին հոդվածում հիշված գավառամասերը կազմում են 8 գավառ.

ա) Յերևանի գավառը կազմում են հետևյալ գավառամասերը.

1. Ղամարլուի, 2. Ահամղալուի, 3. Բաշգյառնիի, 4. Կոտայքի և 5. Ախտայի։

բ) Եջմիածնի գավառը կազմում է՝ հետևյալ գավառամասերը.

1. Զանգիբասարի, 2. Սամաղարի, 3. Աշտարակի, 4. Աբարանի, 5. Սարդարաբատի, 6. Փարաքարի։

գ) Ալեքսանդրապոլի գավառը.

1. Թալինի, 2. Մոլլա-գյոգչայի, 3. Քավթառլուի, 4. Դուզքենդի, 5. Աղբաբայի։

դ) Ղարաքիլիսայի գավառը.

1. Ղարաքիլիսայի, 2. Համամլուի, 3. Բոզքենդի։

ե) Լոռու գավառ Ջալալողլի կենտրոնով։

1. Ջալալողլուի, 2. Ալլահվերդիի, 3. Ուզունլարի, 4. Դսեղի։

զ) Իջևանի գավառը.

1. Իջևանի, 2. Դիլիջանի, 3. Կոտքենդի, 4. Շիմշադինի և 5. Կարմիր գյուղի.

ը) Նոր.Բայազեդի գավառը.

1. Նոր-Բայազեդի, 2. Ղարանլուղի, 3. Բասարգեչարի։

թ) Դարալագյազի գավառ Քեշիշքենդ կենտրոնով.

1. Քեշիշքենդի և Գնդեվազի։

III. Յերևան քաղաքը Յերևանի գավառի մեջ չի մտնում և



վարչական տեսակետից գավառին համապատասխան առանձին միավոր է կազմում։

IV. Ալեքսանդրապոլ և Նոր-Բայազեդ քաղաքները մտնելով նույն անուն գավառների մեջ վարչական տեսակետից իրենց գավառամասերում համապատասխան միավորներ են կազմում։

V. Գավառամասերի սահմանների փոփոխումը, ղոցա նոր կենտրոնների վորոշումը, գավառամասերի վերաբաժանումը, գավառների միջև, վերջիններիս նոր կենտրոնների վորոշումը և գավառից կամ գավառամասերից քաղաքների զատումը կատարում է Հայաստանի Ժողկոմների Խորհուրդը Ներքգործժողկոմի առաջարկությամբ և համապատասխան գործկոմի միջնորդությամբ։

VI. Հ. Ս. Խ. Հ. բնակված վայրերի ցուցակը ըստ գավառամասերի կազմում և պահում է Ներքգործժողկոմատը։

Համաձայն Ներքգործժողկոմատի կողմից Ժողկոմխորհ ներկայացրած Հ. Ս. Խ. Հ. տերրիտորիայի վարչական վերաբաժանման դեկրետի փոփոխման ու լրացման մասին՝ դեկրետի, վորը հաստատվեց Ժողկոմխորհի կողմից 1921 թվի ոգոստոս 16-ին Յերևան գավառը կազմում են հետևյալ գավառամասերը.— 1. Ղամարլուի, 2. Վեդի բասարի (Բույուք վեդիի կենտրոնով), 3. Ախամղալուի, 4. Բաշգյառնիի 5. Կոտայքի և Ախտայի։

Համաձայն Ներքգործժողկոմատի կողմից Ժողկոմխորհ ներկայացրած 1921 թվի ոգոստոս 31-ին Զանգեզուրի գավառը կազմելու մասին դեկրետի՝ Զանգեզուրի Հ. Ս. Խ. Հանրապետությանը կցված մասից կազմվում է առանձին Զանգեզուրի գավառ (կենտրոնը Գորիս) բաղկացած հետևյալ գավառներից . Գորիսի, Դխի. Տեղ Տաթևի, Սիսյանի, (կենտրոնը Բռնակոթ), Ղափանի (կենտրոնը Ղաթարի գործարանները) և Մեղրիի։

Համաձայն Ժողկոմխորհի կողմից 1921 թվի սեպտեմբեր 15-ին Ներքգործժողկոմատի վերաբերյալ հաստատված կանոնադրության՝ Ներքգործժողկոմատն ուներ հետևյալ մասերը.- Կոլեգիա, Գործերի կառավարություն, Իրավախորհրդական մաս, Վարչակազմակերպչական, Տեղեկատու-վիճակագրական, Կոմունալ, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման, Ֆինանսական բաժինները և Միլիցիայի գլխավոր վարչությունը։

Սակայն վերջերս հաստատված կանոնադրության և շտատների կրճատման և փոփոխությունների համաձայն Ներքգործ-

ժողկոմատը բաղկացած է հետևյալ բաժիններից.— Ընդհանուր բաժին, Վարչակազմակերպչական, Կոմմունալ Տնտեսության, Գաղթականական, Ֆինանսական, Միլիցիայի, Քրեական ու Ուղղիչ աշխատանքի բաժիններ։

**Կոլլեգիա.** Ներքգործժողկոմատի կոլլեգիան գոյություն ունի 1921 թվի սեպտեմբեր 15-ից, սակայն ակտիվ աշխատանքի անցել է 1922 թվի հունվարից։

Քննված հարցերից ամենակարևորներն յեղել են.
Գավգործկոմների հարուցված հարցեր.
Վարչական միավորների փոփոխություններ.
Միլիցիայի կազմակերպումը.
Գաղթականության փոխադրություն.
Տեղերում իշխանություն կազմակերպելը.
Միլիցիայի բարելավումն և այլն։

**Ընդհանուր բաժին գործերի կառավարություն.**—Ներքգործժողկոմատի ընդհանուր բաժինը Գործերի կառավարությունը բաղկացած է կենտրոնական դիվանից, Տնտեսության յենթաբաժնից ու Պահեստային մասից։ Այս բաժնում կենտրոնացած է Ներքգործժողկոմատի և դրան յենթակա քաղաքացիական հիմնարկությունների և հանրապետության ամբողջ միլիցիայի շտատների մշակման և բոլոր պաշտոնյաների հաշվառման գործը։

**Ընդհանուր բաժնի կենտրոնական դիվան.**—Կենտրոնական դիվանի իրավասության ներքո գտնվում է շարքային մասի հրամանների վարելը, վորոնք կրել են հատկապես աշխատակիցներին այս կամ այն պաշտոնին նշանակելու, պաշտոնից ազատելու, գործուղման մեկնելու և վերադառնալու, շտատների փոփոխության հետ կապ ունեցող, ձիերին կերի առհաշվելու և այլ զանազան հրահանգչական բնույթ։

**Տնտեսնյության յենթաբաժին.**— Տնտեսնյութային յենթաբաժինը կազմակերպվել է 1922 թվի սեպտեմբերի 1-ից։ Տնտեսնյութային յենթաբաժինը իր կազմակերպված որից ընդհանրապես զբաղվել է Ներքգործժողկոմատին, Գավգործկոմներին և հանրապետության միլիցիայի կահ-կարասիքով, հագուստեղենով, վառելափայտով, ձիերի կերով, գրասենյակային պիտույքներով, շինարարական և այլ նյութեր մատակարարելով։

Իրերի և նյութերի հաշվառումը այդ յենթաբաժնում տարվում է խիստ զինվորական ձևով, կատարելով նրանց ընդունելությունը և բաց թողնելը համապատասխան օրդերներով և տնտեսական հրամաններով։



**Վարչակազմակերպչական բաժին.**— Վարչակազմակերպչական բաժինը բաղկացած է հետևյալ յենթաբաժիններից—Ինֆորմացիոն—հրահանգչականից, Զագս յենթաբաժնից և Խորհրդատու իրավաբանական մասից։

Վարչակազմակերպչական բաժինը իր կազմակերպչական շրջանում գլխավոր ուշադրությունը դարձրել է Ներքգործժողկոմատի բոլոր այլ բաժինների և յենթաբաժինների ֆունկցիաների սահմանափակման վրա, վորովհետև տեղերից ստացված բոլոր կազմակերպչական բնույթ կրող զեկուցումները և այլ նյութերը հանձնվում եյին Ն. Գ. Ժ. Կ. զանական բաժինները և յենթաբաժինները, վորտեղ այդ նյութերը հաճախ իրենց ցանկացած նպատակներին չեյին հասնում։ Շնորհիվ վարչակազմակերպչական բաժնի վերաբերյալ հաստատած կանոնադրության՝ բաժնի ֆունկցիաները վորոշվեցին և ապա հետզհետե Կոմիսարիատի աշխատանքները իրենց նորմալ հունի մեջ մտան։

Առաջին իսկ հերթին տեղերում իշխանության կազմակերպման նպատակով անհրաժեշտ գտնվեց մշակել կանոնադրություններ, վորպեսզի տեղական մարմինները ղեկավարվեյին վորոշ կանոնադրություններով, վորտեղ պարզ սահմանադրված լինի նոցա ֆունկցիաները և աշխատանքները։ Այդ նպատակի համար բաժնի կողմից կազմվեցին գյուղխորհուրդների, շրջգործկոմների և վարչական բաժինների վերաբերյալ կանոնադրություններ, վորոնք ի վերջո հաստատվեցին Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից։ Վորովհետև Գյուղխորհուրդների աշխատանքները հարկ յեղած բարձրության վրա չեյին դրված և Գյուղխորհրդների նախագահները վոչ մի գաղափար չունեյին թե իրենց և թե Գյուղխորհուրդների ֆունկցիաների մասին, բաժինը իրեն հաճախակի շրջաբերականներում մատնանշում եր Գավգործկոմների վարչբաժիններին ամիս ամիս կոնֆերանսներ հրավիրելու անհրաժեշտության մասին և բացատրում Գյուղխորհուրդներին իրենց ֆունկցիաները։

Գյուղացիությունը Խորհրդային իշխանության գաղափարներին ծանոթացնելու և գյուղացիական լայն մասսաները տեղական իշխանության մերձեցնելու նպատակով, բաժինը իր շրջաբերականներով մատնանշում եր նաև յուրաքանչյուր ամիս գավառակային անկուսակցական կոնֆերանսներ հրավիրելու անհրաժեշտությունը, բացատրում եր Խորհրդային իշխանության հիմնական օրենքը, սահմանադրությունը ու ծանոթացնում Խորհրդային շինարարության ծրագրին։

Գավգործկոմների քարտուղարության աշխատանքները գրեթե բոլոր գավառներում ձուլված էին վարչ-բաժնի աշխատանքներին և վարչ-բաժնի ֆունկցիաներին ենթակա աշխատանքները հաճախ կատարվում էին Գավգործկոմի քարտուղարության կողմից, որը քաոսային վիճակ էր առաջացնում վարչ-բաժնի աշխատանքների մեջ։

Վարչ-բաժնի և Գավգործկոմների քարտուղարությունների ֆունկցիաները սահմանափակելու համար տրվում էին բացատրություններ, ուր պարզ մատնանշվում էր Գավգործկոմների քարտուղարությունների և վարչ-բաժինների աշխատանքները իրարից զատելու պահանջը։

Բաժնի կազմակերպման սկզբնական շրջանում գավառները և տեղերը միանգամայն զուրկ էին կենտրոնի հետ կանոնավոր կապ պահպանելու հնարավորությունից, ուստի Ներքգործժողկոմատը հնարավորություն չուներ վերստուգելու տեղերում կատարվող աշխատանքները։

Կապը կենտրոնի հետ չափազանց թույլ լինելու պատճառով Ներքգործժողկոմատում չէին ստացվում գավառներից ոչ զեկուցումներ, ոչ նիստերի արձանագրություններ և այլն։ Այդ բացի վրա դարձվեց հատուկ ուշադրություն և աջողվեց ի վերջո կանոնավորել կապը կենտրոնի և գավառների հետ։ Նույն երևույթը նկատելի էր նաև Գավ և Շրջգործկոմների միջև։ Պարբերական և հերթականորեն տեղացող շրջաբերականներով, պահանջներով, հորդորանքներով Գավգործկոմների մեջ արթնացվեց այդ պահանջի անհրաժեշտությունը, և դրանք իրենց հերթին ձեռք առնելով անհրաժեշտ միջոցներ, կարողացան կապը սերտ ու կանոնավոր հիմքերի վրա դնել։ Ասել որ ցանկալի հետևանքների հասանք՝ չի կարելի, բայց որ արդեն իշխանության կենտրոնացման կարևոր սկզբունքը իրականանում էր՝ դա ևս փաստ է։

Գավգործկոմներից ստացված արձանագրություններից երևում էր, որ շատ Գավգործկոմներ չէին ունենում պարբերական խորհրդակցություններ և նույա խորհրդակցությունները կրում էին հաճախ պատահական բնույթ։ Այդ հարցը կանոնավորելու և Գավգործկոմների խորհրդակցությունները պարբերական դարձնելու համար բաժնի կողմից մի շարք շրջաբերական կարգադրություններ ե արված՝ հրավիրելու շաբաթական նախագահության և ամիսը մի անգամ Գավգործկոմների խորհրդակցու-



թյուններ։ Բացի այդ՝ մշակված են խորհրդակցությունների հրավիրելու կարգի մասին հրահանգներ, որը և ուղարկված է Գավգործկոմների քարտուղարներին։ Որովհետև Շրջգործկոմների և Գավգործկոմների հաշվետվությունները չէին կազմվում միատեսակ ձևերով, ուստի և բաժինը մշակեց Գավգործկոմների և Շրջգործկոմների համար առանձին հաշվետվության ձևեր, ըստ որում Գավգործկոմները ամիսը մեկ անգամ պետք է ներկայացնեն իրենց հաշվետվությունը Ներքգործժողկոմին, իսկ Շրջգործկոմները յերկու շաբաթը մեկ անգամ՝ Գավգործկոմներին։ Այդ ձևերը հատուկ շրջաբերականով ուղարկված են գավառները։ Այդպիսի ձևեր մշակված են 8—ը։

Չնայած որ արդեն կապը հաստատվել էր, բայց և այնպես Գավգործկոմները բոլոր իրենց դիմումները, առանց Ներքգործժողկոմատի գիտության, անմիջականորեն ուղղում էին Ժողկոմխորհ և Կենտգործկոմ, որտեղ որևէ Գավգործկոմի վերաբերյալ հարցերը քննելիս Ներքգործժողկոմը, որը հանդիսանում էր Գավգործկոմներին մշտական զեկուցողը, տեղյակ չլինելով քննըվող հարցի մասին՝ չէր կարողանում տալ անհրաժեշտ տեղեկություններ և իր դիտողություններն ու կարծիքը։ Այդ հարցը միանգամ ընդ միշտ կանոնավորելու նպատակով բաժինը մշակեց Գավգործկոմների կենտրոնի հետ կապ պահպանելու վերաբերյալ դեկրետի օրինագիծը, որը և ի վերջո հաստատվեց Ժողկոմխորհի կողմից։

Բաժնի կազմակերպման առաջին օրերին մեծ կարիք էր զգացվում պաշտոնական օրգանի (բյուլետեն), հրատարակելու համար Ներքգործժողկոմի բոլոր կարևորագույն կարգադրությունները և շրջաբերականները, որի կարիքը գավառների համար խիստ զգալի էր։ 1922 թվից սկսեցին լույս տեսնել Ներքգործժողկոմատի բյուլետենները, որտեղ զետեղվում էին Կենտգործկոմի և Ժողկոմխորհի դեկրետները ու որոշումները, նմանապես Ներքգործժողկոմատի որոշումներն ու շրջաբերական կարգադրությունները։ Բյուլետենի յուրաքանչյուր համարն ունի Գավգործկոմների աշխատանքների վերաբերյալ հատուկ մաս, որտեղ զետեղվում են տեղերից ստացված տեղեկությունները տեղերի աշխատանքների մասին։ Բյուլետենի առաջադրած նպատակները մեծ են, սակայն մենք դեռ ևս չենք կարողացել այդ նպատակին հասնել։ Գլխավոր բացը Խորհրդային իշխանության, նրա ձևակերպման առօրյա հրատապ խնդիրների լուսաբանման

նվիրված հոդվածների բացակայությունն է։ Բացի այդ՝ բյուլետենը պետք է դառնա մեր հանրային կյանքի հայելին, նրա մեջ պետք է հասարակական աշխատանքն ամբողջովին արտացոլվի։ Այդ բացերը ծածկելու համար համապատասխան միջոցներ ձեռք են առնված։

Գավառներից վիճակագրական տեղեկություններ ստանալու համար—հանցագործության՝ բանդիտիզմի, բնակչության կազմի և այլ նման հարցերի վերաբերյալ կազմվեցին տախտակներ. գավառներից պահանջվեցին տեղեկություններ հանրապետության վարչական վերաբաժանման մասին, վորը և ուղարկվեց Մոսկվա Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. վարչական վերաբաժանման վերաբերյալ հավաքածույի մեջ զետեղելու։ Պահանջված է ազգության դրության մասին տեղեկություններ։

Բացի այդ՝ բաժնի կողմից պարբերաբար ուղարկվում եյին շրջաբերական կարգադրություններ և բացատրություններ ընթացիկ կյանքի հերթական հարցերի վերաբերյալ, ինչպես որինակ՝ անտառների պահպանման, սերմանման նյութերի հավաքման, միլիցիան հարկ յեղած բարձրության վրա դնելու, միլիցիայի շարքերում անգրագիտությունը վերացնելու, միլիցիայի կողմից հարկային մարմիններին աջակցություն ցույց տալու, վարչական որգանները դատական ֆունկցիաների մեջ չմիջամտելու, արգելատները կարգի բերելու, կոմդեզի ներկայացուցիչներին դասալիքներ ձերբակալելու գործում աջակցություն ցույց տալու և այլնի մասին։

Բաժինը մեծ ուշադրություն է դարձրել նաև վարչական և դատական մարմինների փոխհարաբերությունները պարզելու հարցի վրա։ Հաճախ դատական բնույթ կրող հարցերը լուծվում եյին Գավգործկոմներում, վորով տեղիք եր տրվում թյուրիմացությունների և ընդհարումների դատական մարմինների միջև մեկ կողմից և վարչական որգանների՝ մյուս կողմից։ Այդ հարցը նույնպես կանոնավորելու համար բազմիցս անգամ շրջաբերականներով և ներշնչումներով մատնանշված և պարզաբանված է Գավգործկոմների վարչ-բաժիններին չմիջամտել դատական մարմինների գործունեության մեջ և միանգամ ընդ միշտ ըմբռնել իրենց պարտականությունները և ֆունկցիաները։

Շնորհիվ Ներքգործժողկոմատի ձեռք առած միջոցներին վերջնականապես աջողվեց հարթել և այդ թերությունները, վորից հետո թե վարչական և թե դատական մարմինների աշխատանքները կատարյալ նորմալ ընթացք ստացան։



Բացի այդ բոլորից՝ Դաշնակցային Խորհրդի, Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից հրատարակված բոլոր կարեվոր դեկրետների վերաբերյալ ուղարկված են հարկ յեղած պարզաբանությունները, ինչպես և Ժողկոմխորհի, Կենտգործկոմի, պետպլանի նիստերի արձանագրությունների պատճենները ուղարկված են բոլոր գավառներին։

Ի զարգացումն տեղերում իշխանության կազմակերպման և կանոնավոր կապ հաստատելու հարցերին Ներքգործժողկոմատի ձեռնարկությամբ հունիս 1—ին հիմնվեց Գավգործկոմների վարչբաժինների վարիչների 2—րդ խորհրդակցությունը։ Համագումարում լսվեցին տեղերի զեկուցումները և քննվեցին իշխանության կազմակերպման հետ կապ ունեցող հետևյալ կարեվոր հարցերը. 1. Ներքգործժողկոմատի խնդիրները ըստ նոր քաղաքականության, 2. Ներքգործժողկոմատի վարչկազմակերպչական բաժնի ֆունկցիաները, կազմակերպչական հարցեր, 3. Միլիցիա ա) միլիցիայի խնդիրները բ) քրեական միլիցիան և նրա կոնստրուկցիան և գ) միլիցիայի զտումը։ 4. Վարչական և Արդարադատության մարմինների փոխհարաբերությունները, 5. Ներքգործժողկոմատի Գավվարչբաժինների և գավառակային Գործկոմների ու Գյուղխորհուրդների կանոնադրությունը և 6. Ընթացիկ հարցեր։ Այդ բոլոր հարցերի վերաբերյալ հանվեցին մի շարք բանաձևեր, վորոնք և կիրառվում են կյանքի մեջ։ Համագումարի շնորհիվ Ներքգործժողկոմատին աջողվեց ավելի ես կանոնավոր հիմքերի վրա դնել Կենտրոնի և տեղերի կապը, կազմակերպել իշխանությունը տեղերում և բարձրացնել դրանց աշխատանքի ընդունակությունները։

Վորովհետև վերջին ժամանակներս Հայաստան յեկան շատ տաճկահպատակներ և նրանցից շատերը կեղծ փաստաթղթերով ոգտվում եյին ոտարահպատակների արտոնություններով, բաժինը անհրաժեշտ գտավ հաշվի առնել և վերստուգման յենթարկել նոցա անցագրերը։ Ներքգործժողկոմատը մշակեց հատուկ որինագիծ ոտարահպատակների ցուցակագրման մասին, վորը հաստատվեց Ժողկոմխորհի կողմից։ Այդ վորոշման հիման վրա Ներքգործժողկոմատը մշակեց մի շարք հրահանգներ, անկետաներ և ինքնության վկայականներ (Удостов. личности), վորը հատուկ շրջաբերականներով ուղարկեց Գավգործկոմներին և կարգադրեց կատարել ցուցակագրություն ու տալ ոտարահպատակներին ինքնության վկայականներ։

Գավառներից բազմիցս ստացված բողոքներից յերևում եր, վոր տեղերում գտնվող Ամերկոմի ներկայացուցիչները չեն կատարում կենտրոնի դեկրետները և վորոշումները, վորի հետևանքով Գավգործկոմի և Ամերիկյան Կոմիտեյի ներկայացուցիչների միջև հաճախ տեղի յեր ունենում կոնֆլիկտներ։ Ներգործժողկոմատն այդ դրությունը կարգավորելու համար անհրաժեշտ գտավ մշակել Ամերիկյան Կոմիտեյի և տեղական իշխանության փոխհարաբերությունների վերաբերյալ կանոնադրություն։

Բաժինը չունենալով Հայաստանի ճիշտ քարտեզը իր գավառների և գավառակների ճիշտ սահմաններով, վորը խիստ կարևոր եր վոչ միայն հաստատությունների, այլ և դպրոցների համար՝ դիմեց դրա հրատարակման։

Վարչակազմակերպչական բաժինը մշակել ե նաև բազմաթիվ դեկրետների և հրահանգների նախագծեր, վորոնք ներկայացվել են Ժողկոմխորհ ու Կենտգործկոմ ի հաստատություն։

Վարչակազմակերպչական բաժինը մինչև օրս չի մշակել Գավգործկոմների կանոնադրությունը, վորովհետև Ռուսաստանում այդ կանոնադրության և կոնստրուկցիայի փոփոխությունները քննության շրջանումն են, ուստի և բաժինը հետաձգեց նրա մշակումը մինչև կոնստրուկցիայի վերջնական լուծումը Ռուսաստանում։ Ստանալով մինչև օրս Ռուսաստանից դիրեկտիվներ այդ կոնստրուկցիայի մասին՝ բաժինը արդեն անցել ե կանոնադրության մշակման աշխատանքներին, վորը մոտ ապագայում կներկայացվի Կենտգործկոմին ի հաստատություն։

Հաճախ Ներքգործժողկոմատի միլիցիայի բաժնի և գավգործկոմների վարչ-բաժինների միջև տեղի եյին ունենում խոշոր կոնֆլիկտներ։ Շնորհիվ մեր բազմիցս Գավգործկոմներին, վարչ-բաժիններին արած շրջաբերական-ներշնչումներին՝ աջողվեց վերացնել և այդ բացերը։

Բացի այդ բոլորից բաժինը տեղերից ստացված արձանագրություններում և զեկուցումներում մատնանշված ու լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ինֆորմացիոն բաժնի միջոցով անում ե քաղվածքներ և հատուկ գրությամբ ուղարկում այդ քաղվածքները համապատասխան Ժողկոմատներ, խնդրելով լուծել շոշափված հարցերը ու բոլոր լուծում ստացող հարցերի մասին իրազեկ ե պահում գավառները։

**Կենտրո—Զագս յենթաբաժին.**—Կենտրո-Զագսը դեռ 1921 թվից սկսած բոլոր Գավգործկոմներին կից կազմակերպել ե գավզագսեր, վերջերս էլ շրջ-զագսեր։ Գավ-զագսերի ստատիստիկական աշխատանքները բավարար եյին միայն մի քանի գավառներում։ Մի շարք տեխնիկական անհարմարությունների պատճառով չի աջողվել ամենայն հեշտությամբ գրանցման յենթարկել բոլոր քաղաքացիական ակտերը։ Իր հերթին Կենտրո-Զագսը լուրջ ուշադրություն ե դարձրել գրանցման գործին, և այդ ուղղությամբ մինչև այժմ ուղարկել ե Գավզագսերին մոտավորապես 86 շրջաբերականներ։



Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
1003
12034

Կենտրո-Զագսի ներկայացրած վիճակագրական տեղեկություններից յերևում ե վոր գրանցման գործը գավառներում օրեց օր ավելի կանոնավորվում ե և համարձակ կարելի յե ասել, վոր մոտ ապագայում բոլոր զագսերը, շնորհիվ ձեռք առած մի շարք կտրուկ միջոցների, ավելի դրական գործունեություն կունենան։

Ստորև բերում ենք Կենտրո-Զագսում ստացված քաղաքական ակտերի հավաքածուն 1922 թ. հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 26-ը։

| Գ ա վ ա ռ | | Ծնունդ | Մ ա հ | Ամուսնութ. | Ապահարզան |
|---|---|---|---|---|---|
| 1. Յերևանի | գավառ | 946 | 866 | 842 | 76 |
| 2. Էջմիածնի | » | 461 | 536 | 194 | 5 |
| 3. Ալեքպոլի | » | 879 | 472 | 225 | 33 |
| 4. Նոր-Բայազեդի | » | 1540 | 795 | 401 | 11 |
| 5. Ղարաքիլիսայի | » | 1120 | 716 | 580 | 6 |
| 6. Իջևանի | » | 193 | 222 | 69 | 8 |
| 7. Ջալալօղլուի | » | 245 | 184 | 88 | 16 |
| 8. Դարալագյազի | » | 112 | 94 | 72 | 7 |
| 9. Զանգեզուրի | » | 131 | 230 | 271 | 10 |
| Ընդամենը | | 5627 | 4115 | 2706 | 172 |

**Գաղթականական բաժին.**—Գաղթականական բաժինը (նախկին եվակ· բաժինը) կազմակերպվել և 1922 թ. մարտի 10-ին սակայն ակտիվ աշխատանքի անցել ե 3--4 ամսից հետո։

Նրա աշխատանքը յեղել ե հետևյալը.

1. Յեկատերինոդարից և Կուբանից յեկած սասունցի և մըշեցի գաղթականությունը տեղավորված ե Սարդարաբատի շրջանում թվով 560 անձ։

2. Յերևանի Կոտայքի շրջանն է տեղափոխված 223 անձ անգործ և անտուն շրջիկ գաղթականներ։

3. Պարսկաստանից յեկած գաղթականությունը, թվով 850 անձ, տեղավորված է Ղամարլուի շրջանի Թոփախկալա, Ջաննատլու և Հրազդանի շրջանի Ղարադաղլու գյուղում։

4. Միջագետքից յեկած գաղթականությունը, թվով 7000 անձ, տեղավորված է Վեդի-Բասարի շրջանում։

5. Ղամարլուի և Սարդարաբատի շրջանն է տեղափոխված 110 անձ գաղթականություն։

6. Նախիջևանից տեղավորված է Կոտայքի շրջանը Պարսկաստանից յեկած Ղարադաղցի գաղթականությունը, թվով 43 անձ։

7. 1922 թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներում Ղարաքիլիսայի գավառից տեղավորված է Նոր-Բայազեդի գավառի Բասար-Գեչարի շրջանը 2424 անձ իրենց շարժական ունեցվածքով, վորոնք բաղկացած են հետևյալից.

1. Կով . . . . . . . . . . 104
2. Վոչխար . . . . . . . . . 52
3. Հորթ . . . . . . . . . 50
4. Յեղ . . . . . . . . . 31
5. Եշ . . . . . . . . . 1
6. Սայլ . . . . . . . . . 37
7. Այծ . . . . . . . . . 97
8. Կթու գոմեշ . . . . . . . 10
9. Լծու գոմեշ . . . . . . . 15

Վերջին խմբակը բոլոր խմբակների մեջ տնտեսական դրությամբ վորոշ առավելություններ ունի։ Մնացած բոլոր վեց խմբակների դրությունը շատ աննախանձելի է և համարյա՝ կրիտիկական։ Նրանք բոլորն էլ զուրկ են ապրուստի միջոցներից և օգնության մեծ կարիք են զգում։

**Կոմմունալ բաժին.**—Կոմմունալ բաժնի կարիքը խիստ ըզգալի յե յեղել թե Ներքգործժողկոմատի և թե գավառների համար, սակայն մի շարք տեխնիկական անհարմարությունների հետևանքով բաժինը մինչև այժմ կազմակերպված չի յեղել։ 1922 թվի նոյեմբեր ամսում կազմակերպվեց Ներքգործժողկոմատին կից Կոմմունալ բաժին, վորը մշակել և ուղարկել է իրեն յենթակա Կոմմունալ յենթաբաժիններին մի շարք հրահանգներ և ցուցմունքներ ու արդեն կանոնավոր կապ է հաստատել գավառների հետ։



## ՄԻԼԻՑԻԱՅԻ ԲԱԺԻՆ

Միլիցիայի բաժինը բաղկացած է Պարետությունից, Տեսչային և ընդհանուր յենթաբաժիններից, միլիցիայի պահեստից և դասընթացքներից։

Միլիցիայի քաղաքական քարտուղարությունը փաստացի գոյություն ունի 1923 թ. սկզբից, սակայն նա իր աշխատանքները նորմալ կերպով չի տարել, վորովհետև քարտուղարության պետերը, վորոնք նշանակվել են այդ աշխատանքները տանելու իրենց պաշտոններում, չեն մնացել նույն իսկ յերկուական ամիս։ Վորովհետև Հայաստանի Միլիցիան համարյա ամբողջ կազմով մնացել է նախկին կառավարությունից, նրա շարքերում կային շատ անհարազատ և ոչ պրոլետարական տարրեր, վորոնք իրենց հակահեղափոխական գործունեությամբ գցում եյին Կարմիր Միլիցիայի վարկը, միանգամայն օտար լինելով բանվորա-գյուղացիական դասակարգին։ Այս հանգամանքը քաղաքական քարտուղարության առաջ դրեց մի կարևոր խնդիր՝ այն է միլիցիայի զտում։

Այդ բարոյական քայլը միանգամայն բարձացրեց Միլիցիայի վորակը, ի հաշիվ նրա քանակի։ Միլիցիայի շարքերից հեռացվեցին բոլոր օտար և անհարազատ տարրերը, վորոնք գյուղացիական կուլակ դասակարգի կողմից մտած լինելով Միլիցիայի շարքերը՝ կազմալուծում և վարկաբեկում եյին նրան։

Զտման աշխատանքը տվեց դրական հետևանք, Միլիցիայի 40-ից 15 տոկոսը վտարվեց նրա շարքերից։

Այնուհետև քարտուղարությունը անցավ հերթական և վոչ պակաս կարևոր աշխատանքի՝ Միլիցիայի զարգացման գործին։ Հարվածային կերպով կազմակերպվեց թե գրական և թե քաղաքական անգրագիտության վերացման աշխատանքը. բոլոր գավառներում նշանակվեցին— գավառի կենտրոններում՝ քաղխմբեր և գավմասերում՝ քաղղեկավարներ։ Քարտուղարությունը կենտրոնից ուղարկում եր նրանց հրահանգներ, ծրագրային և զանազան պլաններ։ Կազմակերպվեցին մի շարք լեկցիաներ ու ներկայացումներ։ Այդ հարվածային աշխատանքի հետևանքը յեղավ այն, վոր այժմս անգրագիտությունը 85 տոկոսով Միլիցիայի շարքերից արդեն վերացված է։

Ի նկատի ունենալով հրամանատարական կազմի աշխատանքների կարևորությունը կենտրոնում կազմակերպվեց հր-

րամկազմի դասընթացքներ, վորտեղ սովորում են 40 կուրսանտներ։ Նրանք բոլորն էլ ընտրված են միլիցիոներական շարքերից և սոցիալապես նրանք բոլորն էլ բանվորներ ու գյուղացիներ են։

Բացի այդ՝ բոլոր գավառներում կազմակերպված են դրադարաններ և ընթերցարաններ, թատրոնական հնարավոր հարմարություններ։

1922 թ. նոյեմբերի 12-ը հայտարարվեց Միլիցիայի Օր, այդ օրը Միլիցիան կազմակերպված շարքերով դուրս յեկավ փողոց և ցույց տվեց մասսային, վոր նա այժմ կազմակերպված մի ուժ է, վոր ամեն րոպե պատրաստ է խեղդել ամեն մի հակահեղափոխական քայլ։ Այդ օրը Միլիցիան ընդունեց հանդիսավոր յերդում և դրոշակներ։ Հրատարակվեց մի օրյա թերթ «Կարմիր Միլիցիայի Օրը», վորի մեջ զետեղվեցին անգրագիտության ու խավարի ճանկերից ազատված միլիցիոներների նկարները, նրանց նամակները թերթին ուղղված, նրանց լուսավորման խնդրի շուրջը հոդվածներ և այլն։

Մինչև 1922 թ. մայիս ամիսը միլիցիան ժողովրդի լայն մասերի հետ շփվելով, իր պարտականությունները կատարում եր սովորական հագուստով, չունենալով արտաքին վորևէ ձև և վոչնչով չեր զանազանվում մասնավոր քաղաքացիներից։ Այդ հանգամանքը Միլիցիայի աշխատանքի շրջանում ստեղծում եր թյուրիմացություններ քաղաքացիների նկատմամբ այս կամ այն կարգադրությունները կյանքում իրականացնելիս։ Դրա համար անհրաժեշտ յեղավ ստեղծել Միլիցիայի հագուստեղենի միակերպում, մշակվեց նրա համար նոր տարազ, վորը այժմս կրում է Միլիցիան իր պարտականությունների կատարման ժամանակ։

Միլիցիան սկզբնական շրջանում ապրում եր տնտեսական ծանր օրեր. նա վոչ թե չեր ստանում ապրուստի առնվազն միջոց, այլ զուրկ եր զինվորական պայոկից, ֆուրաժից, հագուստեղենից և այլն։ Տեղերում Միլիցիան ստանում եր պարեն Գավպարկոմներից, սակայն անկանոն կերպով։ Միլիցիային չեր տրվում այն, ինչ վոր ստանում եր խորհրդային աշխատավորը, վորովհետև ձևականորեն նա ստանալու յեր թիկունքի զորամասի պայոկ, վոր պիտի ստանային տեղական Գավզինկոմներից։ Սակայն ինչ հանգամանքներով այդ պայոկը նա չեր ստանում։ Միլիցիան չուներ անհրաժեշտական փոխադրական միջոցներ, լայնատարած գավառներում իր պարտականությունները տանում եր



հետիոտն կերպով, զուրկ եր նաև դրամական միջոցներից։ Կազարմային կյանքը միանգամայն անկանոն եր, իսկ շատ տեղերում՝ բոլորովին գոյություն չուներ։

Այժմ Միլիցիան փոխադրական միջոցներով— ձիերով և թամբերով բավարարված է 15 տոկոսով, պարենավորման խնդիրը կանոնավորված է, Միլիցիան ամսական ստանում է ռոճիկ և հաց. հագուստեղենով նա բավարարված է 20 տոկոսով։ Կազարմաների վերանորոգման համար Գավմիլիցիային տրված է անհրաժեշտ նյութեր, անկողինային հարմարությունների համար բաց է թողված դրամական միջոցներ և կազարմային կյանքը այժմ միանգամայն կանոնավորված է և վոչնչով չի տարբերվում Կարմիր Բանակից։

**Դիսցիպլինա.**— Միլիցիան սկզբնական շրջանում իբրև հեղափոխական պահակ, գտնվելով անկազմակերպ դրության մեջ ու միանգամայն զուրկ եր անհրաժեշտ դիսցիպլինայից։ Նա չուներ ռազմական վոգի և այդ այն հասարակ պատճառով, վոր այդ ուղղությամբ չեր տարվում նրա մեջ վոչ մի աշխատանք։ Սպառազինման հարցը նույնպես անկանոն եր, Միլիցիան շատ քիչ եր նմանվում զինվորական մասի։ Այժմ Միլիցիայի բաժինը մի շարք հրահանգներով ու կարգադրություններով ռազմունակ վոգի ու զորամասի ընդունակություն ունի։ Սպառազինումը նույնպես կանոնավոր է։

**Պայքար բանդիտիզմի յեվ վոճրագործության դեմ.**— Նախկին դաշնակցական Հայաստանը, վորը զուրկ եր այժմյան Մեղրիի և Լոռիի գավառներից, Զանգի-Բասարի և Վեդիի շրջաններից ուներ 2320 միլիցիոներներ, իսկ Խորհրդային իշխանության օրոք Միլիցիան մինչև 1922 թվի մայիսը ունեցել է 1450 հոգի, վորից վերջերս կրճատվեցին ևս 250 հոգի։ Այժմ ամբողջ հանրապետության Միլիցիան բաղկացած է 1200 հոգուց։ Չնայած այդ սուղ թվերին այնուամենայնիվ Միլիցիան իր վրա դրված պարտականությունների 90 տոկոսը կատարած է համարում։ Գավառներից շատերում գոյություն ունեցող բանդիտիզմը արդեն լիկվիդացիայի յե յենթարկված։ Կատարված քրեական վոճրագործությունների 65 տոկոսը բացված է և վոճրագործները հանձնված են դատի։

Քրեական Միլիցիայի աշխատանքները այժմ ծավալվում են, սակայն նա զուրկ է թե փոխադրական և թե դրամական միջոցներից, չունի պատրաստված աշխատողներ, վորոնք գոնե

փորձնականում ընդունակություն ունենային այդ շրջանում աշխատանք տանելու: Ոճրագործների ռեգիստրացիան մինչև այժմ չի կանոնավորված, շնորհիվ այն հանգամանքին, վոր քրեական բաժինը չունի պատրաստված աշխատակիցներ: Քրեական բաժնի աշխատանքները սպեցիֆիկ բնույթ են կրում: Միջոցներ են ձեռք առնված դասընթացքների միջոցով նոր աշխատակիցներ պատրաստելու համար:

Բանդիտիզմի և քրեական հանցագործությունների դեմ տարված պայքարի շրջանում յեղել են դեպքեր, յերբ առանձին աշխատակիցները և միլիցիոներները հերոսական ընդունակություն են ցույց տվել և կռվել նրանց դեմ մինչև վերջին կաթիլ արյունը ու յետ խլել բանդիտներից ժողովրդից թալանած տավարն ու գույքը: Այդ առթիվ խրախուսանքի նպատակով նման անհատներին տրվել են պարգևներ: Նույնը արված է նաև այն միլիցիոներների նկատմամբ, վորոնք յեռանդուն կերպով սովորել են գրագիտություն: Վորպեսզի բանդիտիզմի լիկվիդացիայի գործը արագացվի ու թեթևացվի Միլիցիայի աշխատանքը Կենտրոնում կազմակերպվեց Միլիցիայի պահեստ:

Նույնանման մի պահեստ կազմակերպվեց նաև Զանգեզուրի գավառում, համեմատաբար սակավաթիվ շտատով: Միլիցիայի այս հարվածային մասերը ունեն ռազմական մեծ ընդունակություն և փոխադրական միջոցների բոլոր հարմարությունները, այնպես վոր նրանք իրենց կոչման բարձրության վրա արդեն կանգնած են և հարկ յեղած դեպքում անցնելու յեն իրենց աշխատանքներին: Այդ յերկու պահեստների շտատները լրացված են ի հաշիվ Հանրապետության Միլիցիայի թվի:

## ՈՒՂՂԻՉ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԻՆ

Ուղղիչ աշխատանքի բաժինը, վորը նախկին Արդժողկոմատի իրավասության ներքո յեր՝ այժմ անցել է Ներքգործժողկոմատի իրավասության տակ: Բաժինը ունի իրեն յենթակա «Աշխատանք» ագարակը «Ուղղիչ Տան» արհեստանոցները և Աշխատանքի յենթաբաժինը:

**1. Ագարակը.**— Հողժողկոմի կարգադրությամբ ստացված 30 դեսյատին հողը տրամադրված է Ղարխուն գյուղում «Աշխատանք» ագարակին, վորը արդեն անցել է աշխատանքի: Այս ագարակի համար տեղափոխված է Ղարխուն գյուղ Դոխկուզ գյուղից նախկին լիկվիդացիայի յենթարկված «Բույս» ագարակի գույքերից անհրաժեշտները, ձեռք են բերված մյուս պակաս գույքերը: Աշխատանքները կատարելու համար ուղարկված են 15 բանվոր բանտարկյալներ, վորոնց հսկողությունը հանձնված է պահակներին:

«Աշխատանք» ագարակի կազմակերպման որից կատարված են հետևյալ աշխատանքները.—վարված է 15 դեսյատին հող, այժմս էլ շարունակվում է վարելը. ցանված են սոխ, բազուկ, վարունգ, սեխ, ծիծիկա, կարմիր պամիդոր, կոտեմ, ձմերուկ մոտավորապես յերկու դեսյատին: Ցանված է 9 փութ 20 ֆունտ բամբակ, բամբակի հունդը ստացված է 10 դեսյատինի համար առանձին պայմանով Հողժողկոմի ներկայացուցչին: Թե մշակված և թե մշակելու հողերի վրա պետք է ցանվեն վոչ պակաս 10 դեսյատինի բամբակ և մոտ 10 դեսյատին այլ տեսակի բույսեր, իսկ մնացորդ մասում՝ գարի:

Ուղղիչ Տան արհեստանոցներից այժմ կազմակերպված ու աշխատում են 3-ը: Դարբնոցը, վորտեղ պատրաստում են զանազան չափի յերկաթե պայտեր, այժմ կատարում են կառքի ռեմոնտներ ու պատրաստվում Ուղղիչ Տան բոլոր կարիքների համար յերկաթեղեններ: 2-րդը, Հյուսային արհեստանոցը, վորը աշխատում է Ուղղիչ Տան կարիքների համար՝ պատրաստում են ձեռնափայտեր, ծխախոտի տուփեր ևայլն: 3-րդը, կոշկակարանոցը, պատրաստվում են զանազան չափերի սանդալներ, չուստեր, չարուխներ: Հիշված արհեստանոցները ունեն բոլոր տեսակի անհրաժեշտ գործիքներ:

Ուղղիչ Տունը ունի կոլլեգիա, վորի նիստերը կայանում են շաբաթական վոչ պակաս մեկ անգամ: Վորոշվում են բանտարկյալների կարգերը փոխելու և նրանց արժանավորներին վաղաժամ ազատելու համար: Արձանագրությունները ուղարկվում են Ուղղիչ աշխատանքի դասավորման կոլեգիային ի հաստատություն:

Բանտարկյալների հետ տեսակցություններ կատարվում են կանոնադրության հոդվածների համաձայն, շաբաթը 3 անգամ հսկիչների հսկողությամբ: Կազմված են նախահաշիվներ քանդված շենքերը կառուցելու համար:

Ուղղիչ աշխատանքի ամբողջ շենքը բաժանված է ըստ մասերի. քաղաքական հանցավորները պահվում են առանձին շեն-

քում, վորոնք ունեն իրենց համար առանձին գրասենքի բակ։

Ուղղիչ Տան կուլտուր—կրթական—թատերական բեմի վրա գրվում են համապատասխան պիեսներ. մեկ ամսվա ընթացքում տեղի յն ունեցել 6 ներկայացում վորտեղ մասնակցել են միմիայն տեղական ուժերը, բանտարկյալներից բաղկացած։ Ուսումնարանում սովորողների միջին թիվը յեղել է հայերեն 23, Ռուսերեն 35, և Թուրքերեն 30-40։ Ուղղիչ Տան յերիտասարդներից կազմված է կոմսոմոլիստական խմբակ, վորը կենդանի աժանդակություն է ցույց տալիս դասավանդություններին և թատրոնին։ Կուլտուր-կրթական բաժինը ունի Լուսժողկոմատի կողմից ուղարկված մեկ վարիչ և 3 ուսուցիչներ։

---

# Ց Ո Ւ Ց Ա Կ

## Հայաստանի բնակչության, գյուղերի և գյուղխորհուրդների ըստ գավառների և շրջանների

| №№ | Գավառների անունները | ԳԱՎԱՌԱԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Բնակչության թիվը ըստ շրջանների | Գյուղերի քանակը | Գյուղխորհուրդների քանակը | Գավ. բնակ. թիվը | Գյուղերի ընդ. թիվը | Գյուղխորհուրդ. թիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Երևանի գավառ ունի 6 շրջան | Կոտայք | 21636 | 28 | 27 | 156477 | 202 | 175 |
| | | Հրազդան | 12277 | 26 | 20 | | | |
| | | Ղամարլու | 18300 | 50 | 39 | | | |
| | | Վեդի-Բասար | 16006 | 43 | 43 | | | |
| | | Ախտա | 31537 | 28 | 22 | | | |
| | | Բաշ-Գյառնի | 6621 | 27 | 24 | | | |
| | | Յերևան քաղաք | 50100 | 1 | | | | |
| 2 | Ալեքս. գավ. ունի 7 շրջան | Թալին | 2621 | 30 | 30 | 146356 | 188 | 171 |
| | | Մոլլագյոգչա | 34837 | 39 | 35 | | | |
| | | Բավթարլու | 24788 | 16 | 16 | | | |
| | | Ազբարա | 6892 | 23 | 23 | | | |
| | | Դուզքենդ | 40296 | 23 | 25 | | | |
| | | Հաջիխալիլ | 13675 | 22 | 20 | | | |
| | | Ղայըլ-Խազան | 16247 | 31 | 22 | | | |
| 3 | Էջմիածնի գավառ ունի 5 շրջան | Սամաղար | 18690 | 37 | 32 | 111947 | 144 | 111 |
| | | Աշտարակ | 30596 | 32 | 26 | | | |
| | | Սարդարաբատ | 17974 | 24 | 23 | | | |
| | | Ջանգիրաաբար | 11883 | 25 | 11 | | | |
| | | Արարան | 21814 | 25 | 20 | | | |
| | | Վաղարշապատ | 11000 | 1 | | | | |
| 4 | Լոռու գավ. ունի 4 շրջան | Ջալալօղլի | 19724 | 18 | 18 | 68596 | 78 | 78 |
| | | Ալլահվերդի | 12286 | 18 | 18 | | | |
| | | Դսեղի | 11702 | 13 | 13 | | | |
| | | Ուզունլար | 7726 | 11 | 11 | | | |
| | | Վորանցովկա | 16460 | 18 | 18 | | | |
| 5 | Ն. Բայազ. գավ. ունի 4 շրջան | Նոր-Բայազեդ | 19382 | 13 | 12 | 57513 | 81 | 64 |
| | | Ղարանլուղ | 24375 | 20 | 16 | | | |
| | | Բասար-Գեչար | 26362 | 42 | 30 | | | |
| | | Ելենովկա | 17394 | 10 | 8 | | | |
| 6 | Դիլիջանի գավ. ունի 5 շրջան | Դիլիջանի | 13993 | 15 | 10 | 57822 | 77 | 68 |
| | | Իջևան | 18562 | 16 | 16 | | | |
| | | Բարանա | 13863 | 10 | 10 | | | |
| | | Շամշադին | 21752 | 17 | 17 | | | |
| | | Կարմիր գյուղ | 19652 | 19 | 15 | | | |
| 7 | Դարալ. գավ. ունի 2 շրջան | Քեշիշքենդի | 16605 | 50 | 28 | 52977 | 37 | 35 |
| | | Գնդեվազի | 10033 | 33 | 19 | | | |
| 8 | Ղարաք. գավ. ունի 2 շրջան | Ղարաքիլիսա | 27286 | 13 | 17 | 26638 | 88 | 47 |
| | | Համամլու | 25691 | 19 | 18 | | | |
| 9 | Զանգեզուրի գավառ ունի 5 շրջան | Սիսիանի | 19749 | 31 | 31 | 62657 | 92 | 89 |
| | | Գորիսի | 12399 | 6 | 6 | | | |
| | | Ղափանի | 17332 | 46 | 36 | | | |
| | | Տեղի | 11713 | 8 | 8 | | | |
| | | Հալիձորի | 7464 | 8 | 8 | | | |
| 10 | | Մեղրիի գավ. | 6945 | 20 | 18 | 6945 | 20 | 18 |

## ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1921 և 1922 Թ. Թ.

1921 թ. Ապրիլին Խորհրդային իշխանությունը վերջնականապես տապալելով դաշնակցական հակահեղափոխությունը՝ հետևյալ վիճակում գտավ Հայաստանը։

Ամբողջ յերկրի արտադրողական կենտրոնը հանդիսացող Արարատյան դաշտը, վորը նախապատերազմական շրջանում արտահանում եր 600.000 փութ բամբակ և 2-3 ու կես միլիոն փութ խաղող՝ ներկայացնում եր իրենից ավերակների, մերկության ու քաղցածության մի համատարած պանորամա։ Լեռնային գավառներից Ալեքպոլը և Ղարաքիլիսան թալանված ու ավերված եյին հիմնովին. Զանգեզուրը, Դարալագյազն ու Իջևանը սովի ծանր որեր եյին ապրում։ Համեմատաբար լավ վիճակի մեջ կարող եյին լինել Նոր-Բայազեդի գավառի հայկական շրջանները և Յերևանի, Կոտայքի ու Ախտայի գավառամասերը, բայց ավանտյուրայի հետևանքով կորցնելով գարնանացանի կամպանիայի շրջանը՝ սրանց տնտեսությունն ես նկատելի չափով թուլացավ։

Բնիկ ազգաբնակչության հետ տեղավորված և նրա կողքին ապրող տաճկահայ, սուրմալվեցի և Ղարսեցի 140,000-ի հասնող աշխատավոր գյուղացիական ամբողջ մասսան առավել վատթար վիճակ եր ապրում։

Խորհրդային իշխանության հաստատմամբ իրենց ավերված տները վերադարձած թվով 100,000 թյուրք գյուղացիությունը դժոխային պայմանների մեջ եր գտնվում։

Յերկրի ու ժողովրդի վիճակի այս ահռելի պատկերը տալուց հետո պարզ ե թե ինչպիսի նախապայմաններ ու տվյալներ ուներ Խորհրդային իշխանության հողագործության բարձրագույն որգանը, Հողժողկոմատը, վորը գլխավորապես գյուղական տնտեսությունը վերականգնելու և այն նոր հիմքերի վրա կազմակերպելու կոչումն ուներ։

Բացի այս ընդհանուր ծրագրից, Հողժողկոմատը հանդիսանալով Հայաստանի առաջին հեղափոխական իշխանության հողային որգանը պետք ե հարվածային կարգով խորտակեր ցարական կարգերից ժառանգություն մնացած «սոցիալիստական» դաշնակցության կողմից խնամքով պաշտպանված հողային անարդար ու անհավասար փոխհարաբերությունները և կառուցաներ նոր իրավակարգ. աշխատավորական հողոգտագործման պահանջներին համապատասխանող դրություն։



Հողային հարցի չափ կարևոր և վոչ պակաս արժեքավոր խնդիր ե Հայաստանում ջրային հարցը։ Այս ասպարեզում Հողժողկոմատը նախ պետք եր վերականգներ հիմնովին քայքայված քանդված ու անպետքացած ջրային հին սիստեմը, ապա պիտի կազմակերպեր ջրաբաշխման գործը նոր պահանջների և արդարության հիմունքներով, ինչպես նաև սակավահող մեր յերկրում հողազուրկ մասսաների աճող պահանջին բավարարություն տալու համար Հողժողկոմատը նոր տարածություններ վոռոգելու ճանապարհով պետք ե ջանար ավելացնել յերկրի մշակելի հողերի ֆոնդը։

Հողժողկոմատի հատուկ ուշադրության առարկան պետք ե լիներ անասնապահությունը և մանավանդ անասնաբուժությունը։ Մեր յերկրի գյուղական տնտեսությունների կեսից ավելին կորցրել եր նախապատերազմական շրջանում ունեցած անասունների 50 տոկոսը։ Այս թիվը բավական ե ցույց տալու համար, թե վորպիսի խնամքով պետք ե Հողժողկոմատը պաշտպաներ անասնապահությունը այն վայրերում, վորոնք գլխավորապես պիտի մատակարարեին լծկաններ և ընդհանրապես անասուններ դրանցից զրկված գավառներին ու շրջաններին։

Ցամաքային չոր կլիմա ունեցող և ջրերով վոչ այնքան հարուստ Խորհրդային Հայաստանում Հողժողկոմատը հատուկ գուրգուրանքի առարկա պիտի դարձներ 250,000 դեսյատին ընդհանուր տարածություն ունեցող անտառների պաշտպանության ոգտագործման վրա։

Վերջապես Խորհրդային իրավակարգում գյուղական տնտեսության մեջ ամբողջ ասպարեզի մասնավոր ինիցիատիվային չթողնելու նպատակով Հողժոկոմատը հատուկ ուշադրություն դարձներ Խորհրդային տնտեսություններ, արտադրողական արտելներ — կոմմունաներ ու կոոպերատիվներ կազմակերպելու խնդրի վրա։ Այս կազմակերպությունների կարևորությունը թելադ-

րում է նաև գյուղացիությանը գործնական կյանքում որինակելի և բացինալ տնտեսություն վարելու յեղանակներին ու միջոցներին ծանոթացնելու անհրաժեշտությամբ։

Ահա այն հիմնական առանցքը, վորի շուրջը պիտի պտտվեր Հողժողկոմատի գործունեությունը։

Այժմ տեսնենք թե ինչ գործունեություն է յերևան բերել Հողժողկոմատը մատնանշված բոլոր ասպարեզներում։

## ՍԵՐՄԱՆՄԱՆ ԲԱԺԻՆ

1921 թ. ցանքսը Խորհրդային Հայաստանում այնքան քիչ եր իր տարածությամբ և այնքան թույլ եր իր բերքով, վոր Պարժողկոմատին աջողվեց ամբողջ յերկրում հավաքել միայն 160,000 ուրբլու հացահատիկ։ Գյուղացիությունը սոսկալի վիճակի մեջ եր գտնվում։ Յոթը տարի անընդհատ տեվող պատերազմները, գաղթն ու թալանները հիմնովին վոչնչացրել եյին ժողովրդի տնտեսությունը։ Շատ գյուղերում մի յերկու ընտանիք միայն ուտելու հաց ունեյին։ Սովի ուրվականն ահեղորեն զգալ եր տալիս իր ներկայությունը։ Ահա այսպիսի պայմաններում Հողժողկոմատը պիտի կազմակերպեր Սերմանման կամպանիա։ Բայց վորովհետև այս խնդրի հետ կապված եր աշխատավոր ժողովրդի կյանքի ու մահվան հարցը, այդ պատճառով նրա շուրջը կենտրոնացավ Խորհրդային և կուսակցական օրգանների ամբողջ ուշադրությունը, վորի հետևանքով հնարավոր յեղավ լայն ու ազդեցիկ ագիտացիա մղել հօգուտ ցանքսերի մեծացման։ Այս խնդրում միակ դժվարությունը՝ լծկանից զուրկ գյուղացիների, գաղթականների և վերադարձած թուրքերի հարցը՝ լուծվեց շատ բարեհաջող ընթացքով։ Հայ գյուղացու դեպի չունեվոր յեղբայրն ունեցած կարեկից վերաբերմունքը մեկ կողմից, 1921 թվի աշնանը ու 1922 թվի գարնանը համահայաստանյան ծավալով կազմակերպված վարի շաբաթները մյուս կողմից լիովին բավարարեցին պահանջը։

Մնում եր կազմակերպել և ապահովել սերմի ստացման և բաշխման գործը։

Ամբողջ կամպանիայի ընթացքում սերմացու ստացված է.

| | |
|---|---|
| 1. Հողժողկոմատի պահեստի 1921 թ. ժողովրդից | 14,260 փ. |
| 2. Պարժողկոմատի գավառների պահեստներից | 76,000 փ. |
| 3. Արտասահմանում գնված է . . . . . . . | 135,240 փ. |



| | |
|---|---|
| 4. Խորհրդային Ռուսաստանից ստացված . . | 100,000 փ. |
| Ընդամենը . . . . . . . . | 325,500 փ. |

Սերմի այս քանակությունը բաշխվել է ազգաբնակության կարիքավոր մասի մեջ Գավգործկոմների ու Շրջգործկոմների կից կազմված սերմկոմների միջոցով և գյուղսերմկոմների ձեռքով։

Սերմի մի փոքրիկ քանակությունը բաշխվել 1921 թ. Աշնանը հետևյալ չափով.

| | |
|---|---|
| 1. Յերևանի գավառին . . . . . . . . . . . . | 15,500 փ. |
| 2. Եջմիածնի » . . . . . . . . . . . . | 8,500 փ. |
| 3. Նոր-Բայազեդին . . . . . . . . . . . . | 1,500 փ. |
| Ընդամենը . . . . . . . . | 25,000 փ. |

Մնացած ամբողջ քանակությունը բաշխվել է 1922 թ. Գարնանը հետևյալ կարգով.

| | |
|---|---|
| 1. Յերևանի գավառին . . . . . . . . . . | 45,637 փ. |
| 2. Եջմիածնի » . . . . . . . . . . | 43,000 փ. |
| 3. Ալեքպոլի » . . . . . . . . . . | 72,542 փ. |
| 4. Ղարաքիլիս. » . . . . . . . . . . | 13,750 փ. |
| 5. Լոռվա » . . . . . . . . . . | 22,001 փ. |
| 6. Իջևանի (այժմ Դիլիջանի) . . . . . . . | 35,683 փ. |
| 7. Նոր-Բայազեդի » . . . . . . . . . . | 19,000 փ. |
| 8. Դարալագյազի » . . . . . . . . . . | 4,881 փ. |
| 9. Զանգեզուրի » . . . . . . . . . . | 2,949 փ. |
| 10. Մեղրիի շրջանի . . . . . . . . . | 1,705 փ. |
| 11. Կենտրոնական պահեստից . . . . . . . . | 38,326 փ. |
| Ընդամենը | 300,000 փ. |

Աշնանացանի հետ միասին ընդամենը բաշխված է 325,500 փութ սերմացու։

Միայն Զանգեզուրում, Իջևանում և Վեդի Բասարի շրջանում սարսափելի սովի պատճառով սերմացույի մի մասը գյուղացիությունը կերել է։

Մնացած բոլոր վայրերում բաշխված սերմացուն ծառայել է իր նպատակին։

Այս գործում նախ գովելի յե տեղական Սերմկոմների վերաբերմունքը դեպի պետական-ժողովրդական կարևորություն ունեցող գործը։ Սերմացուն, ստացված հրահանգի համաձայն, տալիս եյին միայն պատրաստի հերկ ունեցող գյուղացիների կամ իրենք նախ կազմակերպում եյին չունեցողի արտը հերկելու գործը և

տալ ցանել տալիս սերմացուն։ Մյուս կողմից հսկայական դեր խաղաց մեր բոլոր օրգանների միահամուռ նվիրված աշխատանքն ու ագիտացիան սերմանման կամպանիայի օգտին։ Ստեղծվել էր այնպիսի մթնոլորտ, որի ազդեցության տակ շատ գյուղացիներ ցանում էին իրենց ունեցած հացահատիկների ամբողջ քանակությունը և ընտանիքով մնում քաղցած։

Ահա այս ճանապարհով էր, որ 1922 թ. մենք մեր երկրի ցանքսերի ընդհանուր տարածությունը մոտեցրինք նախապատերազմական շրջանի մեծությանը, որի շնորհիվ մեր ժողովուրդը համեմատաբար ազատ է շնչում և մեծ տոկոսով հեռու է սովի ուրվականի սարսափից։

## ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի սահմաններում գյուղական տնտեսության մեջ գոյություն ունեցող կուլտուրաներից և ոչ մեկը այնքան չէ տուժել պատերազմների ընթացքում, որքան բամբակի կուլտուրան։ Դաշնակցական կառավարության 1919 թվի հրատարակած պետական մենավաճառը՝ բամբակ գնելու և արտահանելու ասպարեզում՝ հիմնովին մեռցրեց բամբակի կուլտուրան. 1920—21 թվականներին բամբակի արտադրությունը Հայաստանում իջավ 0-ի։ Մինչդեռ բամբակագործությունը մեր երկրի որոշ մասերի համար ամենից բարձր, ամենից անփոխարինելի կուլտուրան է։ Որպես ապացույց այդ դրության առաջ ենք բերում մի ցուցակ, որտեղ թվական ստույգ տվյալներով ցույց է տրվում թե նախապատերազմական պայմանների մեջ Արարատյան դաշտում մի դեսյատին հողից տարբեր բույսերի մշակությունն ինչ արդյունք էր տալիս գյուղացուն։

| № | ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՆ | Մի դեսյատին մշակույթի ծախս | Մի դեսյատինի ընդ. մուտք | Զուտ արդյունք |
|---|---|---|---|---|
| 1 | Բամբակ . . . . . . . . | 83 ռ. 20 կ. | 244 | 160 ռ. 80 կ. |
| 2 | Խաղող . . . . . . . . | 145 ռ. | 261 | 116 ռ. |
| 3 | Առվույտ . . . . . . . . | 29 ռ. | 160 | 131 ռ. |
| 4 | Գարի . . . . . . . . . | 58 ռ. 25 կ. | 97 | 38 ռ. 75 կ. |
| 5 | Ցորեն . . . . . . . . | 60 ռ. | 92 | 32 ռ |



Այս թվերը բացորոշ ցույց են տալիս, որ բամբակի կուլտուրան մատնանշված շրջանում շահավետ է.

Խաղողի համեմատությամբ . . . . . . . . 137 %-ով
Առվույտի . . . . . . . . . . . . . . . . . 122 »
Գարու . . . . . . . . . . . . . . . . . 421 »
Ցորենի . . . . . . . . . . . . . . . . . 500 »

Այդ թվերը նաև ցույց են տալիս թե տարեկան ինչպիսի հարստություն է կորցնում մեր երկիրը փոխարինելով բամբակի կուլտուրան հացաբույսերի մշակությամբ։

Այս կորուստը հասնում է տարեկան 5-6 միլիոն ռուբլու ոսկով։

Ահա այս էր պատճառը, որ նախապատերազմական շրջանում, տնտեսական նորմալ պայմանների մեջ. բամբակը կլիմայական ու բնական տվյալների հնարավորության սահմաններում դուրս է շպրտել մնացած կուլտուրաներն և ամբողջ երկրում այնքան լայնատարած հացաբույսերի մշակության համեմատությամբ աչքի ընկնող տեղ էր գրավում ժողովրդական տնտեսության մեջ։

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ նախկին Երևանի նահանգի հացահատիկների բերքը արտահայտվում էր միլիոն փթերով . . . . . . . . . . . . . . . . . . 13 մլ. փութ
Իսկ բամբակի բերքը նույն ժամանակամիջոցում . 2 » »
13 միլիոն հացահատիկի արժեքը . . . . . . . . . 11 » ռ.
2 » բամբակի » . . . . . . . . . 7 » »

Այս թվերը ցույց են տալիս որ բամբակագործության ընդհանուր յեկամուտը տոկոսային հարաբերությամբ հացահատիկների նկատմամբ արտահայտված է 65 %-ով։

Մյուս կողմից Հայաստանի բամբակագործությունն առաջնակարգ տեղ էր գրավում համակովկասյան արտադրության մեջ։

Մեկ դեսյատին բամբակի ցանքսից ստացվում էր.

Երևանի նահանգում . . . . . . . . . 18.0 փութ
Գանձակի » . . . . . . . . . . 14,7 »
Բագվի » . . . . . . . . . . 14,0 »
Քութայիսի » . . . . . . . . . . 9,0 »

Մեր երկրի տնտեսապես առողջացման ու զարգացման ուղիները մատնանշող ու ընդգծող այս կարևոր հանգամանքները նկատի ունենալով՝ Հայաստանի ժողկոմխորհը 1921 թ. վճռել էր յուր սահմանափակ միջոցներից օգնության հասնել բամբակա-

գործունեության խնդրում։ Այս նպատակով կառավարությունը ամեն մի դեսյատին բամբակի ցանքսին բաց էր թողել 50 ռուբլի վոսկով նպաստ, պայմանավորվելով այդ նպաստի գանձումը կատարել 6 % բամբակի ավելցուկով այլ և բամբակի փութը հաշվել 7 ռուբլի, բամբակի սերմանման ծրագիր մշակելը կատարել է Հողժողկոմատը։ Ծրագիր մշակելիս Հողժողկոմատը յելակետ ուներ այն նյութական միջոցները, վոր կարող էր իր տրամադրության տակ ունենալ կառավարությունը։ 1922 թվի ընթացքում ըստ մշակված ծրագրի նախատեսնված էր բամբակի ցանքսերը հասցնել 1000 դեսյատինի։

Միաժամանակ սկսված էր Ղուրդուղուլիի շրջանում բամբակի սերմի զտումը և ջոկելը։ Այսպիսով ջոկված էր 2000 փութ. սերմացու։ Ձեռք էյին առնված արտակարգ միջոցներ ստանալու Թուրքեստանից լավ տեսակի սերմացու մոտ 47000 փութ Հողժողկոմատը մտահոգված էր նույնպես այն խնդրով, թե ում տալ բամբակի սերմացու։ Այդ նպատակը իրագործելու համար վորոշված էր։

1. Սերմացու բաց թողնել միմիայն այն գյուղացիներին, վորոնք ունեին գործիքներ, աշխատող ձեռքեր, լծկաններ, անցյալի փորձառություն և տեղական գործկոմի յերաշխավորություն։

2. Բամբակի սերմացույի հետ բաց թողնել ամեն մեկ դեսյատինին 2 փութ ցորեն, իսկ չստացած ցորենի յերրորդ մասը բաց թողնել բամբակի բերքից հետո։

Բարդ ապարատ չունենալու համակ վորոշված էր ունենալ յերեք կենտրոն։

1. Յերևանում, վորը հոգալու յեր միաժամանակ գավառի կարիքները, 2. Եջմիածնում ունենալ բամբակկոմի մեկ ներկայացուցիչ՝ գործակցության հրավիրելով գավհողբաժնի ուժերն ևս, 3. Ղուրդուղուլիում ունենալ դարձյալ մեկ ներկայացուցիչ.

Սրանք էյին այն նախադրյալները, վորոնցով սկսվեց 1922 թ. բամբակի կամպանիան։

Այդ գործի սկզբում հիմնվեց բամբակի հատուկ կոմիտե Հողժողկոմատին կից։ Սոված գյուղացիության շարքերում հետաքրքրություն շարժելու համար վորոշված էր նպաստը բաց թողնել բացառապես ցորենով։ Այդ հաշվին կենտրոնից բաց է թողնված 6,000 փութ ցորեն։ Միևնույն ժամանակ գյուղացիական բոլոր տնտեսություններին տրվեց ընտիր սերմացու. Հայ-



բամբակկոմը այդ նպատակի համար բաց է թողել գյուղացիությանը վեց հազար չորս հարյուր յոթանասուն հինգ փութ բամբակի սերմ։

Բամբակկոմը վերոհիշյալ միջոցները և աշխատանքները կատարելուց հետո դիմեց բամբակի հավաքման գործին։ 1922 թ. բամբակի ցանքսերի տարածությունը յեղել է վեց հարյուր հիսուն դեսյատին, բերքը մեկ դեսյատինից 20—25 փութ չզտված բամբակ։ Ընդհանուր քանակը չմաքրած բամբակի կարելի յե վորոշել 16.250 փութ։ Զտված բամբակի գինը նշանակվեց 3 ռուբլի 50 կոպեկ։

Այդ աշխատանքներից հետո պարզվեց վոր գյուղացիության միջև նկատվում է վորոշակի փոփոխություն և տրամադրության բարձրացում դեպի բամբակագործության մշակույթը։

Գյուղացիությունը ամենայն սրտով պատրաստակամություն է հայտնաբերում նորից անցնելու բամբակի մշակույթին, յեթե հնարավոր լինի անմիջական կարիքները հացով և մանուֆակտուրայով բավարարել։

1923 թվականի համար հայ բամբակկոմը նախագծել է ցանքսերը հասցնել մինչև 5000 դեսյատինի։ Ըստ նախահաշվի այդ ցանքսերը պահանջում էյին հետևյալ ծախսերը։

| № | ԾԵԼՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ | Քանակը | Արժեքը | Գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | Բամբակի հունդ . . . . | 40.000 փ. | 1ռ. 30կ. | 52.000 ռ. |
| 2 | Նպաստ բամբակագործներին . . . . . . . | 5.000 դ. | 75 ռ. | 375.000 » |
| 3 | Ջրանցքների վերանորոգ. | — | — | 50.000 » |
| 4 | Մեռյալ և կենդանի ինվենտար . . . . . . | — | — | 50.000 » |
| 5 | Վարչական և կազմակերպչական . . . . . | — | — | 5.000 » |
| 6 | Փորձադաշտեր . . . . . | — | — | 25.000 » |
| 7 | Սրազդայանի ջրանցքը հիմնովին կարգավորելու | — | — | 400.000 » |
| 8 | Սրազդայանի շենքերը կարգավորելու . . . . | — | — | 50.000 » |
| | Ընդամենը | — | — | 1,007.000 » |

Սարդարապատի ջրանցքի հիմնովին կանոնավորելու հարցը պիտի համարել մեզ համար հարվածային խնդիր այն պատճառով, վոր այդ ջրանցքը վոռոգում է 8—10 հազար դեսյատին բացառիկ լավ հատկություն ունեցող և բամբակի հրաշալի բերք տվող հողեր։

Պահանջվող ամբողջ գումարից 300.000 ռուբլին ունի Հողժողկոմատը՝ հանձինս Բամբակկոմի, մնացած գումարը պետք է լրացնել պետական միջոցներից։

Կարևոր է շեշտել մի հանգամանք, վոր յեթե Հայբամբակկոմը մինչև հունվար ամիսը իր տրամադրության տակ չունենա պահանջվող գումարը, հնարավոր չի լինի իրագործել իրեն առաջադրված մեծ խնդիրները։

Բամբակագործությունը Խորհրդային Հայաստանում վերականգնելու գործում բացի պետականից տեղ պիտի տալ նաև մասնավոր ձեռնարկությանը։ Այս ասպարեզում անհրաժեշտ է պարզ ու վորոշ հրապարակ հանել պետության վերաբերմունքը դեպի այդ խնդիրը։

Հողժողկոմատի կողմից հրավիրված գյուղատնտեսական համագումարը այդ խնդրի մասին հետևյալ բանաձևն ընդունեց. «Միջնորդել կառավարության առաջ թույլատրելու բամբակի ազատ առևտուրը փեդերատիվ հանրապետությունների սահմաններում»։

Այս հարցին արտադրողների շահերի տեսակետից նպաստավոր լուծում տալուց և Հայբամբակկոմին պահանջվող դրամական միջոցները տրամադրելուց հետո՝ բամբակագործության վերականգնման ու զարգացման գործն ապահոված պիտի համարել Խորհրդային Հայաստանում, վորովհետև արգելառիթ ազդակներն այս ասպարեզում հիմնովին վերացած են։

Ռուսաստանի գյուղատնտեսական կյանքը վերականգնում է, վորի հետևանքը լինելու յե հացի կրիզիսի վերացումը։

Մյուս կողմից վերականգնված է, և հումնյութի մեծ կարիք ունի Ռուսաստանի տեկստիլ արդյունաբերությունը, վոր հարմարագույն սպառողն է յեղել և պիտի լինի մեր արտադրությունների։

## ԱՆՏԱՌԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Հայաստանի տնտեսական շինարարության մեջ 250,000 դեսյատին տարածություն բռնող անտառներն ունեն իրենց հատուկ տեղն ու արժեքը։



Մյուս կողմից անտառներն են, վոր ապահովում են մթնոլորտային տեղումների կանոնավորումը, պահպանում են աղբյուրների, առուների ու գետերի մշտական գոյությունը, ինչպես և առաջն են առնում լեռնալանջերի ու ձորերի հողաշերտերի վողողման ու քայքայման։

Չնայած այս ամենին՝ Հայաստանի անտառները հեղափոխության 5—6 տարիների ընթացքում «Անտառները ժողովրդին են պատկանում», ազդանիշի անվան տակ յենթակա յեն յեղել գյուղացու կացնի անխնա հարվածներին և նրա անասունները տրորել են անտառի մատղաշ, նորելուկ տունկերը։

Այդ շրջանում մոտավոր թվով 30—40,000 դեսյատին մեր լավագույն անտառներից մացառուտների վերածվեցին, իսկ անտառամիջյան բացատներն ու պուրակները գյուղացիների ձեռքն անցան։

Մեր անտառներին հասած այդ ծանր հարվածները Հողժողկոմատից պահանջում էին առանձին ուշադրություն դարձնել և հատուկ միջոցների դիմել անտառային գործը հիմնովին վերստեղծելու և այդ ասպարեզումն ել կարգ ու կանոն սահմանելու համար։

Նախկին պետական կալվածներից ժառանգություն մնացած անտառային բաժինն անկարող էր այս չափազանց ծանր գործին ընթացք տալ, ուստի Հողժողկոմատը 1922 թ. գարնան սկզբին Թիֆլիսում և Յերևանում անտառային գործին մոտ կանգնած մասնագետների հետ մի շարք խորհրդակցություններ ունենալուց և հիմնական մի քանի խնդիրներին լուծում տալուց հետո՝ հիմնեց ներկայումս գործող Անտառային Վարչությունը, վորին աշխատակցելու հրավիրվեցին կարող անձնավորություններ։

Անտառային Վարչության կազմակերպումից նոր շրջան բացվեց մեր յերկրի անտառային տնտեսության գործում։

1. Կազմված է անտառային նյութերն օգտագործելու հաստատուն սակագին, վորը մի կողմից վերջ դրեց տարբեր անտառապետություններում այդ հարցի շուրջը գոյություն ունեցող քաոսային դրությանը, իսկ մյուս կողմից սկսեց դառնալ պետական յեկամուտի վորոշ աղբյուր։

1922 թ. վերջին 4 ամիսների ընթացքում միայն չորս անտառապետությունները գանձարանն են մուծել մոտ տասն և մեկ միլիարդ ռուբլի Հայկական Խորհրդային դրամներով, իսկ նրանց

ծախսերը յեղել են մոտ տասն և յերկու միլիարդ Հայկական Խորհրդային դրամով:

2. Շատ կարևոր խնդիր էր Անտառապետության աշխատակիցների կազմի մեջ անհրաժեշտ բարելավում մտցնելու հարցը: Անտառային վարչության կազմն ուժեղացնելուց զատ՝ հրավիրված են մի քանի փորձառու մասնագետներ անտառապետների և անտառային տեսուչների պաշտոնով: Մյուս կողմից, շատ լուրջ աշխատանքներ են տարվում անտառապետությունները գործի համար անբարեհույս տարրերից ազատելու ասպարեզում: Այս նպատակով Յերևանում կազմակերպված է պաշտոնյաների զտման կենտրոնական հանձնաժողով, վորի մեջ գործում են պատասխանատու և միանգամայն վստահելի ընկերներ:

Հանձնաժողովը տպագրել է անհրաժեշտ նյութերն ու հրահանգները և շուտով կանցնի զտման գործին, վորը պիտի մաքրի անտառապետությունները պետական անփոխարինելի հարստություն—անտառը վաճառքի հանող կաշառակեր ու զեղծարար ցեցերից:

Հանձնաժողովն իր գավառական բաժանմունքներով պիտի մաքրի ասպարեզը շիտակ և անկաշառ գործիչների համար:

3. Տեղերից որ-ավուր բողոքներ եյին գալիս կենտրոն, թե ինչպես տեղական մարմինները՝ Գյուղգործկոմներից սկսած մինչև Գավգործկոմները՝ ինքնակամ և ինքնագլուխ միջամտում են անտառային գործում, հեռացնում և ընդունում են ծառայողներ, անտառների հատման և օգտագործման հրաման են տալիս և այդպիսով մտցնում են շատ անցանկալի անարխիա ինչպես վարչական՝ նույնպես և անտառային տնտեսության գործում: Անտառային Վարչությանը աջողվեց հատուկ դեկրետների և շըրջաբերականների միջոցով վերջ դնել այդ միջամտություններին, յենթարկելով անտառն ու նրա տնտեսությունը միատեսակ ղեկավարության, վորի գլուխ կանգնած է Հողժողկոմատը՝ հանձինս Անտառային Վարչության:

4. Անտառային Վարչությանը աջողվել է վորոշ գործ անել նաև հարևան հանրապետությունների հետ խառը անտառամասերի սահմանամասերը պարզելու գործում:

Վերջնականապես վորոշված են մեր սահմանները Խորհրդային Վրաստանի հետ:

Վորոշ աշխատանքներ են կատարված նաև Ադրբեջանի սահմանակից անտառների սահմանավորման նկատմամբ: Այս



հարցն էլ ապագայում իր վերջնական և ցանկալի լուծումը կստանա:

5. Անտառների պաշտպանության գործում նորակազմ վարչությունը կտրուկ և արմատական միջոցների յե դիմել: Այս ասպարեզում նա պիտի լուծի մի շարք խճճված ու բարդ խնդիրներ վորոնք կապ ունեն հողային հարցի լուծման հետ: Ինչպես հայտնի յե անտառների սահմաններում և նրանց անմիջապես կից ու վըտանգավոր հարևանության մեջ գտնվող հողակտորները հեղափոխական շրջանում գրավվել են մեծ մասամբ սակավահող գյուղացիության կողմից, վորը դարձել է մեր անտառների գոյության սպառնացող միակ գործոնը: Նույն շրջանում գյուղացիությունը անտառների խորքերում ստեղծեց նոր ձմեռանոցներ: Հազարավոր նույնպես սակավահող գյուղական տնտեսություններ իրենց անասուններով ներս են խուժել և որ ու գիշեր, տարին տասն յերկու ամիս վոչնչացնում են մեր անտառները:

Հողաշինարարական որգանների հետ համաձայնության գալով՝ Անտառային Վարչությունը մասնագետների հատուկ հանձնաժողովների միջոցով վաղ գարնանից պետք է անցնի անտառների նոր սահմանագծման հարցին: Վորոշված է խլել հանել գյուղական համայնքների օգտագործումից այն բոլոր հողակտորները, վորոնք նրանց ձեռքում կարող են այս կամ այն չափով վնասել անտառային գործին: Վորոշված է նաև հնարավորության սահմաններում վերացնել ձմեռանոցները:

Այս հարցի բարենպաստ լուծումն ապահովված է այն բանով, վոր Անտառային Վարչությունը գործելու յե հողաշինարարական մարմինների հետ զուգընթաց և պահպանելու յե նրանց հետ սերտ կապակցություն ու կոնտակտ:

6. Անտառային գործը լավ հիմքերու վրա դնելու և կառավարելու համար պահանջվում է ճիշտ հաշվարկության և մանրամասն ուսումնասիրության յենթարկել մեր բոլոր անտառապետությունները:

Ըստ նախապատերազմական տվյալների՝ Խորհրդային Հայաստանի սահմանների մեջ մտնող անտառները ըստ անտառապետությունների հետևյալ տարածությունն ունեն:

| № | ԱՆՏԱՌԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ | Կաղնու անտառների տարածություն | Այլ ծառերի անտառների տարածություն | Գումար |
|---|---|---|---|---|
| 1 | Յերևանի . . . . . . . | 1,000 | 26,000 | 27,000 |
| 2 | Ծաղկաձորի . . . . . . | 9,693 | 9,870 | 18,563 |
| 3 | Ղարաքիլիսայի . . . . | 1,566 | 10,698 | 14,264 |
| 4 | Լոռվա . . . . . . . . | 3,000 | 16,554,5 | 19,554-5 |
| 5 | Ախթալայի . . . . . . | 2,200 | 23,000 | 25,000 |
| 6 | Դիլիջանի . . . . . . . | 8,000 | 17,041-3 | 25,041-3 |
| 7 | Իջևանի . . . . . . . | 2,000 | 19,940-5 | 21,940-5 |
| 8 | Կոտքենդի . . . . . . | 5,000 | 31,390-7 | 36,390-7 |
| 9 | Շամշադինի . . . . . . | 6,000 | 36,759 | 47,759 |
| 10 | Դարալագյազի . . . . | 1,000 | 17,674 | 18,674 |
| 11 | Զանգեզուրի . . . . . | 10,000 | 27,524 | 37,524 |
| | Ընդամենը | 51,259 | 236,552 | 287,711 դ. |

Այս տվյալները ներկայումս չեն համապատասխանում իրականության:

Համաշխարհային պատերազմի և հեղափոխության ընթացքում շատ բան է փոխվել:

Բազմակողմանի հաշվարկությունը միայն կարող է հիմք ծառայել մեր նոր անելիքներին:

Անտառներին հարևան գյուղական համայնքների հողերից վերջնականապես զատելուց, նրանց ճիշտ հաշվարկությունն ունենալուց և այս աշխատանքների արդյունքը տեխնիքական թղթի հատակագծերի վրա ձևակերպելուց հետո միայն հարկավոր է կազմել և կիրառել անտառները վերստեղծելու, նրանց տարածությունը մեծացնելու և ընդհանրապես այդ ասպարեզում առողջ հիմունքների վրա դրված պետական տնտեսություն վարելու ծրագիր:

Մատնանշված աշխատանքները բազմակողմանի կերպով ուսումնասիրելու և մշակելու համար 1922 թ. սեպտեմբերի, 11-16 գումարված անտառապետների անդրանիկ համագումարը շատ արժեքավոր վորոշումներ է կայացրել, վորոնց կիրառմանն աստիճանաբար անցնում եր Անտառային Վարչությունը վորին համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կհաջողվի ապահովել անտառների պաշտպանության գործը, բարեփոխել աշխատակիցների կազմը և ուժեղացնել վարչական-կազմակերպչական աշխատանքը:



## ՋՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Խորհրդային Հայաստանի վերաշինության և տնտեսական զարգացման տեսակետից առաջնակարգ գործոն է հանդիսանում նաև արհեստական վոռոգումը, վորը մանավանդ մեծ դեր ունի խաղալու բամբակի և թանկարժեք այլ բույսերի մշակության վերականգնման ու զարգացման գործում մեր յերկրի հարթավայրում:

Ընդհանուր ավերածությունն այս բնագավառում եւս իր դերն է խաղացել:

Քանդված են բազմաթիվ առուներ և պատվարներ, իսկ գործող առուներն էլ մեծ չափով կորցրել են իրենց տարողության չափը:

Այս իսկ պատճառով Հայաստանի ներկա սահմանների մեջ մնող արհեստական կերպով վոռոգվող հողերի տարածությունը, վոր մի ժամանակ 150.000 դեսյատինի յեր հասնում, այժմ կըրճատվել է 40—50$^0/_0$-ի սահմաններում:

Այս չարիքի դեմ կռվելու համար թե կենտրոնի ջրային բաժնի ղեկավարությամբ և թե իրեն ազգաբնակչության ձեռներեցությամբ 1922 թվին առուները մաքրելու և կանոնավորելու աշխատանքներ են տարվել հետևյալ չափով:

| № | ՋՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱՆՈՒՆԸ | Առուների թիվը | Ջրանցքի ընդ. յերկարությունը |
|---|---|---|---|
| 1. | Արարատի . . . . . . . . . | 12 | 140 վերստ. |
| 2. | Զանգիբասարի . . . . . . . | 16 | 170 » |
| 3. | Գյառնիբասարի . . . . . . | 14 | 150 » |
| 4. | Վեդիբասարի . . . . . . . | 8 | 110 » |
| 5. | Կրխբուլաղի . . . . . . . | 6 | 100 » |
| 6. | Սարդարաբադի . . . . . . | 12 | 200 » |
| 7. | Ալեքպոլի . . . . . . . . | 5 | 60 » |
| 8. | Թալինի . . . . . . . . . | — | — |
| 9. | Սևանա լճի . . . . . . . . | 8 | 50 » |
| 10. | Դարալագյազի . . . . . . . | — | — » |
| | Ընդամենը | 81 | 980 վ. |

Այս աշխատանքը շատ չնչին է հսկայական կարիքի և պահանջի հանդեպ:

1923 թ. գարնանից ջրային բաժինը հարվածային կարգով պետք ե մաքրել տա, կարգավորե գոյություն ունեցող ջրային բոլոր ցանցերը և առուների տարողությունը հասցնե նախապատերազմական շրջանի չափին հետևյալ տախտակի համաձայն։

| № | ՋՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱՆՈՒՆԸ | Առուների թիվը | Առուների երկարությունը | Ոռոգվող հողերի տարածությունը | Վերանորոգման համար պահանջվող գումար |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աբարանի . . . . . . . | 18 | 190 | 20,000 | 25,000 ռ. |
| 2 | Զանգիբասարի . . . . . | 21 | 240 | 15,000 | 17.000 » |
| 3 | Գյառնիբասարի . . . . | 23 | 240 | 12,000 | 22,000 » |
| 4 | Վեդիբասարի . . . . . | 12 | 165 | 22,000 | 100,000 » |
| 5 | Կըռխբուլաղի . . . . . | 7 | 108 | 4,500 | 11,000 » |
| 6 | Սարդարաբադի . . . . | 13 | 212 | 10,000 | 12,000 » |
| 7 | Ալեքպոլի . . . . . . . | 15 | 140 | 8,500 | 10,000 » |
| 8 | Թալինի . . . . . . . . | 10 | 100 | 10,000 | 5,000 » |
| 9 | Սևանա լճի . . . . . . | 14 | 100 | 12,000 | 7,000 » |
| 10 | Դարալագյազի . . . . . | 9 | 75 | 6,000 | 5,000 » |
| | Ընդամենը | 142 | 1470 | 122,000 | 234,000 ռ. |

Պահանջվող ծախսերի մեծագույն մասը կհոգա ինքը, գյուղացիությունը, տալով աշխատավոր ձեռքեր։ Իսկ տեխնիկ ուժերի, ցեմենտի և այլ նյութերի համար պահանջվող գումարները պիտի տա Հողժողկոմատը։

Ջրային հին ցանցն ամբողջովին վերականգնելու և կանոնավորելու խնդիրը դաշտային գոտու գյուղացիության կյանքի և մահու խնդիրն է. մյուս կողմից այս հարցի հետ սերտ կապված է և թանկարժեք բույսերի մշակության ապահովման գործը, ուստի պահանջվող բոլոր գումարները կտրամադրվի որ առաջ աշխատանքները կազմակերպելու համար.

Հին ցանցը կանոնավորելու հետ միաժամանակ ջրային բաժինը պիտի կազմակերպի ջրային նոր բաշխման գյուղականգործը համայնքների վրա։

Այս պահանջը հիմնավորում է նախ անցյալում կատարված թերությունները ու անարդարությունները վերացնելու ձգտումով և ապա հողաշինարարության հետևանքով առաջացած փոփոխությունների հետ ջրային սիստեմն համաձայնեցնելու անհրաժեշտությամբ։



Անշուշտ դրանով չեն փակվել ու չեն փակվելու մեր անելիքները ջրային բարելավման գործում։

Խորհրդային Հայաստանում սակավահողությունն այնքան խոշոր ազդակ է դարձել, որ նա անդրադառնալու յե մեր շինարարության բոլոր խնդիրների վրա ընդհանրապես և ջրային գործի վրա մասնավորապես։

Վերջինս պիտի որոնե և գտնե ոռոգելի նոր տարածություններ, որպեսզի հողազուրկ մասսաներին բավարարելու հնարավորություն ստեղծի։

Նոր ոռոգելի վայրեր ունի մեր յերկիրը և բարեբախտաբար այնպիսի վայրերում որտեղ հնարավոր է և պետք է թանգարժեք բույսերի կուլտուրան վարել։

Ճարտարապետ Ջավալիշինի տվյալներից յերևում է, որ Հայաստանում յեղած ջրերով կարելի յե ոռոգել նոր 100.000 դեսյատին հող հետևյալ տախտակի համաձայն։

| № | ՋՐԱՆՑՔԻ ԱՆՈՒՆԸ | Ջրանցքի երկարությունը | Ոռոգվող հողերի տարածությունը դզ. | Կառուցման համար պահանջվող գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | Սարդարաբադի մեծ ջրանցքը . . . . . . | 190 վ. | 43.000 | 5.000.000 ռ.վոս. |
| 2 | Սարդարաբադի փոքր ջրանցքը . . . . . . | 68 » | 8.000 | 505.000 » |
| 3 | Աբարանի ջրամբարը . . | — | 12,000 | — |
| 4 | Սևջրից հանվող ջրանցք | 35 » | 5.000 | 220.000 » |
| 5 | Եվջիլարի . . . . . . . | 15 » | 2.200 | 70.000 » |
| 6 | Կարձևլանի . . . . . . . | 16 » | 600 | 50.000 » |
| 7 | Շիրակի . . . . . . . . | 58 » | 15.000 | 1.000.000 » |
| 8 | Եջմիածնի . . . . . . . | 23 » | 2.500 | 65.000 » |

Սարդարաբադի մեծ ջրանցքի համար պահանջվող գումարը շատ է մեծ և ներկա պայմաններում անիրագործելի մեզ համար,

ուստի և Հողժողկոմատը գերադասելու յե նույն ջրանցքի փոքր ծրագիրն իրագործելու գաղափարը:

Եվջիլարի ջրանցքի ուսումնասիրությունները սկսված են և տարվում են. գարնանից պիտի ձեռնարկվի կառուցման աշխատանքներին:

Ալեքպոլի ջրանցքի աշխատանքներն սկսված են նիրկա տարվա աշնանից և առաջ են տարվում մեծ վոգևորությամբ և յեռանդով:

Ալեքպոլի ջրանցքը պատրաստ կլինի յերկու տարվա ընթացքում:

Էջմիածնի ջրանցքի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1922 թ. նոյեմբերի 29-ին: Ջրի ընթացքը շատ կանոնավոր է ու նորմալ: Բանվորա-գյուղացիական Տեսչություն հատուկ հանձնաժողովի միջոցով ջրանցքն ընդունեց և գտավ, վոր ձեռնարկված խոշոր գործը հասել է յուր մեծ նպատակին:

Անցյալում մեր յերկրում շատ առուներ ու ջրանցքներ են կառուցվել, բայց նրանց բոլորի կառուցումը հիմք է ունեցել այս կամ այն խանի ու կապիտալիստի ռայաների ու հարկատուների թիվը ավելացնելու ձգտումը:

Ժողովրդական մասսաների կարիքները հոգալու և նրանց տնտեսապես ուժեղացնելու, կուլտուրապես բարձրացնելու ցանկությամբ յերբեք նման ձեռնարկություն մեր յերկրում չի յեղել:

Առաջին հաջող քայլը այս կարևոր ասպարեզում կատարեց Բանվորա-գյուղացիական իշխանությունը հանձինս Հողժողկոմատի:

Այս ուղիով նա պիտի ընթանա ավելի մեծ ծավալով հետագայում ևս:

## ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Համաշխարհային պատերազմի հետևանքով տարված և մուտք գործած խոշոր յեղջյուրավոր անասունների ժանտախտը Հայաստանի մի շարք գավառներում վերջին 2—3 տարվա ընթացքում շարունակում էր ավերումներ անել, և այս տարի մի քանի շրջաններում այնպիսի սուր բնույթ էր ստացել, վոր սպառնում էր վոչնչացնել մեր անասնապահությունը:

Սակայն 1922 թ. ձեռք առած կտրուկ միջոցների ու անասնաբուժական հսկողության հսկայական ջանքերի շնորհիվ հնարավոր յեղավ ժանտախտի՝ անասնապահության այդ չարիքի տարածման առաջն առնել, մաքրել վարակված շրջանները ժանտախտից և այդպիսով փրկել մեծ թվով գյուղական տնտեսություններ այդ խոշոր վտանգից:



Հիվանդության տարածման առաջն առնելու, նաև այն իսպառ վերջացնելու նպատակով բոլոր վտանգված վայրերի խոշոր յեղջյուրավոր անասունները յենթարկվել են խիստ կարանտինային հսկողության: Միևնույն ժամանակ կատարվել են մասսայական հակաժանտախտային պատվաստումներ հետևյալ ցուցակի համաձայն.

| № | ԳԱՎԱՌՆԵՐ | Վանդակված վարկերի թիվը | Ռուբլով յեղջյուրավոր անասունների քանակը վերակազմված վարկերում | Գյուղատնտեսությունների յեղջյուրավոր անասունների քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | Լոռու . . . . . . . . . . | 10 | 5,188 | 4,987 |
| 2 | Ալեքպոլի . . . . . . . . | 28 | 13,600 | 11,322 |
| 3 | Ղարաքիլիսայի . . . . . . | 5 | 2,618 | 2,412 |
| 4 | Էջմիածնի . . . . . . . . | 8 | 7,162 | 5,719 |
| | Ընդամենը | 51 | 28,568 | 24,440 |

Վորպես պերճախոս ապացույց այն հանգամանքի, վոր հակաժանտախտային շիճուկը միակ բացիոնալ միջոցն է այդ աճելի հիվանդության դեմ կռվելու, առաջ ենք բերում անասնաբուժական բաժնի իրական կյանքից վերցրած թվերը:

| № | ԳԱՎԱՌՆԵՐ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Լոռու . . . . . | 533 | 381 | 71,5 % | 4,987 | 391 | 7,8 % |
| 2. | Ալեքպոլի . . . | 1235 | 947 | 76,5 » | 11,322 | 188 | 1,7 » |
| 3. | Ղարաքիլիսայի . | 275 | 232 | 85,5 » | 2,412 | 42 | 1,8 » |
| 4. | Էջմիածնի . . . | 286 | 174 | 62 — » | 5,719 | 49 | 0,7 » |
| | Ընդամենը | 2,329 | 1,738 | 74,5 % | 24,440 | 670 | 2,3% |

Ներկայումս ժանտախտ գոյություն ունի հետևյալ վայրերում,

| | | |
|---|---|---|
| Լոռվա գավառում . . . . . . . . . . . . | 3 | գյուղ |
| Ալեքպոլի » . . . . . . . . . . . | 1 | » |
| Ղարաքիլիսայի . . . . . . . . . . . | 1 | » |
| Էջմիածնի » . . . . . . . . . . . | 6 | » |
| Ընդամենը . . . . . . . . . . . . . . | 11 | գյուղ |

Այդ գյուղերում բոլոր անասունները պատվաստված են և պահվում են կարանտինայի հսկողության տակ:

Բացի ժանտախտից տարվա ընթացքում նկատվել են մի քանի շրջաններում անասունների համաճարակային բնույթ կրող ուրիշ հիվանդություններ. այն է սիբիրախտ, ջերմախտա-



նման հիվանդություն, արյունապարազիտային հիվանդություն և խլախտ:

| № | ԳԱՎԱՌՆԵՐ | Հիվանդության անունը | Հիվանդացած անասունների թիվը | Հիվանդությունից սատկած և սպանված անասունների թիվը |
|---|---|---|---|---|
| 1 | Լոռու . . . . . . . . . | Սիբիրախտ | 67 | 67 |
| 2 | Իջևանի . . . . . . . . | » | 28 | 27 |
| 3 | » . . . . . . . . . | Արյունապարազիտային | 88 | 80 |
| 4 | » . . . . . . . . . | Ջերմախտ | 15 | 8 |
| 5 | Երևանի . . . . . . . | Խլախտ | 5 | 5 |
| 6 | Էջմիածնի . . . . . . | Խլախտ | 1 | 1 |
| 7 | Ղարաքիլիսայի . . . | Խլախտ | 1 | 1 |
| | Ընդամենը . . | | 205 | 189 |

Համաճարակային հիվանդությունների դեմ կռվելու հետ միաժամանակ գործել են տեղական անասնաբուժական ամբուլատորիաները, որոնց աշխատանքը արտահայտվում է հետևյալ թվերով:

| № | ԳԱՎԱՌՆԵՐ | Խոշոր եղջյուրավոր անասուններ | Վոչխար այծ և խոզ | Էշ | Կրկնակի այցելություններ | Ձի | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նոր-Բայազեդ . . . . . | 120 | 28 | — | 317 | 606 | Լոռվա և Իջևանի ամբուլատորիաները բացվել են 1922 թ. օգոստոսից |
| 2 | Մեծ Ղարաքիլիսա . . . | 73 | 168 | — | 180 | 101 | |
| 3 | Ալեքպոլ . . . . . . . | 14 | — | — | 13 | 32 | |
| 4 | Էջմիածին . . . . . . . | 71 | 10 | 1 | 63 | 44 | |
| 5 | Երևան . . . . . . . . | 141 | — | — | 910 | 351 | |
| 6 | Լոռի . . . . . . . . . | 15 | 2 | — | 12 | 7 | |
| 7 | Իջևան . . . . . . . . | 42 | 18 | — | 24 | 18 | |
| 8 | Երևանի սպանդանոցում | 2778 | 14.261 | — | — | — | |
| 9 | Ալեքպոլի սպանդանոցում | 1592 | 4152 | — | — | — | |
| | Ընդամենը . . | 4846 | 18.639 | 1 | 819 | 1159 | |

*Թվերը համեմատաբար փոքր են, մինչդեռ կարիքն իրական կյանքում անհամեմատ ավելի մեծ է յեղել: Այս հակադրությունը հետևանք է այն բանի, որ անասնաբուժական բաժանմունքը չունենալով յուր տրամադրության տակ պահանջվող թվով բժիշկներ՝ ակամայից տեղերի հետ կապված ուժերին ղրկել է համաճարակային վայրերը, որի հետևանքը յեղել է ամբուլատորիաների փակումը հաճախ յերկար ժամանակով:*

*Անասնաբուժական բաժինը հոգածություն է ունեցել ագարակների, պետական ձեռնարկությունների և կաշեգործարանների վրա, ինչպես և նկատելի դեր է խաղացել ժողովրդական առողջապահության ասպարեզում կռիվ մղելով սիբիրախտի, քոսի, կատաղության, խլախտի և մարդկանց համար վտանգավոր ու տարափոխիկ այլ հիվանդությունների դեմ:*

*Խորհրդային Հայաստանի տնտեսական զարգացման խոշոր ազդակներից մեկն էլ հանդիսանում է անասնապահությունը, որի գոյությունն ու զարգացումը լայն չափով պայմանավորվում է անասնաբուժական գործի իդեալական կազմակերպությամբ, որին հասնելու համար Հողժողկոմը միջոցներ է ձեռք առնում հիմնելու 1. Եպիզոոտոլոգիական կայան շրջուկ, պատվաստման նյութեր, վակցիններ և համաճարակային հիվանդությունների դեմ կռվելու համար պահանջվող այլ պատրաստուկներ պատրաստելու համար 2. Դպրոց կամ կուրսեր անասնաբուժակներ պատրաստելու համար 3. Անասնաբուժական ֆակուլտետ Հայաստանի համալսարանին կից:*

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Հայաստանը նույնիսկ նախապատերազմական շրջանում մանր տնտեսությունների յերկիր եր, նման միջավայրում խորհրդային տնտեսությունների դերը պետք լինի վոչ թե կազմակերպվել ու դառնալ իբրև խոշոր արտադրական միավորներ, դառնալ փոքրիկ տնտեսությունների վորակը բարձրացնող և նրանց աշխատանքի մեջ ինտենսիֆիկացիա մտցնող կուլտուրական կրթական օրգաններ:*

*Հայաստանի բոլոր Խորհրդային տնտեսություններն իրենց տրամադրության տակ ունեին հողային հետևյալ տարածությունները:*



| № | ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ | Տեղ | Հողերի տարածությունը |
|---|---|---|---|
| 1 | Առաջին Խորհր° տնտեսութ. | Յերևան | 39 դեսյատ. |
| 2 | Յերկրորդ ,, ,, | Կոտայք | 95 ,, |
| 3 | Յերրորդ ,, ,, | Ջանփիրառ. | 325 ,, |
| 4 | Չորրորդ ,, ,, | Լոռի | 25 ,, |
| 5 | Սերմնաբուծարան ,, | Յերևան | 50 ,, |
| 6 | Կաթնատնտեսական ֆիրմա | Լոռի | 755 ,, |

*Այս ցուցակը պարզ ցույց է տալիս, որ Հայաստանի Խորհրդային տնտեսությունների հողային հնարավորություններն էլ թույլ չեն տալիս նրանց դառնալ խոշոր արտադրողական գործոններ մեր յերկրում: Հողժողկոմատին մնում է տնտեսություններից յուրաքանչյուրին, տեղական պայմաններն ու պահանջներն նկատի առնելով, առաջադրել որոշակի հանձնարարություն —նպատակ և պահանջել նրանցից դառնալ մասնանշված ասպարեզում գյուղատնտեսական կատարելագործված ձեռնարկություն—դպրոցներ:*

*Համագործակցություն, ծրագրային և գործնական աշխատանքի ամբողջականություն ստեղծելու նպատակով՝ բոլոր տնտեսությունները վերջերս կազմակերպված են և ղեկավարվում են միության վարչությամբ, որի կազմի մեջ մտնում են տնտեսությունների կառավարիչները՝ նախագահությամբ Հողժողկոմատի կոլեգիայի անդամ-ներկայացուցչի:*

**Առաջին Խորհրդային տնտեսություն.**—*Գտնվում է Յերևան քաղաքում Հրազդանի աջ ափին. ունի 39 դեսյատին տարածություն, որից բանը խաղողի այգիներ են իսկ մնացը պտղատու ծառեր: Տնտեսության արտադրած հում բերքը մշակելու և արդյունաբերելու համար 1921 թվից հիմնված է մի գործարան, որը պատրաստում է չոր մրգեղեններ: Առաջին Խորհրդ. տնտեսությունը պետք լինի այգեգործության և պտղաբուծության մի օրինակելի դպրոց ու միևնույն ժամանակ նա ունենալու յե տնկարան և միրգ չորացնելու կատարելագործված գործարան: Ընդգծված ուղղությամբ արդեն աշխատանքներ տարվում են: Հարվածային կարգով հիմք է դրված նոր տնկարանի, որի գլխավոր տունկերը պետք լինեն կորիզավորները. ապա մաքրված և պլանտաժի յե յենթարկված $1^1/_2$ դեսյատին հին այգին, որի տեղը վաղը պետք տնկվեն:*

**Երկրորդ խորհրդային տնտեսություն.**--Գտնվում է Երևանի գավառի Կոտայքի շրջանում, հեռավորությունը Երևանից 14 վերստ է: Տնտեսությունը բռնում է 95 դեսյատին տարածություն: Այդ տնտեսության համար վորոշված է, վոր նա հետագայում պիտի աշխատի յուր շրջապատին ծառայել այգեգործության և ծխախոտագործության ասպարեզում: Վերջինը տնտեսության հիմնական խնդիրը պիտի լինի:

**Երրորդ խորհրդային տնտեսություն.**—Գտնվում է Էջմիածնի գավառի Զանգիբասար շրջանի Փարաքար գյուղի մոտ, Երևանից 10 վերստ հեռավորությամբ: Պետանի հողերի տարածությունն է 270 դեսյատին, վորից տասը խաղողի այգի յե, իսկ 15-ը՝ բարդու անտառ: Վոռոգվում է Հրազդանից սկիզբ առնող առանձին առվով: Այդ տնտեսությունը պիտի զարկ տա յուր շրջապատում տարածված կուլտուրաների ինտենսիֆիկացիային: Այդ տեսակետից նա հատուկ ուշադրություն պիտի դարձնի բամբակի, խաղողի, վաղի և չալթուկի մշակության վրա: Այս ուղղությամբ արդեն աշխատանքներ տարվում են: Ամբողջ հողը բաժանված է հինգ մասի, հինգ դաշտային սիստեմի, սերմնափոխության կիրառելու համար: Այգու տարածությունը ընդլայնելու համար արդեն փորված է այգի տնկելու համար նոր տասը դեսյատին հողամաս: Հիսուն դեսյատինի վրա ցորենի աշնանացանք արդեն կատարված է, բամբակի համար հողը արդեն հերկված է: Այս տնտեսության մեջ գործում է բրինձ մաքրելու մեքենա և մատորի ուժով գործող մի աղացք: Յերրորդ Խորհրդային տնտեսությունը՝ ծառայելով հանդերձ կրթական կուլտուրական նպատակների շրջակա հայ և թյուրք ազգաբնակչության համար հնարավորություն ունի Հողժողկոմատին ծառայելու իբրև յեկամտաբեր մշտական աղբյուր:

**Չորրորդ խորհրդային տնտեսություն.**—Գտնվում է Լոռվա գավառում Ախթալա յերկաթուղային կայարանից յերեք վերստ հեռավորության վրա. ունի 25 դեսյատին հող, վորի մեծագույն մասը պտղատու ծառերի այգիներ են: Հողի այդ քանակությունը բավարար չէ, ուստի Հողժողկոմատի կողմից առաջարկված է հողաշինարարական բաժնին առաջիկա աշխատանքների ժամանակ ընդարձակել տնտեսության սահմանները: 1922 թ. Չորրորդ տնտեսության վրա ծախսված է 424,956,338 ռուբլի, վորի մեծագույն մասը գործադրվել է հայ-վրացական պատերազմի ըն-



թացքում ռումբերից մեծապես վնասված հրաշալի շենքեր վերականգնելու և վերանորոգելու համար:

Տնտեսությունը պետք է ձգտի դառնալ պտղաբուծության օրինակելի մի կայան Լոռվա գավառի գյուղացիության համար և տունկեր մատակարարի նրան: Այս տնտեսությունը կարող է փոքր ծավալով վարել ծխախոտի մշակության գործ և նպաստել նրա զարգացմանն ու կատարելագործմանն այդ գավառում:

**Սերմաբուծարան.**— Գտնվում է Յերևան քաղաքում՝ յերկաթուղու կայարանի մոտ: Հողի տարածությունն է 50 դեսյատին: Վոռոգվում է Աբու-Հայաթի ջրով: Սերմաբուծարանի վրա 1922 թ. ծախսված է մոտ 21,000,000,000 ռուբլի հայկական խորհրդային դրամով: Գումարների մեծ մասը ծախսված է շինարարական աշխատանքների համար: Կառուցվել է չորս սենյակից բաղկացած մի բնակարան, մի մեծ գոմ 25 գլուխ անասունների համար, մի մեծ ջերմատուն 32 շրջանակներով 312 արշին մեծությամբ, 10 ջերմոց 932 արշին մեծությամբ, 10 գետնափոր պահեստներ, 2 նոր ճանապարհ, հողերի պարարտացումն եայլն:

Առաջին տարին լինելով և ցանկանալով կատարած ծախսերի մի մասը ծածկել, սերմաբուծարանը 1922 թ. շատ փոքր ծավալով ծառայեց յուր հիմնական նպատակին. արտադրել է մեծ քանակությամբ բանջարեղեններ և արմտիքներ: Այսուհետև սերմաբուծարանը պիտի ծառայի յուր հիմնական նպատակին, վորը Հողժողկոմատը ընդգծել է հետևյալ ձևով: 1. Տեղական կլիմայական պայմաններին համապատասխանող բանջարանոցային բույսերի սերմեր պատրաստելը. 2. Սելեկցիայի միջոցով ազնվացնել տեղական սերմերը նաև ընտրությամբ ներմուծել գոյություն չունեցող տեսակները. 3. Ուսումնասիրել և կիրառել հողային և կլիմայական պայմաններին համապատասխանող մշակության ու զարգացման յեղանակները և այն մատչելի դարձնել ազգաբնակչության լայն խավերին. 4. Կռիվ մղել թե ներմուծվող և թե յերկրի ներսում գտնվող կեղծ և ցած տեսակի սերմերի վաճառքի դեմ ու մատչելի գներով առաջարկել գնողներին սերմաբուծարանի ընտիր սերմեր:

**Կարնաշենական Ֆերմա.**— Գտնվում է Լոռվա գավառի Վորոնցովկայի շրջանում. ունի 755 դեսյատին ընտիր խոտահարք: Ֆերման կազմակերպված է Հողժողկոմատի և Պարժողկոմատի միացյալ ջանքերով: Աշխատանքներն սկսված են 1922 թվի յերկրորդ կիսից: Առայժմ հաջողվել է միանգամայն կար-

դավորել անցյալում Գոալիբին պատկանող բոլոր շենքերը։ Ձեռք է բերված կենդանի և մեռյալ ինվենտար։

Կաթնատնտեսական ֆերման լայն հիմունքների վրա դնելու և օրինակելի տնտեսություն հիմնելու համար Հողժողկոմատըն ու Պարժողկոմատը ձեռք են առնելու արտակարգ միջոցներ։ Ֆերմայի հաջողությունը ապահովված է տեղական պայմաններով, յեթե կազմակերպչական ու մասնագիտական աշխատանքները վան լիակատար չափով օգտվելու այդ պայմաններից։

**Շերամապահական կայան.** — Այս կայանը պետք է դասել Խորհրդային տնտեսությունների շարքը, նկատի ունենալով նրա հարակցությունը և կազմակերպչական ձևը Խորհրդային տնտեսությունների նկատմամբ։

Շերամապահական կայանը յուր գործունեությունը սկսել է 1920 թվից. բայց իրոք այս կայանը իր գործունեությունը կանոնավորել է և ընդարձակել 1922 թվականից։ Վերջին թվականի շերամի սեզոնին նոր կայանում բացված է մեկ տուփ բաղդատի և մեկ տուփ դեղին տեսակի շերամի, վորից բաղդատինը լավ արդյունք է տվել, վորը և հատկացրած է սերմին։ Բացի կայանի բոժոժներից հինգ փութ քաշ վեց փունտ գնված է զանազան անձնավորություններից, 6 փութ 21 փունտ թաց բոժոժ սերմի համար։ Այս բոլորից կստացվի մոտ 280-300 տուփ սերմ, տուփը 25 գրամ։ Սերմի քննությանը ձեռնարկվել է և համապատասխան ինվենտարն արդեն պատրաստ է։

1921 թվին Հայաստանում շերամի սերմ չլինելու պատճառով Հողժողկոմատը արտասահմանից գնել եր 1,000 տուփ սերմ, վորը 1922 թվին բաժանել եր ժողովրդին տուփը 60 կոպեկով։ Ջնայած վոր այն ձեռք եր բերված շատ թանկ գնով, տուփը հինգ ռուբլի վոսկով։

Սերմն արտասահմանից գնելը շատ թանկ է նստում և բացի այդ սերմերը մինչև տեղ հասնելը կլիմայական մեծ փոփոխությունների յեն յենթարկվում, վորպիսի հանգամանք ազդում է սերմից դուրս գալիք շերամի վորդերի վրա։ Մյուս կողմից շատ անգամ նույն իսկ չի հաջողվում ժամանակին սերմ ճարել։ Այս բոլոր պարագաները պետք է դրդեն, վոր շերամապահական կայանը իր ամենամեծ ուշադրությունը դարձնե պահանջվող քանակությամբ շերամի սերմ տեղումս պատրաստելու վրա։

1922 թվի փորձից կարելի յե յեզրակացնել, վոր 25 գրամանոց տուփը 40-50 կոպեկից ավելի չի արժենա կայանին, մինչդեռ դրսից գնելու համար պիտի վճարվեր տուփին հինգ ռուբլի վոսկով։



Հայաստանի և Նախիջևանի համար պահանջ կը լինի մոտավորապես 3,000 տուփ սերմ, վորը կարող է պատրաստել։ Կայանում պատրաստված սերմի մեկ տուփին ժողովուրդը հեշտությամբ կարող է վճարել մեկ ռուբլի կամ մեկ ռուբլի քսան կոպեկ։ Նախքան պատերազմը սերմը ավելի թանկ արժեր։ Կայանը 3,000 տուփ սերմ պատրաստելով, հետևյալ առավելությունները կունենա։

1. Յերկիրը կազատի արտասահմանի շատ թանկ սերմը գնելուց. 2. Հնարավորություն կունենա ժողովրդին մի տուփ սերմը վաճառել 1 ռուբլի 20 կոպեկ և 1 ռուբլի, վորը շատ չափավոր գին կարելի յե համարել. 3. Կայանը սերմի պատրաստությունից և վաճառքից կոգտվի մոտավորապես 2,000 ռուբլի վոսկով, վորը և կգործադրվի կայանի պետքերի և կարիքների վրա։

Կայանը մատնանշված քանակությամբ սերմեր պատրաստելու համար գործիքներ արդեն ունի։ Վերջերս Թիֆլիսից ըստացված են 300 դարակներ և 400,000 թղթե տոպրակներ թիթեռնիկների համար։ Առաջիկա սեզոնին կայանը 3,000 տուփ սերմ պատրաստելու լրիվ հնարավորություններն ունի, յեթե այդ քանակությամբ սերմ պահանջվող 75 փութ թաց բոժոժը ժամանակին գնվի, վորը հնարավոր է ձեռք բերել և կարժենա մոտավորապես 1,500 ռուբլի վոսկով։

## ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Հողաշինարարությունը լայն իմաստով վերցրած Հայաստանում միայն մի տարվա պատմություն ունի։

Ցարական Կառավարությունն Անդրկովկասում վորոնում եր Ռուսական գաղութներ ստեղծելու վայրեր և այդպիսիները հիմնում եր նույնիսկ այնպիսի շրջաններում վորտեղ բնիկ ազգաբնակչությունը խեղդվում եր սակավահողությունից։

Գնահատելի գործն այդ շրջանում հատակագծերի և հողաչափական տախտակների վրա, գյուղերի հողային պայմանները ձեվակերպող տեխնիկական աշխատանքներն եյին, վորոնցից մենք ներկայումս օգտվում ենք հողաշինարարական աշխատանքներ կատարելիս։

Ցարական կառավարությանն հաջորդող դաշնակցական կառավարությունը հողաշինարարությունը գերազանցում և նախորդին յուր բացասական կողմերով:

Խորհրդային իշխանության առաջին շրջանում ևս Հողօրգանները թույլ են կազմակերպված յեղել, զբաղվել են բացառապես մասնակի վեճերի հարդարումներով:

Միայն 1921 թվի նոյեմբերին հաջողվեց լուրջ հողաշինարարությամբ զբաղվելու աշխատանքներին անցնել. այդ ասպարեզում ամենից առաջ մեզ հարկավոր է վորոշել, թե ինչին պետք է ձգտի հողաշինարարությունը մեր յերկրում, ինչ խնդիրներ պիտի առաջադրի իրեն:

Հողաշինարարությունը պետք է իբրև հիմք ունենա ընդհանրապես ամբողջ յերկրի (համապետական ու հասարակական) և մասնավորապես գյուղական տնտեսության զարգացման ու առաջադիմության համար գյուղում բարենպաստ ու կայուն պայմաններ ստեղծելու նպատակը:

Այս հիմնական պահանջին բավարարություն տալու համար Հողաշինարարությունը մեր յերկրում պետք է ձգտի:

1. Հատկացնել գյուղական ազգաբնակչությանը հողամասեր յերկրի բնական տվյալներից բղխող նորմաների սահմաններում:

2. Ըստ պահանջի հատկացնել հողամասեր պետական տնտեսություններին ու արտադրողական արտել—կոոպերատիվներին:

3: Հող—հատկացման ժամանակ ստեղծել մեծագույն հարմարություններ գյուղական տնտեսության մեջ քիչ աշխատանքի գործադրումով շատ արդյունքի հասնելու համար:

4. Կազմակերպել ներքին հողաբաժանությունը տնտեսությունների ամրապնդող, կայուն հիմունքներով գյուղատնտեսական ու տեխնիկայի պահանջների համաձայն:

և 5. Հարդարել ու բարելավել գյուղացի աշխատավորության բնակարանային պայմանները:

Ղեկավար ունենալով հողաշինարարության վերոհիշյալ պահանջները Հողժողկոմատի Հողային բաժինը ձեռնարկեց յուր աշխատանքին, վորի ամբողջական պատկերը յուր դրական ու բացասական կողմերով բերվում է ստորև:

## ՀՈՂԱՅԻՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՅԵՎ ՄԻՋԳՈՒՂՅԱՆ ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբունքային և գիտական տեսակետից Հողային Նորմաները վորոշող պայմանների մեջ հողաշինարարությունը գերա-



կշռող դեր պիտի տա յերկու հանգամանքների.

ա) Յերկրի բնական տվյալներին,

բ) Նույն յերկրի բնակչության տնտեսական զարգացման աստիճանին:

Այս յերկու հիմունքներն աչքի առաջ ունենալով մասնագետ ու մեր յերկրի բոլոր գոտիներին լավ ծանոթ անձերի կողմից խնդիրները լուրջ ուսումնասիրության յենթարկելուց հետո 1922 թ. սկզբներին Հողժողկոմատը հողօգտագործող աշխատավորության հողային նորմաներ սահմանեց հետևյալ չափով:

### ՏԱԽՏԱԿ № 1

Հայաստանի տարբեր գոտիներում հողօգտագործող ծխերի յուրաքանչյուր շնչին հանելիք հողի նորման (չափը)

| № | ԳՈՏԻՆԵՐԸ | ՀՈՂԱՅԻՆ ՆՈՐՄԱՆ |
|---|---|---|
| 1 | Դաշտային . . . . . . . . . | մեկ 1 դեսյատին |
| 2 | Նախալեռնային . . . . . . | մեկ և մի քառորդ |
| 3 | Լեռնային . . . . . . . . | յերկու դեսյատին |
| 4 | Ալպյան . . . . . . . . . . | յերեք դեսյատին |

Հիմնական այս նորմաները վորոշելուց հետո Հողժողկոմատը բնականաբար պետք եր անցներ կազմակերպված ու ծրագրված հողաբաժանության գործին, վորի համար պահանջվելու եյին մի շարք տվյալներ ու նյութեր, վորոնց մեջ առաջնակարգ դեր պիտի խաղային գյուղերի բնակչությանն ու հողերին վերաբերող վիճակագրական ճշգրիտ թվերը:

Դժբախտաբար այս կողմից Խորհրդային Հայաստանը գտնվում եր վողբերգական վիճակի մեջ:

Նախկին Յերևանի նահանգի վիճակն ըստ ամենայնի այնպես եր փոխվել, վոր հին տվյալները միանգամայն անպետքացել եյին, իսկ նոր վիճակագրությունը դեռ չկար:

Պարզ եր, վոր նման պայմաններում վորևե լուրջ քայլ անել հողաշինարարության ասպարեզում բացարձակապես անկարելի յեր, ուստի և հողային բաժինը յուր գործունեության առաջին որերում ձեռնարկեց յերկրի բնակչության թվի և հողօգտման պայմանների մասին վիճակագրական տվյալներ հավաքելու գործին:

Ձեռնարկած գործը շատ էր մեծ ու պատասխանատու։ Այլ պայմաններում նա պիտի կազմակերպեր կենտրոնական հատուկ մարմին, և այդ գործի համար պատրաստված ներկայացուցիչների միջոցով, մինչդեռ այս դեպքում գործը տանում էին վոչ այդպիսի ֆունկցիաներ ունեցող հողային բաժինները։

Այսպես լինելով հանդերձ՝ ազգաբնակչության թվի նկատմամբ մեր որգանները ստացան միանգամայն ճիշտ վիճակագրություն, իսկ ընդհանրապես հնարավոր յեղավ ստանալ մի նյութ, վորը մի կողմից շատ խոշոր չափով նպաստեց մեր տեղական հողային մարմիններին անվորոշության մեջ խարխափողի վիճակից դուրս գալ և ավելի վորոշ ու պարզ ուղիներն ընդգծել իրենց աշխատանքների համար. իսկ մյուս կողմից մեզ հնարավորություն տվեց գեթ մոտավոր ճշտությամբ անփոփելու և յեզրակացության գալու Հայաստանի գյուղացիության հողօգտման արդի վիճակի մասին։

Այս աշխատանքները Հողժողկոմատին բերին անվիճելի յեզրակացության, վոր Հայաստանի ներկա տերիտորիայի վրա ապրող ժողովրդի հողօգտման ընդհանուր իրական պատկերը շատ հեռու յէ այն նորմաներից, վոր մեր յերկրի բնական պայմաններում ու այդ պայմանների համապատասխանող առողջ ու կայուն տնտեսություն ստեղծելու ցանկությամբ մշակել էյինք մենք։



# ՏԱԽՏԱԿ № 2

Ցույց է տալիս թե սակավահողությունը վորքան ընդհանուր է և ինչ աստիճանի յե հասնում Հայաստանի գավառներում

| № | ԳԱՎԱՌՆԵՐ | ԳԱՎԱՌԱ-ՄԱՍԵՐ | Հողային նորմաներ: Հիմնական | Հողային նորմաներ: Ժամանակավոր | Կրճատված է | Ավելանում է | Մնում են հողազուրկ շնչեր |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Յերևանի | Ախտայի | 2 դ. | 1 դ. | 50 % | — | — |
| 2 | » | Կոտայքի | 2 » | 1 » | » | — | — |
| 3 | » | Բաշ-Գյառնի | 2 » | 1 » | » | 3000 | 25.000 |
| 4 | » | Հրազդանի | 1 » | 1/2 » | » | — | |
| 5 | » | Ղամարլուի | 1 » | 1/2 » | » | — | |
| 6 | » | Վեդիբասարի | 1 » | 3/4 » | 25 % | 5000 | |
| 7 | Էջմիածնի | Զանգիբաս. | 1 » | 1/2 » | 50 % | 2300 | |
| 8 | » | Ղուրդուղուլի | 1 » | 9/16 » | 44 % | — | |
| 9 | » | Սամաղարի | 1 » | 9/16 » | 44 % | — | 23.000 |
| 10 | » | Աշտարակի | 2 » | 1 » | 50 % | — | |
| 11 | » | Արարանի | 2 » | 1 » | » | — | |
| 12 | » | Վաղարշապ. | 1 » | 1/2 » | » | — | |
| 13 | Նոր-Բայազ. | I կատեգ. | 2 » | 2/3 » | 67 % | — | |
| 14 | » | II » | 3 » | 2/5 » | 72 % | 2500 | 3500 |
| 15 | » | III » | 3 » | 1 » | 66 % | — | |
| 16 | Ղարաքիլիս. | Ղարաքիլիսա | 2 » | 1 » | 50 % | — | |
| 17 | » | Համամլուի | 2 » | 1 » | 50 % | — | 6000 |
| 18 | Դարալագ. | Բեշիշքենդի | 2 » | 1 » | 50 % | — | |
| 19 | » | Գնդեվազի | 3 » | 1 1/2 » | 50 % | — | |
| 20 | Լոռու | Վարանցովկ. | 3 » | 2 » | 33 % | — | |
| 21 | » | Ջալալօղլուի | 2 » | 1 » | 50 % | — | 6800 |
| 22 | » | Դսեղի | 2 » | 1 » | 50 % | — | |
| 23 | » | Ալլահվերդու | 2 » | 1 » | 50 % | — | |

Տախտակի մեջ չցուցակագրված գավառների հողային պայմանները ավելի մխիթարական չեն։

Ինչ կարող էր անել նման պայմաններում Հողժողկոմատը, յեթե վոչ կազմակերպված հունի մեջ դնելու հողապուրկ և սակավահող գյուղացիության ճանապարհով ձեռք բերված իրավունքի պահանջը, վորը շատ քիչ դեպքում ու չնչին ծավալով միայն շոշափում եր մեր յերկրում այնքան սակավաթիվ կալվածատերերի և գյուղի հողատեր կուլակների շահերը, իսկ խոշորագույն չափով պիտի բավարարվեր առաջ նորմաների սահմաններում հողամասեր ունեցող գյուղերի և համեմատաբար ամբողջական տնտեսության տեր միջակ գյուղացիության հաշվին։

Այս ուղղությամբ գործելով կենտրոնի Հողբաժինը միջգյուղյան հողաբաժանության նախաձեռնությունը հենց տարվան սկզբից յուր վրա վերցրեց և բացի Ն. Բայազեդի գավառից, վորը ինքնուրույն է վարել հողաշինարարական աշխատանքները, մնացած գավառներում հողաշինարարության ծրագրեր են կազմել Հողբաժնի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ։

## ՏԱԽՏԱԿ № 3

Խորհրդային Հայաստանի մի քանի գավառներում 1922 թ. կատարված հողաշինարարական աշխատանքների ցուցակը։

| № | ԳԱՎԱՌԻ ԱՆՈՒՆԸ | Աշխատանք է կատարվել: Շրջան. | Աշխատանք է կատարվել: Գյուղ. | Ինչ տիպի աշխատանք է կատարվել |
|---|---|---|---|---|
| 1 | Յերևանի . . . . . | 6 | 114 | Միջգյուղ. և ներք. հողաբաժ. |
| 2 | Ն. Բայազեդի . . . | 4 | 81 | » » » |
| 3 | Էջմիածնի . . . . | 3 | 86 | » » » |
| 4 | Դարալագյազի . . . | 2 | 83 | Միջգյուղ. հողաբաժանութ. |
| 5 | Լոռվա . . . . . | 3 | 40 | Նախապատրաստ. ուսումնաս. |
| 6 | Էջմիածնի . . . | 2 | 55 | » » |
| 7 | Ղարաքիլիսայի . . | 1 | 119 | » » |
| 8 | Ալեքպոլի . . . . . | 2 | 22 | » » |



Միջգյուղյան հողաբաժանությունը հաջող կազմակերպելու և հողաշինարարության ծրագրերը մշակելու համար Հողժողկոմատի Հողբաժինը հանձինս յուր պատասխանատու աշխատակիցների՝ շրջագայել է տվյալ շրջանների մեջ մտնող բոլոր գյուղերի հողկոմների համագումարները, տվել է զեկուցումներ հողային օրենքների և հողաշինարարական հարցերի մասին, լսել է զեկուցումներ բոլոր գյուղերի ներկայացուցիչներից և ապա միայն համապատասխան կարգով մշակել—հաստատել տվել հողաշինարարության ծրագրերը։ Մշակված բոլոր ծրագրերը համապատասխան շրջանների գյուղերի հողկոմների համագումարների հավանությանն է դրել և դեռ չի յեղել մի դեպք, վոր հայտարարված ծրագիրն ընդունված չլինի մասնակցողների բուռն վոգևորությամբ ու ովացիաներով։

Հողբաժնի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարության տակ 1922 թ. ընթացքում գյուղհողկոմների համագումարներ են գումարվել.

| № | Գ Ա Վ Ա Ռ | Շ ր ջ ա ն | Քանի անգամ |
|---|---|---|---|
| 1 | Յերևանի . . . . . . . | Ղամարլուի | 2 անգամ |
| 2 | » | Հրազդանի | 2 » |
| 3 | » | Բաշգյառնիի | 1 » |
| 4 | » | Կոտայքի | 1 » |
| 5 | » | Ախտայի | 1 » |
| 6 | Էջմիածնի . . . . . . . | Զանգիբասարի | 2 » |
| 7 | » | Սամաղարի | 2 » |
| 8 | » | Ղուրղուղուլուի | 1 » |
| 9 | Ղարաքիլիսի . . . . . . | Համամլուի | 1 » |

## ՆԵՐՔԻՆ ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջգյուղյան հողաշինարարությունից հետո գյուղհողկոմները ձեռնարկում են ներքին հողաբաժանության։

Այս ասպարիզում գյուղհողկոմները նախ պիտի ունենան գյուղի սահմանների մեջ մտնող հողկտորների ճիշտ չափը։

Այս աշխատանքը բացառապես կատարում են գյուղական

չափաբաժինները թույլատվությամբ շրջգործկոմի, վորը նրանցից վերցնում ե պարտավորագիր աշխատանքները բարեխղճությամբ ու անկաշառ տանելու մասին։

Շնորհիվ այն հանգամանքի, վոր չափաբաժինները դրված են խիստ հսկողության շրջանակի մեջ, նրանց կատարած աշխատանքն ընդհանուր առմամբ բավարար պիտի համարել։

Ներքին հողաբաժանության մեջ ամենից կարեվոր հանգամանքը ըստ կատեգորիաների հողաբաժանություն կատարելն ե։

Այս խնդրի հաջող վարելը ապահովելու և հնարավոր չարաշահումներից գործը զերծ պահելու համար Հողժողկոմատը դրել ե յերկու պահանջ.

1. Հողակտորների կատեգորիան վորոշում ե հողկոմը, բայց սանկցիա յե ստանում համայնքի ընդհանուր ժողովից։

2. Շնչերին հասանելիք նորմայի սահմանում և ըստ կատեգորիաների հողամասերը թողնվում են նախկին տերերի ձեռքին։

Այս հիմունքներով ներքին հողաբաժանություն կատարելուց հետո, ներքին հողաբաժանության արդյունքը դրվում ե համայնքի ընդհանուր ժողովի քննությանը, վորի հավանությունը ստանալուց հետո՝ հողային նոր մատյանը ներկայացվում ե Գավգործկոմին ի հաստատություն։

Շնորհիվ այն հանգամանքի, վոր գյուղհողկոմների ընտրության վրա հատուկ ուշադրություն ե դարձված, նաև հողային հարցերը նրանց բացատրված են մանրամասնորեն, ներքին հողաբաժանությունն ընդհանրապես ընթանում ե հաջող։

Միայն կենտրոնի հողբաժինը գյուղհողկոմներին տեղերում մանրամասն զեկուցումներ ու հրահանգներ ե տվել հետևյալ չափով.

| | | | |
|---|---|---|---|
| Լոռվա | գավառում | 40 | գյուղում |
| Ղարաքիլիսայի | » | 19 | » |
| Ալեքպոլի | » | 22 | » |
| Եջմիածնի | » | 118 | » |
| Յերևանի | » | 27 | » |
| Դարալագյազի | » | 15 | » |

Նոր-Բայազետի գավառի հողբաժինը բոլոր աշխատանքները վարել ե ինքնուրույն, իսկ Զանգեզուրի և Իջևանի գավառներում ծրագրված հողաշինարարություն չի կիրառվել, շնորհիվ այն հանգամանքի, վոր այդ գավառներին վերաբերվող հողաչափական և ծրային ավյալները գտնվում են Ադրբեջանում,



ուր Հողժողկոմատի կողմից առաքված են յերկու հողաչափ՝ պահանջվող բոլոր նյութերը բերելու համար։

Ծրագրվում ե 1923 թ. սկզբից հողաշինարարական և հողաբաժանության լայն աշխատանքները վարել նաև այդ գավառներում։

Ներքին հողաբաժանության գործն ավելի հաջողությամբ և հաստատուն ընթացքով վարելու համար անհրաժեշտ ե.

1. Բոլոր գյուղական համայնքներին անմիջականորեն ծանոթացնել աշխատավորական հողօգտագործման օրենքին ու մեր հողային հրահանգներին։ Այս հանգամանքը կարևոր ե կատարել նաև մասսաների դաստիարակչության ու քաղաքական պատրաստականության համար։

Վերջերս Հողժողկոմատի հրատարակությամբ լույս տեսած Հողային Օրենքներ և Հրահանգներ ժողովածուն մեծ կարևորություն ունի այդ տեսակետից։

2. Օրինական բնույթ տալ և շտատի մեջ մտցնել շրջգործկոմների հողբաժինների կիսարտոնյալ գոյությունը։

3. Վորոշել բոլոր գոտիներում յուրաքանչյուր շնչին հասանելիք հողի նվազագույն չափը։

4. Վորոշել գյուղերում և գյուղաքաղաքներում ապրող հոգևորականների և առևտրականների հողօգտագործման իրավունքը։

5. Վորոշել ուսուցիչների հողօգտագործման իրավունքը և

6. Վորոշել հողօգտագործման իրավունքից զրկված բայց այգիհող ունեցող քաղաքացիների դրությունը։

## ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Այդ պահանջների մեջ առաջնակարգ դեր են խաղում հետևյալները։

1. Միջգյուղյան հողաբաժանության ժամանակ պետք ե ստեղծել ամփոփ ու բնական սահմանների մեջ ընկած գյուղեր, նաև պետք ե վերցնել հողսեպավորումն և հողահեռավորությունը։

Առաջին և յերկրորդ պահանջներն հաշվի յեն առնված և նրանց բավարարություն են տրված այն չափով, ինչ չափով այն կապված չե յեղել հողաչափական աշխատանքի հետ, իսկ յերկրորդ յերևույթը, հողահեռավորությունը, Հայաստանի սակավահող գյուղերում բացառիկ յերևույթ ե։

Հողացրվածությունը Հայաստանում ահելի չափերի յե հաս-

նում։ Գյուղական մեկ տնտեսության հողակտորների թիվը սովորաբար 10-13-ի, իսկ շատ հաճախ 20-27-ի է հասնում։ Սա մեր գյուղական տնտեսությունը քայքայող պատճառներից մեկն և Հողժողկոմատի կողմից հողացրվածությունը վերացնելու պահանջը շատ կտրուկ է դրված գյուղհողկոմների առաջ։ Տեղական պայմանների համաձայն հողակտորների մինիմում մեծությունն է վորոշվում, վորի սահմաններում գյուղհողկոմները փոքրիկ կտորների միացնում են կատարում ներքին հողաբաժանությունից առաջ։

Այս միացումները չկատարող գյուղի հողաբաժանությունը չի հաստատվում։

Այսպես լինելով հանդերձ՝ չպետք է հանգստանալ, այլ անհրաժեշտ է պետական մասշտաբով մշակել և պարտադիր դարձնել բոլոր գոտիների համար հողակտորների մանրացման նվազագույն չափը։

Այս քայլը կլինի իսկապես մի իրական ռեֆորմ հողացրվածության ճանկերում տառապող մեր գյուղական տնտեսությունների համար։

2. Ներքին հողաբաժանության ժամանակ պետք է հարթել ու բարեկարգել գյուղական ազգաբնակչության բնակարանային պայմանները։

Դեռ պատերազմից առաջ մեր գյուղն իրենից մի բան չէր ներկայացնում։

Այժմ մեր գյուղի արտաքին տեսքը միայն բավական է, վորպեսզի նույնիսկ մեծ յեռանդ և մշակված բնավորություն ունեցող հասարակական գործիչը համակվի հուսահատությամբ։

Բավական է լինել Արարատի կենտրոն Ալիքուչակում, Զանգիբասարի՝ Կարխունում, Հրազդանի՝ Ուլուխանլույում, Վեդիբասարի՝ Դավալույում, Բաշգյառնիյում, Համամլույում և այլն, վորպեսզի մարդ համակվի ամբողջ տեսածը քանդելու և նորը շինելու անդուսպ ցանկությամբ։

Այս հարցը մի ուրիշ կողմ էլ ունի։

Խնդիրն այն է, վոր հին ռեժիմից և պատերազմի ու սովի տարիներից ժառանգություն է մնացել մեր գյուղում բնակարանային հարմարությունների մի այնպիսի անհավասարություն, վոր ներկա պայմաններում անհանդուրժելի յե։ Գյուղական կուլակներն ու աղաները ձեռք են բերել մի քանի տանտեղեր կամ տներ, իսկ չունևոր մասը զրկված է անգամ գյուղական հյուղից։



Այս հարցը հարկավոր է լուծել յերկու ուղղությամբ։ Նախ պետք է բոլոր գոտիների գյուղական տնտեսությունների համար սահմանել այնպիսի մի չափ, վորի սահմաններում պետք է բավարարել բոլոր ընտանիքներին. ապա պիտի ստեղծել Հողժողկոմատին յենթակա հատուկ մարմին, վորը միայն զբաղվի ասիական պատկեր ունեցող մեր գյուղերը կուլտուրայի և տեխնիկայի նորագույն պահանջների համաձայն հատակագծելու համար։

Այս ուղղությամբ մեր հողային օրգանները վորոշ աշխատանք կատարել են։

Մինչ այժմ հատակագծման յենթարկվել են

| № | ԳԱՎԱՌ | Շրջան | Գյուղ |
|---|---|---|---|
| 1 | Յերևանի | Կոտայքի | Քյանքյան |
| 2 | ,, | Ղամարլուի | Դալլար |
| 3 | ,, | ,, | Զարիվանգ |
| 4 | ,, | Բաշգյառնիի | Շորբուլաղ |
| 5 | Եջմիածնի | Աշտարակի | Բուժ. (Բաբաքեշի) |

Կենտրոնի և գավառների հողբաժիններն ունեն բազմաթիվ համախոսականներ գյուղական համայնքներից իրենց գյուղերը հատակագծման յենթարկելու մասին, բայց այս կենսական հարցը լուծում չի ստանում՝ միջոցների և տեխնիկ ուժերի բացակայության պատճառով։

## ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային տնտեսությունները և գյուղատնտեսական կոոպերատիվ արտել կոմունաները հողաշինարարության մեջ շատ չեն զբաղեցրել հողամարմիններին։

Հեղաշրջման առաջին որերին սունկի նման բուսած և պատահական տարրերի նախաձեռնությամբ շատ կազմակերպված անհամար կոմունա-արտելները նույն արագությամբ չքացան։

Աստիճանաբար վերանում են նաև զինվորական կազմակերպությունների գյուղատնտեսական ձեռնարկությունները։

Հասարակական կազմակերպություններից աչքի ընկնող հողային ֆոնդ են գրավում Ամերկոմն ու Հայկոոպը։

Բայց ամենից շատ հողաշինարարությունը պետք է յուր ուշադրությունը դարձնի Խորհրդային տնտեսությունների և նրանց հողային պահանջների վրա։ Այս տեսակետից բացի 4-րդ Խորհրդային տնտեսությունից «Լոռի Ախթալա» մնացածներն ապահովված են։

Խորհրդային Հայաստանում ներկայումս պետական և հասարակական կազմակերպությունների տրամադրության տակ գտնվում են հետևյալ տարածությամբ հողամասերը։

## ՏԱԽՏԱԿ № 4

Ցույց է տալիս թե Հայաստանում 1922 թ. պետական և հասարակական մարմինների տրամադրության տակ վորտեղ և ինչ տարածությամբ հող կա.

| ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ | Տնտեսության տեղը | Հողի տարածությունը |
|---|---|---|
| 1. ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ | | |
| Ա. Խորհրդային տնտես. այգեգործական . . . | Յերևան քաղաքում . . . | 39 դես. |
| Գյուղատնտեսական դըպրոց և ջերմոցպահական կայան. . . . . . . | » » | 65 » |
| Բանջարա-սերմարուծարան . . . . . . . | » » | 90 » |
| Այգիներ . . . . . . | » » | 127 » |
| Բ. Խորհրդային տնտես. | Կոտայքի շրջան . . . . . | 95 » |
| Գ. » » | Զանգիբասարի Փարաքար | 325 » |
| Դ. » » | Լոռվավառի Ախթալա . . | 25 » |
| Կաթնատնտեսութ. ֆերմա | » Վարանցովկա | 755 » |
| Ձիարուծարան . . | Կոտայքի շրջան Ելիջա . . | 734 » |
| Տնկարան-այգի ? . . . . | Ղարաքիլիսայում . . . | 15 » |
| 2. ԱՄԵՐԿՈՄ | Լոռվավառ Վարանցով. շրջ. | 3000 » |
| » | Եջմիածնի գավ. Ղուրդ. . | 1317 » |
| » | Ալեքպոլ քաղաքում . . . | 3000 » |
| » | Հրազդանի շրջ. Զարբախ . | 176 » |
| » | Եջմիածնի գավ. Զանգիբ. շր. Թուրքմենլու գյուղ . | 50 » |
| 3. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ | Եջմիածնի գավ. Աշտարակի շրջան Թագիա գյուղ . | 65 » |
| 4. ՀԱՅԿՈՈՊ | Հրազդանի շրջան Զարբախ գավառ . . . . . . . | 200 » |
| 5. ՆՈՐ-ԲԱՅԱԶԵԴ | | |
| 6. ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԳԱՎԳ. | Յերևան քաղաքում . . . | 1400 » |
| 7. ԱԼԵՔՊՈԼԻ | Ալեքպոլի » | 4000 » |
| Գյուղատնտեսական աշխատավոր. Կոմունա Մարքսի անվան . . | Լոռվավառի Սիսի մաղանում . . . . . . . . . | 60 » |
| Նույն տիպի կոմունա «Կարմիր Աստղ» անվ. | Լոռվավառի Արճեշ . . . | 10 » |
| Նույն տիպի կոմունա Մարքսի անվան . . | Իջևանում . . . . . . . | 17 » |
| Նույն տիպի կոմունա «Շահումյանի» անվան | Դարալագյազի գավառ Ղըշլար գյուղում . . . . . | 60 » |



Անցյալում քաղաքներին պատկանող հողերի դրությունը ցայսօր պարզված չէ մեզ մոտ։ Ավելին կարելի յէ ասել՝ քաղաքների սահմանում անցյալում հողային սեփականություն ունեցող նույնիսկ կուլակները շարունակում են տիրապետել այս հողերը։

Այս դրությունն անհանդուրժելի յէ աշխատավորական հողօգտագործման տեսակետից։

Անթույլատրելի յէ այս հիմունքով նաև այն, վոր Քաղգավգործկոմների համայնական տնտեսությունները վարձակալությամբ են տալիս հողերը։

Որենքից բխող տեսակետն այս հարցի նկատմամբ այն պիտի լինի, վոր կոմմունալ տնտեսությունները ստանան այնքան հողամաս, վորքան իրենք մշակելու կարիք ու հնարավո-

թյուն ունին, իսկ ավելի մնացած հողերը պետք է դրվին հողմարմինների տրամադրության տակ աշխատավոր հողագործներին հանձնելու համար։

Խորհրդային տնտեսությունների, կատարելիք դերի նշանակության մասին ավելորդ ենք համարում խոսել։

Գալով հողօգտագործող մնացած կազմակերպություններին պետք է ասենք, վոր Հողժողկոմատը նրանց նկատմամբ հետագայում պետք է լինի խստապահանջ և հողը տրամադրելիս թելադրի նրանց վարող պայմանների ինտենսիվ և գյուղատնտեսական գիտության պահանջներին բավարարող տնտեսություններ ստեղծելու համար։

Հակառակ դեպքում նրանք մեր սակավահող գյուղացիությունից խլելով նկատելի տարածությամբ հողամասեր առանձին վոչինչ չեն կատարում, ավելի ճիշտ շահագործում են իրենց նկատմամբ ցույց տված բարի վերաբերմունքը։

## ՑԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ․

Մենք ապրում ենք պատմական այնպիսի մի շրջանում յերբ մեզ վիճակված է անցյալի փլատակների վրա կառուցել մեր գյուղի ապագան։

Այդ կառուցվածքը կարող է լինել ճարտարակերտումն նորի հառաջադիմության և կուլտուրայի։

Նա կարող է լինել նաև այլանդակ կարկատանը նորանըմանի՝ միացված հնի հետ։

Մեր հողաշինարարությունը պիտի կարողանա գերադասություն տալ և ընթանալ առաջին ուղիով, վորի համար և նա պիտի ձգտի.

1. Հասցնել աշխատավոր ժողովրդի հողային նորմաները մեր յերկրի բնական տվյալներից բխող և ազգաբնակչության տնտեսական զարգացման աստիճանի համապատասխանող նորմաների չափին։

2. Կազմակերպել ներքին հողաբաժանությունը տեխնիկայի և գյուղատնտեսական գիտության պահանջների համաձայն։

և 3. Վերաշինել գյուղը սոցիալական ու կուլտուրական նոր պահանջների համաձայն։

Համեմատ է Հողժ. զեկուցման. Խ. Ավդալբեգյան

4 սեպտեմբերի 1923 թ. Յերևան



# ՊԱՐԵՆԱՎՈՐՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1920–1922 Թ. Թ.

Պարենավորման հարցը իր ժամանակակից դրությամբ և նշանակությամբ ամենաբարդ ու դժվարին խնդիրներից մեկն է։ Նրա շուրջ թե հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ և թե նրանից հետո շարունակ խիստ ու կրքոտ պայքար է մղվել, ու դա միանգամայն հասկանալի յե։

Պարենավորման գործը Խորհրդային իշխանության ամրապնդման համար տարվող անցյալ ծանր տարիների դաժան կռիվների որերին բոլոր մյուս դժվարությանց հիմնաքարն էր և գլխավոր պատճառը։ Բանվորա-գյուղացիական իշխանության մեջ վոչ մի ասպարեզում չի նկատվել այնպիսի փոփոխություններ, ինչպես պարենավորման գործում։ Մի նոր ուղղումներ՝ առաջադրված կյանքի փորձով և աշխատանքով, մյուս որը լըրացումներ և ձևափոխումներ և, վերջապես, աշխատանքը տանելու ձևի հիմնական փոփոխություն։ Այդ բոլորն անխուսափելիորեն հետևում էին միմյանց, ինչպես իշխանության կամքի անբաժան ուղեկիցներ։ Բայց և այնպես բոլոր այդ փոփոխությանց ժամանակ, միշտ և բոլոր պարագաներում, յերևան էին գալիս և՛ թարմ նոր միջոցների վորոնման ու շինարարության մեջ և՛ ճկունություն մաքառման փորձի ցուցմունքների գնահատության, յերկրի և հաճախ փոփոխվող գործունեության պայմանների ուսումնասիրության մեջ՝ համապատասխան մեթոդի պահանջներին։

Անշուշտ ներկայում նոր տնտեսական քաղաքականությամբ կյանքի կոչված նոր պարենավորման քաղաքականությունը ի ցույց հանեց կատարյալ կենսունակություն, նա ամրացավ, խոր արմատներ գցեց, դարձավ մի խթան արտադրական ուժերի զարգացման և ցույց տվեց Խորհրդային իշխանության բռնած ընթացքի ճշտությունը—բայց և այնպես պարենատուրքին անցնելը չի թուլացնում պարենավորման խնդրի նշանակության սաստկությունը։

Քանի դեռ չկան դրամի շրջանառության զարգացում, կայուն դրամական միավոր, ապրանքներ ու նորմալ ապրանքաշր-

ջոնասության յերկրում, քանի դեռ բավարար չափով չի մեղմացել ժողովրդի տնտեսության ճգնաժամը—պետական պարենավորման խնդիրը միշտ էլ կմնա հիմնականը և վճռականը հանրապետության կյանքում:

Այդ առավել ևս ճիշտ է Հայաստանի նկատմամբ: Պարենավորման գործի ծանրությունն այստեղ կրկնապատկվում է նրանով, վոր Հայաստանն իրենից ներկայացնում էր անտեսապես քայքայված, կուլտուրապես հետամնաց մի յերկիր թույլ գրեթե համապետական տնտեսական կազմվածով:

Յերկիրը սպառված միջոցներով, հիմն ի վեր խախտված իմպերիալիստական և ազգայնական կռիվների հետևանքով, լցված սովալլուկ և անապաստան գաղթականությամբ և վորբերով, հյուծված, մերկ, հոգնած նախկին ապիկար կառավարության ավանտյուրաներից—արագորեն գնում էր դեպի անդունդ, իսկ ժողովուրդը այլասեռվում էր: Սերմացուն գործ էր ածվում ինչպես կեր, ցանքսերը կրճատվում էյին, հողը մնում էր անմշակ: անասունները վոչնչանում էյին: Ահա այսպիսի ծանր քայքայված ժառանգություն ստացավ Բանվորա-գյուղացիական իշխանությունը Հայաստանում: Նրա առաջ կանգնեց յերկրի կարողության, ժողովրդական տնտեսության վերականգնման անհետաձգելի և չափազանց դժվարին գործի կազմակերպումն իր ամբողջ մեծությամբ:

Այդ կազմակերպչական խնդրում պիտի յերևան գար, և հիրավի յերևան յեկավ Հայաստանում առաջին անգամ իշխանության կանչված աշխատավոր դասակարգի ամբողջ ստեղծագործական ուժը:

Ինչ չափով վոր յերկրի իշխանության կենսական դժվարությունները ցոլանում էյին նրա պարենավորման գործի մեջ, նույն չափով, բնականաբար, շինարարության ամբողջ դժվարությունը և ծանրությունը բոլոր հետագա տեխնիկական փոփոխություններով անդրադառնում էյին Պարժողկոմատի աշխատանքների և կացության վրա: Պարենավորման փրոնտի հավատարիմ պահակը յեռում էր ապարատ ստեղծելու կազմակերպչական ստեղծագործական աշխատանքով և միաժամանակ պետության պարենավորման ֆոնդերի գանձման պահպանության և բաշխման գործով: Պարենավորման ապարատի աշխատանքը լիքն էր ջղայնությամբ և թերիքներով, բայց նա որ ավուր զարգանում էր և ամրանում ամենադժվարին պայմանների մե.



Այսոր ցանքի կամպանիան տանելու գործում, սովյալներին օգնելում, վաղը հացահատիկի և պարենտուրքի մյուս բազմազան մթերքների գանձման գործում հարկ էր լինում թափել գերագույն ջանք, միաժամանակ ընթացիկ ամեն տեսակ վոչ պլանային առորյա կարիքների բավարարման խնդիրների գործում: Այդպիսի պայմաններում Պարժողկոմատի աշխատակիցներից պահանջվում էր բացառիկ յեռանդ ու անսահման անձնվիրություն:

## ՍԵՐՄԱՆՄԱՆ ԳՈՐԾ

Քաղաքացիական կռիվների վերջանալուց անմիջապես հետո Ժողկոմխորհի առաջ ծառացավ առաջին անգամ սերմանման գործը:

Պարժողկոմատին տրվեցին համապատասխան հանձնարարություններ, վորոնց համաձայն բերվեց և բաժանվեց Յերևանի ու Եջմիածնի գավառների գյուղացիության 71,000 փթաչափ ցանելու հացահատիկ, վորից մոտ 15 հազարը կորեկ. և վորովհետև պետությունը չուներ մեծ միջոցներ, ուստի դրանով էլ կամպանիան վերջացավ: Հետո սերմկոմները անցան Հողժողկոմատին, և նոր աշնանացանը սկսվեց մոտավորապես 1922 թվի սեպտեմբերից: Եվ այդ ժամանակ յեղած պարենտուրքի ամբողջ մնացորդը՝ 74798 փութ տրվեց վորպես սերմֆոնդ և բաժանվեց գյուղացիության: Գարնանացանի կամպանիան սկսվեց նոյեմբերի վերջերին և վերջացավ մայիս ամսում: Հողժողկոմատի և սերմանման հանձնաժողովի հատուկ կարգադրություններով ու ցուցմունքներով բաց է թողնված մոտ 200,000 փութ հացահատիկ: Կազմակերպչական աշխատանքի ամբողջ դժվարությունը մինչև ֆոնդերի սերմկոմների հանձնելը ընկած էր Պարժողկոմատի վրա: Իր ժամանակին գնելը, արագ փոխադրելը մի տեղից մյուսը՝ ընդունելը, պահելը, մի քանի տեղերում նույնիսկ բաշխումը-սերմկոմների պահանջով-դրված էր Պարժողկոմատի և նրա օրգանների վրա տեղերում: Այնպես վոր Խորհրդային իշխանությունն իր գոյության առաջին տարվա ընթացքում, ժողովրդական տնտեսության զարգացման տեսակետով իր ծայր խընայողությամբ ամեն բանում և ամենուրեք հիմնավոր գտավ օգնել գյուղացիության սերմանման ֆոնդով մոտավորապես 350,000 փութ:

Խորհրդայնացման ծանր ժամանակ, ծանր ստորճան քայ-

քայման հասած Հայաստանը, հազիվ ունենար 120,000 դեսյատին ցանված տարածություն։ Խորհրդային իշխանության մի տարվա ընթացքում ցանված տարածության չափը մեծացավ ավելի քան 50 %-ով, իսկ 1922 թվին նա կազմում էր մոտ 185,000 դեսյատին, վոր հավասար է նախապատերազմականի 63 %-ին։ Ցանած տարածության հավելյալից 35000 դեսյատինը 1922 թվի կամպանիային ցանվեց պետության ոժանդակությամբ, մնացածը ցանել էր ինքը բնակչությունը։ 1922 թվի հացահատիկի բերքը կազմում էր 8,000,000 փութ, իսկ ամբողջ տնտեսության բովանդակ մթերքները կազմում էին 11,000,000 փութ ցորենի չափ։ Այնինչ 1921 թվին հացահատիկի բերքը չէր անցնում 4,000,000 փթից, իսկ բովանդակ մթերքներինը՝ 5,000,000 փթից ցորենի չափից։ Ահա թե ինչու 1921 թվում առաջ յեկավ վարաժամ և սարսափելի սով։

## ՍՈՎՅԱԼՆԵՐԻ ՈԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն դեկտեմբեր ամսի սկզբից (1921թ). կենտրոնում լսվում էր սովի արձագանքը՝ Անհավ. չափազանց արագ կերպով մինչև հունվարի վերջը սովը պատեց գրեթե բոլոր գավառները։ Ազգաբնակությունը ծախում էր անասունները և գույքը կիսագին և փնտրում էր բուսական հագեցնում։ Տարերային դժբախտությունը ահագին չափերի հասավ։ Սովի յեր յենթարկված 250,000 ի չափ մարդ գրեթե ամբողջ ազգաբնակության մեկ քառորդը։ Սովամահության դեպքերը դնալով շատացան։ Սովյալներին ոգնելու գործը վորպես հարվածային աշխատանք շուտափույթ հայտարարվեց Խորհրդային իշխանության համար։ Վերջինը ամենայն թափով և արագությամբ գործի անցավ, լարված իր ամբողջ ուշադրությունը դարձրեց դեպի սովի ճակատը։ Պետության բոլոր ուժերը գործի կանչվեցին։ Ժողկոմխորհի վորոշմամբ կազմակերպվեց կենտրոնական սովյալներին ոգնելու մարմին։ Աշխատանքը սկսվեց անմիջապես և ոգնությունը տարվեց իր ժամանակին։ Ոգնության գործի մի մասը իրենց վրա վերցրեցին ամերիկացիք, մյուս մասը ինքը պետությունը։ Սովյալները բաժանվեցին, տեղավորվեցին գավառներում, այսպես՝ Յերևանի գավառ 15,000 հոգի, Ալեքպոլի գ. 87,000 հոգի, Նոր—Բայազեդի գ. 20,000 հոգի, Իջևանի գ. 40,000 հոգի, Ղարաքիլիսայի գ. 25,000 հոգի, Եջմիածնի գ. 15,000 հոգի, Դարալագյազի, գ. 12,000 հոգի, Լոռու գ. 6,000 հոգի, Զանգեզուրի գ.



20,000 հոգի, և Մեղրիի գավառ 800 հոգի։ Պարժողկոմատին տրվեցին հատուկ պայմանաժամով պատվերներ սովյալների ոգնության գործի համար։ Շտապ կարգով Բաթումից և Փոթիից բերվեց ու բաժանվեց գավառների մեջ 70,000 փութ հացահատիկ, վորից 40 հազար փութ ձրիաբար, իսկ 30,000 ը փոխարինաբար գավպարկոմների միջոցով։ Յեվ յեթե դրան ավելացնենք բոլոր գործկոմների, հիմնարկների ու կազմակերպությունների կողմից արվածը հասարակական աշխատանքների կարգով, այն ժամանակ աներկբայորեն կարելի յե համարել սովի դեմ մղված կռիվը հաջող։ Գյուղացիությունը պետական ուժերի և միջոցների ծայր լարումով խլվեց սովի ճիրաններից։

Այժմ հարվածային խնդիրների բաժնից անցնենք դեպի Պարժողկոմատի ներքին կազմին, նրա որգանական հատուկ բաժիններին և գործողության.

## ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱՍԸ

Հաշվական ժամանակաշրջանում Պարժողկոմատը ունեցել է՝ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ.—իրենց բաժիններով և յենթաբաժիններով կապված նրանց կարիքի չափի հետ

Ընդհանուր վարչություն,
Առևտրական վարչություն,
Բաշխման վարչություն,
Ֆինանս-հաշվային վարչություն
Վերահսկողության բաժին և
Պարենտուրքի բաժին։

ՏԵՂԵՐՈՒՄ.— Հայաստանի տասը գավառներում գավպարկոմներ ու նրանց յենթակա գավառակային պարկոմներ, թվով ըստ կարիքի և գավառի մեծության։ 10 գավպարկոմները սրանք են յեղել. 1. Յերևանի, 2. Եջմիածնի, 3. Ալեքպոլի, 4. Ղարաքիլիսայի 5. Լոռու, 6. Իջևանի, 7. Նոր-Բայազեդի, 8. Դարալագյազի, 9. Զանգեզուրի և 10. Մեղրիի։ Ղարաքիլիսայում յեղել է պարենավորման բազա։ Պարժողկոմատը ունեցել է լիազորներ Թիֆլիսում, Բաթումում, Նախիջևանում, Պետրովսկում և Ռոստովում. Սրանց նպատակն է յեղել՝ կապ պահպանել տեղերի և Հայաստանի մեջ հեշտացնելու Հայաստան փոխադրելի մթերքների առաքման գործը, մշտական առնչություն ունենալ կոոպերատիվների հետ ևայլն ևայլն։

Բոլոր գավպարկոմներից պարբերաբար ստացվում էյին կենտրոնում տեղական մթերքների գների բյուլետեններ, շնորհիվ վորի կենտրոնը ձեռնհաս էր ուսումնասիրել ու շուկան տեղերում և ղեկավարող հրահանգներ տալ ըստ հնարավորության:

Պարժողկոմատը առ 1 նոյեմբերի 1922 թվի ունեցել է կենտրոնում և շրջաններում միասին վերցրած ընդամենը 361 աշխատակիցներ, վորոնցից շտատային 324, իսկ շտատից դուրս՝ 37 անձ:

## ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի առաջին խորհրդայնացումից հետո շտապ կազմված կոմիսարիատներից մեկը Պարժողկոմատն էր: Նա գործել սկսեց 1920 թ. դեկտեմբերից: Իր առաջին իսկ յերևան գալու օրից նա ձեռնամուխ յեղավ հին կառավարությունից բոլոր առաջին անհրաժեշտության մթերքների հայտնաբերելու գործին և կենսական ամենակարևոր մթերքների հայթայթման Կարմիր Բանակի, Խորհրդային պաշտոնյաների, հիվանդանոցների և վորբանոցների կարիքները լրացնելու համար: 1920 թ. դեկտեմբերի 12-ին Հայաստանի Հեղափոխական Կոմիտեյի դեկրետով նշանակվում է Կոլեգիա Պարժողկոմի գլխավորությամբ: Հենց այդ օրվանից կազմակերպվում են հայթայթման և կազմակերպչական բաժինները:

Կոլեգիայի վորոշմամբ հանձնարարվում է հայթայթման բաժնին պարզել Ֆինանսների մինիստրության, խնամատարության մինիստրության, քաղաքային վարչության, Յերևանի գեմստվոյի պետական հիմնարկությանց պաշտոնյաների և կոոպերատիվների պահեստներում յեղած ապրանքների քանակը՝ առանձին ցուցակով բաշխման բաժնին հանձնելու համար:

Ցուցակագրումից պարզվեց, վոր հացահատիկներ և ալյուր յեղել է կարիքի հետ համեմատած չնչին քանակություն, մեծ քանակության ալյուր մնացել էր խնամատարության մինիստրության պահեստներում, վորպիսին համաձայն Հայհեղկոմի կարգադրության հայտարարվել է անձեռնմխելի պաշար վորբանոցների համար: Պետական հիմնարկների պաշտոնյաների պահեստներում յեղել է վոչ ավել քան 4.000 փութ ալյուր:

Գավպարկոմների կազմակերպվելով հայթայթման վարչության գործունեությունը սկսում է զարգանալ և 1921 թվի հունվարի սկզբին կազմակերպվում են հացիկերի (хлебофуражный), մսի, գյուղատնտեսական մթերքների, բռնագրավման և արտադրական բաժիններ:



Հացահատիկի, կերի (фураж), մսի, գյուղատնտեսական մթերքների հայթայթման սկզբում տարվում են հավասարաչափ բաժանելու (разверстка) և բռնագրավումների միջոցով, բայց այդ միջոցներից և վոչ մեկը չի տալիս Պարժողկոմին ցանկալի հետևանքներ Հայաստանի բոլոր շրջանների քայքայման և աղքատության պատճառով:

Պատահական պաշարներ ձեռք էյին բերվում դրամով՝ հայթայթման բաժնի գործակալների ձեռքով.

Հայթայթման վարչությունը առանձին ուշադրություն է դարձնում Հրազդանի շրջանի չալթուկի Յերևան փոխադրելուն, վոր հավաքել էյին հին կառավարության գործակալները թյուրք ազգաբնակության այդ շրջանից վտարելուց հետո: Գործկոմի ստացած տեղեկության համաձայն այդ չալթուկը 360.000 փթից ավել պիտի լիներ, սակայն այդ քանակությունը վորոշելու համար Հրազդանի շրջան ուղարկված հանձնաժողովը դուրս է բերում, վոր ընդամենը յեղել է վոչ ավել քան 20.000 փութ, վորը և բերվում է Յերևան և նրանից վերամշակվում է բրինձ:

Դեռ 1920 թվի դեկտեմբերից ինչպես Յերևանում նույնպես և մյուս բոլոր գավառներում ջրաղացները մասամբ գրավված էյին, մասամբ էլ ազգայնացրած և հանձնված հայթայթման վարչության կարգադրության: Այդ ջրաղացներից գոյացած յեկամուտները թեև մեծ չէյին, սակայն հանրապետության մաշտաբով կազմում էյին զգալի քանակության հացահատիկ և պաշտպանում էյին Խորհրդային հիմնարկները թե կենտրոնում և թե գավառներում:

Զինված հրահանգների բացակայության, փորձված աշխատակիցների պակասության ծանր պայմաններին, վորոնց մեջ հարկ էր լինում աշխատել, բայց և այնպես 1921. թվի փետրվարի առաջին կեսի Պարժողկոմատը արդեն ուներ լավ ապարատ, վոր քայքայվեց հակահեղափոխությամբ փետրվարի 18-ին:

Քաղաքացիական կռվի վերջանալուց հետո՝ հայթայթման վարչության վրա դրված առաջին պատվերը սերմանման կամպանիայի կազմելն ու տանելն էր: Իսկույն և յեթ գավառներում և գավառակներում կազմվեցին սերմկոմներ պարզելու սերմանման մթերքների քանակը և բաժանելու ստացված սերմը: Նրանց իսկ միջոցով բաժանվեց ազգաբնակության 71,000 փթաչափ սերմացու հացահատիկ:

Հայթայթման վարչության յերկրորդ խնդիրն էր քաղաքի

հողերից ցորենի գանձումը, վոր անցել էր Պարժողկոմատին ինչպես նաև բանջարանոցային գործի զարգացումը: Այդ նպատակի համար հատկապես ստեղծվեց գյուղատնտեսական բաժին:

Ժողոված հացահատիկի քանակը հասավ մինչև 4,000 փթի:

Առաջվա նման շարունակում եր գործել արտադրական բաժինը, վորին յենթարկվում եյին բոլոր դինգերը, ջրաղացները և յուղաքարաղացները:

Ապրանքափոխանակային գործառնությունները բաց արին հայթայթման վարչության առաջ լայն հնարավորություն գյուղատնտեսական մթերքների և հացահատիկի պատրաստելու: Մոսկվայից ստացված 1,350,000 արշին մանուֆակտուրան գավառներ եյին փոխադրված միանվագ մեծ քանակությամբ ապրանքափոխանակության գործողության համար: Գործը տարվեց հաջող և կենդանի, սակայն այդ ճանապարհով պատրաստված մթերքներից Պարժողկոմատի կենտրոնական պահեստները գրեթե վոչինչ չեր մտնում, այլ նրանք ծախսվում եյին տեղական իշխանության միջոցով տեղական կարիքների համար: Միաժամանակ ապրանքափոխանակության գործառնությունները կատարվում եյին և հատուկ լիազորների միջոցով: Վերջինների շնորհիվ կենտրոնը ուներ զգալի քանակությամբ մթերքներ:

Ապրանքափոխանակությունը թեպետ չավեց Պարժողկոմատին շոշափելի հետևանքներ, բայց և այնպես գյուղացիությունը ուներ հնարավորություն, թեև սխալ չափով, ստանալ իրեն անհրաժեշտ այն ապրանքները, վորոնցից նա բոլորովին զուրկ եր բռնագրավման և ռազվյորստկայի շրջանում:

Հետագայում կոոպերացիայի վերածնությամբ, Պարժողկոմատը ապրանքափոխանակության գործը բոլոր իր 73-ի չափ խանութներով ու նրանց ապրանքային ամբողջ ֆոնդով վորոշ պայմաններով հանձնեց Հայկոոպին: Բայց դժբախտաբար վերջինը չկարողացավ իկատար ածել այդ խնդիրը ու իր պարտականությունները ու մինչև օրս էլ մնում է պարտական Պարժողկոմատին:

Պարժողկոմատի հայթայթման վարչության մյուս հոգսերից նրա գոյության առաջին իսկ օրից սկսած, յեղել է բանակին ու բոլոր Խորհրդային հիմնարկների կարիքների համար խոտ պատրաստելու անհրաժեշտությունը: Խոտհարքի շրջանները բաժանված եյին 11-դ Բանակի և Պարժողկոմատի մեջ: Զինվորական մասերը խոտի պատրաստման գործը պարտավոր եյին տանել իրենց ուժերով, սակայն Պարժողկոմատը տվեց նրանց 102 խոտհար մեքենա:



Պարժողկոմատի համար խոտի պատրաստումը իր վրա վերցրեց Հայկոոպը. նրա հետ կնքած պայմանագրի հիման վրա նա պիտի պատրաստեր 500,000 փութ խոտ, բայց կարողացավ կատարել պայմանավորվածի չնչին տոկոսը: Վորպեսզի չմնար առանց խոտի, Պարժողկոմատը ձեռնամուխ յեղավ խոտի պատրաստման իր ուժերով:

Հայթայթման վարչությունը մեծ ուշադրություն եր դարձրել և պարենավորման մթերքների կապալներով պատրաստելուն: Նա ուներ կազմած մի շարք պայմանագրեր, հացահատիկի, բրինձի, բանջարեղենի, կենդանի անասունների հայթայթման համար: Այդ պայմանագրերի մեծագույն մասը կատարված եյին:

Հետո վառելիքային կարիքները լրացնելու համար Հայթայթման վարչությունը ձեռնարկեց փայտի պատրաստելուն Շահալիյում և Փամբակում, ընդամենը պատրաստվեց և բերվեց Յերևան 16,000 փութ վառելափայտ:

Մսի պակասությունը ստիպեց Պարժողկոմատին շահագործել Սևանի լիճը մատակարարելով բանակին, Խորհրդային պաշտոնյաներին, հիվանդանոցներին և վորբանոցներին մսի փոխարեն ձուկ: Այդ գործին նա ձեռնամուխ է յեղել 1921 թվի մայիս ամսին և մինչև 1922 թվի սեփական միջոցներով վորսված է ավելի քան 17,000 տարբեր տեսակների ձուկ:

Վերջացնելով սույն համառոտ ակնարկը Պարժողկոմատի 1921 թվի մատակարարումների մասին, պետք է ասել, վոր այդ տարին Պարժողկոմատի պատմության մեջ համարվելու յե կազմակերպչական: Նրա գործունեությունը այդ ժամանակի ընթացքում յեղել է նախապատրաստական հետևյալ 1922 թվի համար:

*
* *

Պարժողկոմատի գործունեությունը 1922 թվին սկսվում է Հայաստանի տնտեսական կյանքի մեջ նոր տնտեսական քաղաքականության կիրառությամբ: Պարժողկոմատը դադարում է սոսկ մատակարարման մարմին լինելուց և ձեռնարկում է առևտրական ապպարատի կազմելուն միջամտելու յերկրի առևտրին:

Պարժողկոմատի առևտրական քաղաքականությունը հանգում է մանավոր կապիտալի դեմ կռվելու, շուկայում իշխելու,

նրան կանոնավորելու լայն գործածության առաջին անհրաժեշտության մթերքների ձեռք բերելու և իր համապատասխան կազմակերպության միջոցով նրանց ռեալիզացիայի մեջ։

Չունենալով բավականաչափ միջոցներ, վալյուտա կամ վալյուտային ապրանք, բնականաբար նրան չի հաջողվում շուկայի վրա իշխել, բայց հաճախ նրան հաջողվում է մրցման միջոցով շուկան կանոնավորելու։

**Պետական ունիվերսալ խանութներ,**—Հենց այդ նպատակով 1922 թ. ապրիլի սկզբին Երևանում և համեմատաբար մի քիչ ուշ, Ալեքպոլում և Ղարաքիլիսայում, մյուս Խորհրդային հանրապետության օրինակով բացվեցին պետական ունիվերսալ խանութներ առաջին անհրաժեշտության մթերքների և լայն գործածության առարկաների վաճառքի համար։ Սեպտեմբերի վերջին ծրագրվում էր բաց անել պետխանութների բաժիններ Ջալալ—Օղլիում, Վորոնցովկայում և հանրապետության այլ վայրերում, սակայն պետխանութների Հայպետառին անցնելով՝ հոկտեմբերի սկզբին այդպիսիների բացման խնդիրը անցավ վերջինին։

Պետխանութները առաջին օրերին ապրանք ստանում էին սոսկ Պարժողկոմատի պահեստներում յեղածներից, հետագայում Պարժողկոմատի առևտրի գործի ընդարձակելով նրանք լրացվում էին արտաքին շուկայի ապրանքներով, վորպիսիք գնվում, ձեռք էին բերվում Պարժողկոմատի Հայաստանում դուրս ունեցած տնտեսական ներկայացուցիչների, Անդրկովկասյան Արտառի, Հայկոոպի և ուրիշների միջոցով։

Պետխանութներում ծախվում էին գլխավորապես մանուֆակտուրա, նպարեղեն, արդուզարդ, գաղութային ապրանքներ, պատրաստի հագուստ։ Թեև Երևանի պետխանութում ծախվում էին և ճոխության առարկաներ (պարֆումերիա և այլն), բայց դրանց վաճառքը չէր ի հարկե Պարժողկոմատի բուն նպատակը և դա բղխում էր հին կառավարության կողմից ձեռք բերած և կամ մատակարարման նպատակներից դուրս պահեստներում մնացած ապրանքների ռեալիզացիայի անհրաժեշտությունից։

Պետխանութներում վաճառվող ապրանքների գները նշանակվում էին միշտ 10—15 տոկոս շուկայի գներից ցած։ Վերջին հանգամանքը միշտ լավ ազդեցություն էր ունենում շուկայի վրա, թույլ չտալով մասնավոր վաճառողներին իրենց խանութներում գտնվող ապրանքների գները չափազանց բարձրացնել



Զնայելով վոր պետխանութները ինչպես նոր մարմիններ ունեյին իրենց բացերը, բայց և այնպես նրանց մատուցած ծառայությունը բանվորներին, Խորհրդային աշխատակիցներին և քաղաքացիներին համեմատական աժան գներով ապրանքներ մատակարարելու գործում, չարաշահության դեմ մղած պայքարում, շուկան կանոնավորելու և դրամի կուրսը պահելու համար՝ չափազանց զգալի յեր։

Երևանի պետխանութը ապրիլի 1—ից մինչև սեպտեմբերի 30—ը ներառյալ, Ալեքպոլինը հուլիսի 15—ից մինչև սեպտեմբերի 30—ը և Ղարաքիլիսայինը հուլիսի 8—ից մինչև սեպտեմբեր 30—ը միասին ունեցել են ավելի քան 80,000 ռուբլի շրջանառություն վոսկով։

**Առևտրական բաժին.**— Իր խոշոր գործողությունները ինչպես առևտրական նույնպես և մատակարարման նպատակներով կատարել է արտաքին շուկայում գլխավորապես Անդրարտառի, Հայկոոպի իր տնտեսական ներկայացուցիչների և այլոց միջոցով։ Հետո իր գործառնությանց զարգացման համապատասխան առևտրական կապեր է հաստատել և արտասահմանյան հիմնարկների հետ։

**Մեծ քանակությամբ ապրանքներ ստացված են յեղել.**

| | | | |
|---|---|---|---|
| Բաթում և Փոթիից | —հացահատիկ և ալյուր | 160,000 | փութ |
| | Հագուստ (բանվորի) | 2,000 | զույգ |
| | Թիթեղ սպիտակ | 75 | արկղ |
| | Թուղթ լրագրի համար | 300 | փութ |
| | Բրինձ | 1000 | » |
| | Բրեզենտ | 1000 | արշին |
| | Լեղակ | 100 | կիլո |
| Պարսկաստանից | Բանող անասուններ | 319 | գլուխ |
| | Մորթված | 1229 | փութ |
| | Մսացու 234 գլ. | 3729 | » |
| | Աղ հանքային | 3600 | » |
| | Հացահատիկ | 9000 | » |
| | Քիշմիշ-սաբզա մոտ | 3000 | » |
| Բագվից | Բրինձ | 15000 | » |

**Իր Լիազորների յեվ տնտեսական ներկայացուցիչների միջոցով**

| | | | |
|---|---|---|---|
| Նախիջևանից | Աղ հանքային | 22655 | փութ |

Զանազան քաղաքներից—ապակեղեն, ավտոմոբիլի սարք և այլն խոշոր չափի։

**Զանազան անձերից և հիմնարկներից ստացվել են դրսում**

| | |
|---|---|
| Ոսկի | 148 փութ 30 գրվ. |
| Ծխախոտ | 10 » |
| Գլանակ | 1.762.425 հատ |
| Բրինձ | 12.077 փութ |
| Յեգիպտացորեն | 13.808 » |
| Լոբի | 12.000 » |
| Շաքարավազ | 2 վագոն |
| Կերոսին | 12.737 փութ |
| Սև նավթ | 703 » |
| Մեքենայի յուղ | 379 » |

Այնուհետև ստացված է Համառուսական տեկստիլ սինդիկատից։

Մանուֆակտուրա և այլ ապրանք 15.367 ռուբլու վոսկով։

Պետրովսկից և Դերբենդից ստացված 42 վագոն աղած ձկնից 11 վագոն ուղարկված է Խարկով, Ռոստով և Թիֆլիս առևտրական նպատակներով, վորոնց փոխարեն ստացված են զանազան տեսակի ապրանքներ։

Ապրանքների ռեալիզացիան պետխանութներից զատ՝ տարվում էր չնչին բացառությամբ—կոոպերատիվ կազմակերպությունների միջոցով (գլխավորապես Կենտրոնական Բանվորական Կոոպերացիայի)։ Ընդունելով վոր Պարժողկոմը ամեն քայլում ընդառաջ էր գնում բանկոոպներին, բաց անելով նրանց համար վարկ և տալով ապառիկ կամ կոմիսիոն ապրանք, այնուամենայնիվ բանկոոպները չկարողացան ոգտագործել այդ արտոնությունները և զարգացնել իրենց շրջանառությունը մեծ չափով։ Այսպես օրինակ Ժողկոմխորհին կից Տնտեսական խորհրդակցության վորոշման համաձայն Բանկոոպի կենտրոնական վարչության բացված էր ապրանքային վարկ 10.000 ռ. վոսկով, նրա զարգացումը ի նկատի առնելով։ Թեև պայմանագիրը կնքված էր հուլիսին, սակայն այդ վարկը լիովին չոգտագործվեց։

Կենտրոնական բանկոոպին բաց թողած ապրանքները Պարժողկոմը գնահատել էր շուկայի միջնակարգ ծախսի գներից 20% ցած։ Բացի այդ՝ կենտրոնական բանկոոպին զանազան ժամանակներում տրվել են ապրանքներ կոմիսիայով ծախելու, ինչպես շաքարավազ, յուղ, պանիր և այլն։ Առհասարակ կոոպերատիվ կազմակերպությանց հետ կատարած գործառնությանց ժամանակ Պարժողկոմատը միայն մի նպատակ է դրել իրեն, առեղծել գյու-



րին պայմաններ նրանց արդյունավետ աշխատանքի։ Այդպիսի գործողությանց մի ցայտուն օրինակ կարող է լինել հացի վաճառքը բանվորներին, Խորհրդային աշխատակիցներին և չքավոր դասին։ Ապրիլ ամսից մինչև օգոստոս բանկոոպը Պարժողկոմի բաց թողած ալյուրից թխում էր օրեկան 100-200 փութ հաց և ծախում Պարժողկոմատի կողմից նշանակված ցած գներով։

Այդ միևնույն սկզբունքներով էլ ղեկավարվում էր Պարժողկոմը տարբեր հիմնարկությանց կազմակերպությանց և անհատներին ապրանք ծախելիս, ձգտելով յերկու նպատակի, նախ տալ հնարավորություն Խորհրդային աշխատավորներին և բանվորներին թեթևություն և ապա՝ ազդել շուկայի վրա սահմանափակ քանակության յերկրորդական յերրորդական նշանակություն ունեցող ապրանքների շուկա հանելով։

**Անասունների կերի բաժին.**—Փետրվար ամսում Պարժողկոմատը հրահանգ ավեց անասունների կերի բաժնին առաջիկա սեզոնի համար. յենթադրվում էր ապահովել կերով Պարժողկոմատի փոխադրա-առաքման բաժինը, և անասուններին ու ապա զբաղվել առևտրական նպատակով խոտի պատրաստելուն։ Բոլոր անասունների հաշվառումից հետո պարզվեց, վոր ամբողջ Կոմիսարիատին հարկավոր է 80,000 փութ խոտ, այդ թվին ավելացվեց ևս 120,000 փութ առևտրական նպատակներով ու այդպես անասունների կերի բաժնին տրվեց պահանջ 200,000 փ։ Սորա հետ կապված սկսվեցին կերի պատրաստման նախապատրաստական աշխատանքները, վորպիսիք շարունակվեցին մինչև մայիսի վերջը։ Նախապատրաստական աշխատանքների սկիզբը տրվեց բանակի և բոլոր շահագրգռված վարչությանց ներկայացուցիչների ժողովով. ուր Հողժողկոմատը բաժանեց հանրապետության մեջ յեղած բոլոր խոտհարքի հողերը, տալով Պարժողկոմին 9,200 դեսյատին։ Հենց այդ իսկ ժողովում Պարժողկոմը ընդգծեց այն հանգամանքը, վոր նա զբաղվելու չէ խոտի պատրաստելուն բոլոր մյուս կառավարական հիմնարկների համար, այլ սահմանափակվելու յե միայն իր ներքին կարիքների պահանջի չափով։ Այնուհետև բաժինը անցավ իր տրամադրության տակ յեղած խոտհարքի գործիքների նորոգման և նրանց լրացման՝ նորերի ձեռք բերելով։ Միաժամանակ հրահանգվեց բոլոր խոտհարքների շրջանների գավառային կոմիսարներին պահել Պարժողկոմատին ընկած խոտհարքատեղերը, նշանակել պահակ և թույլ չտալ այդ տեղե-

րում անասուններ արածացնել: Գավառային կոմիտեներից ստացված զեկուցումներից պարզվեց, վոր Պարժողկոմատին տեղերում հատկացված է փաստորեն 9,800 դեսյատին խոտհարքի տեղ, փոխանակ միջվարչական ժողովում վորոշված 9,200 դեսյատինի, այսինքն Լոռու շրջանում 300 դեսյատին փոխարեն 3,000-ի, Ալեքպոլում 2000 դեսյատին փոխանակ 3000-ի. Յերևանի շրջանում 300 դեսյատին փոխանակ 1500-ի, Նոր-Բայազեդի գավառում 200 դեսյատին, իսկ Եջմիածնի գավառում վոչինչ՝ փոխանակ 1500-ի:

Պարժողկոմատի սկզբնական ծրագիրը Լոռու գավառի խոտհարքների նկատմամբ, վորտեղից նա սպասում եր ունենալ 100,000 փութ, քանդվեց, վորովհետև այդտեղ նրան հատկացրել եյին միայն 300 դեսյատին, վորի վրա նա չուզեց հարել խոտ: Անկախ այդ հանգամանքից, Հայաստանի 2 խոտաշատ շրջանները, Ալեքպոլը և Լոռին, վորոնցից ամեն մեկը կանոնավոր կերպով շահագործելով տարեկան կարող եր տալ 750,000 փութ խոտ, 1922 թվին այդ թվի $1/4$-ը անգամ չավեց գործին անկազմակերպ և ուշացած մոտ գալու հետևանքով մի կողմից, մյուս կողմից վորովհետև խոտհարքը տեղի յե ունենում Ալեքպոլի գավառում ավելի շուտ քան հացահատիկների բերքի ժողովը, իսկ 1922 թվին գյուղացիությունը իր ամբողջ ունեցած հացահատիկը ցանել եր գրեթե խոտհարքի նախորյակին, ուստի կանոնավոր խոտհարքային աշխատանք նման պայմաններում կատարելու մասին խոսք լինել չեր կարող:

Ի նկատի ունենալով այդ, Պարժողկոմատը վորոշեց գործադրել սկզբնական կանխավճարներ տալու ձևը, ձգտելով կրկնակի նպատակի՝ առաջին—հաջող տանելու խոտհարքի գործը և յերկրորդ—ոգնելու սովյալ գյուղացիությանը: Նա կապալառուների միջոցով բաժանեց Ալեքպոլի գավառում 15.000 փթաչափ զանազան մթերքներ, — ինչպես ալյուր, ցորեն, գարի, տարեկան, բրինձ, յեգիպտացորեն, աղ և այլն և այլն, պայմանավորելով այդ վորոշ տեղերում խոտ պատրաստելով և Պարժողկոմատին հանձնելով ի հաշիվ մթերքի:

Ալեքպոլի գավառի հետ զուգընթացաբար խոտհարքի գործը տարվում եր և այլ վայրերում — Վեդի-Բասարում, Ղամարլույի շրջանում, Կոտայքում և այլ տեղերում, ամենուրեք տնտեսական միջոցներով: Սակայն յերբ պարզվեց, վոր Ալեքպոլի շրջանում գնալով զարգանում են խոտհարքի աշխատանքները և համեմա-



տական աժան են նստում՝ կերի բաժնի ամբողջ աշխատությունը դարձավ դեպի Ալեքպոլ: Նոր միջոցների պահանջ դրվեց Պարժողկոմատին, վորպեսզի անմիջապես բավարարվեցին: Յուրաժամանակ գալը գլխավորապես պայմանավորվում է խոտհարքի գործի չափազանց մեծ հաջողության հետ: Ալեքպոլի գավառը հայտնաբերվում եր ինչպես պետական խոտի պատրաստման րայոն: 40 առանձին-առանձին խոտի պատրաստման պայմանագրեր եյին կնքված զանազան անձանց հետ (ընդհանուր քանակությամբ 690.150 փութ):

Այսպիսով ընդհանուր պատրաստածը հասնում է 700.000 փթի. այդ ահագին քանակության խոտի պատրաստելը Ալեքպոլի գավառի զանազան տեղերում յերկաթուղագծից մի քանի տասնյակ վերստ տարածության վրա առաջ բերեց պահանջ նրա մամլելու: Կազմվեցին 8 մամլելու կետեր: Շնորհիվ մամլելու արագ և իր ժամանակին տանելուն՝ հաջողվեց մեծ քանակությամբ խոտ փոխադրել Ալեքպոլ. փոխադրական գործը իր աչքի ընկնող դերը այստեղ կատարեց լիուլի: Հնձած պատրաստած և մամլած խոտը մինչ դուրս հանելը դիզվում եր մեծ բրգաձև դեզերով, վորի չորս կողմը քանդվում եր փոս ջրի հոսելու համար անձրևներ յեղած դեպքում, դեզերը ծածկված եյին բրեզենտներով անձրևներից պաշտպանելու համար:

Խոտի պատրաստելը տարվել եր յերեք ձևով—սեփական միջոցով, կապալներով և գնման միջոցներով: Ամենից նպատակահարմարը յեղել է վերջինը:

Պարժողկոմատի սկզբնական ծրագրի մեջ չեր մտնում մեծ քանակությամբ անասունների կեր հայթայթելը բոլոր հիմնարկներին. սակայն յերբ անցավ սեզոնը և պարզվեց, վոր պետական հիմնարկներից վոչ մեկի վարչությունը չի կարողացել պատրաստել իր կարիքների պատշաճ չափով խոտ՝ հարկ յեղավ Պարժողկոմատին, ժողկոմխորհի վորոշման համաձայն, տալ խոտ բոլոր վարչությանց: Բացի այդ մասնավոր համաձայնությամբ Պարժողկոմատը բաց է թողել խոտ ինքնարժեքով մի քանի հիմնարկությանց ինչպես Ամերկոմին, 3-րդ դիվիզիային: Մինչև հոկտեմբերի 15-ը բաց է թողնված զանազան հիմնարկների և ժողկոմատներին 136.937 փութ, արտահանվել է Բաթում—20,258 փութ: Փորձը ցույց տվեց վոր Հայաստանը կարող է արտադրել տարեկան 2.000.000 փութ խոտ, վորի մի մասը վաճառքի հանելով կարդարացնի բոլոր ծախքերը: Սակայն խոտհարքը պետք է տա-

նի անշուշտ մի կազմակերպություն կենտրոնացման սիստեմով: Խառնարքատեղերը ամբողջ հանրապետության մեջ զանազան հիմնարկների մեջ բաժանել ցանկալի հետևանք չի տալ:

Մնում է ասել մի քանի խոսք դարմանի պատրաստելու մասին, վոր Պարժողկոմատը ձեռք է բերել Ալեքպոլում. ընդամենը 30.000 փութ, և արժեցել է Փրանկո-Ալեքպոլ պահեստները մամլելու հետ միասին փութը 3 կոպեկ:

Պարժողկոմատի Առևտրական վարչության մյուս մնացած ձեռնարկներից մի բաժինը զբաղվել է մսի մատակարարումով զինվորական մասերին, վորբանոցներին, հիվանդանոցներին Յերևանում և թե Ղարաքիլիսայում:

Տարայի բաժինը պատրաստել է 25.000 պարկեր և մեծ պարունակության զանազան տակառներ:

**Դինգը.**—Պարժողկոմատի առևտրական վարչության տրամադրության տակ էր գտնվում քաղաքի բրինձ մաքրող դինգերից մեկը:

Մինչև 1922 թվի յերկրորդ կեսը ընդամենը մաքրած է՝

| | |
|---|---|
| Մասնավոր չալթուկ | 22.650 փութ. |
| Սեփական | 8.677 փութ. 10 ֆունտ. |
| Ընդամենը | 31.327 փութ. 10 ֆունտ. |

Մասնավոր մարդկանց բերած չալթուկից ինչպես վարձատրություն սկզբում վերցնվում էր բերածի 20%-ը, հետո ժողկոմխորհի դեկրետով այդ տոկոսը իջավ 10%-ի:

1922 թվի յերկրորդ կեսին Պարժողկոմատը գտավ, վոր տնտեսական ձևով դինգի շահագործումը օգտավետ չէ և տվեց կապալով: Կապալառուն պարտավորվում է բոլոր կարեվոր նորոգությանց հետ միասին տալ տարեկան 2,005 ռուբլի վոսկով, բացի այդ ձրիաբար մաքրել Պարժողկոմատի համար 10,000 փութ չալթուկ ևս 10,000 փութ ընդհանուր հիմքերով, բայց հերթից դուրս:

**Ապրանքափոխանակության բաժինը.**—Միանգամայն արդարացրել է իր նպատակը: Սա տվել է գյուղին նրա ամենաանհրաժեշտ մթերքները, միաժամանակ գանձել հացահատիկ, մասամբ անասուններ, յուղ և այլն: Այդ նպատակի համար Պարժողկոմատը բաց է թողել շրջաններ տանելու համար մանուֆակտուրա, աղ, կերոսին, օճառ, շաքար, թեյ, քիշմիշ և այլն, 22,476 ռուբլու վոսկու արժեքով, վորպիսի գումարը հավելյալով ստացվել է յեթե հաշվի առնենք այն հանգամանքը, վոր շատ տեղերից դեռ հաշիվներ չեն ստացված:



**Ձկան բաժին.**—Սևանի լճի շահագործումը հանձնված է յեղել Պարժողկոմատին 1921 թվի մայիսին: Առաջին տարին Պարժողկոմատը շահագործում էր լիճը տնտեսական ձևով: Լիճը բաժանված էր 5 վարչական մասերի՝ Յելենովկայի, Նոր—Բայազետի, Ադիյամանի, Ջաջուռի, և Նադեժդինի: Աշխատանքը բոլոր մասերում միասին տարվում էր աշնանը 15 թոռով. գարնանը ավելացավ և 2-ը, ամբողջ վորսածը կազմում էր 17,560 փութ ձուկ:

1922 թվի սկզբին նպատակահարմար գտնվեց Պարժողկոմատին թողնել միայն մի քանի արդյունավոր և հարմար մասեր շահագործելու, իսկ մնացածները տալ մասնավոր մարդկանց կապալով: Վորոշվեց թողնել Պարժողկոմատի շահագործության տակ Ադիյամանի և Նորադուզի մասերը, մնացածները հեռավորության կամ ավելի սակավության պատճառով տրվեցին կապալով, ընդամենը 1541 փութ ձկան տարեկան:

Բացի այդ՝ Ձկան բաժինը Յերևանում պայմանավորվել է կապալով տալու Գեոդալ—Դարայի, Ծամաքաբերդի ու մի շարք միուս մնացածները, տարեկան 3,350 փութ ձկան և 70 փութ յուղի:

Դրամական միջոցների կարիքը և մի շարք այլ նկատառումներ ստիպեցին Պարժողկոմատին աշնան սեզոնին ընդմիշտ հրաժարվել տնտեսական շահագործման ձևից և բոլոր մնացած մասերը տրվեցին կապալով Յերևանում, Յելենովկայում և Նոր-Բայազետում: Միայն 1922 թվի ընթացքում Ձկան բաժինը ունեցել է զուտ շահ 72,588 ռ. 40 կ. վոսկով:

**Ինֆորմացիոն բաժին.**— Շուկայի գների մասին տեղեկություններ ժողովելը և բյուլետեններ կազմելը դրված էր այս բաժնի վրա՝ վորտեղից տեղեկություն եյին ստանում բոլոր մյուս ժողկոմատները, հասարակական և այլ հիմնարկները:

**Վերանորոգչական աշխատանքներ.**— Պարժողկոմատը Առևտրական վարչության միջոցով կատարել է մի շարք վերանորոգչական աշխատանքներ պահեստների, պետխանութների, շենքի, Պարժողկոմատի շենքի, համալսարանի շենքի նաև փոխադրական բաժնի վերաբերյալ, անասուններ քշելու (скотопригонный двор) բակի վերաբերյալ. նա շինել է ցանկապատ տնտեսական ժողկոմատների շենքի առաջ և կատարել է այլ աշխատանքներ, վորոնց համար ծախսված է 17,890 ռուբլի:

Հայպետառի կազմվելով Պարժողկոմատի Առևտրական վարչության ֆունկցիաները աստիճանաբար անցնում են նրան:

## ԲԱՇԽՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Բաշխման վարչությունը իր կազմակերպվելու սկզբներից փոխադրական միջոցների կատարյալ քայքայման և փորձված ու հուսալի աշխատակիցների բացակայության հետևանքով ստիպված աշխատել խիստ դժվար պայմաններում և բնականաբար գործը պիտի տուժեր։ Բայց շնորհիվ նրա համառ աշխատանքի՝ 1921 թվի դեկտեմբերից պատկերը խիստ փոխվեց և մթերքների ընդունելու հաշվառման ու բաշխման ապարատը լավացավ։ Այդ ժամանակից էլ սկըսվեց նրա բեղմնավոր աշխատանքը նրա բաժինների միջոցով։ Բաշխման վարչության ամենաառաջնակարգ հոգսը կայանում էր ստացվող ապրանքների իր ժամանակին փոխադրելու, փոխադրության գործի լավացնելու և պահեստները կարգի բերելու մեջ, ինչպես հաշվառման նույնպես և տնտեսական մասով։ Նրա ամբողջ ուշադրությունը կենտրոնացած էր պետական մատակարարման տակ յեղած սպառողների կատեգորիաներին կանոնավոր մատակարարման միջոցներ գտնելու մեջ։ Շատ մթերքներ ձեռք էին բերվում Հայաստանից դուրս, ինչպես շաքար, բուսական յուղ, ծխախոտ, օճառ, միս և այլն։ Այդ հանգամանքը շատ հաճախ պատճառ էր դառնում մթերքների անկանոն մատակարարելու սպառողների մի քանի կատեգորիաներին։

1922 թվի հունվարից պետական ծրագրային հանձնաժողովը (Госплан) ձեռնամուխ յեղավ շտատների կրճատման և նշանակեց սպառողների (едоку) վորոշ թիվ յուրաքանչյուր ժողկոմատի համար։ Տնտեսական մատակարարման անցած բոլոր հիմնարկները հանվեցին ծրագրային պետական մատակարարումից դուրս։ Այնպես վոր պետական մատակարարման տակ թողնվեցին խիստ սահմանափակ սպառողներ։ Դա մտցրեց վորոշ պարզություն բաշխման բաժնի աշխատանքների մեջ, տալով նրան հնարավորություն նախորոք ձեռնամուխ լինել կանոնավոր հայթայթման միջոցներ գտնելուն, իմանալով ուտողների ճիշտ թիվը հանրապետության մասշտաբով. հետևապես և կարիքը վորոշ ժամանակամիջոցի համար։

Բոլոր ժողկոմատներին ու հիմնարկներին 1922 թ. հունվարից սկսած մթերքներ տրվում էին Բաշխման վարչության ծըրագրա-կանոնավորման բաժնի միջոցով համաձայն Պետծրագրի հաստատած սպառողների թվի։

Պետական մատակարարման տակ յեղող սպառողների կատեգորիաներն էին հիվանդանոցները, վորբանոցները, ինվալիդ-



ները, 3-րդ գունդը, Արտակարգ Հանձնաժողովի բանտարկվածները, Խորհրդային աշխատակիցները, բանվորները և Միլիցիան, Հատուկ մասերը և Բանակը։

1922 թվի հունվար-սեպտեմբեր ամիսներում փաստորեն այդ կատեգորիաների ուտողների թիվը յեղել է, հիվանդանոցներինը 13,155 հոգի, յերեխաների տներինը 40,000 հոգի, ինվալիդները 3699 հոգի, Արտակարգ Հանձնաժողովի 3-րդ գունդ (առաջին վեց ամսում) 11,998 հոգի, բանտարկյալները 3,999 հոգի, Խորհրդային աշխատակիցներ, բանվորներ և միլիցիան 73,558 հոգի, Հատուկ նշանակված մասերինը 1,988 և բանակը 7,700 հոգի։

Ժողկոմատների մեջ ուտողները կազմում էին առանձին առանձին.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Առժողկոմում փաստորեն | | 9,740 հ. | | և համաձայն պետծրագրի | 9,253 | հոգի |
| Լուսժողկոմատում | » | 16,713 | | » | 17,075 | » |
| Պարժողկոմատում | » | 3,168 | | » | 3,302 | » |
| Ներքգործժողկոմատում | | 16,719 | | » | 16,719 | » |
| Արդժողկոմատում | » | 2,247 | | » | 2,574 | » |
| Արտգործժողկոմատում | | 82 | | » | 102 | » |
| Ժողկոմխորհում | » | 1,151 | | » | 1,162 | » |
| Բան-Գյուղ. տեսչության | | 997 | » | » | 1,075 | » |
| Պրոֆմիութ. խորհրդում | | 77 | » | » | 822 | » |
| Ժողտնտխորհում | » | 8,050 | » | » | 8,128 | » |
| Սոցապժողկոմատում | » | 1,126 | » | » | 1,128 | » |
| Աշխժողկոմատում | » | 187 | » | » | 220 | » |
| Աշխ. Սոցապժողկոմատում | | 194 | » | » | 198 | » |
| Ֆինժողկոմատում | » | 1,766 | » | » | 1,806 | » |
| Արմենտայում | » | 253 | » | » | 258 | » |
| Լուսկազմակերպ. | » | 3,327 | » | » | 3,327 | » |
| Հողժողկոմատում | » | 2,628 | » | » | 2,632 | » |
| Հ. Վ. Վարչության | » | 587 | » | » | 816 | » |
| Կենտգործկոմում | » | 86 | » | » | 58 | » |
| Փոստհեռժողկոմատում | | 3,750 | » | » | 4,065 | » |
| Ընդամենը | | 73,558 | | | 75,533 | » |

Այսինքն միջին հաշվով ամսական հանրապետության մեջ յեղել է 8195 աշխատակիցներ և բանվորներ։

Բանակը և Հատուկ Նշանակության մասերը պարենավորվում էին Կարմիր բանակայինների փայաչափով, սպառողների մնացած կատեգորիաները յուրաքանչյուրը առանձին նորմայով։

Գլխավոր սպառողը Հայկական բանակն է, որ մինչև սեպտեմբերի 1-ը համաձայն Պարժողկոմատի և Ա. Կ. Բ (OKA) միջև կնքված պայմանագրի պարենավորվում էր միայն մի քանի մթերքներով, ինչպես ամսական 810 հազար փութ ալյուրի և անհրաժեշտ բանջարեղենի 50 տոկոսը առանց մսի և բրնձի։ Յուրաքանչյուր ամիս բանակին տրվում էին նաև մթերքներ հիվանդների համար և 50-ական նվեր փայեր ամսական հունիս-ապրիլ ամիսների համար։ Բոլոր սպառողները իրենց հասանելիք մթերքը, համաձայն նրանց թվի, ստանում էին յուրաքանչյուր ամսվա համար նույն ամսի սկզբին, իսկ հիվանդները նույն իսկ 2-3 ամսական կանխապես։

**Սովորական յեվ հարվածային բաժիններ.**— Պարժողկոմատը բոլոր Խորհրդային աշխատակիցներին և բանվորներին 1922 թվի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում տվել է սովորական բաժիններ Բաշխման վարչության միջոցով 73,558 և հարվածային 3,238 ընդհանուր արժեքով վոսկով 588,052 ռ. 26 կոպեկ, որ ընկնում է ամեն մեկին 8 ռուբլի։ Մյուս մնացած խմբերի վրա ծախսված է վոսկով 843,938 ռուբլի 42 կոպեկ։

Սովորական բաժինների նորման միևնույնն էր պաշտոնյաների բոլոր կատեգորիաների համար, ինչ վերաբերում է հարվածային բաժինների պատասխանատու աշխատակիցներին՝ վերջինները տրվում էին Պարժողկոմատի և Պրոֆմիության մշակած նորմաներով։ Դրանց թիվը վորոշում էր Ժողկոմխորհը և բաժանում հիմնարկների մեջ։ Պրոֆմիության խորհուրդը բացի 125 բաժնից վորոնցից 25-ը վերապահված էր Ժողկոմխորհին և տրվում էին միմիայն նրա կարգադրությամբ, իսկ 100-ը Զինժողկոմատին, վոր ամբողջովին տրվում էր վերջինին։ Այդ 100 բաժինը ինքը Զինժողկոմը բաժանում էր ըստ իր հայեցողության։

**Ֆոնդեր սերմանման յեվ սովյալների օգնության կոմիտեյի.**— Վերևում հիշվածներից զատ կային և Ֆոնդայիններ, Սերմկոմ և Սովյալների Օգնության Կոմիտեներ։ Հայաստանի Կենտրոնական Կոմիտեյին կից Սովյալ Գյուղացիության Օգնող Կոմիտեյի ֆոնդին հացահատիկ տրվում էր Սովյալներին Օգնող Կենտրոնական Կոմիտեյի նախագահի կարգադրությամբ Գավգործկոմներին կամ Քաղգավգործկոմներին ուղղած, իսկ սերմանման ֆոնդին Կենտրոնական Սերմանման Կոմիտեյի նախագահի կարգադրությամբ գավպարկոմներին կամ սերմկոմներին տեղերում։



Ընդամենը տրված է աշնանացանի և գարնանացանի համար 10 գավառների (Մեղրիի հետ միասին) և Հողժողկոմին.

| | | |
|---|---|---|
| Ցորեն | 194,120 փ. 07 Ֆ. | |
| Ալյուր | 28,069 փ. 35 Ֆ. | (տեղերում ցորենով փոխելու համար) |
| Գարի | 25,082 փ. 20 Ֆ. | |
| Յեգիպտացորեն | 6,045 փ. | |
| Բրինձ | 873 փ. 18 Ֆ. | |
| Գրեչինխա | 850 փ. | |
| Աղ | 6,800 փ. | |
| Կերոսին | 1,370 փ. | |

Այստեղ բերված հացահատիկների թվի մեջ մտնում են 1921 թվի տեղերում մնացած պարենտուրքի մնացորդները, ընդամենը 74.798 փ. 06 գրվանքա։

Սովյալների Օգնության ֆոնդին տրված է 10 գավառներում հացահատիկներ.

| | |
|---|---|
| Ցորեն | 16,268 փ |
| Ալյուր | 17.693 փ. 37 Ֆ. |
| Տարեկան | 1,008 փ. — |
| Յեգիպտացորեն | 4.846 փ. — |
| Բրինձ | 500 փ. — |
| Կրուպա | 900 փ. — |
| Լոբի | 500 փ. — |
| Սեւյոդկա | 100 փ. — |

Բացի այդ սովյալներին օգնող կոմիտեյի միջոցով վորպես օգնություն սովյալներին տրված է նաև փոխարինաբար՝

| | |
|---|---|
| Ցորեն | 3.705 փ. — |
| Ալյուր | 131 փ. 15 Ֆ. |
| Յեգիպտ. | 13.854 փ. — |
| Տարեկան | 12.617 փ. — |

Այդ ծրագրային տրվածներից դուրս յեղել են և վոչ ծրագրայիններ տնտեսական կարիքների և վերաշինական աշխատանքներ կատարելու համար, ինչպես օրինակ Անտառկոմին տրված 10.000 փութ գարին վառելափայտ պատրաստելու համար և այլն։

Ներքևում զետեղված առաջնակարգ մթերքների շարժման տղյուսակից կարելի յե գաղափար կազմել Պարժողկ. Բաշխման Բաժնի միջոցով անցած ապրանք-քանակի և չափի մասին։

| ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Մնացորդ առ 1-ն հունվարի 1922 թ. | Մուտք 1922 թ. հունվ.-սեպտ. ամիսներում | Ելք 1922 թ.. հունվ.-սեպտ. ամիսներում | Մնացորդ առ 1-ն հոկտեմբ. 1922 թ. | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| Ցորեն | 99244 փ. 03 գ. | 234,663 փ. 21 գ. | 420,543 փ. 24 գ. | — | 86,636 փ. վերածախս ի հաշիվ պարենատուրքի. |
| Ալյուր | — | 101,006 փ. 32 գ. | 100,022 փ. 32 գ. | 984 փ. — | |
| Տարեկան | — | 37,500 փ. — | 37,500 փ. — | — | |
| Գարի | 4200 — | 25,082 փ. 20 գ. | 50,193 փ. 20 գ. | — | 20,911 փ. վերածախս ի հաշիվ պարենատուրքի. |
| Յեգիպտացորեն | — | 24,745 փ. 36 գ. | 24,745 փ. 36 գ. | — | |
| Բրինձ | — | 27,008 փ. 39 գ. | 25,330 փ. 10 գ. | 1,678 փ. 29 գ. | |
| Յուղ բուսակ. | — | 1,171 փ. 28 գ. | 1,171 ֆ. 28 գ. | — | |
| » սովորական | 14 փ. 21 գ. | 582 փ. — | 596 փ. 21 գ. | — | |
| Կրուպա | 10.080 փ. 13 գ. | 1,808 փ. 03 գ. | 10,986 փ. 39 գ. | 901 փ. 17 գ. | |
| Լոբի | — | 12,077 փ. 22 գ. | 10,497 փ. 18 գ. | 1,580 փ. 04 գ. | |
| Թեյ | 252 փ. 05 գ. | 522 փ. — | 411 փ. 14 գ. | 362 փ. 31 գ. | |
| Կակաո | 21 փ. 03 գ. | 260 փ. 19 գ. | 22 փ. 20 գ. | 259 փ. 02 գ. | |
| Ծխախոտ | — | 269 փ 35 գ. | 269 փ. 35 գ. | — | |
| Օճառ | 96 փ. 07 գ. | 398 փ. 37 գ. | 411 փ. 31 գ. | 80 փ. 13 գ. | |
| » կտորներով | 7,857 կտոր | 7,464 կտոր | 12,696 կտոր | 2,625 կտոր | |
| Սիլյոդկա | 405 փ. 10 գ. | 23,577 փ. 07 գ. | 22,906 փ. 36 գ. | 1,075 փ. 21 գ. | |
| Շաքարավազ | 1.589 փ. — | 3.652 փ. 09 գ. | 4,846 փ. 03 գ. | 395 փ. 06 գ. | |
| Միս | 5,180 փ. — | 15,820 փ. — | 21,000 փ. — | — | |
| Մանուֆակ. | 333,170 արշին | 221,930 արշին | 360,573 արշին | 194,527 արշին | |



**Պահեստների բաժին.**—Պարժողկոմատը ունեցել է սկըզբում 10 պահեստ № 1 զանազան ապրանքների, № 2. նույնպես, № 3. ալյուրի և հացահատիկի, № 4, զուտ հացահատիկի, № 5. աղի, գրեչիխայի և քիշմիշի, № 6. ձկան և փայտի, № 7. նավթային մթերքների, № 8. յերկաթուղային փոխադրող, № 9. Սևանի ձկան համար. և №10 խոտի։ Հետագայում դրանց թիվը կրճատված է և թողնված է 6-ը, պահեստներում աշխատանքը ամեն ժամանակ յեղել է ինտենսիվ։

**Փոխադրական բաժին.**—Պարենավորման ապարատի հաջող աշխատելու հիմնական պահանջներից մեկը ճանաչված է ծանրության արագ փոխադրելը մեկ տեղից մյուսը։ Պարժողկոմատի տրանսպորտի սկիզբը դրված է 1921 թվի վերջին ամիսներում և այդ ժամանակվանից, մանավանդ 1922 թվի սկզբից, նրա աճեցման, ամրանալու և կազմակերպվելու վրա դարձրել է Պարժողկոմատը պատշաճ ուշադրություն։ Համեմատական փոքրաթիվ փոխադրական միջոցներով միջին հաշվով ամսական 12—13 յեզան սայլեր, 15 ձիան ֆուրգոն և 5 ապրանքատար ավտոմոբիլներով տրանսպորտը իր փոխադրունակությունը հասցրել է մինչև 5200 փթի, կորստի, թափվածի ամենաչնչին %-ով։ Յեղել են օրեր, ինչպես 1922 թ. նոյեմբերի 16-17 յերբ փոխադրել են 18 վագոն ցորեն և ընդհանուր պակասորդը յեղել է միայն 3 փութ 18 գրվանքա։ Վերջին հանգամանքը խիստ նշանակալից է։

Պարժողկոմատի տրանսպորտը իր կարիքները հոգալուց բացի հնարավորություն է ունեցել փոխադրել և ուրիշ հիմնարկների համար հաճախ ապրանք, այնպես վոր յերբ յեկամտի տեսակետով դատենք՝ նա խիստ արդյունավետ ձեռնարկ է։ Անցյալի հաշվից յերևում է, վոր միջին հաշվով մեկ փթի փոխադրությունը արժենում եր վերստին $^3/_4$ կոպեկից էլ պակաս, այնպես վոր ապագայում յերբ կուժեղանա այդ տրանսպորտը, ավելի ևս կմեծանա նրա փոխադրունակությունը, նա կվերցնի իրեն մասնավոր ապրանքատեղափոխությամբ և Պարժողկոմատը հնարավորություն կունենա միանգամայն ձրիաբար փոխադրել սեփական բեռները։

## ՖԻՆ-ՀԱՇՎԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Այս բաժինը իր գոյության ընթացքում, նամանավանդ

սկզբներում, խիստ դժվարության և հանդիպել։ Դրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ թե Պարժողկոմատը և թե մյուս բոլոր ժողկոմատները միայն 1922 թվից նոր-նոր ընկել էին պետական տնտեսական շինարարության ուղիի վրա— ճիշտ հաշվառման և ծրագրված գործունեության տեսակետով։

Այժմ Պարժողկոմատը ունի ամուր հիմքերի վրա դրված հաշվապահություն, որ տարվում է կրկնակի իտալական ձևով ինչպես դրամական նույնպես և ապրանքային բաժիններում։ Համապատասխան բաժինները և ենթաբաժինները իրենց մեջ բաժանած ունենալով ամբողջ աշխատանքը դյուրացնում են բաժնի գործը։

**Վերահսկողություն.**—Վերահսկողությունը կազմակերպված է 1922 թ. մարտին։ Նրա ֆունկցիան է հսկել, որ Պարժողկ. բոլոր բաժիններում ճշտությամբ կատարվեն կարգադրությունները և շրջաբերականները։ Նա կազմել է պայմանագրեր, կատարել քննություններ և հանել յեզրակացություն, բայց այդ՝ նա հսկել է ամբողջ Պարժողկոմատի վեր ու վրին։

## ՊԱՐԵՆՏՈՒՐՔ

Խորհրդային Ռուսաստանն արտաքուստ ողակված լինելով կապիտալիստական յերկրների ճնշումով, իսկ ներքուստ հարկադրված ամեն քայլափոխում պաշտպանվել հակահեղափոխության հարվածներից՝ բնականաբար ամենից առաջ պիտի հոգար իր պարենավորման բեռուրնների մասին, ինչպես Կարմիր բանակի, նույնպես և մյուս սպառող խմբերի համար։ Պարժողկոմատը պարենի միջոցների գանձումը կիրառում էր մթերքների, այսպես ասած, ժողովրդի մեջ հավասարաչափ բաժանելու միջոցով, վերցնելով բոլոր հավելյալ գյուղական տնտեսության մթերքը հօգուտ պետության։ Իսկ յեթե պատահում էր, որ գյուղացիությունը հակառակում էր կամ նկատվում էր բացարձակ ընդդիմադրություն, դա փշրվում էր հաստատ վճռականությամբ, որովհետև յերբ հրապարակի վրա դրված էր Խորհրդային իշխանության լինել չլինելու խնդիրը, անհնարին էր մտածել դասի կամ մի ուրիշ բանի մասին, բացի Կարմիր Հեղափոխության հաղթանակից։ Բայց հենց որ քաղաքական պատերազմի հորիզոնի վրա նկատվում էին Խորհրդային իշխանության կավի յելքի լավ ուրվագծեր, այն ժամանակ ժողովրդի տնտեսության



վերականգնելու գործնական հարցերը դառնում էին Բանվորագյուղացիական իշխանության հոգացողության և ուշադրության առաջնակարգ հարցերը։ Վճռականորեն փոխվեց պարենավորման մթերքների կուտակման և պատրաստման ձևը և հաստատվեց պարենտուրք—նոր տնտեսական քաղաքականության հիմնաքարը։ Թեև Հայաստանը մինչ այդ մտել էր հեղափոխության շարքերը, բայց նրա, ինչպես կազմակերպված պետություն, առաջին քայլն էր պարենտուրքի կյանքի մեջ կիրառելով՝ սպառողական ֆոնդերի ստեղծելը։

Յերկրի գրեթե բոլորովին քայքայված պայմաններում, յերբ տեղերում չկար կազմակերպված Խորհրդային ապարատ, ինչպես նաև բավարար չափով պատրաստված աշխատակիցներ, պարենտուրքի կամպանիան ավելի արդյունավետ լինել չէր կարող, քան յեղավ՝ տալով 175,000 փութ ցորեն։ Բացի այն նյութական մեծ նշանակությունից, որ ուներ պարենտուրքի գանձումը պետական աղքատիկ բյուջեյի համար, նա միաժամանակ դարձավ նախապատրաստական դպրոց, կազմակերպչական հմտություն և տեխնիկա ամբարելու հետագա 1922 թվի կամպանիայի համար։ Նախապես նյութեր պատրաստելով Խորհրդային շինարարության ամենադժվարին խնդրի վերջնական և կանոնավոր լուծման համար՝ ապրիլի 14-ին կանչվեց համահայկական խորհրդակցություն հանձինս գործկոմների նախագահն., գավպարենների և Յերևանի գավառի կենտրոնական կուսկոմների պատասխանատու կուսակցական ընկերների։ Խորհրդակցությունը ուշադրությամբ հաշվի առավ անցյալ կամպանիայի փորձը և հանեց վորոշում Հայաստանում մտցնել միակ բնատուրքի սիստեմը։ Ինչպես ղեկավարող սկզբունք ընդունվեց բնատուրք վերցնել համաձայն վարելահողի չափի և բերրիության աստիճանի՝ առանց հաշվի առնելու խոտատեղերը, սահմանելով վերջինների համար առանձին հարկ ամեն տնտեսության ունեցած անասունների չափով, քանի որ Հայաստանում խոտատեղերը հանրական են։ Դրա առավելությունը նրանումն է, որ հարկի ծանրությունը ընկնում է հարուստ դասի վրա, որովհետև աղքատ դասը մեծ մասամբ չի ունենում անասուններ։ Դրանք են ահա 1922 թվի ապրիլի 20-ի Կ. Գ. Կ. և Ժողկոմխորհի հրատարակած դեկրետի հիմքերը 1922—23 թվերի պարենտուրքի մասին, որի կիրառումը հանձնարարված էր Պարժողկոմատին։

Հայաստանի գավառների հողերը ըստ նրանց բերրիության աստիճանի բաժանված են յերեք կարգի.

ա) կարգի համարվում են միկին չորս՝ Յերևանի, Էջմիածնի և Մեղրու գավառները:

բ) կարգի—մեկին յերեքը—Ալեքպոլի, Ղարաքիլիսայի, Լոռու, Դարալագյազի և Զանգեզուրի գավառները:

գ) կարգի—մեկին յերկու— Նոր-Բայազեդի և Իջևանի գավառները:

Ըստ գեկրետի ա) կարգի գավառներում հողի բերքունակությունը հաշվում է դեսյատինին ցորեն 41—55 փ., իսկ դրա հետ միասին բոլոր մյուս բերքերը վերածած ցորենի—50 փ. ընդամենը:

բ) կարգինը զուտ ցորեն 26—40 փութ, դրա հետ միասին բոլոր մյուս մթերքները վերածած ցորենի՝ 45 փութ ընդամենը:

գ) կարգինը—ցորեն 25 փութ, դրա հետ միասին բոլոր մյուս մթերքները վերածած ցորենի՝ 32 փութ ընդամենը:

Ամբողջ հանրապետության հողերի հաշվառումից պարզվեց, վոր Հայաստանի տերրիտորիայում կա մոտավորապես 595,348 դեսյատին: Հետագայի կրճատումներից հետո հարկի յենթակա տարածությունը սահմանված է 300—320 հազար դեսյատին:

Նկատի ունենալով բոլոր վերոհիշյալ տվյալները և տուրքի նորման (բերքի արժեքի 5%)-ը հաշվելով ցորենի փութը 1 րուբլի, 1922 թ. համար փաստորեն տուրքի յենթարկվող հողի տարածությունը՝ հանրապետության մասշտաբով սպասվում եր հաշված ցորենի փթերով մոտավորապես.

| ԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Հողի տարածությունը | Որինա՛ մեկին բանի | Մի դեսյատինի տուրքի չափը | Բոլոր յենթադրյալ տուրքը փողերով | Փաստորեն հավաքված և փթերով | % |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Յերևանի | 50,000 | 4 | 3 ր. | 150,000 | 117,275 | 78 |
| 2. Ալեքպոլի | 62,222 | 3 | 2.25 | 140,000 | 163,068 | 116 |
| 3. Էջմիածնի | 33,333 | 4 | 3 — | 100,000 | 90,535 | 90 |
| 4. Ղարաքիլիսայի | 13,333 | 3 | 2.25 | 30,000 | 43,005 | 112 |
| 5. Լոռու | 44,444 | 3 | 2.25 | 100,000 | 133,528 | 133 |
| 6. Իջևանի | 18,750 | 2 | 1.60 | 30,000 | 32,558 | 108 |
| 7. Նոր-Բայազեդի | 62,500 | 2 | 1.60 | 100,000 | 99,467 | 99 |
| 8. Դարալագյազի | 8,900 | 3 | 2.25 | 20,000 | 17 193 | 86 |
| 9. Զանգեզուրի | 6,668 | 3 | 2.25 | 15,000 | 13,885 | 98 |
| 10. Մեղրիի | 1,700 | 4 | 2 — | 5,000 | 5,000 | 100 |
| | 301,850 | | 2-28 | 690,000 | 715,684 | 103,7 |



Հավաքած պարենտուրքի փոխադրությունը գավառական պահեստներից գավառայինները կամ գավառայիններից գավպարկոմի կենտրոնականը կատարվում եյին փոխադրապահական միջոցներով:

Ամբողջ պարենտուրքի գանձման համար թե ինչպես ռոճիկ, պահեստների վարձ և նրանց նորոգության կարիքից առաջ յեկած ծախսերը չի անցնում 40,000 րուբլուց վոսկով. այնպես վոր յեթե համեմատենք 1922 թվի գանձված ամբողջ պարենտուրքի շուկայի արժեքը ու գնահատենք այդ 1,000,000 ռուբլի վոսկով ղուրս կգա, վոր նրա վրա կատարված ծախսը միայն նրա արժեքի 4% է կազմում: Դա մի փայլուն հետևանք է:

Պետք է ասել, վոր պարենտուրքի հաջող գանձման նպաստել է ամենից առաջ ինքը ազգաբնակչությունը: Այդ խնդրում ավելի քան մի ուրիշ տեղում ազգաբնակչությունը վերաբերվեց գիտակցաբար, դա ամենալավ ապացույցն է Խորհրդային իշխանության բարձր ժողովրդականության: Մյուս կողմից Պարժողկոմատը արթուն հսկում էր գործի ընթացքի նախապատրաստական միջոցներին և ղեկավարում էր ամենամանրամասն կերպով: Բոլոր նրա աշխատակիցները և պարենտուրքի ապարատները ի վիճակի լինելով պետության բնույթներին և գիտակցելով թե ինչ մեծ նշանակություն ունի պետության համար պարենտուրքը, համակված հեղափոխական շահագրգռությամբ, անդուլ հետևում էյին նրա հաջող և իր ժամանակին գանձելուն:

## ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի հարմար վարելահողի մասին

| ԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Հարմար վարելահողի տարածությունը դեսյատիններով | |
|---|---|---|
| | Վարելահող | Ընդամենը |
| 1. Յերևանի | 54962 5/8 | 73170 7/8 |
| 2. Էջմիածնի | 53164 | 56107 |
| 3. Ալեքպոլի | 123869 | 186075—13 |
| 4. Լոռու | 48177—1760 ս. | 66637—332 ս. |
| 5. Զանգեզուրի | — | 19935 |
| 6. Ղարաքիլիսայի | 21876 1/2 | 50579 1/2 |
| 7. Դիլիջանի | — | 34330 |
| 8. Ն.-Բայազեդի | 57875 1/24 | 118285 1/12 |
| 9. Դարալագյազի | 14596 1/20 | 23272 9/20 |
| 10. Մեղրու | — | 1424 |

# ՀԱՅԿՈՈՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

*Հայկոոպն, իբրև սպառողական կոոպերացիայի կենտրոնական միություն, 1921 և 1922 թվերին ունեցավ գործունեության ավելի լայն սահման քան առաջ եր։*

*Մինչև Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում,— այն է մինչև 1921 թիվը,— Հայկոոպը կատարում եր ապրանքների գնումն ու բաշխումը միմիայն իր անդամ— սպառողների համար, նա իր ծրագրից դուրս պարտականություններ չեր կատարում։*

*1921 թվի սկզբից ի վեր, Հայաստանում Խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո, Հայկոոպը դեպքերի բնական ընթացքով սկսեց կատարել գնումներ ու բաշխում վոչ միայն իր անդամների, այլ և վոչ անդամների համար։ Յեվ վոր գլխավորն է նա սկսեց կատարել գնումներ ու պատվերներ նաև կառավարության և կառավարական տնտեսական հիմնարկների համար։*

*Այսպիսով, փորձելով տալ Հայկոոպի 1921 և 1922 թվերի, այսինքն վերջին յերկու տարվա գործունեության համառոտ պատկերը, պետք է շոշափել այդ յերեք ճյուղավորությամբ։*

*1. Գործունեություն իր անմիջական պարտականությունների — կոոպերացիայի բնագավառում։*

*2. Գործունեություն պետության կարիքների և պետական հիմնարկությունների պատվերների բնագավառում։*

*3. Գործունեություն ազատ առևտրի բնագավառում։*

*Անցնելով բուն խնդրին՝ նախ պետք է մատնանշել — ապրանքային ինչպիսի շրջանառություն է ունեցել Հայկոոպը այդ յերկու տարիներում։*

*1921 թվի հաշիվները տարվել են հայկական դրամանիշներով, իսկ 1922 թվինը՝ վոսկի ռուբլիներով. այդպես էլ բերվում են թվերը։*

## 1921 ԹԻՎ

| | |
|---|---|
| Տարվա սկզբում յեղել է ապրանք . . . | 33.669.878 ռ. |
| Տարվա ընթացքում ստացվել է . . . | 49.015.679.118 ռ. |
| Ընդամենը . . . . . . . | 49.109.348.996 ռ. |



| | |
|---|---|
| Տարվա ընթացքում բաշխվել է ապրանք | 33.008.764.196 ռ. |
| Տարվա վերջում մնում եր . . . . . | 16.100.584.800 ռ. |

*Այսպիսով Հայկոոպը 1921 թվի ընթացքում ձեռք է բերել ապրանք ամբողջացրած թվերով, 49 միլյարդի և բաշխել է 33 միլյարդի հայկական դրամանիշներով։*

*Ի՞նչ օգուտ է ունեցել Հայկոոպը այդ թվին։*

*Օգուտը բերված է վոսկու ռուբլիներով, ըստ վորում տարվա վերջում, հաշվետարին փակելիս, հաշիվները վեր եր ածվել վոսկու ռուբլիների։*

| | |
|---|---|
| Հայկոոպն ընդհանուր օգուտ ունեցել է | 252.731 ռ. - 35 կ. |
| Տարվա ընթացքում ծախս յեղել է . . | 68.139 ռ. - 48 կ. |
| Տարվա վերջում զուտ օգուտ մնացել է | 184.591 ռ. - 87 կ. |

## 1922 ԹԻՎ

| | | |
|---|---|---|
| Տարվա սկզբում ապրանք յեղել է . . | 42.369 ռ. | 96 կ. |
| Տարվա ընթացքում ստացվել է . . . | 373.509 ռ. | 28 կ. |
| Ընդամենը . . . . . . . | 415.879 ռ. | 24 կ. |
| Տարվա ընթացքում բաշխվել է ապրանք | 341.608 ռ. | 86 կ. |
| Տարվա վերջում մնում եր . . . . . . | 74.270 ռ. | 38 կ. |

*Այսպիսով Հայկոոպը 1922 թ. ձեռք է բերել ապրանք 373 հազար ռուբլու և բաշխել է 341 հազար ռուբլու։*

*1922 թվի օգուտը առայժմ հայտնի չէ. վորովհետև տարեկան հաշիվները դեռևս վերջնականապես չեն փակվել։*

* * *

*Այժմ այն մասին, թե ինչպիսի և ինչ քանակի ապրանքներ է ձեռք բերել Հայկոոպը և ինչպես է կատարել բաշխումը։*

*Հայկոոպը այդ յերկու տարվա ընթացքում շատ տեսակի ապրանքներ է ձեռք բերել ու բաշխել, բայց նրա գլխավոր ուշադրությունը դարձված է յեղել կենսամթերքների վրա, իբրև ժամանակակից պահանջի։*

*Այդ բազմաթիվ ապրանքներից ու մթերքներից կբերենք միմիայն 12—ի ցանկը և կբերենք միմիայն քանակներով թե ում վորքան է բաշխված, այս էլ բավական է գաղափար կազմելու համար։*

**Ահա այդ ցանկը։**

 

# ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՅԿՈՈՊՈՒՄ

## 1921 Թ.

| ՈՒՄԻՆ Ե ԲԱՇԽՎԱԾ | Հացային մթերքներ | | Արմտիք | | Յուղ կենդանու | | Յուղ բուսական | | Աղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | քանակ փութ. | % | քանակ փութ. | % | քանակ փութ. | % | քանակ փութ. | % | քանակ փութ. | % |
| Կոոպերատիվներ . . . . | 4754 | 90.6 | 1411 | 32.9 | 41.50 | 22.4 | 55 | 37.4 | 5936 | 54.2 |
| Պետ. հիմնարկությունն. . | 189 | 3.6 | 2878 | 67.1 | 140.50 | 75.9 | 92 | 62.6 | 5009 | 45.8 |
| Ազատ շուկա . . . . . . | 300 | 5.8 | — | — | 3. | 1.7 | — | — | — | — |
| Ընդամենը՝ | 5243 | 100 | 4289 | 100 | 185 | 100 | 147 | 100 | 10945 | 100 |

| ՈՒՄԻՆ Ե ԲԱՇԽՎԱԾ | Թեյ | | Շաքար | | Օճառ | | Ծխախոտ | | Գլանակներ | | Գործվածք | | Վառնաման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | քանակ փութ. | % | քանակ փութ. | % | քանակ փութ. | % | քանակ փութ. | % | քանակը հատով | % | քանակ արշին. | % | քանակ զույգ | % |
| Կոոպերատիվներ | 88.30 | 90.0 | 143 | 84,1 | 1671 | 63.5 | 449 | 96.5 | 1226600 | 61.5 | 162386 | 74.2 | 5482 | 52. |
| Պետ. հիմնարկություններ | 8.30 | 8.5 | 15 | 8.8 | 898 | 34.2 | 16 | 3.5 | 736600 | 36.9 | 55914 | 25.6 | 4730 | 44.9 |
| Ազատ շուկա | 1.40 | 1.5 | 12 | 7.1 | 61 | 2.3 | — | — | 31800 | 1.6 | 463 | 0.2 | 321 | 3.1 |
| Ընդամենը՝ | 98 | 100 | 170 | 100 | 2630 | 100 | 465 | 100 | 1995000 | 100 | 218763 | 100 | 10533 | 100 |

## 1922 Թ.

| ՈՒՄԻՆ Ե ԲԱՇԽՎԱԾ | Հացային մթերքներ | | Արմտիք | | Յուղ կենդանու | | Յուղ բուսական | | Աղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կոոպերատիվներ . . . . | 9556 | 84.5 | 880 | 57.5 | 123 | 67.2 | 191.5 | 78.3 | 10408 | 43.7 |
| Պետ. հիմնարկություններ. . | 547 | 4.1 | 250 | 16.4 | 21 | 11.5 | 51 | 20.9 | 6060 | 25.1 |
| Ազատ շուկա . . . . . . | 1277 | 11.4 | 398 | 26.1 | 39 | 21.3 | 2 | 0.8 | 7450 | 31.2 |
| Ընդամենը՝ | 11380 | 100 | 1528 | 100 | 183 | 100 | 244.5 | 100 | 23918 | 100 |

| ՈՒՄԻՆ Ե ԲԱՇԽՎԱԾ | Թեյ | | Շաքար | | Օճառ | | Ծխախոտ | | Գլանակներ | | Գործվածք | | Վառնաման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կոոպերատիվներ | 97.5 | 15.4 | 1406 | 40.5 | 1127 | 63.1 | 70 | 51.3 | 1383600 | 43.9 | 22514 | 73.7 | 2869 | 79.7 |
| Պետ. հիմնարկություններ | 305. | 48.1 | 320 | 9.2 | 428 | 23.9 | 57 | 42.1 | 1386200 | 43.9 | 360 | 1.2 | 153 | 4.2 |
| Ազատ շուկա | 232. | 36.5 | 1748 | 50.3 | 232 | 13.0 | 9 | 6.6 | 382900 | 12.2 | 7675 | 25.1 | 580 | 16,1 |
| Ընդամենը՝ | 634.5 | 100 | 3474 | 100 | 1787 | 100 | 136 | 100 | 3152700 | 100 | 30549 | 100 | 3602 | 100 |

Հայկոոպը 1921 թվին բաշխել է հացահատիկներ 5243 փութ, որից կոոպերատիվներին բաշխված է 90,6 տոկոսը պետական հիմնարկներին 3,6 տոկոսը, ազատ շուկային 5,8 տոկոսը։ Արմտիք բաշխվել է 4,289 փութ, որից կոոպերատիվներին 32,9 տոկոս, հիմնարկներին 67,1 տոկոս, յուղ 185 փութ որից կոոպերատիվներին 22,4 տոկոս, պետական հիմնարկություններին 75,9 տոկոս, և ազատ շուկային 1.7 տոկոս։ Յուղ բուսական 147 փութ, որից կոոպերատիվներին 37,4 տոկոս, պետական հիմնարկություններին 62,6 տոկոս։ Աղ 10945 փութ, որից կոոպերատիվներին 54,2 տոկոս, պետական հիմնարկություններին 45,8 տոկոս և այլն։

Մոտավորապես այս նույն պատկերն է կրում նաև 1922 թվի ապրանքների բաշխման ցանկը։

Ի՞նչ է ցույց տալիս այդ ցանկը, այն, որ Հայկոոպը իր անմիջական պարտականություններից դուրս մեծապես ծառայություններ է կատարել կառավարությանը և պետական հիմնարկություններին նրանց իր ձեռքը բերած կենսամթերքների համարյա մեկ յերրորդ կես մասը, նույնիսկ կեսից ավելին. օրինակ արմտիքը, յերկու տեսակի յուղեր, աղ, վառնամանները 1921 թվին և թեյը, ծխախոտը, գլանակը 1922 թվին։

Ի հարկե այս կերպ բաշխվել են նաև մի շարք այլ ապրանքներ։

* * *

Բացի առևտրական գործառնություններից՝ Հայկոոպն ունեցել է նաև իր արդյունաբերական ձեռնարկները, հիշենք դրանցից յերեքը։ Նա ուներ օճառի, ծխախոտի և լուցկու գործարաններ—առաջին յերկուսը Յերևանում, յերրորդը Ղարաքիլիսա-

յում: Առաջինը հիմնված էր միջոցներով, մյուս յերկուսը հիմնված ընկերական պայմաններով:

Լուցկու գործարանը ունեցավ կարճատև կյանք, նա գործեց ու փակվեց 1922 թվին և տվեց Հայկոոպին իրրև հասույթի մաս՝ 97,800 տուփ լուցկի: Այդ գործարանը փակվեց, որովհետև լուցկին ավելի թանգ էր նստում Հայկոոպին, քան շուկայում վաճառվող արտասահմանյան լուցկիները: Ինչ վերաբերում է օճառի և ծխախոտի գործարաններին, նրանց գոյությունը յեղել է Հայկոոպի համար շահավետ և այժմ էլ շարունակվում է այն:

Օճառի գործարանը արտադրել է 1921 թվին 1828 փութ, իսկ 1922 թվին՝ 2333 փութ*), որոն իր հատկությամբ շատ անգամ մրցել է արտասահմանի օճառի հետ:

Ծխախոտի գործարանը հայթայթել է Հայկոոպին գլխավորապես գլանակներ, քիչ չափով նաև ծխախոտ: Այսպես 1921 թվին տվել է Հայկոոպին 1.376.500 հատ գլանակ, իսկ 1922 թվին 2.626.000 հատ գլանակ և 97 փութ ծխախոտ: Բացի այդ 1922 թվին Հայկոոպի ծխախոտի գործարանը վաճառքի է հանել ազատ շուկայում 9.348.000 հատ գլանակ և 291 փութ ծխախոտ: Այնպես որ Հայկոոպի գլանակները գնալով ընդհանրանում են:

Հայկոոպն ուներ նաև գյուղատնտեսական արդյունաբերություն: Այդ ճյուղում շոշափելի գործ կատարել է ծխախոտի մշակության ասպարեզում: 1922 թվի ցանքերից ստացվել է ծխախոտ 1.200 փութ, որը հանձնված է պահեստ ապրելու յեփման ու հասունացման շրջանը:

* * *

Հայկոոպն ունեցել է առևտրական հարաբերություն հատկապես Պարժողկոմատի հետ. այդ տեղի յէ ունեցել գլխավորապես 1921 թվին և արտահայտվել է ապրանքափոխանակության ասպարեզում: Այս գործառնությունը կատարվել է քիչ բացառությամբ Հայկոոպի շրջանային բաժանմունքների շնորհիվ: Այսպիսի բաժանմունքներ գոյություն ունեյին Վաղարշապատում, Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Ղամարլույում, Յելենովկայում և Քեշիշքենդում:

---

*) Այս քանակից 1522 փութ հանձված է Հայկոոպի պահեստին, իսկ 911 փ. հանվել է վաճառքի անմիջապես գործարանից:



Պարժողկոմատը փոխանակության համար հանձնել է Հայկոոպի բաժանմունքին զանազան ապրանքներ 117.049 ր. 26 կ.-ի, Հայկոոպը և նրա բաժանմունքները հանձնել են Պարժողկոմատին ապրանքներ 46.395 րուբլու:

Պարժողկոմատն ի միջի այլոց հանձնել է մանուֆակտուրա 21.000 արշին, գերանդի 3.044 հատ, մանգաղ 2.069 հատ, օճառ 440 փութ, գլանակ 266.000 հատ. աղ 10.000 փութ, լուցկի 133.000 տուփ:

Պարժողկոմատը ստացել է Հայկոոպից ի միջի այլոց հացահատիկներ 4.150 փութ, կարտոֆիլ 8.230 փութ, յուղ 205 փութ, մեղր 250 փութ, միս կենդանի քաշ 4.000 փութ, օճառ 620 փութ և վառնամաններ 1.700 զույգ:

* * *

Հայկոոպը կատարել է կառավարության համար նաև հատուկ պատվերներ. այդ պատվերներից կարևոր է հիշատել խոտի պատրաստումը:

Հայկոոպը 1921 թվին Յերևանի և Ղարաքիլիսայի գավառներում պատրաստել ու հանձնել է 63.000 փութ խոտ: Այդ քանակից հանձնել է 1-ին Պարժողկոմատին 20.000 փութ, Կովկասյան Բրիգադային 20,000, 1 և 2-րդ զինվորական հոսպիտալներին՝ 10.000 փութ և զանազան հիմնարկությունների ու զորամասերի՝ 13·000 փութ:

Նախ քան ավարտելը կարևոր է հիշել այստեղ նաև Հայկոոպի մեկ փոքրիկ ծառայությունը՝ մատուցած Խորհրդային իշխանությանը:

Հայկոոպը 1921 թվի յերկրորդ կեսից ստանձնեց շեֆության կոչումը մի քանի զորամասերի նկատմամբ: Այդ զորամասերն են՝

1. 3-րդ Կովկասյան Հրացանաձիգ դիվիզիայի յերրորդ ստանձին կովկասյան զաուբիցային մարտկոցը:

2. Յերրորդ միացյալ թեթև գաուբիցային ճնթանոթաձիգների պարկը:

3. Հայկական դիվիզիայի գաուբիցայի մարտկոցը:

4. Հայկական դիվիզիայի թեթև գաուբիցային ճնթանոթաձիգների պարկը:

Ապա այս զորամասերին ընդամենը յերեք ամսվա ընթացքում Հայկոոպը զանազան մթերքներով ու ապրանքներով նվիրաբերել է 1296 րուբլու 15 կոպեկի:

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՈՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բանվորական կոոպերացիան Հայաստանում առաջ է յեկել ընդամենը մի տարի առաջ։ Կենտրոնական Բանվորական Կոոպերացիան սկսել եր գործունեություն Հայկոոպին կից։ Նրա կոլլեգիայի կազմի մեջ մտել են մեկական ներկայացուցիչ Հայաստանի Պրոֆմիությունների Խորհրդից, Հայկոոպից և Պարժողկոմատից։ Կ. Բ. Կ. աշխատանքը Հայկոոպին կից կայանում եր գլխավորապես կոոպերացիաների գաղափարական և կազմակերպչական գործունեության ղեկավարության մեջ։ Տնտեսական վոչ մի գործունեություն նա չի ունեցել, քանի վոր նա չուներ իր սեփական փոնդը։ Զուրկ սեփական փոնդից՝ նա հնարավորություն չուներ կատարել վորոշ հայթայթման աշխատանք և մատնված եր անգործության։

Ահա այդ պատճառով, ինչպես նաև միջոցների և ուժերի տնտեսելու նպատակով, Պրոֆմիության Խորհուրդը և հետո Յերևանի Բանկոոպի լիազորների ժողովը վորոշեցին ի մի ձուլել Կենտրոնական Բանվորական կոոպերացիայի և Յերևանի Բանկոոպի ապարատները։ Միացումը տեղի ունեցավ 1922 թվի հունիսին, և ընտրվեց Հայաստանի Բանվորական Կոոպերացիայի կենտրոնից ճանաչված վարչություն։

Այդ վարչությունը ղեկավարելով տեղական Բանկոոպի առևտրական և արտադրական ձեռնարկները միաժամանակ հանդիսանում եր վորպես ամբողջ բանվորական կոոպերատիվ շարժման ղեկավարողը Հայաստանում։ Այդ ուղղությամբ շարունակվում եր տարվել աշխատանքը մինչև 1922 թ. հոկտեմբեր ամիսը, բայց մինչ այդ (Р. К. П.) Ոգոստոսյան համագումարը և Ցենտրոսոյուզի լիազորների 3-րդ ժողովը աննպատակահարմար ճանաչեց բանվորական կոոպերացիայի առանձնացումը և վորոշեց միացնել յերկու ապարատները՝ բանվորական կոոպերացիային զարկ տալու, նրա միջոցները ընդլայնելու և նրան բանվորականացնելու համար։ Դրան համաձայնվեցին Պրոֆմիության Խորհուրդը և Կենտրոնական Բանկոոպը։ Հայաստանի Կոմմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և Ժողկոմխորհը վավերացրին այդ վորոշումը 1922 թ. նոյեմբերին։



Կենտրոնական Բանկոոպը Պրոֆմիության Խորհրդի դրական աջակցությամբ ձեռնարկեց այդ վորոշման գործնական կիրառման կյանքի մեջ, համաձայն Ցենտրոսոյուզի լիազորների ժողովի ընդունած հիմքերի ու հրահանգների։ Ժողկոմխորհը Պրոֆմիության վարչության հետ նշանակեցին նոր միացյալ վարչություն Հայկոոպի համար, հանձինս չորս քաղաքացիական և 3 բանվորական կոոպերացիայի ներկայացուցիչների, վորը և գրեթե վերջացրեց յերկու անկախ ապարատների միացումը և ձեռնամուխ յեղավ գործի վերակառուցման բոլոր տեղերում ուր կային Բանկոոպներ և Հայկոոպի բաժանմունքներ։

Միացման հետևանքը յեղավ ծախսերի գրեթե 50 % տնտեսություն։

Ներկայումս Հայաստանում կան 7 գործող բանվորական կոոպերացիաներ։

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Յերևանի | Բանկոոպը | 5000-ի | չափ | բան | և | ծառ. | պրոֆ. | անդամ. |
| Ալեքպոլի | » | 3000-ի | » | » | » | » | » | » |
| Ղարաքիլիսայի | » | 500-ի | » | » | » | » | » | » |
| Ալլահվերդիի | » | 300-ի | » | » | » | » | » | » |
| Դիլիջանի | » | 750-ի | » | » | » | » | » | » |
| Ղամարլույի | » | 450-ի | » | » | » | » | » | » |
| Վաղարշապատի | » | 700-ի | » | » | » | » | » | » |

Աշխատանքը տարվում եր գլխավորապես Յերևանում, վորպես խոշոր կենտրոնում։

Ինչպես վերևում ասված է՝ Բանկոոպը չի ունեցել զգալի դրամական վարկի փոնդ։

Նրա սուղ և աննշան միջոցները կազմում եյին 1300 ռ. փայավճարները, ապրանքային փոխառությունը, համաձայն Տնտեսական խորհրդակցության վորոշման կառավարությունից տրված և սեփական կոոպերատիվ փոնդի 12000 ռ. դրա վրա ավելացրած և բոլոր այն մնացյալ ինվենտարը, վոր մնացել եր նախկին Յերևանի սպառողական ընկերությունից։

Հասկանալի յե վոր նման չնչին միջոցներով, առանց խոշոր դրամական ոժանդակության Կենտրոնական Բանկոոպը չպիտի կարողանար զարգացնել իր գործունեությունը։ Շրջանների բանկոոպները ստանում եյին չնչին քանակության ապրանք, Կենտրոնական Բանկոոպը չեր կարողանում բաց թողնել նրանց նույն-

իսկ գործունեության ամենաանհրաժեշտ առարկաները բանվորների համար: Նա հնարավորություն չուներ կատարել լայն գնումներ և սահմանափակվում էր առաջին անհրաժեշտության մթերքների գնումով տեղական շուկայում, վառելիքի և անասունների կերի պատրաստելով իր սեփական կարիքների համար: Գործը տարվում էր խիստ թույլ: Շրջանառության միջոցների բացակայության հետևանքով՝ Կենտրոնական Բանկոոպը ստիպված էր զբաղվել կոմիսիոն գործառնություններով: Տնտեսական խորհրդակցության սկզբնական նշանակած 30.000 ռ. ապրանքային փոխառությունից նա կարողացավ ստանալ միմիայն 7000 ռ. որի մի մասը տրվեց շրջաններին, մնացածը ծախսվում էր Կենտրոնական Բանկոոպի խանութներում քաղաքում:

Կենտրոնական Բանկոոպի ձեռնարկներից համեմատական խոշոր տեղ է բռնում նրա փուռը, որ հնարավորություն ունի թխել օրական մինչև 700 փութ հաց: Այդ փուռը լավ սարքված է, ունի շոգեկաթսա մազութի համար: Հետագայում նա թխում էր օրական ոչ ավել քան 200 փութ: Բայց վերջին օրերին՝ տնտեսական խորհրդակցության որոշմամբ՝ Բանկոոպին է վերապահված զինվորական և քաղաքացիական հիմնարկների համար հաց թխելու գործը:

Մինչև վերջին ժամանակները հաց թխելու գործը Բանկոոպի յեկամուտների գլխավոր աղբյուրներից մեկն էր: Այժմ հացի գնի աստիճանաբար ընկնելը, շուկայում վառելիքի թանգանալը և աշխատավարձի բարձրանալը 150—200 տոկոս պատճառում են փռան մեծ վնաս: Փռից բացի՝ Բանկոոպը ունի ճաշարան բանվորական ակումբում Պրոֆմիության անդամների և քաղաքացիների համար և իր սեփական փոխադրական միջոցները իր կարիքները բավարարելու համար:

1922 թվի աշնանը Կենտրոնական Բանկոոպը զանազան շրջաններում արել է գինու գնում, մինչև 7,000 դույլ, որը յենթադրվում է վաճառքի հանել տեղական կամ Ռուսաստանի շուկայում:

Շրջանային Բանկոոպների հետ կենտրոնը ըստ հնարավորության պահել է կապ, կատարել են առևտրական հարաբերություններ. մի քանիսի հետ ապրանքափոխանակության պայմաններ են կնքված, տեղերում ցորեն, գետնախնձոր և այլ մթերքներ պատրաստելու կենտրոնը մշտական առնչության մեջ է յեղել ռայոնների հետ և ունեցել է գաղափարական ղեկավարություն շրջանների նկատմամբ:



Կենտրոնական Բանկոոպի կոմունիստական ֆրակցիայի ջանքերով բոլոր բանկոոպներում գրեթե 80 տոկոսը կոմունիստներ են: Կազմակերպչական շրջանում կենտրոնից ուղարկված են յեղել ընկերներ, վորոնք ղեկավարվել են վարչությունների ընտրությունները տեղերում:

Կուսակցականների մասնակցությունը բանվորական կոոպերացիաներում արտահայտվում է հետևյալ ձևով.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Յերևանում | վարչության | 9 | անդամներից | կուսակցական | են 8—ը |
| Ղամարլույում | » | 5 | » | » | » 3—ը |
| Վաղարշապատում | » | 5 | » | » | » 3—ը |
| Ալեքպոլում | » | 5 | » | » | » 4—ը |
| Ղարաքիլիսայում | » | 5 | » | » | » 4—ը |
| Ալլահվերդիյում | » | 5 | » | » | » 4—ը |
| Իջևանում | » | 5 | » | » | » 4—ը |
| Դիլիջանում | » | 5 | » | » | » 3—ը |

Այնպես վոր վարչությունների 44 անդամներից միայն 15—ն են անկուսակցական, բոլոր մնացյալները կուսակցականներ են: Միևնույնը կարելի չէ ասել քննիչ հանձնաժողովների կազմի նկատմամբ: Այդ կետում Հայկոոպը մինչ ձուլվելը բոլորովին հակառակ պատկեր է ունեցել. այնտեղ կուսակցականների մասնակցությունը յեղել է շատ աննշան: Սակայն վերջին վերակազմման ժամանակվանից սկսած Նոր Հայկոոպը գտնվում է միանգամայն կոմունիստների ձեռքում:

# ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի ֆինանսական հարցերը միասին վերցրած չեն կարող լուծվել այն միջոցներով վորպիսիք կիրառվում են Խորհրդային Ռուսաստանում։ Այդ յերեք հանրապետությանց ֆինանսական դրությանց թեթև ուսումնասիրությունը բավական է՝ համոզվելու վոր դրանք, այդ Խորհրդային Հանրապետությունները, կանգնած են ֆինանսական ճգնաժամի առաջ։ Դրա պատճառը այդ հանրապետությանց տնտեսական վերածնության դանդաղ ընթացքն է։ Ինչ չափով վերածնության գործը կընթանա արագ, նույնքան արագ լուծվանքի կգա նրանց ֆինանսական քայքայումը։

Բացի այդ՝ յերեք հանրապետություններից ամեն մեկը ունի իր առանձին դրամանիշը, վորը մեծապես դժվարացնում է ապրանքաշրջանառությունը և արհեստականորեն բաժանում է հանրապետությունները միմիանցից։ Յեվ վորովհետև Անդրկովկասում տնտեսական շինարարության հաջողությունը ամբողջովին կախում ունի արտասահմանից և Խորհրդային Ռուսաստանից տնտեսական կապ պահպանելուց՝ անջատումի սխաեմը ավելի ես վատթարացնում է դրությունը։ Դրամի շրջանառությունը կորցնում է իր կայունությունը, իսկ առանց թղթադրամի կայուն կուրսի հնարավոր չէ տնտեսական զարգացումը։ Անդրկովկասի հանրապետությանց ֆինանսական զարգացումը, նրա հետ միասին և տնտեսական շինարարության հաջող ընթացքը, պայմանավորված է հանրապետությունների միասնական բյուջեյով և մի տեսակ դրամանիշի շրջանառությամբ։

Հետո հարկային քաղաքականության, փոխանակ հարկային բազմազանության, պիտի տրվի վորոշ ձև և ներդաշնակություն։ Դրանց հետ միասին աճող ապրանքաշրջանառությունը և արտասահմանի հետ կապ պահելու անհրաժեշտությունը պահանջում են վարկային գործառնությանց զարգացում, այնինչ մեզ մոտ գրեթե չկային վոչ վարկային հիմնարկների ցանց և վոչ կապ առանձին հանրապետությանց մեջ։

Այդպես եյին ահա մեր ֆինանսական հեռանկարները, Խորհրդային իշխանության ֆինանսական հիմնական ուղղությունները մինչև նոր տնտեսական քաղաքականության անցնելը։



Խորհրդային իշխանության 1922 թվի ֆինանսական քաղաքականությունը զարգանում եր համաձայն տնտեսական քաղաքականության ընդհանուր ուղղության, վոր ձգտում եր վերացնել դրամական հարաբերությունները և բազմակողմանի կերպով քաղաքացիականություն տալ ժողովրդական տնտեսության։ Այդ քաղաքականության ամենաբնորոշ կողմը նկատվում է 1920 թվի դեկրետների շարքով՝ սկզբում դեկտեմբերի 20-ից բանկային գործի կազմակերպման մասին ու հետո դեկտեմբերի 30-ի դեկրետը բանկային բնույթ կրող բոլոր գործառնությանց վերացման մասին։

Տնտեսական քաղաքականության մեջ կատարված հեղաշրջումը և նրա հետ կապված ֆինանսական քաղաքականության թեքվելը ստիպեց վերաքննել և հիմնովին փոփոխել գոյություն ունեցող ֆինանսական որենսդրությունը։

**Ապպարատի կազմակերպումը.**— Ֆինանսական քաղաքականության մեջբեկումն սկսվեց Ֆինանսական Կոմիսարիատի կազմակերպչական հիմքերի քննության օրից։ 1921 թվի օգոստոսի 21-ին Ժողկոմխորհը հաստատեց Ֆինժողկոմատի նոր կանոնադրությունը, վորի համաձայն նա վերակազմվում է վեց հիմնական վարչություններով, այն է Գործերի Կառավարչություն, Կազմակերպչական, Բյուջեի, Նախահաշվային, Հաշվեգործառնական, Հարկային և Պետնշանի վարչություններ։

Բոլոր գավառներում հին գանձարանների փոխարեն կազմակերպվում են գավառային ֆինանսական բաժիններ, տեղական Խորհուրդներին յենթակա։ Այդ որենսդրությանց զարգացման համար Ֆինժողկոմատը հրատարակում է մի շարք հրահանգներ, վորոնց մեջ մանրամասն բացատրվում է ֆինանսական ապպարատի կազմը և նրա ֆունկցիաները։

**Դրամի շրջանառությունը.**—Կազմակերպչական որենսդրության զուգընթաց զարգանում է դրամական շրջանառության կանոնավորելու որենսդրությունը։ Սկզբնական դեկրետներից պետք է ընդգծել դեկտեմբերի 20-ին հրատարակվածը Ռ. Խ. Ֆ. Ս. Հ. դրամանիշների պարտադիր շրջանառությունը և դաշնակցական կառավարության չեկերի կուրսի վորոշելու մասին։

Հետո հուլիսի 26-ի հրատարակածը ռուսական, վրացական և ադրբեյջանական դրամանիշների Հայաստանում Հայկական Խորհրդայիններին հավասար շրջանառության մեջ թողնելու մասին:

Ֆինանսական քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխության հետ կապված լույս են տեսնում դեկրետներ դրամական շրջանառության, սահմանափակումների վերացման և դաշնակցական կառավարության չեկերի չեղյալ համարելու մասին, վոր նպատակ ուներ շրջանառությունից հանել դրամանիշներին փոխարինող սուրրոգատները:

**Բյուջեյի Օրենսդրությունը.**— Բյուջեյի օրենսդրությունը կարելի յէ բաժանել յերկու հիմնական խմբերի. առաջին՝ օրենսդրության հարկերի և հատուցումների մասին և յերկրորդ՝ օրենքներ ծախքերի կրճատման և բյուջետային տնտեսության կանոնավորման մասին: Յերկու խմբերի նպատակն եր միևնույնն է- առանց դեֆիցիտի բյուջեյի սահմանելը:

Ինչպես առաջին միջոց հարկային քաղաքականության ասպարեզում հանդիսացավ 1921 թվի սեպ. 15-ի դեկրետը, արհեստավորական հարկի մասին (промысловый налог) և մի շարք կանոններ, հրատարակված նրա լուսաբանության, ապպարատի և հարկի գանձման ձևի մասին, վորոնք պիտի գործադրվեյին անպարտաճանաչ վճարողների նկատմամբ:

Նախ քան արհեստավորական տուրքի մասին յեղած դեկրետը կյանքի մեջ կիրառելը, Ժողկոմխորհը ընդունեց հարուստ դասակարգի վրա հոգուտ գաղթականության միանվագ տուրք գանձելու դեկրետը: Այդ տուրքից բոլորովին ազատ եյին ազգաբնակության բանվորական շերտերը և գյուղացիությունը:

Հետո հայտարարվեց դեկրետ անուղղակի հարկերի մասին: Դրանից ուշ հրատարակվեցին դեկտեմբեր 8-ի և 15-ի դեկրետները գինու և քացախից ակցիզ վերցնելու մասին: Ավելի ուշ փետրվարի՝ (1922 թ.) 15-ի դեկրետը դրոշմային տուրքի և դատական տուրքի (Судебн. пошлины) մասին և մի շարք այլ դեկրետներ և կանոններ ընդհանուր պետական յեկամուտից, նախահաշիվների կազմելու մասին ինչպես նաև կանոնադրություն տեղական բյուջեների մասին:

**Վարկի վերածնությունը.**— Վարկի վերածնությունը սերտ կապված է նոր ֆինանսական քաղաքականության ընդհանուր ուղղության հետ: Այդ վերածնության սկիզբը դրվել է կոոպերացիային վարկ բանալու օրենքով: Վարկի վերածնության գործառնության ամենախոշոր քայլը Պետբանկի հիմնելու դեկրետն է: Համաձայն կանոնադրության՝ Պետբանկի վրա դրվում է բոլոր բանկային գործառնությունները. նրա հիմնական դրամագլուխն է 500,000 ռուբլի (նախապատերազմական ժամանակի):



**Վալյուտային Քաղաքականություն.**— Հայաստանի շուկայի առանձնահատուկ պայմանները, նրա առևտրական հարաբերությունները Անդրկովկասյան մյուս հանրապետությանց հետ, Պարսկաստանի և Տաճկաստանի շուկաներին մոտ լինելը հայտնի առաջ են բերել բազմազան դրամանիշներ շուկայում, մետաղյա և թղթե: Այդ բազմազան դրամանիշների շուկայում շրջանառության մեջ լինելը անհրաժեշտորեն դեպի իրենց պիտի գրավեյին Ֆինժողկոմատի ուշադրությունը: Բնականաբար վերջինը հրապարակ յեկավ կանոնավորելու շուկան, դրան ուղղություն տալու, նորմալ պայմանների մեջ պահելով տարբեր յերկիրների վալյուտաների կուրսը:

**Ֆինժողկոմատի վարկային գործառնությունները յեվ պետբանկի բացման համար կազմակերպչական աշխատանքները.**— Հակառակ հին կարգերի վարկային հիմնարկությանց քարուքանդ անելու քաղաքականության և նրանց աստիճանաբար ի մի ձուլելուն՝ նոր ֆինանսական քաղաքականությունը դրեց Ֆինժողկոմատին վարկային գործառնությանց վերականգնելու անհրաժեշտության հանդեպ, վոր դրամի շրջանառության կանոնավոր կազմակերպելու ամենաեական միջոցն է:

Դրամի շրջանառության և վարկի շուրջ ձեռնարկած միջոցների շարքը ընդրոշում են վարկային գործի վերակազմության այն նախապատրաստական շրջանը, վոր պսակվում է Պետբանկի հիմնվելով: Այդ շրջանը սկսվել է կոոպերացիայի վարկ բանալու և Ֆինժողկոմատի հաշվեգործառնական վարչության մեջ բանկային գործառնությանց կիրառելու կանոնադրության հրատարակությամբ:

Ֆինժողկոմատի նպատակն է յեղել վարկի միջոցով նպաստել գյուղատնտեսության զարգացման, վոր Հայաստանի մի քանի գավառներում հասնում է բարձր կուլտուրայի, թեև աղքատ, բայց յերկրի տնտեսական կյանքի համար հսկայական նշանակություն ունեցող արդյունաբերության և կոոպերացիային՝ հանձինս Հայկոոպի:

**Պետական յեվ տեղական ուղղակի հարկերի սահմանումը.**— Նոր տնտեսական քաղաքականությունը փոխեց դրամական հարկերի նախկին տեսակետը: Նոր ընթացքից բղխող ուրիշ միջոցների մեջ ականավոր տեղ է բռնում ուղղակի հարկերի նշանակումը, վորպես միջոց ազգաբնակչության միջից դուրս կորզելու նրա տնտեսական գործունեությամբ կուտակված դրամանիշները:

**Ուղղակի հարկեր.**— Ուղղակի հարկերը տարբերվում են անուղղակի հարկերից նրանով, վոր առաջինները չեն տարածվում սովորաբար ամբողջ մարդաբնակչության վրա, այլ սոսկ նրա մի քանի շերտերի, գլխավորապես ունևոր խավերի վրա յեն ծանրանում:

Ռուսաստանի Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նախ քան Հայաստանի խորհրդայնացումը, նրանում ուղղակի հարկերի տեսակները գոյություն ունեյին միայն իրավաբանորեն, բայց փաստորեն դրանք վոչինչ չեյին տալիս: Հարկահանությունը մնում եր միայն թղթի վրա, վորովհետև պետությունը քիչ ուշադրություն եր դարձնում այդ հարցի վրա:

Դաշնակցական վերջին միանվագ զինվորական տուրքի որենքը, վոր հրատարակվեց Տաճկաստանի հետ ունեցած կռվի ամենավառ ժամանակ, փաստորեն կյանքի մեջ չիրականացավ: Պետության ամբողջ բյուջեն պահվում եր բացառապես էմիսիայով: Հարկային յեկամուտները անուշադրության եյին առնված: Ինքը հարկային ապարատը այնքան եր քայքայված, վոր բոլոր ցանկությամբ հանդերձ չեր կարող կատարել իր վրա դրված անելիքները:

Հայաստանի Խորհրդայնացումից հետո Հարկային ապարատը մնում եր միևնույն դրության մեջ: Չնայելով վոր Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. մեջ արդեն ձեռնամուխ եյին յեղել դրամական հարկերի կյանքի մեջ իրագործելուն, վոր տնտեսական քաղաքականության ընթացքում կազմում եր պետական յեկամուտների ամենաչքի ընկնող աղբյուրներից մեկը, Հայաստանում դեռ Հարկային ապարատը շարունակում եր քայքայվել և 1921 թվի հուլիսի 2-ին բոլորովին լուծարքի յենթարկվեց: Հարկային փոքրաթիվ աշխատակիցները ցաք ու ցրիվ յեղան զանազան Խորհրդային հասարակական հիմնարկների մեջ, դուրս գնացին Հայաստանի սահմաններից և Ֆինժողկոմատը զրկվեց մասնագետներից, վորոնք հետագայում մնացին անփոխարինելի:



1921 թվի օգոստոսի սկզբից նոր տնտեսական քաղաքականության բնական զարգացումը դրամական հարկերի սիստեմի վերածնության խնդիրը լուրջ կերպով դրվեց Ֆինժողկոմատի առաջ. անհրաժեշտ յեղավ նորից վերակազմել հարկային ապարատը: Հրատարակվեց դեկրետ, վոր պարտավորեցնում եր բոլոր նախկին հարկային աշխատավորներին վերադառնալ իրենց հին աշխատանքներին իրենց մասնագիտությունների համաձայն: Հոկտեմբերի վերջին հազիվ հազ հաջողվեց մեծ ջանքերով կազմակերպել կենտրոնում Հարկային Վարչություն ուղղակի և անուղղակի հարկերի բաժիններով և գավառներում հարկային յենթաբաժիններ ֆինտեսուչների գլխավորությամբ: Վորովհետև Հայաստանում մասնավոր տնտեսական գործունեությունը չեր ընդհատվել, ուստի առևտրական արդյունաբերական ձեռնարկները հնարավոր եր յենթարկել հարկի և միանգամայն իր ժամանակին ու նպատակահարմար:

Հարկային ապարատի վերակազմելու հետ միասին Ֆինժողկոմատը սեպտեմբերի 15-ին Ժողկոմխորհի միջոցով հրատարակեց դեկրետ պետական արհեստավորական հարկի մասին, նըման Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. դեկրետի, մի տարբերությամբ միայն, վոր տուրքը վորոշվում է վոչ թե համաձայն շրջանառության, այլ շահից—նախկին մինչ հեղափոխական սկզբունքով:

Նոր կազմակերպված Հարկային վարչությունը իր թույլ ուժերով ընդհանուր առմամբ, տուրքը կյանքի մեջ իրագործեց հաջող: Իրենք հարուստները առանց վորևե ճնշման կամովին մտցրին իրենց բաժին տուրքը և յեթե չնչին տոկոսը պարտք մնաց, դա յել բացատրվում է նրանով, վոր միլլիցիան իր ժամանակին չեր ցրել հարկաթերթերը ըստ պատկանելվույն:

Հարկի գանձման առաջին և յեթ փորձը ցույց տվեց, վոր շուկայի ավյալ պայմաններում և ապարատի թույլ լինելով հարկը շահից վերցնելու սկզբունքը անընդունելի յե, ուստի և դեկտեմբերի վերջից Ժողկոմխորհը հրատարակից լրացուցիչ դեկրետ արհեստավորական տուրքի վորոշման նոր կարգի մասին, այն է՝ շրջանառությունից, վորովհետև ավելի հեշտ է վորոշել ծախսածից գոյացած գումարը, քան թե նրանից ստացած շահը:

**Անուղղակի հարկերի սահմանումը.**—1921 թվի հոկտեմբերին հերթը հասավ պետական անուղղակի հարկերի գանձմանը: Հարկային վարչության կից առաջ յեկավ բջիջ, վորից 1922 թ. սկզբին զարգացավ առանձին անուղղակի հարկերի բաժին, վորի

նպատակն էր փնտրել անուղղակի հարկի յենթարկելի օբյեկտներ և մշակել դրանց վերաբերյալ նյութեր։ Սակայն Հայաստանի իրականության մեջ նրա հետամնաց արդյունաբերության ներկայությամբ, խոշոր բան սպասելու հիմք տվող հեռանկարներ չկային։ Հայաստանը չուներ արտադրական այնպիսի նյութեր, վորոնք լինեյին օբյեկտներ անուղղակի հարկի յենթարկելու՝ ինչպես օրինակ ծխախոտը, կերոսինը, շաքարը և այլն, դրանք առաքվում են դրսից։ Անուղղակի հարկերի բաժնին մնում էր գործնեության մեջ և կանգ առնել Հայաստանի այն արտադրությանց վրա, վորոնք կրում են մշտական բնույթ և ունեն համեմատական խոշոր չափեր։ Դրանք են գինին ու քոնյակը, վորոնք և յենթարկվեցին ակցիզի միմիայն ծախելու, դուրս տանելու դեպքում իրենց արժեքի $30^0/_0$-ով գեանդրանի գինիները $40^0/_0$-ով։

Հետո ինչպես խոշոր յեկամուտի աղբյուր՝ ճանաչվեց մզած խաղողի մնացորդներից պատրաստելի օղու վրա դրվելիք ակցիզը։ Նախապատերազմական ժամանակ այդ հասույթը տալիս էր մինչև 500.000 ռուբլի հաշված յուրաքանչյուր աստիճանին 14 կոպ։ Բայց այդ 14 կոպեկի փոխարեն սահմանվեց վեց և կես կոպեկ. վերջին հաշվով յեթե տարեկան պատրաստվի 2.500.000 աստ. վոր շատ չէ Հայաստանի համար, կստացվի 162.500 ռուբլի վոսկով։



# ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
## (1921—1922 *թ. թ.*)

Լուսժողկոմատի և նրա օրգանների գործունեությունը 1921 և 1922 թ. թ. առաջ է գնացել շատ աննպաստ պայմաններում։ Գլխավոր պատճառները յեղել են նյութական սուղ դրությունը, տեղական ազգաբնակության տնտեսապես քայքայումը, դպրոցական աշխատավորների պակասությունը և նրանց վարձատրության անբավարար լինելը, տեղերի հետ կանոնավոր կապ պահպանելու անհնարավորությունը, դպրոցական շենքերի վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի բացակայությունը, այլ և դասագրքերի և դասական պիտույքների պակասը։

Չնայելով այդ արգելառիթ հանգամանքներին՝ այնուամենայնիվ Լուսժողկոմատին հաջողվել է հիշյալ ժամանակաշրջանում վոչ միայն պահպանել յեղած հաստատությունները, այլ և բազմապատկել նրանց թիվը։

## ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Լուսժողկոմատը հետևյալ կազմակերպությունն ունի.

1. Լուսժողկոմը և Կոլլեգիան։

2. Կազմակերպչական և Ակադեմիական կենտրոնները, Սոցիալական Դաստիարակության, Պրոֆտեխնիքական կրթության և Մանկատնային գլխավոր վարչությունները և Պետական Հրատարակչությունը։

3. Ազգային փոքրամասնությունների բյուրոն.

4. Տեղերում Լուսժողկոմատն ունի տասը գավառական լուսբաժիններ իրենց ընդհանուր, սոցիալական դաստիարակության և քաղաքական լուսավորության յենթաբաժիններով։

## ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կազմակերպչական կենտրոնի աշխատանքը, միախառնվելով Լուսժողկոմատի բոլոր ստորաբաժանումների աշխատանքի հետ, դժվար է հաշվի առնվում։

Լուսժողկոմատի և նրա ստորաբաժանումների կոնստրուկցիան, վոր ընդհանուր գծերով հաստատված էր դեռ ևս 1921 թ. ամառը, մի քանի անգամ փոփոխությունների է յենթարկվել։ Լուսժողկոմատի կազմից հանված են Հայաստանի հեռագրական գործակալությունը (Արմենտա) և պարբերական հրատարակու-

թյունների վարչությունը, միացված են մանկատնային գլխավոր վարչությունը, կազմակերպված ե Առանձին Մատակարարման Գլխավոր վարչություն և այս նորից յենթարկված Կազմկենտրոնին։

Փոփոխելով Լուսժողկոմատի որգանների կազմակերպությունը, Կազմկենտրոնը ստիպված եր փոխել նաև նրանց շտատները թե գործն ավելի լավ հիմքերի վրա դնելով և թե տեղի ունեցող շտատների ընդհանուր կրճատման պատճառներով։ 1921 թ. օգոստոսի 10-ին Ժողկոմխորհը հաստատել եր Լուսժողկոմատի շտատները, վորով նախատեսնվում ե կենտրոնում և գավառներում 5220 աշխատակից։ 1922 թ. վերջին այդ թիվը իջեցրած և հասած ե 1200-ի։

Համեմատության համար դնում ենք այստեղ 1921 թ. օգոստոսի և 1922 թ. դեկտեմբերի շտատների տախտակը։

| | 1921 թ. | 1922 թ. |
|---|---|---|
| Կենտրոնական վարչություն | 320 | 52 |
| Կենտրոնական հիմնարկություններ | 376 | 225 |
| Գավառական վարչություններ | 676 | 39 |
| Գավառական հիմնարկություններ (դպրոցներ և այլն) | 3848 | 684 |
| Մանկատներ | — | 200 |
| Ընդամենը | 5220 | 1200 |

Այսպիսով կենտրոնի վարչական կազմը կրճատված ե 268 հոգով, իսկ գավառներինը՝ 637 հոգով։ Վարչական կազմի կազմակերպությունը չի կարելի համարել վերջնական, նա յենթակա յե դեռ ևս փոփոխության։

## ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**1. Գիտական ինստիտուտ.**—Գիտական Ինստիտուտը հիմնվել ե 1921 թվի փետրվարի 5-ի դեկրետով, նպատակ ունենալով գիտական հիմքերի վրա դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրաների ուսումնասիրության գործը և միաժամանակ մասսաների սեփականություն դարձնել հնության այն բոլոր հիշատակարանները, վորոնք գիտական և գեղարվեստական նշանակություն ունեն և կարող են աղբյուր դառնալ կուլտուրական նոր արժեքների ստեղծագործության։ Նույն թվի ապրիլին Ինստիտուտի նպատակը ընդլայնվել ե և վորոշվել ե ուսումնասիրել



Հայաստանը վոչ միայն կուլտուր-պատմական, այլ և բնագիտական, աշխարհագրական, տնտեսական և այլ կողմերով։

Աշխատակցելու յեն հրավիրվել մի շարք գիտնականներ։ Կատարվել են հետևյալ աշխատանքները. 1. Ինստիտուտի յուրաքանչյուր անդամ զբաղվել ե իր մասնագիտության վերաբերյալ ուսումնասիրություններով. 2. Անդամների մի մասը կառավարել և կարգավորել ե Ինստիտուտին յենթակա հիմնարկները (թանգարան, մատենադարան, տպարան), 3. Ինստիտուտի անդամները պարբերաբար գիտական զեկուցումներ են տվել. 4. Հրատարակել ե «Բնագիրներ և Հետազոտություններ» շարքի չորս հատորը. 5. Հրատարակել ե Ինստիտուտի որգան «Բանբերի» առաջին համարը. 6. Կազմակերպվել ե մի գիտական արշավախումբ, վոր ուսումնասիրել ե Արագածոտնի Ամբերդի հովիտը։

Ներկայումս գործում ե Ինստիտուտի մատենադարանը իր բոլոր բաժանմունքներով (ձեռագրատուն, արխիվ, հիմնական գրադարան—ընթերցարանով, մամուլի բաժին)։

Լուսժողկոմատը Ինստիտուտն ավելի նպատակահարմար և արդյունավոր դարձնելու նպատակով զբաղված ե նրա վերակազմության խնդրով։

**2. Պետական թանգարան.**— Թանգարանին իբրև սաղմ ծառայել ե Հայոց Ազգագրական ընկերության Թիֆլիսում ունեցած թանգարան-գրադարանը, վոր 1919 թվին նվիրաբերվել ե Հայաստանին և վորոշվել տեղափոխել Յերևան, սակայն այդ տեղափոխությունը իրագործվել ե միայն 1921 թվին Խորհրդային իշխանության օրով։ 1922 թվի սկզբին Յերևան բերվեցին բոլոր իրերը և սկսվեցին կարգավորման աշխատանքները։ Հետզհետե ստացվեցին Նոր-Նախիջևանի Հայկական թանգարանը, Մոսկվայից 1914 թվին Եջմիածնից այնտեղ տարված ձեռագրերն ու այլ հնությունները, Մոսկվայում հավաքված յուղաներկ պատկերները և այլ վայրերից նվիրաբերված ու հավաքված հնությունները և պատկերները։ 1922 թ. նոյեմբեր 7-ին պաշտոնապես բացվեց թանգարանը շարունակելով հանդերձ կարգավորման աշխատանքները։

Թանգարանն այժմ ունի հետևյալ բաժինները. 1. Հնագիտական, 2. Ազգագրական, 3. Հին-պատմական, 4. Գեղարվեստական, 5. Հեղափոխական և 6. Արխիվային։

Ալեքսանդրապոլում թանգարանն ունի յուր բաժանմունքը,

վոր սկզբում զուտ ռազմական էր, սակայն շուտով Յերևանից ուղարկվեցին 87 յուղաներկ պատկերներ և այլ իրեր։ Ազգային Թանգարանում այժմ ի միջի այլոց կան շատ հազվագյուտ իրեր, ինչպես օրինակ Մշո Առաքելոց վանքի մագաղաթե 1116 թվին գրված ճառընտիրը, նույն յեկեղեցու 12-րդ դարում շինված քանդակազարդ դուռը, Անիի այրերում գտնված գրակալը, Նոր—Բայազեդում պեղված Թագավորական կառքը բրոնզի դարից, հայկական դրամների գրեթե լրիվ ժողովածուն նայն։ Ուշագրավ են Այվազովսկու, Եղգար Շահինի, Սարյանի նկարները, Նալբանդյանի, Պատկանյանի, Սունդուկյանի, Արծրունու գրադարանները, իրերը և այլն։

**3. Հանրային մատենադարան.—** Մինչև 1922 թվի օգոստոսի սկիզբը հանրային մատենադարանը իրոք գոյություն չուներ։ Կար մի-անավարտ շինություն, վորի մեջ հավաքված եյին հարյուրավոր արկղներով և հակերով գրքեր։

Նախքան այդ գրքերը կարգի բերելը անհրաժեշտ եր շինությունը նորոգել և պակասները լրացնել։ Վերջին աշխատանքները ավարտվելուց հետո՝ սկսվեց դարակների շինությունը, վորպիսի աշխատանքները վերջացան հոկտեմբերի վերջին։

Այդ բոլոր աշխատանքների ժամանակ վոչ մի րոպե կանգ չեն առել բուն գրական աշխատանքները։ Դարակները կիսով չափ եյին ավարտվել երբ վերջացավ Ղորղանյանի գրադարանի ցուցակագրումը տասնորդական սիստեմով և կետերի կիրառումով։

Հանրային մատենադարանը կազմում է մասամբ նվիրած և մասամբ գնված գրքերից։ Իբրև նվեր ստացվել են Թիֆլիսի ակումբի գրադարանը և Ղորղանյանի մոտ 6,000 գրքերից բաղկացած մատենադարանը։ Գնված է շատ չնչին գնով Արղությանների գրադարանը, վորը բաղկացած է 9,000 հատոր ընտիր գրքերից։ Այդ գրադարանը իր ճոխությամբ գուցե առաջինը լինի Կովկասում։ Բացի վերոհիշյալ գրադարանից, Հանրային Մատենադարանը ստացել է Հ. Առաքելյանի, Մատենճյանի, Թերզյանի և ուրիշների գրադարանները։

Գրքերի ընդհանուր քանակը կարող է հասնել մինչև 30-35 հազար հատորի։

Ճիշտ քանակը թե ըստ անունների և ըստ հատորների ու կազմերի կպարզվի, յերբ կավարտվի նրանց ցուցակագրումը, վոր կատարվում է հնարավոր արագությամբ։

Մատենադարանին կից բացված է ընթերցարան ուր ստաց-



վելու յեն Ռուսաստանի կենտրոնների և Կովկասի բոլոր պարբերականները։ Ընթերցարանի կահավորումն վերջացավ 1922 թ. նոյեմբերի 7—ին։ Թե ընթերցարանի կահավորումը և թե դարակների կառուցումը կատարվեց ՀՕԿ—ի (Հայաստանի Օգնության Կոմիտեյի) ոժանդակությամբ. նույն ՀՕԿ—ի ծախքով շինվում են ընթերցարանում պակասող 7 պահարանները։

Մատենադարանը մեծ կարիք ունի պահարանների և տեղի ընդարձակման։ Տեղի նեղվածությունը և պահարանների բացակայությունը սաստիկ խանգարում են գրադարանական աշխատանքներին։ Ներկայումս միանգամայն կարգի յե բերված Ղորղանյանի գրադարանը և կիսով չափ Արղությանի գրադարանը։ Մնացած մոտ 20 հազար հատոր գրքերը դասավորելու և ցուցակագրելու համար նախ պետք է շինվեն 6—8 պահարաններ յեղած պահարանների ձևով։

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մինչև Լուսժողկոմատի վերջնական վերակազմությունը՝ գոյություն ունեյին առանձին բաժիններ՝ միջդպրոցական, դպրոցական, սոցիալական դաստիարակության աշխատավորներ պատրաստող, սոցիալական դաստիարակության (մանկատնային) վորոնք իրենց աշխատանքները վարում եյին ցուցմունքներ ստանալով անմիջապես Լուսժողկոմատից։ Այդ ժամանակաշրջանում, խորհրդային իշխանության հաստատվելու օրից սկսած, հիշյալ բաժինները զբաղված են յեղել մանկության և պատանեկության դաստիարակող հիմնարկները վերաբանալով, լայնացնելով յեղածները և հիմք դնելով նոր հիմնարկների։ Քաղաքացիական կռիվը մի քանի ամսով խզել է աշխատանքները կենտրոնում և Յերևանի, Եջմիածնի, Դարալագյազի, Նոր-Բայազեդի ու Զանգեզուրի գավառներում, աշխատանքները շարունակվել են միայն Ղարաքիլիսայի ու Դիլիջանի գավառներում։

Քաղաքացիական կռվից հետո, Ալեքպոլի, Լոռու և Զանգեզուրի գավառների միացումից հետո, այդ գավառներում անմիջապես կազմակերպվեցին տեղական Խորհրդային լուսավորության օրգաններ, վորոնց և հրահանգվեց առաջին հերթին վերականգնել դպրոցները։

Այդ ժամանակաշրջանի հիմնական գործը յեղել է դպրոցի յերկու աստիճանների բաժանելը և ձրի ուսման կիրառումը, մանկապարտեզի, իբրև անհրաժեշտ դաստիարակչական հիմնար-

կի հիմ դնելը ու խրախուսելը, վորի հետևանքով Յերևանում և Նոր-Բայազետում բացվել են մանկապարտեզներ:

Հրահանգվել է ամառային պարապմունքների հատուկ ձևերը, մայրենի պետական և օտար լեզուների դասավանդման խնդիրն է կարգավորվել: Վարվել են աշխատանքներ նոր ծրագրերի մշակման համար և բացվել նույն 1921 թ. ամառը մանկավարժական դասընթացներ Ղարաքիլիսայում, Նոր-Բայազետում և Դիլիջանում: Առաջին յերկու վայրերում տեղի ուսուցիչների համար, իսկ վերջինում՝ Համահայաստանյան մասշտաբով:

Սոցիալական Դաստիարակության Գլխավոր Վարչության կազմակերպությամբ յեղած բաժիններին միացան նոր բաժիններ: 1922 թ. վերջին Սոցդավարն ուներ հետևյալ բաժինները, 1. Մինչդպրոցական, 2. Դպրոցական, 3. Մանկության իրավական պաշտպանություն, 4. Ոժանդակ հիմնարկների, 5. Ընդհանուր բաժին և 6. Ակադեմիական սեկցիա: Բաժինների վարիչները վարչության վարիչի նախագահությամբ կազմում են կոլեգիա: Տեղերում լուսբաժինները ունեն Սոցիալական դաստիարակության յենթաբաժիններ:

**Դպրոցական բաժին.**— 1921—22 ուսումնական տարում ծրագրած աշխատանքները արտահայտվել են 1. Դպրոցական ցանցը ընդլայնելու մեջ. այս նպատակով հրահանգվել է ոժանդակել դպրոցական շենքերի վերաշինության, նորերը կառուցելու, հատուկ դեկրետով դպրոցական շենքերը ազատվել են զինվորական և այլ հիմնարկություններից, ռեկվիզիցիայի յեն յենթարկվել նոր շենքեր, 2. Հայտարարվել է ուսուցչության մոբիլիզացիա. 3. Տեղերին հրահանգվել է դպրոցական կարիքները հոգալու համար ստեղծել տեղական ֆոնդեր ինքնակամ տուրքերի ճանապարհով, ինչ և կատարվել է գլխավորապես ունևոր գավառների գյուղական վայրերում: 4. Ներքին և արտաքին (գլխավորապես Թիֆլիսում) շուկաներում գնվել և բաշխվել են տեղերին գրենական պիտույքներ և դասագրքեր ձրիաբար. 5. Մշակվել և ուղարկվել են տեղերին դպրոցական վարչական կանոնադրությունը և յերկրորդ աստիճանի դպրոցների ինքնակառավարման կանոնադրությունը, 6. Ուղարկվել է գավառներին առաջին աստիճանի դպրոցի նոր ծրագրերը և հրահանգվել է մշակել տեղերում ժամանակավոր ծրագրեր յերկրորդ աստիճանի դպրոցի համար, հարմարեցրած տեղական պայմաններին.



7. Ուսումնական տարվա սկիզբը հայտարարվել է սեպտեմբերի 1-ը, սակայն դաշտային աշխատանքների ուշ վերջանալը շատ գավառներում դպրոցական տարվա սկիզբը փաստորեն հետաձգվել է մինչև նոյեմբեր: 8. Նշանակվել են յերկու կենտրոնական հրահանգիչներ լեռնային գոտու չորս գավառներում—Ալեքպոլի, Լոռու, Դիլիջանի և Ղարաքիլիսայի, մեկի բնակավայրը նշանակելով Ալեքպոլ, մյուսինը՝ Ղարաքիլիսա:

Տարվա մեջ ամսական տեղեկագրերի համաձայն ամբողջ Հայաստանում գործող առաջին և յերկրորդ աստիճանի դպրոցների ուսուցչության և աշակերտության քանակը արտահայտվում է հետևյալ տախտակով:

| Աստիճան | Դպրոցների թիվը | Խմբերի թիվը | Աշակերտություն | | | Ուսուցչություն: | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ընդհանուր | տղա | աղջիկ | ընդհանուր, | ըստ ցենզի |
| Ա. | 484 (97,8%) | 1310 | 51049 | 34,259 67.1% | 16790 32,9% | | Բարձր 107,9% Միջնակ. 2,9% Տարրակ. 442,38% |
| Բ. | 12 (2,2%) | 42 | 1261 | 565 44,8% | 696 55,2% | 1163 | |
| Ընդամենը | 496 | 1352 | 52310 | 35024 66.9% | 17286 33,1% | | |

Յեթե հանրապետության բնակչության միայն 200,000 հոգին հաշվենք 7-16 տարեկան հասակի, ապա նկատի առնելով Ամերկոմի մոտ հաճախող սաների գումարը, պետական դպրոց հաճախողների հետ ստանում ենք մոտ 71000, վորը կազմում է հիշյալ դպրոցական հասակի բնակչության միայն 35.5%-ը: Դպրոցական ցանցի լայնացման խնդիրը այսպիսով դառնում է դպրոցական բաժնի առաջիկա տարիների հարվածային խնդիրներից մեկը:

Ավելորդ չենք համարում մեջ բերել տեղեկություն դպրոցական ցանցի վիճակի մասին մինչխորհրդային Հայաստանում:

Դաշնակցականների օրով միայն մի տարի 1919-20 թվին յեղել է դպրոցական քիչ թե շատ նորմալ կյանք. այդ ժամանակ, ըստ պաշտոնական տվյալների, յեղել է 476 դպրոց 45251 աշակերտով. այդ թվերի մեջ մտնում են Սուրմալույի գավառի և Կարսի շրջանի 83 դպրոցները մոտ 8000 աշակերտով:

Մինչպատերազմյան տվյալներով (1914 թ.) Յերևանի նա-

հանգում բոլոր պետական հասարակական և մասնավոր դպրոցների քանակը յեղել է 347 (21511 աշակերտով)։

Այս թվերից պարզվում է, վոր դպրոցական ցանցը ընդլայնված է խորհրդային իշխանության օրով, իբրև աչքի զարնող փաստ բերում ենք Լոռու գավառը, ուր դպրոցների քանակը յերբեք չէր անցած 21-ից և միայն անցած 1921-22 թվին հասավ 43-ի, այսինքն դպրոցական ցանցը լայնացել է ավելի քան 100%։

Աշակերտության 66,9%-ը տղաներ են, այսինքն տղաների թիվը աղջիկներից յերկու անգամ շատ է, սա բացատրվում է նրանով, վոր գյուղացին տարբեր կարծիք ունի տղայի և աղջկա ուսման և դաստիարակության մասին։ Օրինակ՝ Դարալագյազում տղաների տոկոսը հասնում է նույնիսկ 87-ի։ Մասնավորապես դրա պատճառը այն է, վոր ուսուցչուհիների քանակը գյուղական վայրերում շատ քիչ է, նույն Դարալագյազում ուսուցիչները ըստ սեռի յեղել են 80% տղամարդ և 20% կին։

Քաղաքներում աշակերտության քանակը ըստ սեռի ներկայացնում է հակառակ պատկեր. տղաները քիչ են աղջիկներից. այս յերևույթը բացատրվում է նրանով, վոր ընտանիքը տղային օգտագործում է իբրև աշխատավոր ձեռք։

Դպրոցը բոլոր վայրերում յերկսեռ է յեղել, բացի յերկրորդ աստիճանի յերեք դպրոցից, վորոնք աստիճանաբար ստորին խմբերից սկսած անցում են յերկսեռ կազմի։

Պարապմունքները ընդհանրապես տևել են վեց ամիս. աշխատավորության դեռ ևս սուղ պայմաններում աշակերտը գյուղատնտեսական աշխատանքի սեզոնին առնվազն վեց ամիս օգտագործվում է իբրև աշխատող ձեռք.

Շենքերի սակավության պատճառով մանավանդ քաղաքներում, պարապմունքները տեղի յեն ունեցել յերկու հերթ։

Դպրոցների տնտեսության հետ է կապված աշխատանքի մեթոդի կիրառման հարցը, ուստի և Հողժողկոմատի հետ համաձայնության է յեկած և ամենուրեք, դեռ անցյալ տարվանից սկսած, հող է տրվում դպրոցներին։ Մինչ այդ դպրոցական բաժնի քաղաքականությունն է յեղել ըստ հնարավորության ընդլայնել իրազննական մեթոդը, վորի մեծ տեղ է տվել թե մշակված ծրագրներում և թե հատուկ հրահանգներում այդ մասին։

Ուսուցչության քանակը և վորակը բարձրացնելու խնդիրը հրամայողական պահանջ է դառնում։ Անցած 1921-22 թվին



ուսուցիչը ծանրաբեռնված է յեղել միջին թվով 45 աշակերտով (տեղ-տեղ նույնիսկ 80 աշակերտով)։ Նոր դպրոցների բացմամբ ուսուցիչների կարիքը ավելի յե բարձրանալու։ Այս յեղած ուսուցչության 38 տոկոսի միջնակարգից ցածր ցենզը, ընդհանուր հոգնածությունն ու խորհրդային դպրոցի հանդեպ անպատրաստ լինելը-անհետաձգելիորեն դնում են դպրոցական բաժնի առաջ ուսուցիչներ պատրաստող հիմնարկներ բանալու խնդիրը։ Այդ նպատակով 1922 թվի ամառը կազմակերպել են մանկավարժական դասընթացներ Հայաստանի զանազան գավառներում, Յերևանում յերեք դասընթաց (հայ, թյուրք և ասորի ուսուցիչների համար), Էջմիածնի գավառում (Վաղարշապատ, Աշտարակ, Ղուրդուղուլի) Ալեքպոլում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում և Մեղրում, իսկ 1922 թ. նոյեմբեր ամսին բացվել է Յերևանում Մանկավարժական Ինստիտուտ 48 ուսանողներով (21 հոգի գավառներից և 27 հոգի Յերևանից)։

Վերև բերված տախտակի մեջ են մտնում նաև ազգային փոքրամասնությունների դպրոցները, այն է 15 ռուսական, 15 թաթարական, 5 ասորական, 5 հունական և 6 յեզիդական, ընդամենը 47։

Ազգային փոքրամասնությունները հատուկ ուշադրության առարկա յեն յեղել, հատկապես նկատի առնելով, վոր նրանց հիմնարկները ճնշված կամ հիմնովին փակված վիճակի մեջ են յեղել մինչխորհրդային իշխանության հաստատվելը։ 1922 թվին յեղել է մեկ կենտրոնական հրահանգիչ թաթարական դպրոցների, ժամանակավորապես, մինչև դպրոցների կարգի ընկնելը, նշանակվել է մեկ կենտրոնական հրահանգիչ յեզիդական դպրոցների համար, մեկ ասորի հրահանգիչ ունեցել է Յերևանի գավառը, ուր կենտրոնացած են յեղել ասորական դպրոցները։ Մյուս ազգությունների (ռուսների և հույների) դպրոցները հրահանգվել են տեղական լուսբաժինների կողմից։ Դասական պիտույքները հայթայթել է Լուսժողկոմատը։ Մասնավորապես յեզիդների համար ստեղծվել է նոր այբուբեն և առաջին անգամ այդ լեզվով դասագիրք տպագրվել։

22-23 ուսումնական տարին սկսվել է բոլոր գավառներում հոկտեմբեր ամսին, այն էլ վոչ բոլոր դպրոցների համար. պատճառներն են 1. Դաշտային աշխատանքներին աշակերտների մասնակցելը, 2. Շենքերի վերանորոգման ուշանալը, 3. Ուսուցիչների շտատների կրճատումը, վորի հետևանքով տեղերի վրա յե

ընկնում տեղական բյուջե և ֆոնդ կազմելը, 4. Ուսուցիչների մասնակցելը գյուղատնտեսական վերակազմության աշխատանքներին:

Բոլոր գավառներում, բացի Դիլիջանից և Նոր-Բայազետից, դպրոցների թիվը շատանում է ի հաշիվ տեղական (գլխավորապես գյուղական համայնքների) միջոցների: Դժբախտաբար կազմակերպչական աշխատանքները դեռևս վերջացրած չլինելով՝ ճիշտ թվական տվյալները 1922-23 ուսումնական տարվա համար պակասում են:

1922-23 ուսումնական տարին համեմատաբար ավելի նորմալ է ընթացել. 1. Ա և Բ աստիճանի դպրոցների ծրագրերը հրահանգված է պարտադրաբար մտցնել դպրոցներում: 2. Վերամշակված և ուղարկված է յեղել տեղերին դպրոցական վարչական կանոնադրությունը: 3. Բոլոր գավառներին բաշխված են յեղել տետրեր, մատիտներ, թանաք, դասագրքեր: 4. Ուսուցիչների ռոճիկը համեմատած 1921—22 տարվա ռոճիկի հետ բարձրացել է հինգ անգամ: 5. Աշխատավորության հետաքրքրությունը դեպի դպրոցը բարձրացել է: 6. Շատ վայրերում դպրոցը ստեղծել է իր տնտեսությունը, սեփական ցանքսից բերք ունենալով:

Նոր դպրոցների և յեղած դպրոցներում նոր խմբերի բացմամբ 1922-23 ուսումնական տարում աշակերտության թիվն աճում է առնվազն 10%, որով աշակերտության թիվը հասնում է 57,000: Ամերկոմի աշակերտության հետ ընդամենը մոտ 77 հազար, այսինքն Հայաստանի դպրոցական հասակի բնակչության մոտ 41%-ը հաճախել յե դպրոց:

Ազգային փոքրամասնությունների դպրոցների քանակը մեծանալու յե թուրքերի, ռուսների և ասորիների համար, այս յերեք ազգությունների համար հայթայթվում են գրականություն, դասագրքեր, առաջինների համար Ադրբեջանից, յերկրորդների համար Ռուսաստանից, իսկ յերրորդների համար հրատարակված է առաջին և յերկրորդ տարվա հայոց լեզվի դասագիրք: Նշանակված են թաթարական և ասորական դպրոցների կենտրոնական հրահանգիչներ, վորոնք նշանակվելիք ռուս հրահանգչի հետ կազմելու յեն Ազգային Փոքրամասնությունների Բյուրո, վորին և կհանձնվի ազգային փոքրամասնությունների դպրոցական գործը:

Պետության կողմից մատակարարվող ուսուցիչների թիվը գավառական դպրոցների համար 1922 թ. յեղել է 1103, իսկ 1922-23



ուսումնական տարում կրճատված է մինչև 604: Չնայած սրան, տեղերում ուսուցիչների թիվը (բացի Դիլիջանից և Նոր-Բայազետից) աճում է ի հաշիվ գյուղական համայնքների և գավգործկոմների բյուջեների, որ կազմվում է դպրոցական հարկի միջոցով:

**Մինչդպրոցական բաժին.**— Մինչդպրոցական բաժինը կազմվելով չի գտել Հայաստանյան վոչ մի մինչդպրոցական հիմնարկ, բացի յերկու վոչ պետական մանկապարտեզներից: Նախ և առաջ գործի յեն հրավիրվել մասնագետներ թե Յերևանում և թե գավառներում: Տրամադրության տակ ունենալով յերկու հրահանգիչ, բաժինն հաջողվեց բանալ 11 մանկապարտեզ 21 խմբով, վոր 1922-23 ուսումնական տարում հասել է 12-25 խմբով: Մինչդպրոցական հիմնարկների ցանցը լայնացնելու գլխավոր խոչնդոտը նյութական միջոցների պակասն է (նախաճաշիկների, պիտույքների): Աշխատավորների համար միայն 1922-ի ամառը բաժնի կողմից բացվեցին դասընթացներ, վորոնց նպատակն եր վորոշ չափով թարմացնելու և հնարավոր դարձնելու յեղած մանկապարտեզներում գործին մեթոդական ուղղություն տալ:

Բաժնին կից ու նրա անմիջական ղեկավարությամբ գործում է Յերևանի Կենտրոնական Մանկապարտեզը:

**Ակադեմիական սեկցիա.**— Սեկցիան գործել է ակադեմիական կենտրոնի գիտական-մանկավարժական սեկցիայի իրավունքներով, վերջինիս բացակայության պատճառով:

Սեկցիան մինչև 1922 թ. վերջը 1. Մշակել և տպագրել է առաջին աստիճանի դպրոցների ծրագրերը: 2. Յերկրորդ աստիճանի դպրոցի ռեֆորմի տախտակը Ֆուրկացիոն սիստեմով և ժամանակավոր ծրագրներ նույն դպրոցի համար: 3. Հայտարարել է մրցանակաբաշխություն մայրենի լեզվի առաջին տարվա դասագրքի, 4. Կազմել է հանձնաժողովներ մայրենի լեզվի դասագրքեր մշակելու համար. 5. Ընդունել և հանձնարարել է թարգմանելու բնագիտության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, պատմության և մանկավարժության ձեռնարկներ, վորոնց մեծ մասը պատրաստ է տպագրության համար կամ արդեն տպագրված է:

Այդ սեկցիան կցվելու յե Ակադեմիական կենտրոնին:

**Մանկության սոցիալ-իրավական պահկության բաժին.**— Բաժինը կազմակերպված է Սոցդասվարի կազմակերպման օրից։ Յերկու գլխավոր խնդիր ունի նա իր առաջ, 1. Անչափահասների իրավունքների պաշտպանությունը, սոցիալական օգնության կազմակերպությունը, պայքար անչափահասների իրավական խախտումների և անխնամակալության դեմ, 2. Դեֆեկտիվ մանուկների դաստիարակությունը։

Բաժնի հատուկ նշանակությունը Հայաստանում զգալի յե, քանի որ բնակչության 3%-ը կազմում են որբերը։ Ընդհանուր տնտեսական փլուզումն մանկան սոցիալական վիճակը վատթարացրել է, դարձնելով նրան շահագործման առարկա նույնիսկ ընտանիքում մեծերի կողմից։ Աչքի յե ընկնում մանուկների մուրացկանությունը, պրոստիտուցիան, մեծերի կողմից բարոյալքող դայթակղումը (совращение)։ Այս յերևույթների դեմ կռվելու համար բաժինը կազմակերպել է Յերևանում, Էջմիածնում, Ալեք-պոլում, Նոր-Բայազետում մշտական, իսկ մյուս վայրերում սպորադիկ հանձնաժողովներ անչափահասների հասարականապես վտանգավոր արարքները քննելու համար, կազմված մեկ մանկավարժից, մեկ բժշկից և մեկ իրավաբանից, համաձայն 1921 թ. հուլիսի 13-ի դեկրետի։

Հանձնաժողովների աշխատանքները ցույց են տալիս, որ վտանգավոր արարքներ կատարող անչափահասները կենտրոնացած են քաղաքներում, գլխավորապես Յերևանում։ Յերևանի հանձնաժողովը 1921 թվի օգոստոսի 1-ից մինչև 1922 թվի նոյեմբեր 1-ը, 15 ամսվա ընթացքում, ունեցել է 196 գործ յերեխաների կատարած իրավախախտումներին վերաբերող։ Բացի մեկից բոլոր գործերը հանձնաժողովը քննել է։ Մեղադրական վարույթներ ունեցել է 177, արդարացնող՝ 19 գործի առթիվ։ Գործերն ըստ բնույթի բաժանվում են՝ 183 գողության, 2 սպանության, 4 վերք հասցնելու, 1 կնոջ պատիվը վիրավորելու, 1 ամուսնախախտության։ Մեղադրվողներից 14 աղջիկ են, մնացածը տղա։ Ըստ ազգության 279 հայ են, 37 թյուրք։ Իրավախախտում կատարող յերեխաների խոշորագույն տոկոսը մուրացիկ, անխնամակալ կամ որբ յերեխաներ են։ Գողությունների մոտ 50%-ը կատարված է կազմակերպված խմբով, գողացածը միմիանց օգնությամբ թաքցնելով։ Քրեական միլիցիայի միջոցով հաջողվել է պարզել, որ անչափահասների իրավախախտումներից շատերի



ղեկավարը հասակավոր ոճրագործներ են, որոնց դեմ հատուկ գործեր են հարուցված ժողդատարաններում։

Անչափահասների կողմից իրավախախտումները վերացնելու լավագույն միջոցը հանրապետության յերեխաների անխնամակալ վիճակի վերացումն է, ուստի բաժինը խնդիր է հարուցել մեկ մեծ կոլեկտոր-ընդունարան ստեղծելու, ուր հավաքվելու յեն հանրապետության բոլոր ծայրերից անխնամ յերեխաները և քննվելուց հետո՝ տեղավորվելու յեն համապատասխան հիմնարկներում դաստիարակվելու համար։

Բաժինը տանում է կոնսուլտացիոն աշխատանքներ մանուկների ու իրավասությունների ժառանգական իրավունքների մասին։ Չորս ամսում տված են 17 իրավաբանական խորհուրդներ, մանուկների իրավունքների պաշտպանության գործերով բաժինը հանդես է յեկել ժողդատարաններում և հողային հանձնաժողովներում 12 անգամ։

Բաժնի կողմից մշակված է նախագիծ բանտարգելության վայրերից արձակված անչափահասների սոցիալական օգնություն հասցնող կոմիտեների կանոնադրության։ Բաժինը կապ է հաստատում այն բոլոր հիմնարկների հետ, որոնք անչափահասների վիճակով են զբաղվում անմիջապես կամ միջնորդաբար, այսպես՝ Առողջկոմի մայրության և մանկության պահպանության բաժնի, Արդժողկոմի, Աշխժողկոմի և կ. կ. կին-բաժնի հետ։

**Բարոյապես դեֆեկտիվ յերեխաների մանկատուն.**—Մանկության սոցիալ իրավական պահկության բաժնին յենթակա Յերևանում գործում է բարոյապես դեֆեկտիվ յերեխաների մանկատունը։ Սկզբի շրջանում յերեխաների թիվը հասնում էր 63-ի, 1922 թվի վերջին այդտեղ կային 43 յերեխա, որոնցից 38-ը տղա, իսկ 4-ը՝ աղջիկ։

Շենքի անհարմարության պատճառով դաստիարակչական աշխատանքները անհրաժեշտ ծավալի չեն հասցրած։ Յերեխաները դաստիարակների ղեկավարությամբ զբաղվում են ֆիզիքական աշխատանքներով և ստանում են անհրաժեշտ գիտելիքներ դպրոցական առարկաներից, կատարում են էկսկուրսիաներ։ Առ այժմ բացված են կոշկարանոց և ատաղձագործարան։ Շուտով բացվելու յե զամբյուղագործարան։ Յերեխաները ինքնակազմակերպված տանում են խոհանոցի, լվացքի, մաքրության և այլ աշխատանքները։

Ֆիզիքական և գեղարվեստական դաստիարակություն, ընթերցանություն և անհրաժեշտ գիտություններին տված է բավականին մեծ տեղ օրական աշխատանքների ցուցակում։

Մանկատան մեջ ընդունվում են իրավախախտումներ կատարած յերեխաներ, համաձայն անչափահասների վտանգավոր արարքները քննող հանձնաժողովների վորոշման։

**Ոժանդակ հիմնարկների բաժին.**—Բաժինը կազմակերպված է 1921 թ. Սոց. դաստիարակության բազմապիսի մեթոդները նկատի առնելով. դպրոցին, մանկապարտեզին հարընթաց պետք է ստեղծվեն և գործեն մի շարք հիմնարկություններ, վորոնք օժանդակելու յեն դպրոցական զբաղմունքներին, իսկ մյուս կողմից կազմակերպելու յեն յերեխաների արտադպրոցական պարապմունքները։ Բաժինը այս նպատակով թե կենտրոնում և թե գավառներում հիմք է դրել նման ձեռնարկների, թանգարանների, մանկական թատրոնի, գրադարանի, համերգների, եկսկուրսիաների, արտադպրոցական աշակերտական միավորումների, ինչպես օրինակ աշակերտական ակումբների, պատկոմական կազմակերպության և այլն։

**Կենտրոնական մանկավարժական թանգարան.**—Բացվել է 1921 թվի հոկտեմբերի սկզբին, նպատակ ունենալով բավարարել Յերևանի դպրոցների և մանկապարտեզների բնագիտական կարիքները, և կապվելով գավառների հետ ամենուրեք հիմք դնել նման թանգարանների։ Կազմակերպված են հետևյալ բաժինները, վորոնք անընդհատ լրացվում են. 1. կենսաբանական (կենդանաբանական, բուսաբանական, մարդակազմական—առողջապահական). 2. ֆիզիքական, 3. քիմիական, 4. հանքաբանական, 5. տեխնոլոգիական, 6. աշխարհագրական (ֆիզիքական, քաղաքական, տիեզերագրական). 7. կազմակերպվում է մաթեմատիքական բաժին։

Թանգարանին կից գործում է կենսաբանական և ֆիզիքական գործիքների արհեստանոցը, վոր կազմում է եկսպոնատներ և գործիքների կոմպլեկտներ տեղիս և գավառների համար։

Մինչև այժմ արհեստանոցը տվել է Ալեքպոլին, Ղարաքիլիսային և Մեղրուն ֆիզիքական գործիքներ, վորոնք պատրաստվել են հնացած գործիքներից և նրանց անպետքացած մասերից, մի մասն էլ նոր է շինվել։ Գավառներից ընդունվում են և վերաշինվում հին գործիքներ։



Գավառներում թանգարանների հիմք դնելու հրահանգելու և յեղած իրերը կարգի դնելու համար թանգարանի աշխատակիցները գործուղվել են Եջմիածին, Ալեքպոլ և Ղարաքիլիսա։

Յերևանի պետական, զինվորական, Ամերկոմի դպրոցները մեծ չափով օգտվում են թանգարանից, ստանալով պիտույքները դպրոցներում օգտագործելու համար։ Բացի այդ՝ թանգարանին կից գործում են յերկու լսարան, ուր դասատուները գալիս են պարապելու։ 1922 թ. ուսումնական տարվա ընթացքում, հունվարից մինչև մայիս, հաճախորդների թիվը յեղել է 8712, 1922—23 ուսումնական տարում սեպտեմբեր 20-ից մինչև նոյեմբեր 20-ը 8175 հոգի։ Համալսարանն էլ է օգտվում թանգարանից. ֆիզիկան դասախոսվում է այստեղ։

1921—22 տարում թանգարանում կազմակերպվել են ուսուցիչների, աշակերտների և բանվորների համար բազմաթիվ դասախոսություններ բնագիտությունից, պատմությունից և մաթեմատիկայից։ Կազմակերպվել է եկսկուրսիաներ։ Թանգարանին կից գոյություն ունի մանկավարժական գրադարան։

Թանգարանում աշխատում են մասնագետներ, վորոնք իրենց ցուցմունքներով օժանդակում են դասավանդող ուսուցիչներին։

Հերթական ծրագրն է թանգարանին կից կառուցել աստղադիտարան, կազմակերպել ջերմոց (օրանժերյա) լայնացնել արհեստանոցը մանկավարժական ինստիտուտի օգնությամբ և ընդունել գավառական բաժիններից պատվերներ ֆիզիքական, մաթեմատիկական գործիքների և կենսաբանական ու այլ կոլեկցիաներ կազմելու։

Թանգարանը հրատարակել է ձեռնարկ հերբարիում կազմելու մասին, պատրաստվում են նույնանման ձեռնարկներ բնագիտության այլ ճյուղերին նվիրված։

Ծրագրվում են գիտական եկսկուրսիաներ և դասախոսություններ ուսուցիչների համար։

Նյութական սուղ պայմանների հետևանքով հետաձգվում է միջնդպրոցական պատմատնտեսագիտական բաժինների և մանկաբանական կաբինետի բացումը։

**Պատկոմական կազմակերպություն.**—Պատկոմական (պատանի կոմունարների) կազմակերպությունը հիմնվել է 1921 թվի հունիս ամսին։ Սոցդաստիարակության գլխավոր վար-

չությունը հիշյալ կազմակերպության հետ կապել է սոցդաստիարակության գործի հեղաշրջումը։ Նկատի առնելով Ռուսաստանի փորձը դպրոցի վերաստեղծության մեջ՝ Սոցդաստվարը աշխատանքի դպրոցի կազմակերպման խոշորագույն ֆակտոր համարել է հենց իրեն, մանկան, աշակերտին, վորի ազատ և գիտակից կազմակերպությունը պետք է հեշտացնե ընդհանուր դպրոցական շինարարությունը։

Կազմակերպությունը դառնալով մի հեղափոխական բազա ստեղծեց նկատելի ֆրոնտ շատ դպրոցների ներսը, անգիտակից ուսուցչության և աշխատանքի դպրոցին ձգտող աշակերտության միջև։ Բացի այդ՝ այս կազմակերպության վրա յեր դրված պատանեկության արտադպրոցական պարապմունքների, ակումբների, էկսկուրսիաների, հանդեսների և ֆիզիքական դաստիարակության գործը։

Կազմակերպության նշանակալից կողմերն են՝ ինքնադիսցիպլինան և սոցիալական շինարարության զանազան ձևերը։

Մեկ տարվա աշխատանքից հետո հանրապետական մասշտաբով կատարվեց կազմակերպության խորհրդայնացումը. ամենուրեք ընտրվեցին տեղական պատգամավորական խորհուրդներ —վորոնք իրենց հերթին ընտրեցին գավառներում գավառական գործադիր մարմիններ, շտաբներ։ Կենտրոնից ղեկավարում է կենտրոնական շտաբը իր հրահանգիչների և գրավոր հրահանգների միջոցով։

Բոլոր վայրերում սերտ կապ է հաստատված Յերիտ. միության, Կոմկուսի և Գործկոմների հետ. մի քանի վայրերում տեղական մարմինները ընդունել են տեղական կազմակերպությունների չեֆությունը։

Կազմակերպության սխեմը անխափան անցկացնելու համար կենտրոնական շտաբը կազմակերպել է յերկու դասընթաց պատկոմական հրահանգիչներ պատրաստելու համար։ Ներկայումս նման հրահանգիչներ կան Յերևանում 29, Եջմիածնում 2, Ալեքպոլում 6, Ղարաքիլիսայում 1 և Լոռում 2։

Պարապմունքները արտահայտվում են սեկցիոն կազմակերպությունների, ակումբների միջոցով. յուրաքանչյուր պատանի ինքն է վորոշում իր պարապմունքների տեսակը. գոյություն ունեն գեղարվեստական (թատերական, յերաժշտական, նկարչական, պարի) գիտական (բնական գիտությունները), սեկցիաներ, արհեստանոցներ (հյուսն, տեխնիքական, կոշկակարանոց, սափ-



րերու) քաղաքական լուսավորության (դեկուցումներ, դատախոսություններ) գրադարան-ընթերցարան։ Հրատարակել են իրենց թերթերը։ (վոչ պարբերաբար)։

Կատարվել են բազմաթիվ էքսկուրսիաներ—արդյունաբերական, պատմական, բնագիտական և ազգագրական նպատակներով և հավաքածուներ են կազմել։

Ալեքպոլի և Յերևանի կազմակերպությունները իրենց միջոցով կազմակերպել են յերաժշտական խմբեր։

Բոլոր կազմակերպություններին կից ինքնադաստիարակչական նկատառումներով գործել են պատկոմական դասարաններ։

Կազմակերպել են շաբաթօրյակներ, մասնակցել են հասարակական հանդեսներին։

Ֆիզիքական դաստիարակության տրվել է հատուկ տեղ, նկատի առնելով պատանեկության թույլ ֆիզիքական վիճակը, մանավանդ վերջին տարիների ծանր անտեսական պայմաններում։ Մարզանքների և մարզահանդեսների միջոցով պրոպագանդ է մղվել ֆիզիքական դաստիարակության ոգին։

Կազմակերպությունը ունեցել է 1921 թվին հետևյալ պատկերը. Յերևանում 1600 պատկոմ, Ալեքպոլում 500, Ղարաքիլիսայում 100, Նոր-Բայազեդում 250։

1922 թվի վերջին Յերևանում 2000, Ալեքպոլում 1000, Աշտարակում 500, Լոռի 100, Նոր-Բայազեդում 200։

Նյութական սուղ պայմանների, շենքի, համազգեստի պակասության հետևանքով կազմակերպությունը իր ծրագրի շատ կետերը չի կարողացել իրագործել. այսպես ծրագրված պատկոմական աշխատանքի դպրոցը հնարավոր չեղավ բանալ։ Փոխադրական միջոցներ չունենալով՝ շատ գավառներում կազմակերպությունների հիմք չե դրվել կամ յեղածների հետ հնարավոր չե յեղել կապ պահպանել։

Արհեստանոցների, գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը ուլը դանդաղում է. ամառային գաղութներ չեն հաջողվում, անհրաժեշտ միջոցներ չունենալու պատճառով։

Հատուկ ուշադրություն է դարձրած պետական մանկատների պատկոմական կազմակերպության վրա, վոր գոյություն ունի Յերևանում, Աշտարակում, Ղամարլույի շրջանում, Նոր-Բայազեդում և Զանգեզուրում. Դարալագյազում դեռ ևս չի հաջողվել առաջ բերել այդպիսի կազմակերպություն, հեռավորության պատճառով։

**Աշակերտական ակումբներ.**—Ակումբային պարապմունքները կատարվել են բոլոր դպրոցներում հանդեսների, ընթերցանության ձևով. սակայն Երևանում միայն հաջողվել է կազմակերպել յերկրորդ աստիճանի աշակերտության համար ակումբ, վորի անդամների թիվը հասել է 60-ի, պարապմունքները անցել են գլխավորապես գրականության և պատմության շուրջը։ Գավառներին ուղարկված է աշակերտական ակումբների կազմակերպման հարցը։

**Գրադարաններ.**—Երևանում յեղել է մեկ մեծ աշակերտական գրադարան, վորը 1922 թ. աշնանից վեր է ածվել կենտրոնական աշակերտական գրադարանի. դպրոցներից շատերի նախկին գրադարանները վոչնչացված են վերջին տարիները, ուստի և Սոցլուսբաժինը ձեռք է բերել հայերեն լեզվով 2683 գիրք, վոր և բաշխել է գավառներին, հրահանգելով հիմք դնել մանկական և պատանեկական գրադարանների։ Տպագրության համար պատրաստ է յերեք նոր գրքեր և պատրաստում է հատուկ «Առաջնորդ» ընթերցանության գործը վարելու համար։

**Երաժշտություն.**—Երաժշտության ուսուցիչների պակասությունը շատ է կասեցրել այդ առարկայի դասավանդումը, ուստի և հատուկ հրահանգչի միջոցով կազմակերպվել են որինակելի դասեր և դասավանդել է յերաժշտության ուսուցիչների համար Երևանում, Ալեքպոլում, Ղարաքիլիսայում և Դիլիջանում անցյալ ուսումնական տարվա մեջ կամ ամառը մանկավարժական կուրսերում։

Ամառվա ընթացքում կազմակերպվել են համերգներ և մանկական ոպերաներ հատկապես հրավիրված յերաժիշտների միջոցով, Երևանում, Ալեքպոլում, Ղարաքիլիսայում և Ստեփանավանում։

Հանրապետության կենտրոնական վայրերում գոյություն ունեն աշակերտական յերգեցիկ խմբեր։

Բացի այդ՝ գնված և բաշխված են գավառներին յեղած դպրոցական յերաժշտական հրատարակությունները և տպագրության է հանձնված նոր կազմած մանկական յերգերի մի ձեռնարկ։

**Մանկական թատրոն.**—Բոլոր գավառներում աշակերտները կազմակերպում են դպրոցներում ներկայացումներ կամ հաճախում են թատրոն ուր կա այդպիսին։

Շատ սուր զգացվում է մանկական և պատանեկական պի-



եսաների կարիքը. այդ պատճառով բանակցություն է սկսված գրող գերասանների հետ փոխադրելու կամ նոր պիեսներ գրելու մասին։

## ՊՐՈՖ-ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Պրոֆ-տեխնիքական Կրթության Գլխավոր Վարչության առաջ մի պատասխանատու խնդիր է դրված՝ մասնագիտական կրթության հիմք դնել։ Մինչև Խորհրդային իշխանության հաստատվելը Հայաստանի սահմաններում չի յեղել և վոչ մի մասնագիտական դպրոց։ Ի նկատի ունենալով այդ, հարկավոր էր ամեն ինչ նոր ի նորո սկսել։ Գործը դժվարանում էր և այն պատճառով, վոր շատ քիչ մասնագետ ուսուցիչներ կային։

Նկատի ունենալով շինարարական և մեխանիքական տեխնիկումների մեծ կարիքը յերկրի համար, Երևանում և Ալեքպոլում 21—22 ուսումնական տարվա ընթացքում բացվեցին միջնակարգ տեխնիկումներ՝ նպատակ ունենալով միջնակարգ կրթություն ստացած տեխնիկներ պատրաստել։

**Երևանի Տեխնիկում.**—Բացվել է 1921 թ. նոյեմբերի 29-ին Խորհրդային իշխանության հաստատման տարեդարձի որը։ Աշակերտների թիվն էր 48, վորոնց 52 տոկոսը վորբեր եյին։ Պարապմունքների ժամանակ մեծ ուշադրություն էր դարձվում գործնական աշխատանքների վրա։ Այս ուսումնական տարում Տեխնիկումին միացավ Երևանի Բ. աստիճանի № 2 դպրոցը (նախկին Արական Գիմնազիան)։ Աշակերտների թիվը հասավ 170-ի (վորոնցից 85 տոկոսը վորբեր և աշխատավորական տարրերից եյին)։ Դասատուների թիվն է 14, բոլորն էլ բարձրագույն կրթությամբ և մեծ մասամբ մասնագետներ։

Գործնական պարապմունքների համար տեխնիկումին կից կազմակերպված է ատաղձագործարան, վորտեղ աշակերտները յերեկոները գործնական աշխատանքներ են կատարում։ Ատաղձագործարանում, բացի Տեխնիկումի աշակերտներից, արհեստ են սովորում նաև պետական մանկատների յերեխաներից մի քանիսը. անցյալ ուսումնական տարում տասը վորբեր այնքան եյին հմտացել արհեստի մեջ, վոր այժմ կարողանում են առանց կողմնակի ոգնության առանձին աշխատանքներ կատարել։

**Ալեքպոլի Տեխնիկում.**—Բացի մեխանիքական և շինարարական բաժիններից՝ ունի և գյուղատնտեսական բաժին։ Աշա-

կերտների թիվը անցյալ տարի 698 հոգի էր. այս տարի նրանց թիվը հասել է 132-ի:

Տեխնիկումն ունի յուր հողամասը, վորտեղ փորձնական գյուղատնտեսական աշխատանքներ են կատարվելու:

**Ոշականի Տեխնիկում.**—Գյուղատնտեսական կրթությունը զարգացնելու նպատակով բացի Ալեքպոլի տեխնիկումի գյուղատնտեսական բաժնից Հոկտեմբերյան Հեղափոխության 5-րդ տարեդարձի առթիվ Ոշականում բացվեց գյուղատնտեսական տեխնիկում:

Բացի տեխնիկումներից գլխվարչությունը 21—22 ուսումնական տարվա ընթացքում բացել է նաև 1. Յերաժշտական Ստուդիա, 2. Գեղարվեստական տեխնիկական դպրոց, Վոսկերչական, Բրուտային և Քանդակագործական արհեստանոցներով, 3. Կազմարարական արհեստանոց, 4. Կոշկակարական արհեստանոց, 5. Կար ու ձևի դպրոց—արհեստանոց և 6. Ձեռարվեստի արհեստանոց: Այս արհեստանոցներում սովորում են պետական մանկատներում խնամվող յերեխաները:

**Յերաժշտական Ստուդիա.**—Ստուդիան բացվել է 1921 թվի դեկտեմբերի 22-ին և անմիջապես դիմել է յուր որգանական աշխատանքներին, նպատակ ունենալով յերաժշտական կուլտուրան սեփականություն դարձնել Հայաստանի բանվոր-գյուղացիական մասսաներին: Սրա համար էլ Ստուդիայում առաջին հերթին բացվել են դպրոցական ուսուցիչների, ինստրուկտորների, խմբավորումների բաժանմունք:

Ստուդիան ընդունել է նախ այնպիսիներին, վորոնք անմիջականորեն այդ մասսայից են և կամ թե սեր ու ցանկություն ունին այդ ասպարեզում գործելու

Ստուդիայի աշակերտությունը, թվով 120 հոգի, բաժանվում է այսպես.

| | | |
|---|---|---|
| Արհեստավորներից | 93 | $77\frac{1}{2}$% |
| Կարմիր բանակայիններից | 6 | 5% |
| Մանկատներից | 8 | $6\frac{1}{2}$% |
| Վոչ պետական հիմնարկներից | 13 | 11% |

Դասատուները՝ թվով 9 հոգի բոլորը բարձրագույն կրթությամբ և կատարելագործված յերաժիշտներ են: Նրանք կազմում են Ստուդիայի գեղարվեստական Խորհուրդը, վորին վերապահված է ստուդիայի ներքին յերաժշտական գործունեությունը:

1922—23 ուսումնական տարվա ընթացքում խորհուրդը



կազմակերպել է 1. Աշակերտական հրապարակային համերգներ 2. Պատմական համերգներ Ստուդիայի դասատու ուժերի մասնակցությամբ:

**Գեղարվեստական Տեխնիկական դպրոց.**—Գեղարվեստական տեխնիկական դպրոցի նպատակներն են. 1. Մտցնել գեղարվեստը արտադրության մեջ, կապելով նկարչին, քանդակագործին անմիջականորեն արվեստի վորևէ ճյուղերի հետ 2. Մաքուր արվեստի բոլոր ճյուղերի հետ համահավասար տեղ տալ նաև ոժանդակ արվեստին, 3. Պատրաստել հմուտ և կարող ուժերի գեղարվեստագետներ թե տեսականի և թե գործնականի համար:

Դպրոցը բացվել և սկսել է գործել 22 թվի փետրվարի 1-ից, ունենալով նկարչական և քանդակագործական բաժիններ. արհեստանոցներից բացվել էր միայն բրուտայինը: Մշտական հաճախող աշակերտների թիվն էր 50, վորոնցից 22 տոկոսը վորբեր էին: 1922—23 ուսումնական տարվա պարապմունքները սկսել են նոյեմբերի 1—ից: Ցուցակագրվել են մինչև 150 հոգի. տեղից սղության և հարմարությունների բացակայության պատճառով նոր ընդունելությունները դադարեցված են: Աշակերտների 30 տոկոսը վորբեր են: Բացված է և Վոսկերչական արհեստանոցը, ուր աշխատում են 12 հոգի:

Պրոֆտեխնիկական կրթությունը իր բարձրության վրա դնելու համար պահանջ է զգացվում բանալ մի քանի տեխնիկումներ և մի շարք դպրոց—արհեստանոցներ, սակայն նյութական միջոցների սղության պատճառով վորոշվել է առայժմ բավականանալ յեղածները կարգի բերելով:

## ՄԱՆԿԱՏՆԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մանկատնային Գլխավոր Վարչությունը կազմվել է 1922 տարվա ապրիլ ամսին, յերբ Լուսժողկոմատը Ժողկոմխորհի վորոշման համաձայն ընդունեց Սոցապժողկոմից պետական մանկատները մոտ 5,700 վորբերով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր մանկատներում խնամվող յերեխաներից շատերը ծնողներ ունեյին, վորոնց տնտեսական դրությունը հաջող բերքի շնորհիվ համեմատաբար բարեկեցիկ էր դարձել, և այն, վոր նախահաշվով միայն 3,000 յերեխաների պահպանության ծախք է հատկացրած Լուսժողկոմատին, վերջինը ստիպված յեղավ կրճատել յերեխաների թիվը 1922 թվի վերջին: Մանկատնային Գլխավոր Վարչությունը խնա-

մում էր մոտ 3,800 յերեխաներ միայն հետևյալ վայրերում։

| | |
|---|---|
| Յերևանում . . . . . . . . . . | 770 |
| Նորքում . . . . . . . . . . | 200 |
| Ղամարլույի շրջանում . . . . . . | 800 |
| Աշտարակի շրջանում . . . . . . | 850 |
| Նոր—Բայազեդում . . . . . . . | 251 |
| Դարալագյազում . . . . . . . . | 140 |
| Զանգեզուրում . . . . . . . . . | 345 |
| Ընդամենը | 3356 |

Հոկտեմբերի 1—ից ընդունվեց Սոցժողկոմից նաև Մսուր մանկատունը։

Կրճատումներից հետո յերեխաների սնունդը բարելավված է. մեծ պակասություն է զգացվում հագուստի և կոշկեղենի։

Ամառվա ընթացքում վերանորոգված են Աշտարակի շրջանի բոլոր մանկատները, իսկ մյուս վայրերում մի քանիսի շենքերը։ Կարգի է բերվում ինվենտարը։

Մանկատներում յերեխաները բաժանված են ըստ հասակի և ըստ սեռի, թե քաղաքներում և թե շրջաններում, յերեխաները հաճախում են տեղական դպրոցներ, ունեն պատկեռական կազմակերպություններ։ Բացի մտավոր աշխատանքներից կատարում են նաև ֆիզիքական աշխատանքներ. նրանց վրա յե ծանրանում մեծ մասամբ մանկատների մաքրության հոգսը։ Բացի դրանից շրջաններում յերեխաները կատարում են նաև գյուղատնտեսական աշխատանքներ իրենց բանջարանոցներում և այգիներում ֆիզիքական ուժի և հասակի համապատասխան։ Մանկատներին կից բացված են նաև կոշկակարական, կար ու ձևի, բրուտային և այլ արհեստանոցներ, ուր նույնպես աշխատում են յերեխաները։

Առողջապահական գործը մանկատներում մեծ տեղ է գրավում։ Ամեն մի շրջան ունի իր բժշկական պերսոնալը. հիվանդության շատ քիչ դեպքեր են տեղի ունենում. համեմատաբար ավելի են տարածված քոս և մալարիա հիվանդությունները։

Նոյեմբերի 7—ի տոնակատարության օրը Յերևանում բացվեց նաև Մանկական կոլլեկտոր, ուր ներկայումս խնամվում են փողոցներից հավաքված անտուն անտեր մոտ 400 յերեխաներ, վորոնք այնուհետև տեղավորվում են մանկատներում։

Կոլլեկտորի կահավորման և հարմարեցման ամբողջ ծախքը



հանձն է առել Բաղգործկոմը, 250 յերեխաների սնունդը ստացվում է Անգլիական կոմիտեյից, մյուս բոլոր ծախքերը հոգում է Լուսժողկոմատը։

## ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Պետհրատը իր կազմակերպման օրից 1921 թվի նոյեմբերի 8-ից մինչև 1923 թվի հունվար 1-ը հրատարակել է։

| Ինչ տեսակի գրքեր | Քանի անուն | Քանի օրինակ | Քանի մամուլ | Քանի ոտտիսկ | Արժեքը ռուբլով |
|---|---|---|---|---|---|
| 1. Քաղաքական . . | 17 | 40.300 | $36^1/_2$ | 132.700 | 3.575 |
| 2. Դասագրքեր և դպրոցական ծրագրներ | 21 | 119·400 | $129^1/_2$ | 590.600 | 60.740 |
| 3. Համալսարանի դասախոսություն . . | 9 | 1.900 | 84 | 17.100 | 6.475 |
| 4. Գիտական . . . | 5 | 2.600 | 89 | 40.000 | 6.200 |
| 5. Զանազան . . . | 7 | 19.100 | 28 | 22.300 | 3.370 |
| Ընդամենը . | 59 | 183.300 | 367 | 802.700 | 80.360 |

Մինչև 1922 թվի օգոստոսը Պետհրատը հրատարակել է «Խորհրդային Հայաստան», «Ռանչպար» (թյուրք.), «Յերիտասարդ կոմունիստ» և «Նաշա պրավդա» (ռուսերեն) թերթերը։

Պետհրատը իր գործունեության ընթացքում թարգմանել է տվել, գնել է ինքնուրույն գրվածքներ, թվով 39-ը, վորոնք պատրաստ են տպագրության համար։ Ըստ տեսակի դրանք բաժանվում են քաղաքական 18, գեղարվեստական 11, ձեռնարկներ 4, Մայրենի լեզվի դասագրքեր, 3. 4. 5. և 6-րդ տարիների համար—4 գրական քննադատական։

1922 թվի մայիսից Պետհրատի տնօրինությանն է անցել Վաղարշապատի տպարանը, վորը մինչ այդ գտնվում էր Գիտական Ինստիտուտի ձեռքում։ Մինչև նոյեմբերի 15-ը տպարանը շարել ու տպագրել է 119 մամուլ և կատարել է մոտ 175 մանր պատվերներ։

## ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

(1922 թվի սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներում)

Նկատի ունենալով մանկատների, դպրոցական շենքերի կատաստրոֆիկ վիճակը, այլ և մի շարք դպրոցական շենքերի վերաշինման անհրաժեշտությունը, 1922 թվի աշնանը Լուսժողկոմատի առջև դրված էր հարվածային կարգով շինարարական աշխատանքներին ձեռնամուխ լինելու խնդիրը։

Այս ծանր խնդիրը ավելի ևս բարդացավ Լուսժողկոմատի նյութական սուղ դրության և Ֆինժողոմատից անհրաժեշտ քանակությամբ դրամ ստանալու անհնարավորության հետևանքով:

Զնայելով դրան Լուսժողկոմատը անհրաժեշտորեն և անմիջական ձեռնամուխ պիտի լիներ շենքերի վերանորոգման: Գործի կարեվորությունը պարզելու համար բավական է ասել, վոր մանկատների կտուրները կարող էյին ամեն րոպե փուլ գալ և իրենց տակ թողնել յերեխաներին: Դվինի մանկատներից մեկը, ուր պատսպարված էյին 150 վորբեր, տանիք չուներ և վոչ էլ պատուհան: Մյուս բոլոր շենքերում ապակիների 90%-ը պակասում եր:

Այդ իսկ պատճառով Լուսժողկոմատը առանց կանգ առնելու մեծամեծ դժվարությունների առաջ 1922 թ. սեպտեմբերի վերջերին անցավ շինարարական աշխատանքներին և կարճ միջոցում հարվածային կարգով նորոգեց մի շարք մանկատների և դպրոցների շենքերը:

Ըստ շրջանների կատարված են հետևյալ աշխատանքները:

ա. Աշտարակում.

1. Վերանորոգված և նոր ձևով ծածկված են 13 մանկատան կտուրներ, 583,28 քառակուսի սաժեն:

2. Նորոգված է Աշտարակի միակ դպրոցական շենքը. դրված է 25 հազար քառ. վերշոկ ապակի, շինված են պատուհանների համար նոր փեղկեր, սրբված ու սպիտակեցրած պատերը:

բ. Ոշականում.

Ավարտած է դպրոցական շենքի կառուցումը. ծածկված է նոր տանիք, դրված է մոտ 60 հազար քառ. վերշոկ ապակի, շինված է 100 նոր նստարան և այլն:

գ. Դվինի շրջանում.

Շինված է յերկու շենքերի նոր կտուրներ, պատուհանների նոր փեղկեր, դրված է 30 հազար քառ. վերշոկ ապակի և այլն:

դ. Յերևանում.

Դպրոցական շենքերում և մանկատներում դրված է մոտ 120 հազար քառ. վերշոկ ապակի:

Նորոգված են մանկատների շենքեր.

Պատրաստված է մանկավարժական ինստիտուտի, տեխնիկումի և մի շարք ուրիշ դպրոցների համար դպրոցական կահկարասիք:



# ՅԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Յերևանի ժողովրդական Համալսարանն շատ թե քիչ կանոնավոր սկսել է գործել միայն 1921 և 1922 թ. ուսումնական տարվա ընթացքում և այսպիսով հիշյալ տարին պետք է հաշվել առաջին հայկական համալսարանի գոյության անդրանիկ տարին:

Յերևանի ժողովրդական Համալսարանն առանց Բամֆակի ուներ 1922 թվի վերջին հինգ ֆակուլտետ 1). Գյուղատնտեսական, 2). Պատմական—գրական, 3). Բժշկական, 4). Տեխնոլոգիական, 5). Հասարակագիտական:

Առաջին չորս ֆակուլտետները բաժանված են յերկու կուրսի, վերջինը միայն մեկ:

Համալսարանի դասախոսների թիվն է ռեկտորի և դեկանների հետ . . . . . . . . . . . . . . . . . . 38

Ասիստենտների թիվն է . . . . . . . . . . . . . . . . 4

Ընդամենը . . . . . . . . . . . . . . . . 42

Դասախոսների ընդհանուր թվից 46, 9 % բարձրագույն ուսումը ստացել է ռուսական համալսարաններում, 49 7 % յեվրոպական համալսարաններում, 6, 2 % ճեմարանավարտ է և 6, 2 % ստացել է բարձրագույն ուսումը ինչպես ռուսական համալսարաններում, նույնպես և Յեվրոպայում: Գիտական աստիճան ունեցողների թիվը դասախոսների ընդհանուր թվի մեջ կազմում է 25 %, իսկ գիտական աշխատանքներ ունեցողները միայն 2 9, 4%:

## Ուսանողների քանակը ըստ սեռի կուրսերի յեվ ֆակուլտետների 1922 թվի վերջին

| Ֆակուլտետներ | ա. կուրս | | | բ. կուրս | | ընդհանուր | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ար. | Իգ. | | Ար. | Իգ. | բոլ. | ֆակ. |
| 1. Գյուղատնտեսական | 34 | 12 | 46 | 30 | 4 | 34 | 80 |
| 2. Պատմական գրական | 17 | 35 | 52 | 33 | 5 | 38 | 90 |
| 3. Բժշկական | 50 | 40 | 90 | 23 | 10 | 32 | 122 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4. Տեխնոլոգիական | 41 | 2 | 43 | 12 | 1 | 13 | 56 |
| 5. Հասարակագիտական | 22 | 23 | 115 | — | — | — | 115 |

Արական . . 331
Իգական . . 132

Ընդամենը . . . . . . . . 463
Ազատ ունկնդիրներ . . . . . . 27

Ընդամենը . . . . . . . . . 490

## Ուսանողների սոցիալական կազմը ըստ անկետաների

| ՖԱԿՈՒԼՏԵՏ | Ա. ԿՈՒՐՍ | | | | Բ. ԿՈՒՐՍ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղացի | Քաղաքացի | Ինտելիգ. | Բանվոր | Գյուղացի | Քաղաքացի | Ինտելիգ. | Բանվոր |
| 1. Գյուղատնտեսական | 20 | 12 | 16 | 5 | 23 | 11 | 1 | — |
| 2. Պատմական գրական | 28 | 20 | 8 | 1 | 15 | 19 | 2 | 2 |
| 3. Բժշկական | 25 | 21 | 22 | 4 | 7 | 8 | 14 | — |
| 4. Տեխնոլոգիական | 21 | 11 | 5 | 3 | 6 | 6 | 1 | — |
| 5. Հասարակագիտական | 56 | 22 | 28 | 5 | — | — | — | — |
| Ընդամենը | 150 | 86 | 79 | 18 | 51 | 44 | 21 | 2 |

Գյուղացի . . . . . . 291
Քաղաքացի . . . . . 140 — 132 Խորհրդային ծառայող
Ինտելիգենտ . . . . 103 — և Թոշակավոր 353
Բանվոր . . . . . . . 20

Ընդամենը 454—353—491 (սրանց մեծ մասը պաշտոնից կրճատվածներ են)։

Ուսանողներից 238 պաշտոնյաներ, բանվոր 20 և 56 հոգի Թոշակառուններ են։ Պաշտոնյաներից մոտ 95 տոկոսը Խորհրդային աշխատավորներ են. իսկ մնացածը Ամերիկոմի և այլն։

Քաղաքացիներից և ինտելիգենտներից 195 հոգի Խորհրդային աշխատավորներ են, իսկ 27 Թոշակառուներ։

Թոշակառուների ընդհանուր թիվն է 56, վորոնք բաժան-



ված են վորոշ ֆակուլտետներում։ Դրանցից յերկուսը Դիլիջանի Գավգործկոմից են Թոշակ ստանում, իսկ մեկը Հողժողկոմատից։

Թոշակառուների սոցիալական կազմն է։

Գյուղացի . . . . . . 26
Քաղաքացի . . . . . 11
Ինտելիգենտ . . . . 16
Բանվոր . . . . . . . 3

Ընդամենը 56

Թոշակառուները բաժանվում են ֆակուլտետներում հետևյալ ձևով։

1). Գյուղատնտեսական . . 11
2). Պատմական-գրական . . 14
3). Բժշկական . . . . . . 12
4). Տեխնոլոգիական . . . 9
5). Հասարակագիտական . . 10

Ընդամենը 56

Թոշակառուններից 10 հոգի կուսակցական և 6 հոգի Յերիտ-միության անդամներ են։

Թյուրքահայ փախստականներից և վորբերից 10 հոգի։

Ըստ անկետաների համալսարանի կուսակցականների և յերիտ. միությունականների թիվն է 67։

Տարաթական յուրաքանչյուր կուրսում դասախոսվում են շաբաթում 22 և մինիմում 12 ժամ։

**Գյուղատնտեսական** ֆակուլտետին կից գոյություն ունին 1) կենսաբանական—բուսաբանական և 2) հանքաբանական կաբինետներ։

**Պատմական-գրական** ֆակուլտետին կից գործում են՝ 1) Հնագիտական աշխատանոց և 2) լուսանկարչատուն։

**Բժշկական** ֆակուլտետին կից 1) բնախոսության 5) կազմախոսության և 3) հյուսվածաբանության կաբինետներ։

**Տեխնոլոգիական** ֆակուլտետին կից 1) ֆիզիկական աշխատանոց (վորը ընդհանուր է նաև գյուղֆակի և բժֆակի համար) 2) Տեխնիքական արհեստանոց։ Նույն ֆակուլտետներն ունեն նաև օրգանական և անօրգանական քիմիայի աշխատանոցներ։

Համալսարանի գրադարանը ունի մոտ 50.000 գիրք, մասնագիտական բաժիններով և զանազան լեզուների (ռուսերեն, հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն և այլն)։

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Բանվորական ֆակուլտետն, որը կյանքի կոչվեց 1923 թ. հունվարին ունի այժմ մոտ 340 բանվոր ուսանողներ, որից $10^0/_0$-ը իգական ե: Բանվորական ֆակուլտետն ունի 8 բաժանմունք: Դասախոսների թիվը 28-ե: Պարապունք լինում ե օրական 4 ժամ:

---



## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Կարմիր բանակի քաղաքական դաստիարակության և այդ բանակի շարքերում կուլտուր-կրթական աշխատանք տանելու խնդիրը միշտ էլ խորհրդային իշխանության համար նույնքան կարևոր տեղ ե բռնել, ինչքան այդ բանակին ռազմապես դաստիարակելու խնդիրը: Յեվ քաղաքական աշխատողների կատարած գործը Կարմիր Բանակի փառավոր հաղթականների ասպարիզում ոչ պակաս կարևոր ե յեղել, քան հրամանատարական կազմի կատարած գործը: Քաղաքացիական կռիվների ամբողջ ընթացքում Կարմիր Բանակի հեղափոխական կորովը պահպանող և հրահրող, նրա քաղաքական գիտակցությունը բարձրացնող և նրան դեպի վճռական կռիվ մղողը յեղել են կոմունիստ կոմիսարները և քաղաքական ղեկավարները:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՁԵՎԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Հայաստանի Կարմիր Բանակում տարվող քաղաքական աշխատանքների կազմակերպչական սխեման յուրացված ե ռուսական Կարմիր Բանակից, որը չորս տարվա փորձառություն ունի:

Յուրաքանչյուր մեծ զորամաս (բանակ, կորպուս, դիվիզիա, բրիգադա) ունի իր հատուկ քաղաքական վարչությունը կամ քաղաքական բաժինը: Այդ քաղաքական բաժինները իրենց կողմից նշանակում են զինվորական կոմիսարներ ավելի փոքր զորամասերի համար (բրիգադա, գունդ, գումարտակ, վաշտ և այլն):

Զինվորական կոմիսարները ունին հավասար իրավունքներ իրենց զորամասի հրամանատարի հետ և հարցերը վճռում են միասին: Զինկոմի մոտ ե գտնվում զորամասի կնիքը և առանց նրա ստորագրության հրամանատարի կարգադրությունները վավերական համարել չեն կարող:

Զինվորական կոմիսարները, նրանց օգնականներն ու գնդի մյուս քաղաքական աշխատողները (ակումբի վարիչը, գրադարանավարը, քաղղեկ (ПОЛИТРУК) դպրոցական պատասխանատու ղեկավարը և այլն իրականացնում են կյանքում քաղաքական վարչության կամ քաղաքական բաժնի հրահանգներն ու ծրագիրը:

Քաղաքական վարչությունը կամ քաղաքական բաժինը ունի և իր առանձին մասերը, վորոնք ղեկավարում են ամբողջ քաղաքական աշխատանքը զորամասերում: Դրանցից գլխավորներն են **Ագիտ—պրոպագանդիստական յեվ Կազմակերպչական մասերը:**

Խոսելով հայկական դիվիզիայում տարված ագիտացիոն պրոպագանդիստական աշխատանքների մասին՝ միաժամանակ պարզած կը լինենք գրեթե այն բոլոր քաղլուսավորչական աշխատանքները, վոր տարվել են հայկական դիվիզիայում:

**Քաղժամերի անցկացումը.**— Քաղաքական գործունեության հաղթանակներից մեկը յեղել է հայկական դիվիզիայում **Քաղաքական ժամերի** կազմակերպումը: Որվա մեջ վորոշ մի ժամ նշանակված է Կարմիր բանակայինների հետ զրույց կազմակերպելու համար: Այդ ժամին ներկա լինել և լսել զրույցը ղեկավարող Քաղաշխատողին —պարտադիր է բոլոր Կարմիր բանակայինների համար, այնպես ինչպես պարտադիր է շարքային աշխատանքներին ներկա լինելը: Այդ ժամերի զրույցները տարվում են սիստեմատիկ ձևով, իսկ շաբաթվա մեջ յերկու անգամ զրույց լինում է ընթացիկ մամնուլի խնդիրների շուրջը: Քաղժամերի կազմակերպման գլխավոր խոչնդոտը հանդիսանում է այն, վոր Հայաստանի Կարմիր բանակայինը սովոր չի յեղել քաղաքական պարապմունքների վրա նայել վորպես իր պարտականությունների վրա:

Նա յենթադրել է, վոր կարող է այդ պարապմունքներին մի որ լինել մյուս որը չլինել, հավատացած լինելով վոր դրա համար նա պատիժ չի կրելու: Յեվ այդ է պատճառը վոր քաղաքական ժամերին մասնակցող Կարմիր բանակայինների կազմը յեղել է հարափոփոխ և աշխատանքի դրական արդյունքներ չի ավել: Այժմ այդ չափազանց կարևոր աշխատանքը արդեն իր կանոնավոր հեմքերի վրա յե դրված: Քաղաքական ժամերի շնորհիվ Կարմիր բանակայինը ծանոթանում է ընթացիկ մամնուլի բոլոր խնդիրների և սիստեմատիկ կերպով սովորում է իր հա-



մար անհրաժեշտ գիտելիքները, բնական գիտություն, առողջապահություն և քաղաքական գրագիտության ասպարեզում:

**Դպրոցական աշխատանքը.**— Տառական անգրագիտությունը զորքի շարքերից 100 տոկոսով վերացնելու խնդիրը դրված է յեղել Խորհրդային իշխանության և բանակի քաղաքական գործիչների առաջ, վորպես ամենահարկավորածային աշխատանք: **Գրագետ բանակ ունենալ,**— ահա այդ է յեղել մեր գիծը: Յեվ ջանք չի խնայվել այդ նպատակին հասնելու համար: Այն ինչ վոր կախված է յեղել մարդկային կամքից ու ուժերից, արված է, բայց այն արդյունքին, վորին մենք բոլորս ձգտում էինք հասնել այդ ասպարեզում՝ դեռ չենք հասել:

Հնարավոր չէ Հայաստանի հետամնաց միջավայրում, հայ գյուղացուց կազմված Կարմիր բանակից կարճ ժամանակվա ընթացքում վերացնել անգրագիտությունը 100 տոկոսով: Սակայն չնայելով այդ դժվարություններին՝ այբուբենական անգրագիտության վերացման գործը վոչ մի րոպե կանգ չի առել մեր դիվիզիայում: Ճիշտ է, մեր զորամասերը հարափոփոխ կազմ են ունեցել և միշտ էլ լրացվել են գյուղից յեկած նորանոր անգրագետ Կարմիր բանակայիններով, բայց և այնպես՝ չնայած այս բոլորին՝ այժմ հայկական դիվիզիայում կա գրագետ Կարմիր բանակայինների բավականաչափ կադրեր, վորը այդ գրագիտությունը ձեռք է բերել Կարմիր բանակի շարքերում:

Սակայն դպրոցական աշխատանքները միայն տառական անգրագիտության վերացումով չեն սահմանափակվում: Կարմիր Բանակը արդեն ունի իր կանոնավոր դպրոցները: Վերջիններում դասավանդվում և դասավանդվելու յեն նաև գյուղատնտեսություն, թվաբանություն, աշխարհագրություն և քաղաքական ուսմունքի տարրերը: Ձեռք առած միջոցները, յեղած պակասություններին վերջ տալու և ստեղծելու ավելի բարեհաջող պայմաններ դպրոցական աշխատանքների նկատմամբ մեզ բերում են այն վճռական համոզմանը, վոր ամենամոտ ապագայում մենք այլ ևս չենք ունենա մեր բանակում անգրագետներ:

**Ակումբային աշխատանքը.**—Ակումբները Կարմիր Բանակի այն հիմնարկներն են, վորոնց մեջ կարմիր զինվորը, իր քաղաքական և շարքային պարապմունքներից հետո, հանգստություն է գտնում և այդ հանգստի ժամերը զանազան խմբակների միջոցով օգտագործում է իր մտքի պաշարը ամեն ուղղությամբ հարստացնելու ու բավարարելու իր գեղարվեստական պահանջները:

Հայկ. դիվիզիան արդեն վաղուց ունի իր յուրաքանչյուր մեծ զորամասին կից Կարմիր բանակային ակումբներ։

Այդ ակումբները զարդարված են պլակատներով, լոզունգներով և հեղափոխական առաջնորդների նկարներով։

Յուրաքանչյուր ակումբին կից կա գրադարան-ընթերցարան, վորից օգտվում են անխտիր բոլոր գրագետ և անգրագետ կարմիր բանակայինները (անգրագետ կարմիր բանակայինների համար լինում է բարձրաձայն ընթերցանություն)։ Ակումբների աշխատանքներից ամենաաչքի ընկնողը յեղել է դրամատիքական խմբակը։ Կարմիր բանակայինները մեծ բավականությամբ լծվում են այդ խմբակի աշխատանքներին և բոլորն էլ տրամադրություն են ցույց տալիս բեմ դուրս գալու։ Յեվ կարմիր բանակայիններից կազմված դրամ-խմբակներն են, վոր շաբաթը առնվազն յերկու անգամ ակումբի դահլիճներում ներկայացումներ են կազմակերպում։ Առանձին ձգտում կա նույնպես դեպի գյուղատնտեսական խմբակները։ Մյուս խմբակներն այնքան էլ կենդանի գործունեություն չեն ցույց տվել մինչև այժմ այն պատճառով վոր մեր պետական մակարդակը դեռ շատ ցածր է։ Այդ է պատճառը, վոր անցյալ տարվա մեր Քաղլուսավարչական աշխատանքների առանցքը կազմել է անգրագիտության վերացման խնդիրը և հետագայում էլ աշխատանքների՝ առանցքը նույնպես նույն խնդիրը պիտի լինի։ **Առանց անգրագիտության վերացման, բանակում տարվող մյուս քաղլուսաշխատանքները անկարող են տալ մեր ցանկացած դրական հետեվանքները։**

Ակումբային աշխատանքների կատարյալ հաջողությունը մենք կունենանք այն ժամանակ, յերբ անգրագիտության վերացման ճանապարհով մենք մեր Կարմիր բանակայիններին կը դարձնենք նույնպես քաղաքականապես գրագետ։

**Գրադարանային աշխատանք.**—Յուրաքանչյուր ակումբին կից կա գրադարան, բացի այդ՝ կան նույնպես մանր զորամասերում շրջիկ գրադարաններ, վորոնց մեջ յեղած գրքերը կարդացվելուց հետո փոխարինվում են թարմ գրքերով Քաղբաժնի գրադարանային բազայի պահեստից։ Յուրաքանչյուր գրադարան ունի նաև իր ընթերցարանը, վորտեղ սիստեմատիկ և կանոնավոր կերպով ստացվում են թարմ լրագրեր։ Պետք է սակայն շեշտել այստեղ, վոր գրադարաններում մեծ կարիք է զգացվում հայերեն ժողովրդական բրոշյուրների և գրքերի։ Արդեն վերջին ժամանակներս նկատելի յե կարմիր բանակայինների շրջանում



ընթերցանությամբ զբաղվելու մեծ ձգտում։ Ստեղծվել է բանակում գրադարանային տեխնիկային ծանոթ գրադարանապետների մի կադր, վորոնք դուրս են յեկել կիսագրագետ և յերբեմն նաև անգրագետ կարմիր բանակայինների շրջանից։ Նրանք ներկայումս վոչ միայն սովորել են գրագիտություն, այլ և գրադարանը կառավարելու արհեստը։

**Խմբագրա—հրատարակչական աշխատանք.**—Հայկ. դիվիզիայում տարված քաղաքական և կուլտուր—լուսավորչական աշխատանքների ամենաբեղմնավոր արդյունքների հասնող ասպարեզը պետք է համարել խմբագրա—հրատարակչական աշխատանքը։ Դիվիզիայում սկզբից և յեթ սկսվել է հրատարակվել կարմիր բանակայինների օրգան ,,Կարմիր Զինվոր'' թերթը։ Այդ թերթի ազդեցությունը և նրա կատարած կուլտուր—կրթական աշխատանքը պետք է հսկայական համարել։ Թերթը, ճիշտ է, հրատարակվել է ընդմիջումներով, յերբեմն գտնվելիս է յեղել վոչ այնքան փորձառու ղեկավարների ձեռքում, բայց և այնպես նա միշտ էլ յեղել է կարմիր բանակայինների սիրելի օրգանը։ Կարմիր բանակայինի թղթակիցը նկարագրում է իր զորամասի քաղլուսավարական աշխատանքների ընթացքը, նա գրում է շարքային պարապմունքների, անպետք քաղաշխատողների, հրամկազմի. նկատված զեղծումների և անարդարությունների մասին, գովում է իր զինկոմին, հրամանատարին և այլն. մի խոսքով այն ինչ նա տեսնում է և ինչ վոր կարելի յե գրել առանց քաշվելու՝ գրում է իր հարազատ «Կարմիր Զինվոր» թերթում։ Կարմիր բանակայինները սրտատրոփ սպասում են ամեն անգամ իրենց «գազեթի» ստացվելուն։ Քաղաքական բաժնին հաջողվել է այսպիսով ստեղծել մի այնպիսի թերթ, վոր վոչ միայն տպվում է Կարմիր բանակայինների համար, այլ այնպիսի մի թերթ, վոր ինքը կարմիր բանակայինն է գրում իր համար։ Քաղբաժնի ջանքերով հրատարակվել է նաև բրոշյուրային գրականություն ի հարկե նվազ չափերով։

# ԱՆԴՐԿՈՎ. ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Անդրկով. Աշխժողկոմատի Հայաստանի լիազորի Վարչությունը մինչև 1922 թվի մայիսի 1-ը Հայաստանում գործել է վորպես ուրույն կոմիսարիատ—Աշխժողկոմատ։ Մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը Կենտգործկոմի վորոշմամբ՝ նա ունեցել է Սոցապժողկոմատի հետ միասին միացյալ գործունեություն, սկզբում իբրև Կոմիսարիատ, իսկ վերջում իբրև լիազորի վարչություն։

1922 թվի հունվար 1-ից մինչև մայիսի 1-ը Աշխժողկոմատը բաղկացած է յեղել հետևյալ կենտրոնական բաժանմունքներից.

1. Բանվորական ուժերի հաշվառման և բաշխման, 2. Աշխատանքի պաշտպանության, 3. Աշխփոխադրահարկի, 4. Ինֆորմացիոն—հրահանգչական, 4. Ստատիստիկական, 5. Ընդհանուր վարչական—ֆինանսական և 8. Գավբաժիններից, վորոնցից 5-ը կազմակերպված, իսկ 3-ը նախագծված, բայց դեռ չկազմակերպված։ Այդ ժամանակամիջոցում Աշխժողկոմատի շտատը բաղկացած էր կենտրոնում 27 աշխատակցից, իսկ գավառներում յերեքական աշխատակիցներից՝ վարիչ, գործավար և ցրիչ։

Միացյալ Սոցապժողկոմատը բաղկացած էր կենտրոնում յերեք բաժիններից՝ Աշխատանքի, Սոցապի և Ընդհանուր ու իննը գավբաժիններից, վորոնցից յերեքը գտնվում էին կազմակերպչական շրջանում։

Անդրկով. Աշխժողկոմատի Հայաստանի լիազորի վարչության շտատը հաստատված է առանձին։ Կենտրոնին հատկացված է 13, իսկ գավառներին 10 հոգի աշխատակիցներ։ Կոմիսարիատի ընդհանուր աշխատանքները ղեկավարել է Կոմիսարը, վորը այժմ կոչվում է Անդրկովկասի Աշխժողկոմատի Հայաստանի լիազոր։ Նույն լիազորը միաժամանակ մայիսի 1-ից սկսած վարում է նաև Սոցապժողկոմատի կոմիսարի աշխատանքը։



լիազորի բացակայության ժամանակ նրա պաշտոնը տարել է Աշխփոխադրահարկի բաժնի վարիչը։ 1922 թվին առանձին խնամք է տարվել Գավբաժինների և կենտրոնի հետ սերտ կապ հաստատելու և գավառների գործունեությունը բարձրացնելու։

1922 թվի հոկտեմբերին հրավիրվել է Յերևանում գավբաժինների վարիչների խորհրդակցությունը։ Այդ խորհրդակցության նպատակն էր՝ 1). ծանոթանալ տեղերի կատարած գործունեություններին, լսելով վարիչների զեկուցումները, ծանոթանալ նաև գավբաժինների նոր հաստատած որենսդրության և ապա մտքերի փոխանակությամբ ստեղծել միօրինակ գործելակերպ բոլոր գավառներում ու զարկ տալ աշխբաժինների գործունեության,2).հնար յեղածին չափ կապ պահպանել կենտրոնի հետ, պարբերաբար զեկուցումներ տալով կենտրոնին և վերջիններից ստանալ հրահանգներ ապագա անելիքի մասին։ Հրավիրված խորհրդակցությունը մի քանի նիստ ունեցավ Յերևանում, վորից հետո բաժինների վարիչները վերադարձան տեղերը։

1922 թվի Աշխժողկոմատը կազմել ու հրատարակել է հրահանգներ, հրամաններ, շրջաբերականներ Աշխփոխադրահարկի բանվորական ուժերի հաշվառման և բաշխման վերաբերյալ, իսկ Աշխժողկոմատը Հայաստանում լիազորության փոխվելուց հետո Անդրկով. Դաշնակցային Խորհրդի աշխատանքի վերաբերյալ բոլոր դեկրետները ուղարկել է ժողկոմխորհին ի հավանություն և ի հրատարակումն։ Այդ դեկրետների զգալի մասը արդեն հրատարակված է և կյանքի մեջ կիրառած, իսկ Անդրկովկասի Աշխժողկոմատի բոլոր հրահանգ—վորոշումները—շրջաբերականները և այլն Հայաստանի լիազորի վարչությունը թարգմանում ու հրատարակում է թերթում ի հանուր գիտություն և առաջնորդություն։

Վորոշումներից շատերը կիրառված են կյանքի մեջ։ Աշխատանքի Կոմիսարիատի գործին առնչվողը, նրա աշխատանքը կենտրոնացնողը Աշխատանքի պաշտպանության բաժինն է, վոր յերկար ժամանակ մատնված էր անգործության։ Այդ էր պատճառը, վոր աշխատանքի պաշտպանության բաժնի գործը 1922 թվի առաջին կիսամյակում ուժեղ չափով առաջ չէր գնում։

Հետագայում միայն Հայաստանի լիազորի վարչության գործը զգալիորեն կենդանացավ. կարճ ժամանակամիջոցում ժողկոմխորհին ուղարկվեցին մի քանի կարևոր դեկրետներ, թերթի միջոցով հրատարակվեցին Անդրաշխժողկոմատի վորո-

շումները, հրահանգները, շրջաբերականներն ու այլ կարգադրությունները: Կանոնավորվեց Աշխատանքի Բորսան, կազմակերպվեց Բորսայի Կոմիտեն, լրացվեց տեխնիքական աշխատակիցների թիվը, կազմակերպվեցին Երջաքերային Հանձնաժողովներ, սկսվեց վերացուցակագրություն ու պատրաստություններ տեսնվեցին զտման համար: Բացի վերոհիշյալից շնորհիվ Աշխատանքի պաշտպանության բաժնի գործերի կանոնավորման՝ արագ կազմակերպվել և անցել են գործի կոնֆլիկտային և յերիտասարդ բանվորների դրությունը բարվոքող հանձնաժողովները:

Աշխատանքի պաշտպանության բաժինը իր մեջ պարունակում է Աշխատանքի պաշտպանության, Աշխատանքի բորսայի, միջնադեպերի պարզաբանման և աշխատանքի վիճակագրության մասերը:

Մինիմումի հասցրած շտատով այդ բաժինը պետք է ունենար բաժնի վարիչ, աշխատանքի տեսուչ, մի աշխատակից կոնֆլիկտային գործերի համար, մեկ մատենավարուհի: Չունենալով պատրաստված աշխատակիցներ՝ յերկար ժամանակ այդ բաժինը մնացել էր առանց վարիչի:

Բաժինը չուներ նաև աշխատակից կոնֆլիկտային գործերի համար, այնպես վոր ամբողջ բաժնի գործերը տանում էյին աշխատանքի տեսուչը և մատենավարուհին:

Դրանով էլ պետք է բացատրել այն հանգամանքը, վոր աշխատանքի պաշտպանության բաժնի վերաբերյալ շատ աշխատանքներ կամ սկսած չէյին, կամ յեթե սկսած էլ են՝ գտնվում են վոչ գոհացուցիչ դրության մեջ: Մինչև 1922 թ. նոյեմբերի մեկը աշխատանքի պաշտպանության բաժնում միակ պատասխանատու աշխատակիցը յեղել է աշխատանքի տեսուչը, վորը հաճախ ստիպված է յեղել շեղվելու իր անմիջական պարտականություններից և զբաղվել աշխատանքի պաշտպանության բաժնի վերաբերյալ ընթացիկ և անհետաձգելի գործերով—բանվորների ընդունելության և արձակման, կոնֆլիկտային և այլն:

Աշխատանքի պաշտպանության վերաբերյալ մինչև նոյեմբեր 1922 թ. կատարված են հետևյալ աշխատանքները. Բանվորական ուժերի հաշվառման բաժինը, աշխատանքի բորսան, ցուցակագրում էր անգործներին, տանում էր պահանջները և ուղարկում հերթով ցուցակագրվողներին: Սակայն մինչև 1922 թ. նոյեմբերի 1-ը Բորսան իր նպատակին չէր հասնում,



վորովհետև նախ՝ նա ցուցակագրում էր անխտիր բոլորին և յերկրորդը հիմնարկությունները և ձեռնարկությունները ծառայողներին և բանվորներին ընդունում էյին առանց Բորսայի գիտության, դիմելով Բորսային միայն այն ժամանակ, յերբ նրանք հնարավորություն չէյին ունենում գործ ճարելու: Այսպիսով ստեղծվել էր Բորսայում խառնիճաղանջ դրություն, մի կողմից ցուցակագրվածներից շատերը, վորոնք ցուցակագրվել էյին միայն վորոշ արտոնություններով օգտվելու, հերթին չեն գալիս գործի անցնելու, մյուս կողմից պահանջը անհամեմատ ցուցակագրվողների այնքան քիչ է, վոր ցուցակագրվողներից շատերը ամիսներով տեղի տալով, կորցնում էյին իրենց հավատը դեպի Բորսան:

Նոյեմբերի 1-ից Բորսայի գործունեությունը կանոնավորվեց և նա ստացավ ավելի բնական ընթացք վերացուցակագրությունը և զտումը վերջանալուց հետո:

1922 թ. հունվարի 1-ից մինչև Նոյեմբերի 1-ը բորսայում ցուցակագրվածների ու գործի ուղղվածների մոտավոր պատկերը հետևյալն է. տարվա ընթացքում ցուցակագրվողների 30 տոկոսը յեղել են գրասենյակային աշխատանք խնդրողներ, 21 տոկոսը արհեստավորներ, 10 տոկոսը սև աշխատանք խնդրողներ, իսկ մնացած 30 տոկոսը՝ այլ աշխատավորներ:

1922 թ. ընթացքում աշխատանքի տեսուչը տարել է հետևյալ գործերը. ստուգումներ կատարել է 150 հիմնարկություններում և ձեռնարկություններում, յերևան է հանել աշխատանքի օրենսդրության բազմաթիվ խախտումները և ձեռնարկել է միջոցներ օրենքների անշեղ կիրառման, յենթարկելով պատժի զանցառուներին: Ընդունել է 154 կոնֆլիկտային գործ, վորոնց 101 լուծված է տեսչի կողմից, 32—ը վերադարձված է միությունների և տեղկոմների նախնական քննության, 7—ը հանձնված է կոնֆլիկտային հանձնաժողովին, իսկ 14—ը՝ դատարանին: Տարվա ընթացքում ստացվել և պարզաբանություն է տրվել 207 գրավոր հարցապնդումների և մի քանի անգամ ավել քանակով յեղել է բանվորական դիմումներ. վերջինները բոլորն էլ բավարարված են:

**Աշխփոխադրահարկի յեվ կազմ-հրահանգչական բաժին.-** Այդ բաժնում մինչև 1922 թվի նոյեմբերի 9-ը աշխատում էր բաժնի վարիչը, վորը հաճախ փոխարինում էր կոմիսարին՝ նրա բացակայության ժամանակ: Իսկ նոյեմբերի 9-ից ավելացավ

մի աշխատավոր եւ պատասխանատու հրահանգչի պաշտոնով։ Մինիմումի հասցրած շտատով բաժինը պիտի և ունենար չորս աշխատակից։

Մի տարվա ընթացքում այս բաժինը կազմել է մի շարք հրահանգներ, շրջաբերականներ, ձևեր աշխատափոխադրահարկի և նրա կյանքի մեջ կիրառելու վերաբերյալ ու ուղարկել գավ-բաժիններին ի առաջնորդություն։ Աշխատափոխադրահարկը կյանքի մեջ իրականացրված է Յերեվանի շրջանում աշխատա-փոխադրահարկի բաժնի վարիչի անմիջական հսկողությամբ և ղեկավարությամբ, իսկ գավառներում գավբաժինների վարիչ-ների հսկողությամբ։

Աշխատափոխադրահարկը կյանքի մեջ կիրառված է և կիրառման մասին, թեև թերի, բայց վորոշ տեղեկություններ և զեկույցներ տրված են կենտրոնին։

Աշխատափոխադրահարկի բաժինը ըստ իր ձեռքի տակ յե-ղած տվյալների հաշվել է մինչև 1922 թ. նոյեմբերի 1-ը աշխատափոխադրահարկը կատարել հետևյալ չափով

1. Պարժողկոմատի համար պարենտուրք շրջաններից Յերեվան փոխադրելու 5,460,000 փ. վ. 2. Հողժողկոմատի համար վառելա-փայտ և խոտ փոխադրելու 3,130,000 փ. վ. 3. Ռազմժողկոմի համար խոտի շրջաններից Յերեվան և Ռազմական գույքը և զինվորական իրերը կայարանից Քանաքեռ և եւ հետ. շրջաններ փոխադրելու 3,526,000 փ. վ. 4. Գավառական պետական հիմ-նարկությունների համար 270,000,000 փ. վ. 5. Գաղթականներ և նրանց իրերը փոխադրելու 9,050,000 փ. վ. 6. Եջմիածնի ավլի համար 136,000 փ. վ. ընդամենը 13,524,000 փ. վ. վորը յեթե վճարով փոխադրելու լինեյինք և ընդունեյինք քանից-քանհինգ վերստ տարածության վրա սայլի միջին թիվը ըստ հինգից յուրաքանչյուր փ. կհարկավորվեր մոտավորապես քսան-հինգից յուրաքանչյուր հազար սայլ յուրաքանչյուրից քառասուն միլի-ոն ռուբլի վարձով, վոր ամբողջ աշխատափոխադրահարկը ըստ շուկայի կուրսի կարժենար հարյուր հազար ռուբլի փոխելու ար-ժեքով։

Պետք ավելացնել, վոր գավառական բաժիններն էլ մեծ քա-նակությամբ աշխատափոխադրահարկ են կատարել, սակայն դեռ մանրամասն տեղեկագրեր չեն ստացվել, այդ պատճառով էլ նրա քանակությամբ պարենտուրքի, վորը մտել է վերոհիշյալ հաշվետվության մեջ՝ այս տեղեկագրի մեջ չեն մտցվել։ Բաժինը



հաշվի է առել Յերեվանի գավառի, Կոտայքի, Ն.—Ախտայի և Դամարլույի հարկատու քաղաքացիներին և փոխադրական միջոց-ներն ու լծկանները, կազմելով այդ շրջանների տնային ցուցակ-ները։

**Կազմակերպչական բաժինը** զումարել է գավբաժինների վարիչների համաժողով, ուր գործելակերպի ընդհանուր ծրագիր մշակել և համապատասխան հրահանգներ տրվել։

**Հրահանգչական բաժինը** մշակել և հրատարակել է 13 զա-նազան դեկրետներ, վորոշումներ, հրահանգներ և այլն, մշակել է աշխատափոխադրահարկի մշակման 5 ձև։ Աշխատանքի պարտա-պանության վերաբերյալ 11 դեկրետներ, վորոշումներ և այլն, ավելի քան 20 զանազան դեկրետների, վորոշումների կանոնա-դրությունների նախագծեր է մշակել և համապատասխան հանձ-նաժողովներում քննվել հրատարակվելու և կյանքի մեջ կիրառե-լու համար։

**Ընդհանուր վարչական Ֆինանսական բաժինը** մինչև 1922 թ. նոյեմբերի 1-ը վարել է նաև Սոցապժողկոմատի նույնանման բաժնի ֆունկցիաները։

Այս բաժինը բացի ընդհանուր գործավարությունից և հաշ-վապահական մասի վարելուց թարգմանել է հ [illegible] բաժնի աջակցությամբ ռուսերենից հայերենի դեկրետներ, վորո-շումներ, շրջաբերականներ, հրահանգներ և զանազան ձևեր թեր-թերում հրատարակելու և թե գավբաժինների ուղարկելու. կազ-մել է տեղեկագրեր և զեկուցումներ վարչության գործունեու-թյան մասին. բաժիններին աշխատակիցների սակավության պատճառով ընդհանուր բաժինը տարել է նաև բաժինների գոր-ծավարությունը.

Գավբաժիններից քիչ թե շատ գործունեություն ցույց են տվել Ալեքպոլի, Ղարաքիլիսայի, Նոր-Բայազետի, և մասամբ Իջևանի և Լոռու գավբաժինները։ Իսկ Դարալագյազ, Զանգե-զուր և Մեղրի դեռ մինչև որս բաժիններ չեն կազմակերպած։

Գավառներում աշխատանքի պարտապանության վերաբե-րյալ յեղել են միջին թիվով յուրաքանչյուր գավառում ամսական 10–15 միջադեպեր, վորոնք լիկվիդացիայի յեն յենթարկվել բաժինների վարիչների կողմից։

Անդրաշխժողկոմատի Հայաստանի լիազորի վարչությունը նախագծած ունի մոտ ապագայում կյանքի մեջ իրագործելու հետևյալ խնդիրները։

1. Բոլոր գավառներում կազմակերպել աշխատանքի առանձին բաժիններ:

2: Կանոնավորել գավառների և կենտրոնի մեջ հարաբերությունը:

3. Կազմակերպել աշխատանքի կանոնավոր վիճակագրություն:

4. Սերտ կապ հաստատել աշխատանքի պաշտպանության օրգանների և Արհմիությունների մեջ:



# ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Պրոֆմիությունները Խորհրդային իշխանության օրոք սկսեցին կազմակերպվել 1921 թվի ապրիլից: Մինչ այդ փաստորեն Հայաստանում պրոֆմիություններ գոյություն չունեյին:

Դաշնակցական կուսակցության ու նրա կառավարության կատարած ամենախոշոր վոճիրներից մեկն էլ կայանում էր նըրանում, վոր իրենց սոցիալիստ հայտարարող քաղաքական գործիչները անվերջ շահագործում ու բթացնում էին Հայաստանի բանվորական մասսաներին, զրկում նրանց դասակարգային—հեղափոխական հողի վրա կազմակերպվելու ամեն մի հնարավորությունից, բանվորների գոյության մասին մտաբերելով միայն պառլամենտական կամ քաղաքային ընտրությունների նախօրյակին:

Բանվորների ձայները վորսալու նպատակով նման մոմենտներին բանվորական հարցի շուրջը մի քիչ աղմուկ էին բարձրացնում, բանվորներին վորոշ խոստումներ անում, իսկ ընտրությունները վերջանալուց հետո պնդում, վոր Հայաստանում բանվորություն չկա:

Վերջնականապես կազմակերպվեցին Հայաստանում արհմիության շարժման սկզբունքները 1921 թվի օգոստոսի սկզբին հավաքված Հայաստանի Արհմիությունների Համահայաստանյան Առաջին Համագումարում: Այստեղ վորոշվեց, վոր մեր Արհմիությունները արտադրական են թե բառ իրենց ծրագրի և թե բառ իրենց կազմակերպության: Նրանք կանգնած են դասակարգային հեղափոխության, ուրեմն և միջազգային հողի վրա: Ամեն մի առանձին միություն իր կենտրոնական վարչության միջոցով մտնում է Ռուսաստանի համապատասխան արտադրական միության մեջ, մասնակցում նրա համագումարներին և նրա միջոցով կապվում արդյունաբերության ավյալ ճյուղի բանվորների միջազգային շարժման ու միջազգային կազմակերպությունների հետ:

Նույն կարգով Հայաստանի Արհմիությունների կենտրոնը մտնում է Արհմիությունների համառուսական Խորհրդի (В. Ц. С. П. С.) մեջ, մասնակցում նրա աշխատանքին, գործում այդ հեղինակավոր ու հզոր մարմնի ընդհանուր գաղափարական ղեկավարությամբ և նրա միջոցով կապվում կարմիր Արհմիությունների Ինտերնացիոնալի հետ։

Ինքնուրույն կերպով, առանց Ռուսաստանի հետ հարյուրավոր թելերով կապված լինելու, մեր միությունները յերկու տարվա ընթացքում չեյին կարող մշակել իրենց աշխատանքի թե սկզբունքային և թե տակտիկական հարցերը։ Բացառապես Ռուսաստանի հեղափոխական բանվորության աջակցության պետք է վերագրել Հայարհմիությունների կանոնավորությունը, մանավանդ նրա առաջին սկզբունքային կետը։

Հայաստանի Արհմիությունները կազմակերպվելուց հետո՝ գումարվեցին հանրապետական մասշտաբով զատ զատ միությունների համագումարներ։ Այս համագումարներում ընտրվեցին կենտրոնական վարչություններ ու դրանց առաջադրվեցին վորոշ անհրաժեշտ խնդիրներ։

Փետրվարի վերջին ավարտվեցին համագումարներ հրավիրելու աշխատանքները։ Հրավիրվեց ընդամենը 12 համագումար։

Մշակված ծրագրի համեմատ միությունների աշխատանքը բաժանվում եր հետևյալ մասերի. կազմակերպչական, կուլտուր-կրթական և տարիֆային-տնտեսական։

* * *

Անհրաժեշտ է նկատել վոր Հայաստանի Պրոֆմիությունների գլխավոր աշխատանքը գլխավորապես տեղի եյին ունենում Յերևանում։ Գավառը գրեթե մասնակից չեր այդ աշխատանքներին. դրա պատճառը միջոցների պակասությունն ու տեղական պրոֆ-աշխատավորների սակավությունն եր։

Այդ բացի վրա լուրջ ուշադրություն դարձվեց։ Գավառներում կյանքի կոչվեցին գավառական պրոֆ. բյուրոներ, վորոնք իրենց ապպարատներին կից հիմնեցին գավառական մասշտաբով առանձին արտադր. միությունների բաժանմունքներ։

1922 թվի ապրիլին հայտարարվեց Արհմիությունների շարժ-ման և Պրոֆինտերնի շաբաթ, վորի նպատակն եր ծանոթացնել մասսաներին պրոֆմիությունների նոր նպատակներին ու նպաստել պրոֆմիությունների ամրապնդման։



Ներկայումս Հայաստանում կա 12 միություն, վորոնք ունին կենտրոնական վարչություններ Խորհրդային ծառայողների, բժշկա-սանիտարական աշխատավորների, Կոմմունալ տնտեսության ծառայողների. սննդա-արդյունաբերողների, ջուլհակների և կար ու ձևի. Սոցկուլտի աշխատավորների, տպագրողների, կաշեգործների, մետաղագործների, կառուցողների և փոխադրողների ու Փոզկոմի։ Բանվորների ու ծառայողների թիվը Յերևանում հասնում է վեց հազարի։ Գավառական բոլոր պրոֆբյուրոները վերացված են բացի Ալեք-պոլից։ Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Զանգեզուրում, Եջմիածնում և Դարալագյազում նշանակված են Հայաստանի պրոֆմիությունների Խորհուրդի լիազորներ։

Լոռու գավառում պրոֆմիությունների աշխատանքները ղեկավարում եր Ալլահվերդում գործող հանքային միության կենտրոնական վարչությունը, իսկ վերջերս հատուկ նշանակված լիազորը։

Յերևանի գավառում գործում եյին չորս քարտուղարություններ. սրանք այժմ վերացված են ու սրանց ֆունկցիաները հանձնված են խոշոր տեղկոմներին։ Մայիս ամսից ձեռնարկվել է ամերիկյան հիմնարկներում աշխատող բանվորների ու ծառայողների կազմակերպումը, վորոնց թիվը 3500-ի է հասնում։

# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1921—1922 Թ. Թ.

*Մինչև իմպերիալիստական պատերազմը բժշկա-սանիտարական գործը Հայաստանում հազիվ հազ քարշ եր տալիս իր գոյությունը և ազգաբնակչության բժշկա-առողջապահական պահանջները լրացվում եյին ցարական կառավարության հիմնած մի քանի հիվանդների ընդունարանները ու բուժակայանները։ Հայաստանի քաղաքներում՝ Յերևանում և Ալեքսանդրոպոլում, քաղաքային ինքնավարությունները բացել եյին վոչ մեծ հիվանդանոցներ ամբուլատորիաներով։ Ներքին Գործոց Մինիստրության յենթարկված բժշկա-սանիտարական գործը բնականաբար պիտի հանդիսանար այդ վարչության վերջին, այն էլ պաշտոնական-չինովնիկական, հոգսերից մեկը։ Սակայն վերջին իմպերիալիստական պատերազմի ընթացքում, յերբ Հայաստանը դարձավ մերձֆրոնտային մի շրջան, բժշկա-սանիտարական գործը, առանձնապես բուժական մասը, բավականին կենդանության նշաններ ցույց տվեց, զինվորական իշխանության և հասարակական կազմակերպությանց ձեռքով բացվեցին մի շարք ընդարձակ զինվորական և այլ հիվանդանոցներ, վորոնք կոչված եյին դարմանելու ցարական զորքի վիրավոր և հիվանդ զինվորներին։*

*Ձեռնարկված այդ բոլոր միջոցները կրում եյին զուտ զինվորական բնույթ, և ամենևին չեյին ծառայում քաղաքացիների բժշկական օգնության բարելավման։ Մի քիչ կենդանացավ ու բարեփոխվեց այդ դրությունը դաշնակցականների կառավարության օրով, յերբ նա հարկադրված յեղավ ամրացնել բժշկական հիմնարկությանց ցանցը նաև քաղաքացիների կարիքների համար, յերբ սովը, ավերածությունն ու ազգայնական անընդհատ պատերազմները դարձրին յերկիրը հիվանդությունների տարածման և մահվան թատերաբեմ։*

*Հայաստանի Խորհրդայնացումից հետո, յերբ կազմակերպ-*



*վեց ազգաբնակության առողջության պահպանման համար առանձին կոմիսարիատ, բնականաբար այդ օրվանից Բժշկա-Սանիտարական գործը պիտի ընդարձակվեր, և կանգներ նոր, Խորհրդային բևեռների վրա։ Խորհրդային բժշկականությունն իր հիմնական սկզբունքներով՝ ժողովրդին ձրիաբար բժշկական օգնություն մատակարարել, կանխել հիվանդությունները, հոգ տանել յերեխաների առողջության մասին և պահպանել մայրությունը, նրա միասնականությունը և կվալիֆիկացիան-կյանքի կոչվեց իր համար խիստ ծանր պայմաններում։*

*Պատերազմներից ավերված, աղքատացած, սովի, հիվանդությանց և մահվան յենթակա յերկրում, քաղաքակրթության տեսր առանձնում գտնված յերկրում, ուր չկան պատրաստված աշխատավորների բանակներ վոչ միայն Խորհրդային բժշկականության այլ և զեմստվոյին բժշկականության հիմունքները կյանքի մեջ կիրառելու, հարկավոր է մեծ ջանք ու յեռանդ գործադրել անհրաժեշտ աշխատանքի նվազագույն չափը ի կատար ածելու։*

*Յեվ մենք պիտի մատնանշենք, վոր բժշկական աշխատավորները, Միության մեջ կազմակերպված, պատվով տարան իրենց վրա դրված այդ ծանր աշխատանքը։*

*Այդ մեծ աշխատանքի համար Ժողկոմխորհը հատուկ դեկրետով աշխատանքի կոչեց բոլոր Բժշկա-Սանիտարական աշխատավորներին և ազգայնացրեց Հայաստանում գտնված բոլոր Բժշկա-Սանիտարական հիմնարկությունները և դեղատները։*

*Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատը կազմակերպվել է Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. Նահանգային Առբաժինների շաբլոնով, թեև տեղերում կազմակերպել է Գավառբաժիններ, համարյա նույն բաժիններով, ինչ Կոմիսարիատը։ Կոմիսարիատի և Առբաժինների համար ընդունվել է Ռուսաստանի կանոնադրությունը մի քանի, մեր կյանքի պայմաններին համապատասխան փոփոխություններով։*

*Կոմիսարիատը հետևյալ բաժիններից է բաղկացած։*

1. *Վարչակազմակերպչական*
2. *Բուժական-դեղա-մատակարարման յենթաբաժնի հետ*
3. *Սանիտարա-Համաճարակագիտական*
4. *Մայրության և Մանկության և յերեխաների պաշտպանության բաժին*

5. Զորա-Սանիտարական Բաժին
6. Ֆին-Տնտեսական

Ընդունելով բժշկական օգնությունը ծայրահեղ և առաջնակարգ անհրաժեշտություն մի յերկրի համար, վոր սովի և աղքատության պատճառով մեծաքանակ հիվանդներ ունի, Կոմիսարիատի Բուժական Բաժինը թափեց բոլոր ջանքերը բուժական հիմնարկների ցանցը հնարավոր չափով ընդարձակելու և ցույց տրվող բժշկական օգնության վորակի բարձրացման վրա։

Սանիտարա—Համաճարակաբանական Բաժինը զբաղված եր հիվանդությունները կանխելու և չեղածների դեմ պայքարելու համար անհրաժեշտ հրահանգներ, պարտադիր վորոշումներ և այլն մշակելու գործով։ Այս Բաժնի միջոցով կապ հաստատեց Թ. Ա. Ց. Խ. Հ. Արժողկոմի հետ, վորի փորձերից, պատրաստականությունից և իրական օգնությունից անցյալում օգտվել յե և հետագայում յել օգտվելու յե Կոմիսարիատը։

Մոռանալ մանուկներին և մայրերին Առժողկոմատը չեր կարող, մանավանդ մեր իրականության մեջ, ուր կան մեծ թվով վորբ յերեխաներ, պերճախոս ապացույցներ իմպերիալիստների ,,մարդասիրության և բարձր կուլտուրականության'' և նրանց խնամելու կարեվոր և չափազանց անհրաժեշտ հարցը ուսումնասիրելով թափեց ամեն մի ջանք, վոր նրանց համար տարվող հոգսը պարտադիր դարձնի նաև աշխատավորական լայն մասսաների համար։

Կենտրոններում մսուրներ, մանկական տներ, կոնսուլտացիաներ կաթնա—խոհանոցների հետ հիմնելով, Կոմիսարիատը, մի կողմից օգնելով մանուկներին և մայրերին, մյուս կողմից ժողովրդականացնում եր այդ գաղափարը։

Ֆին—տնտեսական Բաժինը հայթայթում և մատակարարում ու բաշխում եր այն բոլոր հարստությունները, վոր մտնում եյին Կոմիսարիատի պահեստներն ու գանձարկղները, հաշվի չեր առնում այն ամենը, ինչ ցրված և քաոսային դրության մեջ գտնվում եր Բժշկա—Սանիտարական հիմնարկություններում։

Զինվորական բաժինը խնամք եր տանում Կարմիր Բանակի, մեր պարծանքի և աշխատավոր ժողովրդի պաշտպանի, առողջության,

Վարչա—կազմակերպչական բաժինը այն շղկապող օղակն եր, վոր շրջանները կապում եր կենտրոնի հետ և այդ բաժնի միջոցով և կատարվել Կոմիսարիատի և տեղերի աշխատանքը.



միաժամանակ այդ Բաժինն եր հաշվի առնում և դասավորում աշխատավորներին։

1922 թիվը, նոր տնտեսական քաղաքականության հետևանքով, պետք է վոր մեծ կազմալուծում մտցներ Խորհրդային բժշկականության հիմքերի մեջ, սակայն Առժողկոմատին հաջողվեց անխախտ պահել իր սկզբունքները և ,,հիվանդների բժշկումը ու կանխող միջոցների ձեռք առնելը միշտ էլ մնաց պետության պարտականությունների շարքում'' հիշելով, վոր ,,միշտ դրված Բժշկա—Սանիտարական գործը միշտ հոգաբարձական և հատուցած պետությունը իր կատարած ծախսերի դիմաց, պահպանելով միաժամանակ մարդկանց կյանքը և ժողովրդի առողջությունը, արտադրության այդ գլխավոր ֆակտորը''։

Առժողկոմատի տարած աշխատանքները ավելի մանրամասնորեն բերված են հետագա գլուխներում, վորտեղից հնարավոր է քաղել տեղեկություններ թե կատարած աշխատանքի մասին և թե այն ծանր պայմանների մասին, վորոնց մեջ աշխատել է Կոմիսարիատը նպատակ ունենալով անց կացնելու կյանքի մեջ Խորհրդային բժշկականությունը։

## ՎԱՐՉԱ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Խորհրդային բժշկականության կազմակերպչական առանձնահատկություններից, վոր բղխում են Խորհրդային իշխանության ստրուկտուրայից, խոշորագույնը պիտի համարել նրա կազմակերպչական միասնականությունը։ Հին բժշկականության վարչական բաժանվածությունը ամենամեծ պակասություններից մեկն եր, վոր մեծ վնաս եր հասցնում բժշկական գործին իր ամբողջությամբ։

Հայաստանում, Զեմստվոյի բժշկականության բացակայության պատճառով Բժշկա-Սանիտարական հիմնարկների ցանցը շատ թույլ եր տարածված, և այդ եր պատճառը, վոր հիշյալ բաժանվածությունը առանձնապես զգալի չեր, վորովհետև գոյություն ունեցող առանց այն էլ թույլ ցանցը յենթարկվում եր հին իշխանության մի քանի մարմիններին — Խնամատարության, Զինվորական և Ներքին Գործերի Մինիստրություններին և զանազան հասարակական կազմակերպություններին։ Յերկրում գոյություն չուներ ամբողջ բժշկական գործը միացնող, կարգավորող մի մարմին և հաճախ էլ վարչական քաղքենիությունը

նպաստավորություն չէր տալիս ընդհանուր բնույթ կրող անհրաժեշտ աշխատանքները տանելու։

Բժշկական պերսոնալի քանակական և որակական ճիշտ հաշվառման բացակայությունը հնարավոր չէր դարձնում նըրանց նպատակահարմար օգտագործումը ըստ մասնագիտությունների։ Նոր կազմակերպված Կոմիսարիատը առաջի հերթին իրեն պետք կգտներ առողջապահության տեղական բաժինները, որոնք քաղաքացիական պատերազմի ընթացքում առաջացել էին որպես Հեղկոմների բաժիններ, և աշխատում էին առանց կենտրոնի ղեկավարության։ Գավառբաժինների և Առողջկոմատի մի կողմից և Հեղկոմների ու Առբաժինների փոխհարաբերությունների կանոնավորումը մյուս կողմից՝ ամեն տեղ մի անգամից չէր հաջողվում և շնորհիվ այն հանգամանքի, որ խորհրդայնացման առաջին օրերին մշակված չէին այդ փոխհարաբերությունների իրական նորմաները, ստեղծվում էին տարաձայնություններ, որոնք սակայն չէին կրում սկզբունքային բնույթ ու չէին վնասում բժշկական գործին։

Առողջկոմատի, Հեղկոմի միջոցով անցկացրած դեկրետը մասնավոր դեղատների և դեղագործարանների ազգայնացման մասին, տեղերին հնարավորություն տվեց լայնացնել աշխատանքը և մեղմացնել դեղորայքի կրիզիսը։

Սկզբնական կազմակերպչական շրջանում տենդենց էր նըկատվում բժշկական պերսոնալի կողմից մասսայական հեռացումների, որի հետևանք էր նրանց նյութական անապահովության, որի շնորհիվ առանց այն էլ լայն տարածված համաճարակային հիվանդությունների վտանգը էլ ավելի մեծանում էր։

Հեղկոմի 1921 թվի մայիսի 17-ի դեկրետով հայտարարվում է բժշկական պերսոնալի պարտադիր ծառայություն, որով հնարավոր է դառնում տեղերի համար ոչ միայն ծառայության մեջ պահել բժշկական պերսոնալը, այլ և ուղարկել նրանց ավելի վտանգված վայրերը։ Եթե Բժշկա-սանիտարական գործի կենտրոնացման հետ անհրաժեշտ էր, Կոմիսարիատի կազմակերպման հենց առաջին օրերից, ի հայտ բերել այն բոլոր նյութական հարստությունները, որ ցրված էին ամբողջ Հայաստանում, պակաս կարևոր չէր նաև բժշկական պերսոնալի առաջին հերթին բժիշկների քանակական և որակական հաշվառումը, նրանց ազատ ուժերը, գիտական պատրաստությունը, կազմակերպչական ընդունակությունները և Խորհրդային իշխանության



նվիրված լինելը, ճշտորեն և նպատակահարմարորեն օգտագործելու տեսակետից։ Այդ հաշվառումը հնարավոր յեղավ լրիվ անցկացնել միայն 1922 թ. սկիզբներին հատուկ այդ նպատակի համար մշակված անկետաների և տեղերից ստացվող ինֆորմացիոն տեղեկությունների միջոցով։

Հաշվառման նյութը պարզեց հետևյալ պատկերը

ՔԱՆԱԿԱԿԱՆ

| | |
|---|---|
| Բժիշկներ . . . . . | 156 |
| Բուժակներ . . . . | 125 |
| Գթութ. քույրեր . . | 69 |
| Մանկաբարձուհիներ . | 41 |
| Դեղագետներ . . . . | 30 |
| Ատամնաբույժներ . . | 20 |
| Ընդամենը . . | 441 |

ՈՐԱԿԱԿԱՆ

Գիտական ստաժ

| | | |
|---|---|---|
| Բժիշկներ | 1886-1900 . . | 16 հ. |
| » | 1901-1914 . . | 74 » |
| » | 1915-1922 . . | 56 » |
| | Ընդհանուր . . | 146 |

Ավարտման տարիները չեն ցույց տվել 7 հոգի, չեն վերջացրել 3 հոգի — ընդամենը — 156 հ.

## ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Վիրաբույժներ . . . . . . . . | 20 |
| 2. | Տերապևտներ . . . . . . . . | 62 |
| 3. | Ներքին և յերեխաների . . . | 22 |
| 4. | Ներքին և ներվային . . . . . | 2 |
| 5. | Մանկաբարձ. գինեկոլոգ . . . | 14 |
| 6. | Վեներական և կաշվի . . . . | 13 |
| 7. | Կոկորդի, քթի և ականջի . . | 3 |
| 8. | Աչքի . . . . . . . . . . . | 7 |
| 9. | Մանրէաբան . . . . . . . . | 1 |
| 10. | Սանիտարա-համաճարակ . . . | 1 |
| | ընդամենը . . . | 145 |

Մասնագիտությունը ցույց չեն տվել 7 հոգի,
Չեն վերջացրել . . . . . . . . . . . 3 հոգի,
156 հոգի

Այսպեսով, իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների հետևանք ամենուրեք տիրող քայքայման և ավերածության պատճառով առաջ յեկած զանազան տեսակի համաճարակային հիվանդությունների նվազագույն պահանջներին բավարարել չէր կարող բժիշկների այս թիվը, մանավանդ ինչպես

յերեվում և մասնագիտությունները ցույց տվող սույնակից, յերկրում չկային սանիտարիայի, ռենտգենոլոգիայի մասնագետներ: Այդ բացը մասամբ լրացվում է Հարևան յեղբայրական հանրապետություններում ապրող հայ բժիշկներով, վոր աշխատանքի եյին կանչվում և ուղարկվում եյին Հայաստանի Առժողկոմի տրամադրության տակ:

Բանակի սանիտարական մասը, վոր պարփակված եր Առժողկոմատի Բաժիններից մեկի մեջ, Գլխավոր Զորա-Սանիտարական վարչության մեջ, քաղաքացիական պատերազմի ժամանակ պահանջում եր բժշկական պերսոնալի լրացում, գլխավորապես բժիշկների: Մի քանի տասնյակ բժիշկներ հանվեցին իրենց տեղերից և փոխադրվեցին զինվորական վերադիտության մասերը և հիվանդանոցները: Այստեղ անհրաժեշտ է շեշտել այն, վոր Զորա-Սանիտարական վարչությունը, համեմատած մյուս բաժինների հետ, գտնվում եր առանձնակի պայմանների մեջ և այդ հետևանք եր նրա հատուկ ֆունկցիաների: Զինված յերկհպատակություն—մի կողմից Ռազմական Կոմիսարիատի, մյուս կողմից Առժողկոմատին բոլոր Բժշկա-Սանիտարական գործերը համաձայնեցված եյին, և Ժողովրդական Առողջության գործը վարելու սիստեմի կազմակերպված միությունը, Զորա-Սանիտարական վարչության գոյության ամբողջ շրջանում, անփոփոխ մնաց: Այդ բանը անհրաժեշտորեն պիտի շեշտել, վորովհետև այդ Բաժինը ուներ այնքան մահճակալներ և ծառայողներ ինչքան կա ամբողջ յերկրի քաղաքացիների համար, իսկ նյութական և ֆինանսական մատակարարումը սկզբում ստացվում եր զինվորական վերադիտությունից:

Յեթե քաղաքացիական պատերազմի ընթացքում Կոմիսարիատի ամբողջ ուշադրությունը կենտրոնացված եր բժշկական գործը զինվորական մասերում կարգավորելու վրա, խաղաղ դրության անցնելուց և բանակի թիվը կրճատելուց հետո Կոմիսարիատի Բժշկա-Սանիտարական աշխատանքների ծանրության կենտրոնը փոխադրվեց և դարձվեց յերկրի ազգաբնակության ցույց տրվող բժշկական ոգնության, խորհրդային բժշկության պրինցիպով, համաչափ կազմակերպման:

Այդ բանը առանձնապես հնարավոր դարձավ Անդրկովկասի Հանրապետությունների Ֆեդերատիվ միացումից և, առաջին հերթին, միասնական Ռազմական Ժողովրդական Կոմիսարիատ և նրան կից Զորա-Սանիտարական Վարչություն ստեղծելուց հետո:



1921 թվի դեկտեմբերի Առբաժինների Համագումարը տեղական պահանջների և գոյություն ունեցող Բժշկա-Սանիտարական հիմնարկների ցանցին ծանոթանալու մեծ հնարավորություն ավեց: Այդ Համագումարում առաջին անգամ կազմվեցին համեմատաբար ամուր շտատներ և մշակվեց Առբաժինների փոխհարաբերությունները առողջապահության կենտրոնական մարմնի և տեղական Գործկոմների հետ կանոնավորող կանոնադրություն: Համագումարից հետո Բժշկա-Սանիտարական հիմնարկների ցանցը և նրանց մեջ յեղած ծառայողների թիվը մեծացվեց այնչափ, ինչ չափ անհրաժեշտ եր Բժշկա-Սանիտարական գործը ուղիղ և նպատակահարմարորեն տանելու համար:

22 թ. առաջին կիսամյակում ամբողջ յերկրում հաշվում եր

| Մահճակալներ | Ծառայողներ |
|---|---|
| 2.200 | 1.440 |

Վոր ըստ գավառների հետևյալ կերպ եր բաժանված

| | Մահճակալներ | Ծառայողներ |
|---|---|---|
| Յերևան . . . . . . | 710 | 510 |
| Ալեք-Պոլ . . . . . | 490 | 240 |
| Եջմիածին . . . . . | 270 | 150 |
| Ղարաքիլիսա . . . . | 135 | 90 |
| Դիլիջան . . . . . . | 125 | 75 |
| Լոռի . . . . . . . | 100 | 86 |
| Ն. Բայազետ . . . . | 95 | 72 |
| Զանգեզուր . . . . | 100 | 65 |
| Դարալագյազ . . . . | 25 | 32 |
| Յերկաթուղի . . . . | 150 | 120 |
| | 2.200 | 1.440 |

Միաժամանակ հիմնարկությունների ընդհանուր ցանցից դուրս եյին հանված այն հիմնարկությունները, վորոնք ունենալով ընդհանուր հանրապետական նշանակություն և ծառայելով վոչ միայն տեղի (տվյալ գավառի) ազգաբնակության կարիքներին չեյին կարող յենթարկվել տեղական առողջապահական բաժիններին, այլ պիտի անմիջականորեն յենթարկվեյին Առժողկոմատի, այսպես որինակ սանատորիումը, 1-ին կլինիկական հիվանդանոցը, հոգեկան հիվանդանոցը և այլն:

Համագումարից հետո մշակվեցին տրվող տեղեկությունների ձևերը, գլխավորապես անձնական կազմի, շտապ տրվող տեղեկությունների, ինֆորմացիոն հաղորդակցությունների և այլն:

Պարտադիր աշխատանքի դեկրետը հարկադրում էր տեղական մարմինների ամեն տեսակի տեղափոխությունները և փոփոխությունները անձնական կազմի մեջ կատարել կենտրոնի համաձայնությամբ և թույլտվությամբ և այդ դեկրետի ճշգրիտ կատարման հսկելը հնարավոր դարձավ միայն վերը հիշած ձևերի կիրառումով և նրանց հետագա վերամշակումով։ Ավելորդ չի լինի այստեղ մատնանշել, որ խոլերայի յերևալը հարկադրեց Առժողկոմատին, թույլ տալ տեղական մարմիններին կատարել փոքր տեղափոխություններ անձնական կազմի մեջ, ուղարկելով այս կամ այն աշխատավորին համաճարակից ավելի ուժեղ հարվածված վայրերը։

Խոլերայի դեմ կռվելու համար ստեղծվեցին հատուկ կոմիտաներ թե կենտրոնում և թե տեղերում արտակարգ իրավունքներով և այսպեսով ժամանակավորապես սրանց անցան Կոմիսարիատի Վարչական-կազմակերպչական Բաժնի ֆունկցիաների մի մասը։

Շտատների հետագա հաճախակի մասնակի կրճատումները, որ հետևանք էին ֆինանսական ծանր կացության, ծայրահեղ բարդացնում և մեկ-մեկ նույն իսկ խանգարում էին Բաժնի աշխատանքները։

Որպեսզի պարզ պատկերացվի, թե որքան հաճախակի էին կատարվում շտատների այդ փոփոխությունները, ներքևում բերվում է մի տախտակ, որտեղ ցույց է տրված զանազան ժամանակներում յեղած մահճակալների և ծառայողների թվերը։

| | Մահճակալներ | Ծառայողներ. |
|---|---|---|
| 1921 թ. վերջ . . . | 2.200 | 1.440 |
| 1922 » 1-ին կիսամ. | 1.615 | 1.215 |
| 1922 » 2-րդ » | 1.335 | 926 |
| 1922 » վերջ. » | 800 | 570 |

Մահճակալների թվի և աշխատակիցների խիստ կրճատումը (առաջինները 1.335-ից մինչև 800 և յերկրորդները 926-ից 570) բացատրվում է նրանով, որ Ժողկոմխորհի վորոշմամբ պետական մատակարարման մեջ էին թողնված միայն մահճակալների թվերը վերջին և ծառայողների, մյուս մասը հանձնված էր տեղերին։ Շուտով ստիպված յեղանք պետական մատակարարման վերցնել նորից տեղերին հանձնած մահճակալները և ծառայողները, վորովհետև պարզվեց, որ տեղական միջոցներով անհնար է նրանց պահել։



Հիվանդանոցների տեղերի մատակարարման թողնելը, թեկուզ մեծ մասամբ և անվանական, ունեցավ այն նշանակությունը, որ բավական թուլացրեց տեղերի առողջապահական մարմինների կապը կենտրոնի հետ և ավելի անպարզություն մտցրեց Առբաժինների, Կոմիսարիատի և Գործկոմների հետ ունեցած փոխհարաբերությունների մեջ։

Հիշյալ հանգամանքը, հարկավ, չէր կարող ազդեցություն չունենալ համահանրապետական մասշտաբով տարվող համաչափ Բժշկա-Սանիտարական աշխատանքների վրա։

Կոմիսարիատի կազմության մեջ հետագայում առաջացրած փոփոխությունների մեջ փոքր տեղ չի բռնում նրա Զորա-Սանիտարական Բաժնի լրիվ կազմալուծումը, հայկական զորամասերի սանիտարական մասը Առանձին Կովկասյան Բանակի (ՕԿԱ.-ի) Սանիտարական Բաժնին հանձնելու պատճառով։

Այդ Բաժնի կազմալուծման հետևանքով նրա ֆունկցիաները անցան Կոմիսարիատի մյուս Բաժիններին և այսպեսով Զինվորական վերադիտության վոչ շարքային մասերի և հիմնարկների զինվորական բժիշկների և բժշկական պերսոնալի հաշվառումը և դասավորումը ամբողջապես տրվեց Վարչա-Կազմակերպչական Բաժնին։ Ի վերջո պետք է մատնանշել Առժողկոմատի յեղբայրական Հանրապետությունների, մանավանդ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ., համապատասխան Կոմիսարիատների հետ տարած կոնտակտ աշխատանքը։ Աշխատանքի այդ կապը ստեղծվում էր թե Համագումարներին ներկայացուցիչներ ուղարկելու և թե փոխադարձ ինֆորմացիոն տեղեկություններ հաղորդելու և Ժողովրդական Առողջապահության վերաբերող այս կամ այն հարցի մասին զեկուցներ ուղարկելու միջոցով։

Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Առժողկոմատից ստացվող նյութական օժանդակությունը և նրա սերտ կապ ստեղծելու անհրաժեշտությունը, վորով միայն հնարավոր պիտի դառնար կիրառելու կյանքում ընդհանուր համաֆեդերատիվ մասշտաբով տարվելիք Բժշկա-Սանիտարական աշխատանքները, պարտադրում էին Առժողկոմատին պարբերաբար ուղարկելու նրանց զեկուցումներ Առժողկոմատի ունեցած գործունեության մասին։

# ՍԱՆԻՏԱՐԱ-ՀԱՄԱՃԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ
## 1921 Թ.

Առանձնապես ծանր պայմաններում սկսեց իր աշխատանքը Սանիտարա-Համաճարակագիտական Բաժինը։ Յեթե Առժողկոմատը բժշկական գործի մյուս շրջաններում ստացել էր վորոշ ժառանգություն նախկին կառավարություններից՝ շատ քիչ քանակությամբ բժշկական աշխատավորներ, բժշկական գույքեր, դեղարայք և մի քանի քարուքանդ յեղած հիվանդանոցներ, ապա Սանիտարա Համաճարակագիտական Բաժնի գործունեության ասպարեզում վոչնչից վոչինչ չէր թողնված, բացի սոսկալի հակասանիտարիայից և համաճարակներից։

Կարելի յե վստահորեն ասել, վոր բժշկության այդ ճյուղը Հայաստանում գոյություն չուներ։ Ներկայիս Հայաստանը, ներկայացնելով իրենից Ցարական Ռուսաստանի ամենահեռավոր և հետ ընկած նահանգներից մեկը, չէր կարող իշխանության ուշադրության առարկա լինել, մանավանդ, վոր մինչև անգամ Ցարական Ռուսաստանի կենտրոնական շրջաններում, միշտ էլ բուժական գործը վոչ միայն գերադասվել, այլ և ճնշել է սանիտարիան։ Վորպես փայլուն ապացույց այդ դրության կարող է ծառայել այն հանգամանքը, վոր բժշկա-սանիտարական նպատակների համար գանձվելիք տուրքերի 1 ռուբլուց 95 կոպեկ ընկնում էր բուժական միջոցների վրա և միայն 5 կոպեկ (?) նախազգուշական սանիտարական։ Իրերի նման դրության մեջ Ռուսաստանի կենտրոնական շրջաններում, համառուսական մասշտաբով գործնական սանիտարական կազմակերպության բացակայության ժամանակ, ի հարկե չէր կարելի ունենալ մինչև անգամ սանիտարիայի նման մի բան, Հայաստանում։ Իսկ դաշնակցական կառավարությունը, վորը զբաղված էր անվերջ պատերազմներով, յեթե նույն իսկ բուռն ցանկություն էլ ունենար ստեղծելու Հայաստանում բժշկության Սան. Համաճ. ճյուղը, ֆիզիքական հնարավորություն չուներ այդ անելու, վորովհետև յերկրի բոլոր միջոցները, Հայաստանի լավագույն ուժերը տրամադրվում էյին ռազմական կարիքներին։ Այսպիսով, Սան. Համաճ. Բաժինը կազմակերպվելու րոպեյին Հայաստանում վոչինչ չկար, վորի վրա հիմնվելով նա կարողանար լայնացնել իր գործունեությունը։

Յերկրում չկային Սանիտ. Համաճ. միջոցների համար անհրաժեշտ նյութական հարստություններ, վորոնցով կարելի լիներ ոգտվել, չկային պատրաստված Սանիտարական աշխատավորներ,



վորոնցով կարելի լիներ անց կացնել այս կամ այն սանիտարական միջոցը, յերկիրը բոլորովին ուսումնասիրված չէր սանիտարական տեսակետից, մինչև անգամ Հայաստանի գըլխավոր համաճարակային ախտը—մալարիան, վորը վերջին տարիներում ահռելի չափեր էր ընդունել, նա էլ առաջ էր բերում թույլ ընդդիմություն, վորը հանդես էր գալիս մալարիային հանձնաժողով կազմակերպելու ձևով, մի քանի մալարիային խմբակներով, վորոնց ամբողջ գործունեությունը բերյին էլի կայանում էր նրա բժշկության մեջ, վոչ մի ուշադրություն չէր դարձվում այնտեղ ճոխ և բազմակողմանի արտահայտվող մալարիան ուսումնասիրելու և նախազգուշացնելու համար և վերջապես յերկրում չէր տարվում Սանիտ. վիճակագրություն, վորը կարծեք համարվում էր ավելորդ ճոխություն։ Ավելորդ է խոսել ի հարկե Բժշկա-Սանիտարական գիտելիքների ժողովրդականության մասին բնակչության լայն խավերի մեջ. պատահական դասախոսություններ—պատահական նյութերի վերաբերյալ, յերկու-յերեք հոդված լրագրերում և մեկ-մեկ կու բրոշյուր հայերեն լեզվով, ահա և ամբողջ սան. լուսավոր. աշխատանքը։

Յեթե հաշվի առնենք Հայաստանի այն ծանր սանիտարա-համաճ. դրությունը, վորի մեջ ընկավ նա իմպերիալիստական կռիվների հետևանքով, վորոնք այնպես հիվանդագին կերպով անդրադառնում էյին տնտեսության կյանքի ամենազգայուն և փափուկ կողմի—բժշկական գործի վրա, այն ժամանակ մեզ համար պարզ կլինի, վոր ինչ ահագին պատասխանատու աշխատանք էր դրված Ս. Հ. Բաժնի առաջ։

1921 թ. կեսերին կազմակերպված Սան. Համաճ. Բաժինը, հաշվի առնելով բոլոր այս հանգամանքները և իր տրամադրության տակ չունենալով բավականաչափ միջոցներ, իրեն մեծ խնդիրներ չառաջադրեց, այլ ընտրեց անմիջական պայքարի ուղին Հայաստանում լայն կերպով տարածված համաճարակների դեմ։ Հենց առաջին որերից Բաժնի ամբողջ ուշադրությունը դրավված էր այդ ժամանակ սկսված խոլերայի և դիզենտերիայի համաճարակներով, վորոնք կարող էյին ահավոր չափեր ընդունել, վորովհետև դրա համար կային բոլոր նպաստավոր պայմանները։ Խոլերայի դեմ մաքառելու համար Սան. Համաճ. Բաժնի կից կազմակերպված էր Արտակարգ Հանձնաժողով, վորը և ղեկավարում էր պայքարի ամբողջ գործը։ Նույն այդ նպատակով ամ-

բողջ Հայաստանում կազմակերպված էյին սանյեռյակներ և սանհնգյակներ: Գավառներն էյին գործուղղված հատուկ հրահանգիչ—վերահսկիչներ, վորոնք ստուգում էյին գավառի սանիտարական դրությունը և, միևնույն ժամանակ, խոլերայի դեմ մաքառելու համար հրահանգներ տալիս:

Առանձնապես ուշադրություն եր դարձված այդ իմաստով յերկաթուղագծի վրա, վորպես խոլերայի տարածման աղբյուրի:

Գավառներ ուղարկված էյին մի շարք հրահանգներ և շրջաբերականներ, վորոնք պարզաբանում և ցույց էյին տալիս խոլերայի դեմ մաքառելու ուղիներ:

Թերթիկների, պլակատների և բրոշյուրների հրատարակությամբ, այլ և հանրամատչելի դասախոսություններ կարդալով, բնակչության լայն խավերի մեջ տարածվում էյին գիտելիքներ խոլերայի եության և նրա դեմ մաքառելու միջոցների մասին: Խոլերայի դեմ մաքառելու գործը ավելի լավ տանելու համար աշխատանքի էյին կոչված արհեստակցական և կուսակցական կազմակերպությունները և աշխատավոր ժողովրդի գիտակից մասը: Խոլերայի շիճուկ (վակցինա) բավարար քանակությամբ չունենալու պատճառով, այդ տարվա ընթացքում չհաջողվեց կատարել մասսայական սրսկումներ: Յերևանում, Բժիշկ—Մանրէաբանական Ինստիտուտում պատրաստված և Թիֆլիսում ձեռք բերված շիճուկը չեր կարող բավարարել բոլոր կարիքները: Այսպես թե այնպես, շնորհիվ ձեռք առած միջոցների հաջողվեց բավականին թեթև կերպով ազատվել խոլերայի համաճարակից: Մի քանի գավառներում խոլերայով հիվանդացումներ բոլորովին չկային, իսկ մյուսներում (Յերևան, Ալեք-Պոլ, Ղարաքիլիսա, և Լոռի) նա մեծ ծավալ չընդունեց: Ընդհանրապես խոլերայի համաճարակը տևելով հունիսի վերջերից մինչև հոկտեմբերի 20—ը, տվեց ընդամենը 526 հիվանդացումներ 55 տոկոս մահացությամբ:

Պայքարը խոլերայի դեմ, կլանելով Սան. Համ. Բաժնի բոլոր ուժերը, միջոցները և ուշադրությունը, խանգարեց վերջինիս գործնական, նախազգուշական քայլեր անել մյուս համաճարակային աղետի՝ մալարիայի դեմ, վորը առանձնապես ուժեղ արտահայտություն ստացավ: Պետք եր բավականանալ մալարիկների բժշկությամբ, վորի վրա Բուժական Բաժնի կողմից ամենալուրջ ուշադրությունն եր դարձված և վորի վրա ծախսվեց Առժողկոմատի պահեստներում գտնվող խինինի ամբողջ պաշարը:



Դեռ խոլերայի համաճարակը վերջնականապես լիկվիդացիայի չեր յենթարկված և մալարիան ամենայեռանդուն տարածման փուլի մեջ եր, յերբ Բաժնի առաջ կանգնեց բծավոր, վորովայնային և վերադարձ տիֆերը: Առանձնապես տիֆերը տարածվեցին զինվորական մասերում և այդ մասերի տեղավորման վայրերում քաղաքացիների մեջ: Սան. Համ. Բաժնի և Զորա-Սան. Բաժնի միացյալ ջանքերով հաջողվեց կասեցնել տիֆերի համաճարակի լայն տարածումը, թեպետ բոլոր պայմանները բարենպաստ էյին այդ տարածման:

Այսպես վոջլությունը ընդունեց ահռելի չափեր, վորովհետև բնակչության մեծագույն մասը հնարավորություն չուներ հոգալ իր մաքրության վրա: Այդ հանգամանքի վրա, ի հարկե, Ս. Համ. Բաժինը դարձրեց իր ուշադրությունը: Ուրիշ միջոցներին համահավասար. պլակատներով, թերթիկներով և հանրամատչելի դասախոսություններով տիֆերի և նրանց դեմ կռվելու միջոցների մասին, բացատրվում և ընդգծվում եր անձնական մաքրության նշանակությունը տիֆերով հիվանդանալը նախազգուշացնելու գործում: Այնուհետև շտապ կերպով կարգի բերվեցին բաղնիքները, նրանց ոգտագործման հնարավորությունը մինչև maximum հասցնելու համար: Այդ բաղնիքները տրամադրվելու էյին Առբաժիններին, համաձայն վերջիններիս միջնորդության:

Քայլեր էյին արված, վորոնք սակայն հաջող վերջ չունեցան, սոխառեղեն ձեռք բերելու և ամենաչքավոր ազգաբնակչության բաշխելու համար, ի նկատի ունենալով Հայաստանում նրա մեծ պաշարների բացակայությունը:

Մյուս համաճարակներից հարկավոր և մատնանշել նաև ծաղիկը, վորը սակայն տվեց հիվանդների շատ քիչ տոկոս, և այն էլ միայն մի գավառում:

Ծաղկի պատվաստումը մինչ այդ կրում եր մասնակի, պատահական բնույթ, ուստի և Սան. Համ. Բաժինը հարց բարձրացրեց ծաղկի պարտադիր պատվաստման մասին:

Սակայն դրսից չհաջողվեց ստանալ բավարար քանակությամբ պատվաստ, իսկ Բժիշկ-Մանրէաբանական Ինստիտուտը, իր գոյության առանձին ծանր պայմանների շնորհիվ, կարողացավ պատրաստել միայն 30,000 միավոր, վորոնք գործածվեցին պետական մանկատների կարիքների համար: Հարկավոր եր կամ հնարավորություն ստեղծել ստանալու դրսից մեծ քա-

նակությամբ պատվաստ, կամ տրամադրել Քիմիա-Մանրէաբանական Ինստիտուտին անհրաժեշտ միջոցներ, այդպիսին պատրաստելու համար։

Պետք է այստեղ ասել, որ այդ հիմնարկության դերը համապատասխան դույքի և ուժերի բացակայության պատճառով կայանում էր բացառապես քիմիական անալիզներ կատարելում այն ժամանակ, յերբ Սան. Համ. Բաժինը նրա դերը տեսնում եր գլխավորապես նախազգուշական և բուժական պիտույքի շիճուկներ պատրաստելու և տրոպիքական հիվանդություններ ուսումնասիրելու մեջ։

Ուրիշ համաճարակի բռնկումներ այդ տարվա ընթացքում չի յեղել։ Պարզել համեմատաբար սուր-վարակիչ հիվանդությունների շարժման պատկերը այդ տարվա համար չհաջողվեց։ Հավաքված թվական տվյալները շատ աղքատ են, կրում են հատվածական բնույթ և չեն համապատասխանում իրականության, այնպես որ նրանցով գաղափար կազմել այս կամ այն հիվանդության շարժման մասին, հնարավոր չի դառնում։ Ամենաանհետաձգելի աշխատանքը գալիք տարվա համար հանդիսանում է սան-վիճակագրության ստեղծումը։

Սան. Համ. Բաժնի ամբողջ գործունեությունը համաճարակների դեմ մաքառելու ասպարեզում, ինչպես վերը ասվեց, անցնում եր առանձնապես անբարենպաստ պայմաններում։

Պահանջվում եր ուժերի maximum լարումը, նախաձեռնվելիք միջոցները հաջողակ կերպով անց կացնելու համար։ Բայց Սան. Համ. Բաժնի գործունեությունը 1921 թ. ընթացքում չսահմանափակվեց համաճարակների դեմ մաքառելով։ Տանելով այդ ծանր և համառ աշխատանքը, Բաժինը չնայած պատրաստված աշխատավորների և միջոցների բացակայության, չեր կարող անհոգ կերպով անցնել այդ հակասանիտարիայի մոտով, որը թագավորում եր այդ ժամանակ Հայաստանի բոլոր անկյուններում։ Բոլոր առբաժիններին շտապ կերպով կարգադրված եր միջոցներ ձեռք առնել մաքրելու քաղաքները, գյուղորայք և ավանները աղբից, թափթփուկներից և այլն։ Կազմակերպված եյին համարյա վոչնչից փոխադրական ասսենիզացիոն դոժակներ և համառ, մանրակրկիտ աշխատանքով, սանիճանապար աղբը դուրս բերելով բակերը և փողոցները մաքրելու շաբաթներ կազմակերպելով, բակերում աղբի արկղներ դնելով և պարտադրելով բնակիչներին դուրս բերել աղբը քաղաքից դուրս



համար նշանակված տեղերը, հաջողվեց վորոշ մաքրության հասնել։ Այդ բոլոր հարցերի առթիվ համապատասխան հիմնարկությունների հետ մշակված եյին պարտադիր վորոշումներ, հրահանգներ։ Ազգաբնակչության լայն խավերի նույն հարցերի մասին կարդացված եյին դասախոսություններ, տարածված եյին նրանց մեջ թերթիկներ, պլակատներ և այլն։

Ի հարկե, դեռ շատ աշխատանք ունի կատարելու այդ ասպարեզում Սան. Համ. Բաժինը, բայց այնուամենայնիվ նա վորոշ հետևանքների կարողացել է հասնել։ Ս. Հ. Բաժինը նույն տարում ուշադրություն է դարձրել նաև սննդային սանիտարիայի վրա, հսկողության տակ առնելով առևտրական ձեռնարկությունները, փռերը, ճաշարանները և այլն։ Այդ ուղղությամբ հրատարակված եր մի շարք շրջաբերականներ, պարտադիր վորոշումներ, պատասխանատվության կանչելով մեղավորներին հիշյալ վորոշումները չկատարելու համար։

Բացի այդ՝ սանիտարա-տեխնիկական յենթաբաժինը պատրաստել եր մի շարք նախագծեր, քաղաքների, գյուղերի սանիտարական դրությունը բարելավելու մասին, վորոնց նպատակով ծրագրված եր անց կացնել ջրանցքներ, ջրմուղներ, առողջացնել ճահճային, մալարիայով վարակված շրջանները, մշակված եր նաև նախագիծ գաղթականության սանիտարիայի գործը լավացնելու և վերջապես հիվանդանոցային շենքերը բարենորոգելու և հարմարեցնելու համար։ Սակայն այդ բոլոր նախագծերը միջոցների բացակայության պատճառով մնացին անիրագործելի։

Սան. Լուս յենթաբաժինը աշխատում եր Բժ. Սան. Աշխ. Արհ. Միության Ս. Լ. Բաժնի հետ միասին և նրա աշխատանքը, ինչպես վերը ասվեց արտահայտվել է տեղական և ռուսերեն լեզուներով մի շարք թերթիկների, պլակատների, բրոշյուրների հրատարակությամբ խոլերայի, բծավոր, վերադարձային և վերադարձ տիֆերի, մալարիային, վեներական հիվանդությունների, նաև ընդհանուր սանիտարիայի մասին, այլ և հանրամատչելի դասախոսությունների և զրույցների կազմակերպությամբ նույն նյութերի վերաբերյալ։ Միաժամանակ այդ Բաժինը նախաձեռնել եր կազմակերպել միջնակարգ բժշկական դպրոց, միջին բժշկական պերսոնալի պակասը լրացնելու նպատակով։ 1922 թ. հունվարին դպրոցը գործում եր։

Այս են Սան. Համ. Բաժնի աշխատանքի փուլերը 1921 թ.

ընթացքում։ Շատ բան է հաջողվել կատարել շնորհիվ գործադրված ջանքերի, բայց էլ ավելի աշխատանք է սպասվում առաջայում, ավելի մեծ խնդիրներ են պահանջում իրենց լուծումը։

## 1922 Թ.

1922 թ. Սան. Համ. Բաժնի, ինչպես և Առժողկոմատի մյուս բոլոր բաժինների աշխատանքը ընթանում էր ավելի բարեհաջող պայմաններում, վորովհետև յերկրի ներքին պայմանները փոխվել էին դեպի լավը։ Պատերազմին վերջ էր դրված, յերկիրը հանգստացել էր և ժողովուրդը դադարելով գաղթված դրության մեջ գտնվելուց, զբաղվել էր խաղաղ աշխատանքով։ Ռազմական հոգսերից ազատ, յերկրի լավագույն ուժերը կոչված էին շինարարական տնտեսագործական աշխատանքի։ Պարենային ճգնաժամը կանոնավորվել էր, և յերկրում չկար արդեն այնքան քաղցած, գործազուրկ և անապաստան, վորոնք 1921 թ. լցնում էին մեր հիվանդանոցները և տալիս էին մեծ քանակությամբ սուր վարակիչ հիվանդներ, մահացության բարձր տոկոսով։

Համաճարակները այլևս այնքան ուժեղ բնույթ չէին կրում։ Մեր աշխատավորները էլ ընտելանալով աշխատանքին ավելի արդյունավետ էին դարձնում նրան։

Ուստի 1922 թ. ընթացքում լուծելու համար Սան. Համ. Բաժինը առաջ քաշեց ավելի խաղաղ բնույթ կրող, ծրագրային հարցեր։

Այդ հարցերի մեջ առաջնակարգ տեղ է գրավում 21 թվակ. սկսած սանիտարա-նախազգուշական միջոցների հետագա զարգացումը, նրանց մշակումը կենտրոնում և հաստատապես ու ծրագրված կերպով կյանքի մեջ անց կացնելը։ Շատ աշխատանք հարկ յեղավ թափել այդ բանի համար, վորովհետև բավարար չափով նյութական միջոցների բացակայությունը շատ էր դանդաղեցնում աշխատանքը տեղերում։ Լավ չէր դրված նաև սանիտարական տրանսպորտը և դեզինֆեկցիոն գործը, վորովհետև 1921 թ. պատրաստվածները չէին բավարարում ներկայացված պահանջներին։ Հարկավոր էր լայնացնել այդ գործը։ Այդ հարցի լուծումը քիչ թե շատ կանոնավորված էր, շնորհիվ տեղական Առժբաժինների, ջանքերի և հաստատակամության։ Զբաղվելով Սան. Նախազգուշական հարցերով, Սան. Համ. Բաժինը ավելի ծրագրված ձևով էր գալիս ազգաբնակչության մասսաների մեջ, տարածելով թերթիկներ, պլակատներ և գլխավո-



բացի կենդանի խոսքի միջոցով զրույցներ այն մասին, թե ինչ նշանակություն ունեն հիվանդությունները նախազգուշացնելու գործում-մաքուր օդը, լավ խմելու ջուրը, բաղնիքը, փողոցների և բնակարանների մաքրությունը։ Այնուհետև քայլեր էին արված անցյալ տարվա ընթացքում ջրմուղներ, ջրանցքներ անց կացնելու և այլ հարցերի առթիվ մշակված նախագծերը իրականացնելու համար։ Այդ նախագծերը կյանքի մեջ լրիվին անցկացնել Սան. Համ. Բաժինը չկարողացավ իրենից անկախ պատճառներով, իսկ հիվանդանոցներում հաջողվեց իրագործել մասնակի, միայն վորոշ չափով կանալիզացիայի և ջրմուղներ անց կացնելու միտքը։

Մյուս վոչ պակաս նշանակություն ունեցող խնդիրն էր 1921-ծաղկի պարտադիր պատվաստման իրագործումը։ Հարկավոր էր ստանալ դրսից ծաղկի պատվաստ բավարար քանակությամբ։ Այդ առանձնապես անհրաժեշտ էր մանավանդ այն պատճառով, վոր Եջմիածնի գավառում, Արարատում բռնկվեց ծաղկի համաճարակ։ Շնորհիվ ձեռք առած միջոցների, հաջողվեց լիկվիդացիայի յենթարկել հիշյալ էպիդեմիան։ Նա մեծ չափեր չընդունեց՝ ցուցակագրված էր ընդամենը Արարատի շրջանում 91, իսկ ամբողջ Հայաստանում 297 մարդ։ Մոսկվայից ստացված և այլ շուկաներում ձեռք բերված ծաղկի պատվաստը բաշխվեց համեմատական չափով բոլոր առժբաժինների մեջ, պատվաստման համար։

Ընդամենը Առժբաժինների կողմից կատարված էր 40.000 պատվաստում։ Չպատվաստվելու տոկոսը շատ չնչին էր։ Միաժամանակ մի շարք շրջաբերականներով առաջարկված էր դասախոսությունների միջոցով պարզաբանել ծաղկի պատվաստման նշանակությունը և օգուտը, վորը և Առժբաժինների կողմից փայլուն կերպով կատարվել էր։ Բացի այդ, մշակված էին ծաղկի պատվաստման ցուցակագրության և հաշվետվության ձևեր։

Սան. Համ. Բաժինը գտնելով, վոր ծաղկի պարտադիր պատվաստումը չի տարվել մինչև վերջ, նոր քայլեր արեց ծաղկի պատվաստ ձեռք բերելու համար։

Յերրորդ լուրջ խնդիրն էր սանիտարական վիճակագրության ստեղծումը, վորը ինչպես վերը ընդգծված էր, բացակայում էր Հայաստանում։ Առժողկոմատի կոլեգիայի վորոշմամբ, Սան. Համ. Բաժնին կից, 22 թ. հունվար ամսից կազմակերպվում է սանիտարական վիճակագրության յենթաբաժին, վորը

մշակել է հիվանդների անհատական ցուցակագրության քարտերի ձևեր, հիվանդանոցների, բուժարանների, բժշկակայանների և այլ հիմնարկությունների համար, ստացիոնար, բուժարանային և բնակարանային հիվանդների հաշվետվության ձևեր, շատ հաղորդագրությունների ձևեր, սուր վարակիչ հիվանդությունների և համաճարակների առաջ գալու և տարածման մասին:

Վորպես հիմք այդ ձևերի մշակության համար վերցված եյին Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Ժ. Կ. կից վիճակագրական հանձնաժողովի կողմից 1920 թ. մշակված ձևերը, և հարմարեցված եյին մեր ծրագրի պայմաններին: Մի շարք շրջաբերականներով պարզաբանվում է տեղերին Սան-վիճակագրության նշանակությունը: Ցուցմունքներ են տրվում քարտեր և հաշվետվություններ կազմելու և կենտրոններին ներկայացնելու ձևի մասին:

Տեղերը սկզբում դեռ ևս չընտելանալով խաղաղ աշխատանքի կարգի հետ, ներկայացնում եյին հիվանդների շարժման տեղեկագրերը շատ անկանոն կերպով: Բայց 1922 թ. յերրորդ կիսամյակում այդ գործը ևս կարգավորված եր: Շատ դանդաղեցնում եր աշխատանքը փոխադրական միջոցների անկանոնությունը և գավառների հետ ունեցած փոստ-հեռագրական կապի թուլությունը:

Բայց և այնպես 22 թ. և առանձնապես նրա յերկրորդ կիսամյակի համար մենք ունենք մանրամասն վիճակագրական տվյալներ և յեթե 21 թիվը մեզ վոչ մի թիվ համարյա չի տվել, 22թ. առատորեն ունի այս թվերը:

Մենք ունենք հիվանդների շարժման պատկեր ամբողջ Հայաստանում, առանձին հիվանդանոցներով, բուժարաններով և տանը ցույց տրված բժշկական օգնության տվյալներով: Մենք գիտենք ներկայումս մեր յերկրի ամենավարակված գավառները: Այն մեծ բացը, վոր կար առաջ բժշկական գործունեության մեջ Հայաստանում, ներկայումս լրացված է: Ի հարկե հիվանդների ցուցակագրության գործը մեզ մոտ, Հայաստանում. դեռ ևս պահանջում է շատ աշխատանք, մեր թվերը առանձնապես ճշտությամբ չեն կարող աչքի ընկնել, նրանք դեռ չեն համապատասխանում յերկրում յեղած հիվանդների իրական թվին, վորովհետև 1922 թ. սան. վիճակագրությունը տալիս է մեզ միայն հիվանդների շարժման պատկերը պետական հիվանդանոցներում բուժարաններում, բժշկակայաններում և այլն: Բժշկակայաններ-



րի հեռավորությունը գավառներում հանդիսանում է տակավա-թիվ դիմումների պատճառը:

Այդ հարցը պետք է լուրջ քննության առարկա դառնա և դրական լուծում ստանա:

22 թ. ընթացքում ցուցակագրված հիվանդների քանակը արտահայտվում է հետևյալ թվերով:

| | | |
|---|---|---|
| Բուժարանում և տանը ցույց է տրված բժշկական օգնություն | Առաջին այցելում | — 261650 |
| | Կրկնակի « | — 359911 |
| | Ընդամենը | 621561 |

Ստացիոնար հիվանդներ յեղել են հիվանդանոցներում

| | |
|---|---|
| Առ I—I 22 թ. . . . . . . . . | 615 |
| Նորից ընդունված են . . . | 17374 |
| Առողջացել են . . . . . . | 15618 |
| Մեռել են . . . . . . . . | 1679 |
| Մնում է առ I—I 23 թ. . . . | 692 |

Տեղերից ստացված այս տվյալները մշակման են յենթարկվել Սան. Համ. Բաժնում, կազմված են դիագրամներ, աղյուսակներ: Այդ վերամշակման տվյալները հիմք են ծառայել կազմված նախահաշիվների:

Այդ տվյալներից պարզվեց նաև, թե ինչ ահավոր չափեր է ընդունել մալարիան մեր յերկրում, պարզվեց ինչքան աշխատանք է հարկավոր թափել այդ ուղղությամբ: Այդ պատճառով ել հարց եր բարձրացրած Յերևանում Տրոպիկական Ինստիտուտ բանալու մասին, վորը կունենար բոլոր գավառներում իր բաժանմունքներ—մալարիային կայաններ, մալարիայի դեմ մաքառելու համար: Սան. Համ. Բաժնին կից կազմակերպված Մալարիայի Հանձնաժողովը զբաղվեց այդ խնդրի ուսումնասիրությամբ: Նա պատրաստեց առաջադրած հարցը Տրոպին-ի, կայանների, մալարիայի թռուցիկ խմբերի բացման մասին մշակեց հատուկ, մանրամասն քարտեր մալարիկների ցուցակագրության համար:

1922 թվում Սան. Համ. Բաժնի կողմից բացվել են յերեք մալարիային կայաններ Արտաշատում, Դավալույում և Ջաննաթ-լույում, հաջողվեց ստանալ չինք Տրոպինի համար և նույն նպատակով գույքեր հավաքվեց:

1923 թ. Տրոպինը կայանների հետ կսկսի գործել և յեթե

## ԱՅԴ ԹՎԵՐԸ ԸՍՏ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՐՊ՝

| №№ ըստ կարգի | ԳԱՎԱՌՆԵՐ | ԲՈՒԺԱՐԱՆԱՅԻՆ ՑԵՎ. ՏԱՆԸ: Արական | ԲՈՒԺԱՐԱՆԱՅԻՆ ՑԵՎ. ՏԱՆԸ: Իգական | ԲՈՒԺԱՐԱՆԱՅԻՆ ՑԵՎ. ՏԱՆԸ: Ընդամենը | ՍՏԱՑԻՈՆԱՐ: Կար 11—22 թ. | ՍՏԱՑԻՈՆԱՐ: Նորից ընդունվել է | ՍՏԱՑԻՈՆԱՐ: Առողջացել է | ՍՏԱՑԻՈՆԱՐ: Մեռել է | ՍՏԱՑԻՈՆԱՐ: Մնացել է 11—23 թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Յերևան | 83.721 | 141.353 | 225.074 | 288 | 6.017 | 5.190 | 737 | 368 |
| 2. | Էջմիածին | 44.356 | 51.584 | 95.940 | 40 | 1.479 | 1.281 | 195 | 43 |
| 3. | Ալեքպոլ | 20.044 | 46.524 | 66.568 | 105 | 4.245 | 5.761 | 773 | 116 |
| 4. | Ղարաքիլիսա | 26.384 | 25.704 | 52.088 | 36 | 1.018 | 953 | 67 | 24 |
| 5. | Լոռի | 16.762 | 13.454 | 30.216 | 40 | 1.402 | 1.334 | 68 | 40 |
| 6. | Դիլիջան | 13.976 | 10.361 | 24.337 | 46 | 1.200 | 1.149 | 68 | 29 |
| 7. | Նոր-Բայազետ | 25.275 | 16.830 | 42.105 | 24 | 838 | 816 | 20 | 26 |
| 8. | Դարալագյազ | 16.822 | 13.504 | 24.326 | 4 | 40 | 40 | 3 | 1 |
| 9. | Զանգեզուր | 12.840 | 29.021 | 41.861 | 32 | 1.145 | 1.094 | 48 | 35 |
| 10. | Մեղրի | 7.470 | 11.576 | 19.046 | — | — | — | — | — |
| | Ընդամենը | 261.650 | 359.911 | 621.561 | 615 | 17.374 | 15.618 | 1.679 | 692 |



բավականին միջոցներ լինեն, մալարիայի դեմ պայքարելու գործը կստանա անհրաժեշտ զարգացումը։

1922 թ. ընթացքում ցուցակագրված է 98,895 մալարիկ։

Ըստ գավառների այդ թիվը բաժանվում է հետևյալ կերպ.

| | |
|---|---|
| Յերևան . . . . . . | 41,607 |
| Էջմիածին . . . . . | 15,676 |
| Ալեքպոլ . . . . . . | 4,304 |
| Ղարաքիլիսա . . . . | 8,760 |
| Լոռի . . . . . . . | 6,073 |
| Դիլիջան . . . . . . | 6,410 |
| Նոր-Բայազետ . . . . | 4,032 |
| Դարալագյազ . . . . | 3,753 |
| Զանգեզուր . . . . . | 6,020 |
| Մեղրի . . . . . . . | 2,260 |
| Ընդամենը | 98,895 |

Ի հարկե այս թվերը, ինչպես վերը մատնանշված եր, չեն համապատասխանում հիվանդների իրական թվին։ Ամբուլատորիաների զեկուցումներից յերևում է, վոր գավառում կան շրջաններ, ուր ամբողջ ժողովուրդը վարակված է մալարիայով։ Հարկավոր ե յեռանդուն միջոցներ Հայաստանը այդ չարիքից ազատելու համար։

Հարկավոր են միջոցներ խինին գնելու, ճահիճները չորացնելու համար և այլն։ 1922 թ. Սան. Համ. Բաժինը ստիպված եր կռվել նաև բծավոր, վորովայնային և վերադարձ տիֆերի հետ, վորը սակայն այնպիսի մեծ չափեր չընդունեց, ինչպես 1921 թ.։ Տիֆով հիվանդների շարժումը արտահայտված է հետևյալ թվերով։

| №№ ըստ կարգի | ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Յերևան | Էջմիածին | Ալեքպոլ | Ղարաքիլ. | Լոռի | Դիլիջան | Ն.Բայազ. | Դարալագ. | Զանգեզ. | Մեղրի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Բծավոր տիֆ | 55 | 12 | 56 | 103 | 95 | 132 | 142 | — | 78 | — |
| 2. | Վորովայն. » | 81 | 32 | 27 | 82 | 110 | 44 | 32 | 6 | 91 | — |
| 3. | Վերադարձ » | 115 | 24 | 32 | 72 | 85 | 105 | 71 | 115 | 217 | 76 |
| 4. | Անորոշ » | 10 | 136 | 10 | 33 | 178 | — | 96 | — | 33 | — |

Այդպիսով ամբողջ Հայաստանում յեղել են բծավոր տիֆով —673 հիվանդ, վերադարձ—906, անորոշ—491, իսկ ընդամենը—2,575:

Կռիվը այս հիվանդությունների դեմ ընթացել է նույն ուղիով, ինչ և անցյալ տարին:

Մյուս համաճարակային հիվանդություններից հարկավոր է արձանագրել նաև սիբիրախտի եպիզոոտիայի մի փոքրիկ բունկում, Դիլիջանի և Լոռու գավառներում, եպիզոոտիա, վորը անմիջապես լիկվիդացիայի յենթարկվեց առողջբաժինների կողմից ձեռք առած յեռանդուն միջոցների շնորհիվ: Միջոցներ են ձեռք առնըված նաև առանձնացնելու Հայաստանում գտնված բորոտներին (прокаженные):

Սան. Հաճ. Բաժինը ուշադրություն է դարձրել նաև վեներական հիվանդությունների վրա, վորոնք մեծ չափեր են ընդունել մեր յերկրում: Մեր վիճակագրական տվյալներով, այդ հիվանդների թիվը քիչ է—հավասար 6668: Սանվիճակագրության բոլոր թվերից թերևս սա ամենից քիչ է համապատասխանում իրականության, վորովհետև բնակչությունը, իր տգիտության պատճառով գերադասում է գաղտնի կերպով բժշկել այդ հիվանդությունները զանազան հեքիմների մոտ, քան դիմել մեր բուժարանները և հիվանդանոցները, վորտեղ նրանց հիվանդությունը կարող է հայտնի դառնալ ուրիշներին:

Ի դեպ պետք է ասել, վոր Սան-լուս յենթաբաժինը այդ հանգամանքի վրա, կռիվը ժողովրդի տգիտության և հեքիմության դեմ, դարձրել եր իր ուշադրությունը: Յեվ առողջբաժինները տեղերում վարում եյին Սան. Լուս. աշխատանք այդ ուղղությամբ: Սանլուս յենթաբաժինը այս տարի ևս, ինչպես և անցյալում, զբաղված եր բնակչության լայն խավերի մեջ գիտությունները տարածելով, վարակիչ հիվանդությունների, նրանց դեմ կռվելու միջոցների և սան. նախազգուշական՝ (հիվանդությունները կանխելու համար ձեռք առնվելիք) միջոցների մասին և այլն: Հրատարակչական գործը, անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով, կաղում եր:

Այդ բացը լրացված եր, Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. ստացված գրականությամբ, վորը բաժանված եր գավառներում: Սան. տեխնիկ. յենթաբաժինին առաջարկված են մշակել նախագծեր, Յերևանի, Եջմիածնի և Ղամարլուի շրջաններում ճահիճները չորացնելու համար, վոր և նրա կողմից կատարված եր: Այդ նախագծերը



կծառայեն վորպես հիմք ապագայում ապրվելիք հիգիե-տեխնիկական աշխատանքների:

1923 թ. պետք է հաստատուն կերպով կյանքի մեջ անցկացվեն՝

1. Սանիտարական նախազգուշական միջոցների հետագա զարգացումը. 2. Ծաղիկի պատվաստման կամպանիայի շարունակությունը. 3. Հայաստանում Սանիտ. վիճակագրության. 4. Սանիտ. Լուս. գործի զարգացումը և 5. Յեռանդուն պայքար և մղվելու Հայաստանի բնակչության աղետի —մալարիայի և վեներական հիվանդությունների, մասնավորապես սիֆիլիսի դեմ:

## ԲՈՒԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ

1921 և 1922 թ. թ. անցնում են յերկրի բուժական գործը քանակապես և վորակապես լավացնելու նշանի տակ: Աշխատանքի աներևակայելի ծանր պայմանները, վորոնք առաջացել եյին շնորհիվ համաճարակային հիվանդությունների՝ պարազիտային տիֆերի, դիզենտերիայի տարածման և աղքատության մեծամասնության մալարիայով վարակված լինելով պահանջում եյին Առժողկոմատից բոլոր ուժերի լարումը: Բուժական Բաժինը իր ամբողջ ուշադրությունը պետք է դարձներ տնտեսական և բժշկական կահավորումը լրացնելու, բավարար քանակությամբ դեղորայք և բժշկական գործիքներ ձեռք բերելու, հիվանդանոցների և բուժարանների կողմից զբաղված շենքերը վերանորոգելու և հարմարեցնելու, հիվանդանոցային շենքը ավարտելու և վերանորոգելու, հիվանդների սնունդը լավացնելու, բժշկական աշխատավորների դրությունը բարելավելու, միջին և ստորին բժշկական պերսոնալ պատրաստելու վրա:

Բուժական Բաժինը, հաշվետու շրջանում ղեկավարվելով Խորհրդային բժշկականության հիմնական սկզբունքով՝ միասնական, ձրի և վորակյալ բժշկական օգնությամբ, շարունակելով բժշկական գործի միացումը, միաժամանակ իր ուշադրությունը կենտրոնացրեց 2 կարևոր կողմերի վրա՝ աշխատավորներին բժշկական օգնություն ցույց տալու գործի զարգացման և այդ օգնության ժամանակակից ձևերի զարգացման վրա:

Մի շարք շրջաբերականների և կարգադրությունների միջոցով հաստատված և կյանքի մեջ եր անց կացրած այն սկզբունքը, վոր բոլոր Խորհրդային աշխատավորները, բանվորներն և կարմիր բանակայինները, նաև նրանց ընտանիքի այն անդամ-

ները, վորոնք գտնվում են իրենց անմիջական խնամքի տակ, այլ և աշակերտները, գործազուրկները և քաղաքների ու գյուղերի ամենաչքավոր քաղաքացիները պետք է օգտվեն ձրի բժշկական օգնությամբ։

Մեծ ջանքերով, վորոնք կլանեցին Առժողկոմատի համարյա բոլոր միջոցները, բուժական բաժնին հաջողվեց կազմակերպել մինչև 2200 քաղաքացիական և 1230 զինվորական մահճակալ, հաստատել քաղաքային բուժարանների և գյուղական բժշկակայանների ցանց, կազմակերպել բժշկական օգնություն չքավոր հիվանդներին իրենց տան մեջ, պատրաստել մինիմում թվով մահճակալներ այս կամ այն եպիդեմիայի ծագման դեպքում կռվելու համար, կազմակերպել գավառական կենտրոններում մահճակալներ մասնագիտական բժշկական օգնություն ցույց տալու համար, ինչպես վիրաբուժական, մանկաբարձա-գինեկոլոգիական, աչքի, վեներական, տերապևտական, մանկական և ատամնաբուժական, հիմնել քաղաքային բուժարաններին կից շտապ օգնություն և բժիշկների հերթապահություն այդ օգնությունը ցույց տալու համար։

Քաղաքային և գավառական բուժարաններում ցույց տվող բժշկական օգնությունը նույնպես, ըստ հնարավորության, կազմակերպվել է վորակյալ օգնության սկզբունքով, բուժությունը կատարելով մասնագետ բժիշկների կողմից։

Հայաստանում գոյություն ունեցող պետական Սանատորիան Դիլիջանում հիմնովին վերանորոգված է և լավ կահավորված, մահճակալների թիվը նրա մեջ 30-ից բարձրացված է մինչև 75։

Հիվանդների սնունդը Սանատորիայում ավելի քան գոհացուցիչ է,

1922 թ. ընթացքում Սանատորիայում յեղել են 250 հիվանդ, վորոնցից ամեն մեկը առանձին անց է կացրել այնտեղ միջին թվով 2 ամիս։ Սանատորիայում բուժվելու հետևանքները յերբեմն ապշեցուցիչ եյին լինում՝ արյան պակասություն ունեցող հիվանդները, ջղային հիվանդները, ծանր վարակիչ հիվանդություններից հետո հյուծվածները, թոքախտավորները առաջին շրջանում, 1 և կես-յերկու ամիս Սանատորիայում մնալուց հետո ավելանում եյին քաշի մեջ 10—25 ֆունտ։

Ատամնաբուժական գործի դրությունը պահանջում է հետա-



գա զարգացումը, թե քանակական և թե վորակական տեսակետից։

Գոյություն ունեցող ատամնաբուժարաններից լավ հիմքերի վրա յեն դրված միայն Ալեք-Պոլի և Յերևանի բուժարանները։ Վերջինում աշխատում են 3 ատամնաբույժ և մասնագետ տեխնիկ։ Առողջապահության Կոմիսարիատի հերթական հարցածային խնդիրն է հանդիսանում ատամնաբուժարանների բացումը բոլոր գոյություն ունեցող բուժարանների և գյուղական բըժշկակայանների կից և նրանց կանոնավոր կահավորումը։

Այդ ծրագիրը իրագործելու համար մեծ արգելք են ներկայացնում ատամնաբույժների սակավությունը Հայաստանում և գլխավորապես հատուկ կահավորման պարագաների բացակայությունը։ 1922 թ. ընթացքում Բուժական Բաժինը առանձնապես ուշադրություն է դարձրել բուժկայանները (Ֆելդշերական կայաններ) լիկվիդացիայի յենթարկելու գործի վրա փոխարինելով նրանց բժշկակայաններով, վորպիսի նպատակը համարյա լրիվին իրագործված է։

Առ մեկը հունվարի 1922 թ. Բուժական Բաժինը ուներ 81 Բժշկա—Սանիտարական հիմնարկություն, վորոնց թվում 37 հիվանդանոց (17 քաղաքային և 20 գյուղական), 22 բժշկական կայան, 10 կենտրոնական բուժարան, 4 ատամնաբուժարան, 7 տանը բժշկական օգնություն ցույց տալու կայան։ Մահճակալների ընդհանուր գումարն է 1615, վորոնց թվում՝

| | |
|---|---|
| Տերապևտական . . . | 715 վորոնցից 40 սանատորիայում |
| Վիրաբուժական . . . | 150 |
| Մանկ. գինեկոլ. . . . | 90 |
| Մանկական . . . . | 320 |
| Վեներական . . . . | 75 |
| Աչքի . . . . . . . | 40 |
| Հոգեկան . . . . . | 25 |
| Սուր վարակիչ . . | 200 |

Հիվանդությունների կողմից յերկրի ապահովման և նրա տնտեսական քաղաքականության անցնելու պատճառով, մահճակալների թիվը կրճատված եր և հասցրված մինչև 1335 առ 1-ն հուլիսի։ Բայց դրանով գործը կանգ չի առնում։ Նոր տնտեսական քաղաքականությունը ստիպում է ավելի ևս կրճատել և մահճակալների թիվը հասցրվում է մինչև 1215, վորոնցից համ-

սարիատը վերցնում է իր մատակարարման 300-ը, մյուսները հանձնելով տեղական միջոցների:

Այսպիսով առ 1-ը հունվարի 1923 թ. Բուժ—Բաժնի մնա մնում է

| | |
|---|---|
| Տերապևտական | 540 |
| Վիրաբուժական | 90 |
| Մանկա-գինեկոլ | 75 |
| Աչքի | 40 |
| Վեներական | 75 |
| Մանկական | 220 |
| Սուր վարակիչ | 150 |

Բուժական Բաժինը հատուկ ուշադրություն է դարձրել հիվանդների սնունդը ուժեղացնելու վրա և այդ ուղղությամբ բավականին հաջողություն է ունեցել:

Բուժական Բաժինը կյանքի մեջ է անցկացրել նաև Հանրապետության աշխատավորության բժշկական օգնություն բոլոր տեսակներով ապահովելու ծրագիրը: Ստորին պերսոնալի վորակման համար դպրոց կազմակերպելով, հաջողվեց 1922 թ. ապահովել բուժական հիմնարկությունները մեծ թվով նոր սանիտարներով:

Բժշկական օգնություն արձակուրդի, նպաստի և այլ կարիք զգացող խորհրդային ծառայողներին ու բանվորներին քննության յենթարկելու, կոնտրոլի և էկսպերտիզացիայի համար, բոլոր Առողջբաժիններին կից հիմնված էին բժշկական հանձնաժողովներ, վորոշ դեպքերում Կոմկուսի և Պրոֆմիության ներկայացուցիչների անպայման մասնակցությամբ:

Նույնպիսի հանձնաժողով գոյություն ունի Առժողկոմատի առընթեր առանձին կարեվոր դեպքերի և մեր սանատորիայում կամ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. կուրորտներում կլիմայական բժշկության կարիք զգացողների բժշկական քննության յենթարկելու համար:

Հայաստանում պրոթեզային արհեստանոց չլինելու պատճառով, այս տարի Մոսկվա է ուղարկված 42 հաշմանդամ, պրոթեզ ստանալու համար:

Բուժական Բաժինը զբաղվել է նաև տեղական Առողջբաժինների բուժյենթաբաժինների աշխատանքի հաշվառմամբ և նրանց ղեկավարելով հրահանգների միջոցով, այլ և ըստ հնարավորության ժամանակակից գիտական բժշկության ու բուժհիմ-



նարկներում բժշկական օգնության գործը լավացնելու հարցերի մշակման:

Նոյեմբերի կեսից պետական և մասնավոր հիմնարկությունների և ձեռնարկությունների պաշտոնյաների և բանվորների պետական ապահովագրության կարգը մտցնելուց հետո, Առժողկոմատը՝ համաձայն Ապահովագրական Խորհրդի հետ կնքված պայմանագրի, իր վրա վերցրեց ապահովագրված բանվորներին և պաշտոնյաներին ամեն տեսակի բժշկական օգնություն ցույց տալու գործը:

Ներկայումս դեռ ևս տարվում է կազմակերպչական աշխատանք և Ապահովագրական Խորհուրդը ունի բաժանմունքներ միմիայն 2 քաղաքում — Յերևանում և Ալեքպոլում:

Չնայած ապահովագրական մուծանքների չնչին գումարին, վորը կազմում է Առժողկոմատի ծախսերի 5-8 տոկոսը, միջոցներ են ձեռք առնված ապահովագրված բանվորներին և ծառայողներին առաջին հերթին ամեն տեսակի բժշկական օգնությամբ ապահովելու համար:

Յերևանի Կենտրոնական Բուժարանում և ատամնաբուժարանում գործի դրությունը լավացնելու հետ զուգահեռաբար, (վերջինս օգնություն է ցույց տալիս բացառապես ապահովագրվածներին ամեն օր ընդունելով մինչև 60 հիվանդ) առանձին ուշադրություն է դարձված ապահովագրվածներին տանը բժշկական օգնություն ցույց տալու վրա: Այդ նպատակով գոյություն ունեցող շրջանային բժիշկներին ավելացրած են 15 մասնագետ բժիշկներ, վորոնք Առժողկոմատից ստանալով հատուկ վարձատրություն, առաջին իսկ պահանջին պարտավոր են օգնություն հասցնել բոլոր նրանում կարիք զգացողներին:

Ապահովագրական Խորհրդի գործունեության դաշտը լայնացնելու հետևանքով, յենթադրվում է նույնը իրագործել մյուս բոլոր քաղաքներում և գավառներում: Յենթադրվում է Բուժական Բաժնին առընթեր հիմնել հատուկ օրգան, վորը կզբաղվեր ապահովագրվածներին բժշկական օգնություն ցույց տալու գործը լավացնելու հետ կապված հարցերով: Հունիս ամսից, մի քանի քաղաքային բուժարաններում և հիվանդանոցներում սկսվեց վերցվել չնչին վճար ունևոր քաղաքացիներից, բայց այդպիսի անձանց թիվը շատ քիչ լինելու պատճառով գործնական արդյունքներ չեն ստացվել:

Բուժական Բաժինը, չնայած նոր տնտեսական քաղաքականության և յերկրի ծանր դրությանը, հույս ունի, վոր Բժշկա-Սանիտարական գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար իրենց արյունով շահագրգռված հանրապետության բոլոր աշխատավորների ուժերով և կառավարության ոժանդակությամբ, կհաջողվի պահպանել նվաճած դիրքերը և ամուր հիմքերի վրա դնել յերկրի Բժշկա-Սանիտարական գործը:

## ԴԵՂԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՅԵՆԹԱԲԱԺԻՆ

Դեղատների ազգայնացման մասին հրատարակված Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի դեկրետով, առաջին քայլն եր արված դեպի դեղարանային գործի վերակազմությունը: Ըստ այն դեկրետի՝ ամբողջ դեղարանային գործը կենտրոնանում է Առժողկոմատում և նրա օրգաններում, ու դեղատները չարաշահական խանութներից դառնում են պետական հիմնարկություններ: Այսպիսով յենթաբաժնի առաջ խնդիր է դրվում ի մի հավաքել և հաշվի առնել նախկին կառավարության բազմաթիվ վարչություններում ցիր ու ցան յեղած դեղորայքը և այն բոլոր բժշկական գույքը, վոր ազգայնացրված եր մասնավոր դեղատներից և դեղապահեստներից: Այդ աշխատանքին զուգընթաց հարկավոր եր, ըստ հնարավորության, լավ հիմքերի վրա դնել ամբողջ գործը, ինչպես այդ պահանջում եյին գիտությունը և բնակչության շահերը, համաձայնեցնելով դեղագործական ոգնությունը ընդհանուր բուժականի հետ: Այդ աշխատանքով եր զբաղված յենթաբաժինը իր գոյության առաջին ամիսներին: Դեղարանային գործի կենտրոնացումից հետո, բաժնի հերթական խնդիրն եր հանդիսանում դեղորայքի մատակարարումը, բաշխումը և վերահսկողությունը: Հայաստանը դեղորայքով մատակարարելու հարցը համեմատաբար բարեհաջող լուծում ստացավ շնորհիվ միայն Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Առժողկոմատի պարբերական ոգնությանը, այնպես վոր մեզ մնացել եր միայն ամենահրատապ պակասությունները լրացնել ու հոգալ, վորպիսին և կատարվում եր ձեռք՝ բերելով անհրաժեշտ պարագաները հարեվան հանրապետությունների Առժողկոմատներից: Բաշխման հիմք ծառայեցին բնակչության, հիվանդանոցների մահճակալների և բուժարանների այցելությունների քանակության մասին ունեցած թվական տվյալները. նկատի եյին առնված և յուրաքանչյուր վայրի սպեցիֆիկ պայմանները: Դեղատների և դեղապահեստների



հիվանդանոցների, բուժարանների և բժշկակայանների համար մշակված եյին դրամական և նյութական հաշվետվության միասնական ձևեր: Վորակյալ աշխատավորների լիակատար բացակայության պատճառով հնարավոր չեղավ անհրաժեշտ չափով իրագործելու հրահանգչական գործը և վերահսկողությունը, բայց հրահանգներ ուղարկվում եյին գրավոր կերպով բոլոր յենթակա հիմնարկություններին: Նոր տնտեսական քաղաքականությունը համարյա վոչինչ չփոխեց դեղորայքի բաշխման գործի մեջ, վորովհետև բնակչության անվճարունակության հետևանքով դեղատների ոգուտը այնքան չնչին է լինում, վոր բնակչության 90 տոկոսը անպայմանորեն ոգտվում են ձրի դեղորայքով, վորի հետևանքով բոլոր դեղատները, բացառությամբ մեկի, մնացին պետական մատակարարման մեջ:

1922 թվի ընթացքում պատրաստված է ընդամենը 199,402 դեղատոմս, վորից վճարովի յեն 46,685 հատ, ստացված դեղագումարն է 21, 120 ռուբլի, իսկ դեղորայք կենտրոնական դեղապահեստից բաց է թողված 82,046 ռուբլու 60 կոպ.: Այսպիսով 1922 թվի ընթացքում ձրի դեղորայք բաց թողնելու համար, դեռ չհաշված ուրիշ ծախքերը, Առժողկոմատը ծախսել է 60,925 ռուբլի 40 կոպ. վոսկով, վորպիսի գումարը շատ անգամ գերազանցում է այն նախահաշիվները, վորոնց 40,000 ռուբ. միայն անվանապես տրամադրված եր դեղամատակարարման գործի համար, իսկ իրոք ամբողջ 1922 թ. ընթացքում ստացված է 5,000 ռուբլի միայն: Ի նկատի ունենալով, վոր Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Առժողկոմատը պարտք բաց է թողնելու մեզ բժշկական գույք միայն 400 մահճակալի համար, մյուս 935 մահճակալի կահավորման և բնակչության դեղորայքով մատակարարելու գործը ամբողջովին ընկնում է Առժողկոմատի վրա: Այսպիսով, հանրապետության հետագայում բժշկական իրերով և դեղորայքով մատակարարելու գործը շատ սուր կերպարանք է ստանում: 1922 թ. ընթացքում միջոցներ են ձեռք առնվում բժշկական բույսեր հավաքելու համար, վորոնցով համեմատաբար հարուստ է Հայաստանը և հույս կա, վոր հավաքված քանակությունից պատրաստված շատ սահմանափակ տեսակներով դեղորայք կբավարարեն այդ դեղորայքի տարեկան պահանջը:

# ՄԱՅՐՈՒԹՅԱՆ, ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ 1921—1922 Թ. Թ.

*Բաժինը կազմակերպված է 1921 թ. հունիս ամսին Երևանում, Առժողկոմատին կից։ Ունի 2 յենթաբաժին.—Մայրության և Մանկության պաշտպանության և 2. Յերեխաների առողջապահության պաշտպանության և. 5 Յենթաբաժիններ գավառներում՝ Յերևանի, Ալեքպոլի, Էջմիածնի, Լոռու և Ղարաքիլիսայի։*

*Հայկական տխուր իրականությունը, խնամքից զուրկ յերեխաների մեծ քանակը տիրաբար պահանջում են բաժնից ինտենսիվ աշխատանք, բաժինը իր գործունեյության հենց սկզբից տալով յելակետ ունենալով էր վոր ծրագրեց ունենալ «Մոր և Մանկան Տուն» «Ծծկեր Մանկիկի Տուն», «Մսուրի», «Ծծկեր Մանուկների Կոնսուլտացիայի Կաթնախոհանոցի հետ» նման հիմնարկների լայն ցանց, սակայն նյութական միջոցների սակավության պատճառով, մանավանդ նոր տնտեսական քաղաքականության անցնելու հետևանքով, այդ ծրագրի լրիվ իրագործումը հաջողության չհանդիպեց։ Բաժինը Յերևանում ծծկեր մանուկների համար ունի մի կոնսուլտացիա կաթնախոհանոց։ Որեկան կոնսուլտացիա դիմում են մինչև 80 մայրեր խորհուրդներ ստանալու համար։ Կոնսուլտացիա հաճախում են մինչև 2 տարեկան հասակ ունեցող մանուկները։*

*Կոնսուլտացիան տարվում է Բյուդենի ձևով։ Յերեխային լավ խնամող մայրերին տրվում է պրեմիա, սապոն և յերեխաների համար զգեստներ։ Կաթնախոհանոցը բաց է թողնում որեկան կաթ մինչև 235 յերեխաների։ Կոնսուլտացիան մայրերի վրա կուլտուրական ազդեցություն գործելու և յերեխաների առողջության պահպանման տեսակետից ավել է բավարար հետևանքներ։ Կաթնախոհանոցի կազմակերպումն ու կահավորումը չի վերջացրած, վորովհետև կաթը վերաթորման յենթարկելու համար անհրաժեշտ ապակեղենը, խցաները և այլն դժվար է ճարել։*

*Կոնսուլտացիան բացի կառավարության օժանդակությունից տնտեսականորեն օժանդակվում էր նաև անգլիական կոմիտեյի միջոցով, հայկական արտասահմանյան գաղութների կողմից, վորոնք ուղարկում էյին խտացրած կաթ, սպիտակ հաց, սապոն և յերեխաների հագուստեղեն։ Թարմ կաթ բաց էր թողնում Փործկոմը, կաթը բաժանվում էր փոքր հասակ ունեցող մանուկներին, պահանջին համապատասխան մուծելուց հետո։*



*Յերևանի ծծկեր մանուկների տունը խնամում է ընկեցիկ մայրերից զրկված և վորբ յերեխաներին։ Բոլոր այս յերեխաները ընդունվելու ժամանակ լղար են լինում, հյուծված, չունեցած վոչ խնամք, վոչ էլ համապատասխան սնունդ։ Այս հանգամանքը շաղկապվելով հիմնարկի տված վոչ բարեհաջող սնուցման հետ առեղծում է ծծկեր մանուկների տան մեջ նրանց մահացության մեծ տոկոս։*

*Ծծմայրերը, վոր մեծ մասամբ ծառայության են մտնում իրենց ծծկեր յերեխաների հետ, մինչ այդ ունեցած նյութական զրկվածության և պակաս սնունդ ստացած լինելու հետևանքով, հազիվ են կարողանում բավարարել կաթով իրենց յերեխաներին։ Արհեստական կերակրելը, սնուցանումը դեռ ևս չի հասցրած իր բարձրության կահավորված կաթնախոհանոցի բացակայության պատճառով։*

*Ծծմայրերի անկուլտուրականությունը, պատրաստված միջին բժշկական պերսոնալի բացակայությունը անչափ խանգարում են գործի հաջողությանը։ Ծծմայրների սնունդը լիովին բավարար չէ, նրանց անհրաժեշտ է ուժեղացրած սնունդ, վոր անհնար է կանոնավոր տալ։ Բաժինը կաթնաֆերմաներ չունի։ «Ծծկեր Մանկական Տան» համար ձեռք բերած մի քանի կովերը անհրաժեշտ չափով չեն բավարարում ունեցած պահանջը։ Անհրաժեշտ է որինակելի հիմքերի վրա ստեղծել կաթնաֆերմա, մանկական հիվանդանոցները և հիմնարկները կաթով բավարարելու համար։*

*Գավառական յենթաբաժինները դեռ ևս թույլ են աշխատում, այդ բոլոր յենթաբաժիններին կից անվանապես գոյություն ունի ծծկեր յերեխաների կոնսուլտացիաներ. սակայն նրանք քիչ հաջողություններ ունեն, վորովհետև անկուլտուր մայրերին գրավող կաթ չեն բաժանում։*

*Բացի այդ, բժիշկները, վոր ղեկավարում են այդ կոնսուլտացիաների աշխատանքները, միաժամանակ մի քանի պաշտոն ունենալու հետևանքով անչափ են ծանրաբեռնված աշխատանքով, վոր բնականաբար չեն կարողանում բավական ժամանակ նվիրվել այս գործին։ Բնակարանների բացակայությունն էլ դանդաղեցնում է գործը։*

*Հղի և կերակրող կանանց առողջության և աշխատանքի*

պաշտպանության համար բաժնի միջնորդությամբ հրատարակվել և բաշխվել են համապատասխան դեկրետներ: *)

Ճանաչված եր «Մսուր»-ներ և մանուկների և մայրերի կոնսուլտացիաներ հիմնելու անհրաժեշտությունը և այդ դեկրետի հիման վրա Հայաստանում բացված էյին կոնսուլտացիաներ և Մսուր:

Միաժամանակ հատուկ դեկրետ եր հրատարակված Առողջկոմատի և Սոցապահովկոմատի կողմից հղի կանանց սոցիալական ապահովության, հղիության ժամանակ նրանց արձակուրդ տալու և ծննդաբերությունից հետո տնտեսապես օժանդակելու մասին:

Բաժինը Հայաստանում, մանավանդ նրա գավառներում, նկատում է մեծ պակասություն գիտականորեն ցույց տրվող մանկաբարձական օգնության:

Անհրաժեշտ է լայնացնել ծննդաբերության ժամանակ օգնություն հասցնող հիմնարկների ցանցը, նրանց կից կազմակերպել հղի կանանց և ծծմայրերի հանգստացող կացարաններ: Անհրաժեշտ են մանկաբարձական դպրոցներ, անհրաժեշտ է ապահովել բոլոր բժշկակայանները մանկաբարձուհիներով: Հայաստանի համար բնորոշ է այն յերեվույթը, վոր կան բազմաթիվ վայրեր, վոր կարոտ են հասարակական խնամքին:

Լուսժողկոմատին յենթակա պետական մանկատներում խնամվում են 5,000 յերեխաներ, վորոնք դասավորված են հետևյալ ձևով, Յերևանի շրջան—1,100, Ղամարլույի—1,300, Աշտարակի—1,200, Դիլիջանի և Ղարաքիլիսայի միասին 500, Զանգեզուրի—500, Դարալագյազի 200 և Ն. Բայազետի 200:

Մանկատների շենքերի անհարմարությունը—նեղությունը, վայրերի խիտ դասավորված լինելը և վաննաների պակասությունը անբարեհաջող սանիտարական պայմանները, նյութական միջոցների սակավությունը, խնամողների վոչ բավարար չափով փորձառությունը, և ամենագլխավորը, կոլեկտորների, դաստիարակների բացակայությունը դժվարացնում են պայքարը տրախոմայի, քոսի և պարշայի դեմ:

Հյուծվածության, լրիվ սնունդ չստանալու և պակաս բան-

*) Այդ դեկրետներով սոցմաքսա-ազգային հիմնարկություններով տառապող յերեխաների համար հատուկ ֆոնդ եր առանձնացված, վոր և սկսեց բաշխվել յերեխաներին:



ջարեղեն և պտուղներ կերակուրների մեջ ունենալու հետևանքով, միաժամանակ մանկատներում պատահում է ստամատիտի դեպքեր:

Բաժինը ձեռնարկել է բոլոր յերեխաներին բժշկական քննության յենթարկելու նրանց առողջության դրությունը վորոշելու համար:

Այդ գործը դեռ ևս վերջացրած չէ, սակայն մի քանի տվյալներից պարզվում է, վոր յերեխաների մեջ պատահում է պալարախտ:

Բժշկական օգնությունը մանկատներում և դպրոցներում բավարար չէ, պետք է ասել, վոր այդ օգնությունը ցույց տվող բժիշկները միաժամանակ վարում են և այլ պաշտոններ: Յերևանի 10 մանկատները, 1250 յերեխաներով, միայն մի բժիշկ ունեն: Չկան մասնագետներ աչքի, ատամի և ականջի: 2 դըպրոցա-սանիտարական բժիշկներ կան Յերևանի 4000 աշակերտների համար, բժշկումն էլ նրանք են կատարում: Անհրաժեշտ է աշակերտների համար առանձին ամբուլատորիաներ կազմակերպել հատուկ բաժանմունքներով: Շրջաններում դպրոցների սանիտարական վիճակը շենքերը, կահավորման տեսակետից, անհրաժեշտ բարձրության վրա չի գտնվում: Դասարաններում իրար փոխանակելով օրեկան 2—3 նվագ պարապմունքներ են կատարում: Նստարանները անբավարար են, խախուտ, նրստվածքը նրանց վրա ուղիղ չէ, վորը և կարող է նպաստել վողնաշարի ծռվելուն և տեսողության թուլանալուն: Մարմնամարզության ուսուցիչներ չունենալու պատճառով, շատ տեղեր մարմնամարզություն չի ավանդվում: Արատավոր յերեխաների համար դեռ ևս համապատասխան հիմնարկություններ չեն ստեղծված ուստի և նրանց դպրոցներից և մանկատներից զատելը հնարավոր չէ կատարել: Միջոցներ են ձեռք առնված առաջին հերթին— առանձնացնել խուլ և համրերին, կույրերին, անդամալույծներին և ընկնավորներին: Ինչ վերաբերվում է ընդհանրապես յերեխաների համար բժշկական հիմնարկներ ունենալուն, բաժինը ծրագրել է մեծացնել հատուկ մանկական հիվանդանոցների թիվը, կազմակերպել ինքնուրույն գործող յերեխաների ամբուլատորիաներ բոլոր մասնագիտություններով: Բաժնի կուլտուր-լուսավորչական աշխատանքը արտահայտված է թերթիկներ, պլակատներ և բրոշյուրներ հրատարակելու, մամուլի մեջ հոդվածներ զետեղելու, մայրության և ման-

կության և յերեխաների պաշտպանության հարցերի պարզաբանման համար հանրամատչելի դասախոսություններ կազմակերպելու մեջ։ Այսպես կոնսուլտացիայում զրույցներ են կատարվում մայրերի հետ յերեխաներին խնամելու, կերակրելու և այլ հարցերի մասին։ Ծրագրված է մոտիկ ապագայում կոնսուլտացիային կից կազմակերպել սիստեմատիկ դասընթացքներ մայրերի համար և բաժնի ցուցահանդեսը պատրաստել։ Մինչև վերջին ժամանակներս բաժնիս հիմնարկների համար աշխատակիցներ, կազմակերպիչներ և հրահանգիչներ պատրաստելու համար անհրաժեշտ դրականության սուր պահանջ էր զգացվում։ Բաժնի աշխատանքները կաղում են բացի նյութական միջոցների սղությունից նաև մասնագետ աշխատակիցների պակասությամբ, չկան պատրաստված դայակներ, առողջապահության և հոգեկան հիվանդությունների բժիշկներ, բժիշկներ, վոր ծանոթ լինեն ֆիզիքական դաստիարակության և մանուկների ծծկերության շրջանի մանկական պակասությունների հետ։

Բաժինը միջոցներ է ձեռք առնում ստեղծելու Յերևանի Համալսարանի Բժշկական Ֆակուլտետին կից մանկատածության կաֆեդրա։ Մայրության և Մանկության և յերեխաների առողջապահության Բաժնի բոլոր հիմնարկներում, Մսուրներում, Կաթնախոհանոցներում, Ծծկեր Մանուկների Տներում, մեծ պակաս է զգացվում պատրաստված միջին բժշկական պերսոնալի։ Բաժինը իր մոտ ապագայում իրագործելիք ինդիրներից մեկն է համարում բանվորների և պետական ծառայողների մանուկների համար բաց մսուրներ կազմակերպելը, Բաժինին ընդհանրապես գտնում է առավել ձեռնտու ունենալ բաց հիմնարկներ, քանի վոր նրանք ավելի օգտակար են ու մատչելի։ Ինչ վերաբերում է Բաժնի կազմավորման, անհրաժեշտ է նկատված, վոր նա խստորեն բաժանված լինի յերկու ինքնուրույն գործող բաժիններ 1. Մայրության և Մանկության պաշտպանության, վոր պաշտպանելու և խնամելու յե մանուկներին մինչև 3 տարեկան հասակը և 2. յերեխաների և պատանիների առողջության և պաշտպանության Բաժնի, վոր հսկելու յե 3 տարեկանից բարձր հասակ ունեցող յերեխաների առողջությանը։ Ինչպես ցույց են տալիս մյուս խորհրդային պետությունների փորձերը և հատուկ Համագումարում դուրս բերված բանաձևերը, այդ յերկու յենթաբաժինների միացումը վնասում է գործին, վորովհետև նա անխուսափելիորեն առաջ է բերում այն, վոր մեկ Բաժինը միաց-



նում, խլացնում է մյուսի գործունեությունը։ Բաժինը իր գործունեության ամենամեծ պակասություններից մեկն է համարում այն, վոր նա լրիվ տեղեկություններ չունի, վիճակագրական տեղեկություններ յերեխաների ծնվելու, հիվանդության և մահացության մասին, միաժամանակ հույս ունի, վոր այս պակասը լրացվի, յերբ ի հայտ կբերվեն համահայաստանյան վիճակագրության արդյունքները։ Բաժինը գիտակցեց, վոր անհրաժեշտ է Լուսժողկոմատի հետ կոնտակտ, միաձայն աշխատանք տանել և այս ուղղությամբ միջավարչական խորհրդածու որգան—յերեխաների առողջության պաշտպանության խորհուրդ հիմնելու համար նա մի շարք քայլեր կատարեց։ Բաժնին կից բժիշկներից և մանկավարժներից կազմված մի խորհրդածու որգան կազմակերպվեց։ Այս խորհրդակցությունների նպատակն է սերտ կապ ստեղծել բժիշկների և մանկավարժների մեջ և լուծել բժշկա—մանկավարժական հարցեր։ Ի վերջո Բաժինը ընդգծում է, վոր կյանքը, մանավանդ մեր հայկական իրականությունը հրամայորեն պահանջում է այս Բաժնի աշխատանքների շրջանակների լայնացում։ Բաժինը, չբավականանալով միայն յերեխաների առողջության պաշտպանությամբ, իր հսկողությունը և պաշտպանությունը տարածում է նաև յերեխաների կյանքի մյուս տխուր յերևույթների վրա, մանավանդ վոր մարմնի առողջությունը այնքան սերտ կապված է կյանքի մյուս պայմանների հետ։ Աշխատանքները տանելիս Բաժինը չի սահմանափակվում միայն հիմնարկներում խնամվող յերեխաներով, խնամքն ու հսկողությունը նա տարածում է նաև հիմնարկներից դուրս գտնվող յերեխաների վրա, առավել ևս վոր ներկայումս տիրող թե տնտեսական և թե բարոյական անբարեհաջող պայմանները յերեխաներին դայթակղության և փորձանքների յեն յենթարկում։

Մեծ ծավալ ստացած յերեխաների պոռնկությունը, մանուկների դեպի հանցագործություն մղվելը, ծեծը, նրանց մեծ աշխատանքներով ծանրաբեռնելը, փողոցի մանուկների հանցագործությունը, ահա այս ամենը մանկական ցավերն են, վոր Բաժնի, ինարկե նաև մի շարք այլ շահագրգռված հիմնարկությունների, հետազոտման և բուժման առարկան են դառնալու։

## ՌԱԶՄԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ

Հայաստանի խորհրդայնացման ժամանակին Ռազմա-Սանիտարական Վարչությունն, ինչպես և յերկրի մյուս վարչությունները, կատարյալ քայքայման վիճակի մեջ եր։

Փետրվարյան ավանտյուրան ընդհատեց Խորհրդային իշխանության դեպի Հանրապետության ռազմա-սանիտարական գործի վերակազմությունն ուղղված աշխատանքը։ Յեվ ավանտյուրայից հետո այդ վարչությունը Խորհրդային իշխանությունն ընդունեց ավելի վատ վիճակում, քան առաջին խորհրդայնացման ժամանակ։ Մինչդեռ յերկրի քաղաքական անցքերի անընդմեջ ընթացքը Հայկական Կարմիր Բանակի առաջ վորոշ անհետաձգելի կատարելիքներ եր դրել, իսկ Ռազմա-Սանիտարական վարչությունը անկարող գտնվելով անմիջականորեն Հայաստանի սանիտարական գործին վերաբերող խնդիրներին լիակատար լուծում տալ։

Գոյություն ունեցող զինվորական հիվանդանոցներն և լազարեթները կահավորման տեսակետից ամենավողորմելի վիճակի մեջ եյին գտնվում, անբավարար եյին իրենց ունեցած մահճակալները թվի տեսակետից և չեյին կարող բավարարել զորաբանակի կարիքները, կատարելապես բացակայում եր սանիտարական տրանսպորտը, վորն այնքան անհրաժեշտ է բանակին առհասարակ և մանավանդ ռազմական գործողությունների ժամանակ։ Վորակված բժշկական պերսոնալի պակասը հասնում եր բժիշկների վերաբերմամբ 30 և միջին կարգի պերսոնալի վերաբերմամբ 52 տոկոսի։ Զինվորական մասերը զուրկ եյին պահեստների կարգավորման անհրաժեշտ սանիտարական գույքից։ Մինչդեռ պահեստներում պահվող և բուժական հաստատություններում գտնվող գույքը մասամբ գողացված եր և մասամբ էլ շարունակվում եր վատնվել հենց նույն այդ պերսոնալի կողմից։ Այսպես, որինակ, Յերևանի զինվորական հիվանդանոցում, վորը 1,000 մահճակալի հասնող կահավորություն ուներ, 1920 թվի դեկտեմ-



բերից մինչև 1921 թվի ապրիլը վատնված է վոսկով մի քանի տասնյակ հազարի գույք։ Շնորհիվ Ռազմա-Սանիտարական Վարչության և իշխանության համապատասխան որգանների ձեռք առած միասնական խիստ միջոցներին, հանցավորների մասսայական ձերբակալումների և 1-ի գնդակահարման միջոցով հաջողվեց չարագործություններին վերջ դնել։ Այսպիսի քայքայման և դեմորալիզացիայի միջոցին Ռազմա-Սանիտարական բաժինը (զորաբանակի սան-մասը) հարկադրված եր այնուամենայնիվ լուծել իր առաջ դրված խնդիրները։ Բանակն սկսեց իր ռազմական գործողությունները Զանգեզուրի դեմ մալարիայի տեսակետից ամենից ավելի վտանգված վայրերում և բնական է, վոր հիվանդացումների հսկայական տոկոս եր տալիս։ Ռազմավայրերի բուժական պայմաններն ամենից ավելի կործանարար ազդեցություն էին թողնում ռուսական մասերի վրա (20-րդ դիվիզիա), ի-րանք հայկական մասերի հետ խառն եյին գործում։

Ռազմական գործողություններն սկսելու միջոցին հանրապետության սահմաններում կար ընդամենը 475 զինվորական մահճակալ, այն էլ կիսատար վիճակում։

Սանիտարական մասը ձեռք առավ ամեն տեսակի միջոցներ մահճակալների թիվը ավելացնելու համար և նրան հաջողվեց դրանց թիվը համարյա թե նախապատերազմականին, այն է 1235-ի, հասցնել։

Մալարիայի արդեն իսկ սկսվող սեզոնի պատճառով և Սանմասի տրամադրության տակ գտնվող քինայի չափազանց աննշան քանակը նկատի առնելով, Սանմասը, քինան տնտեսելու նպատակով, Բրիգադային լազարեթներից մեկը Դարաչիչագ փոխադրեց, նրա կահավորումը 200 մահճակալի հասցրեց և դրանով իսկ, առանց քինայի մեծաքանակ ծախսման, մալարիայի կլիմայական բուժման հնարավորություն ստեղծեց։

Դժբախտաբար, ստիպված ենք արձանագրել, վոր այդ լազարեթի նորմալ գործունեությունը արգելք եյին հանդիսանում զանազան կողմնակի հանգամանքներ, գլխավորապես փոխադրական միջոցների բացակայությունը, վոր անհրաժեշտ եյին լազարեթի կանոնավոր եվակուացիան և մթերքների հայթայթումը կազմակերպելու համար, լազարեթի աշխատանքներն ընդմիջում եյին. բայց չնայած այդ ամենին, լազարեթի նշանակությունն ու դերը այն մալարիական սեզոնում խիստ մեծ եյին։

Բավական է աչք գցել այն ժամանակվա հիվանդացումների

վիճակագրությունը, վորպեսզի հասկանանք, թե ինչ ծանր պայմաններում եր ընթանում Սանմասի աշխատանքը, այն Սանմասի, վորն ինչպես մենք տեսանք, պատրաստ չեր նույնիսկ նորմալ պայմաններում աշխատելու։

Մայիսից հիվանդ կարմիր բանակայինների և հրամանատարական կազմի ընդհանուր թիվը սկսում ե անընդհատ աճել և հուլիսին մեր բուժարաններից անցնում ե 2358 հիվանդ, իսկ օգոստոսին 2606 հիվանդ։ Բացի այդ՝ բազմաթիվ հիվանդներ մնում են զինվորական մասերում—բրիգադային վիրակապանոցներում, և զորամասային յերթևեկանոցներում (ОКОЛОДОК), բոլորին հիվանդանոց ընդունելու հնարավորություն չունենալու պատճառով։

Մայիսից մինչև հոկտեմբեր ներառյալ հիվանդանոցներից անցնող հիվանդների ընդհանուր թիվը հավասար եր 11,041 հոգու, վորից մալարիայի հաշվին 5747 հ., այսինքն $50^{0}/_{0}$ ավելին և գալիս։

Իսկ հիվանդների թիվը բանակում նույն ժամանակամիջոցում հավասար եր 18,010 հոգու, վորից մալարիայով հիվանդ եյին 10,804 հոգի։

Յեթե վերցնենք մեր բանակի այն ժամանակվա կազմն և հիվանդների թիվը կտեսնենք, վոր մեր բանակը հիվանդացել և ամբողջապես և նույնիսկ ամեն մեկը մեկ անգամից ավելի։

Բանակի նմանօրինակ գլխովին հիվանդացման դեպքում պարզ ե, վոր մահճակալների թիվը չպետք ե կարողանար նրան բավարարել և Բժշկա-Սանիտարական գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու մասին մտածելու հնարավորություն անգամ չըկար։ Ռազմա-Սանիտարական Վարչությունը ստիպված եր հիվանդների միայն ամենատարրական կարիքները հոգալ։ Մեր բուժարանները փաստորեն միայն եվակուացիոն կայանների դեր եյին կատարում, վորովհետև այն ժամանակ գոյություն ունեցող յուրաքանչյուր մահճակալին ամսական միջին հաշվով մոտ 10 հիվանդ եր ընկնում, այսինքն ամեն մի հիվանդ միայն մոտավորապես չորս օր եր օգտվում մահճակալից։

Իրերի այս վիճակը, քինայի բավարար քանակի բացակայության հետևանքով, կրկնապատիկ վատթար եր դառնում։ Քինան չեր բավարարում նույնիսկ բուժական ամենաանհրաժեշտ կարիքներին, իսկ նախազգուշացման մասին անգամ մըտածել չեր կարելի։ Քինա վոչ մի տեղից չեր կարելի ստանալ,



նույնիսկ Առժողկոմատի տրամադրության տակ չկար։ Իսկ ինչ մնացյալ դեղորայքին և վիրակապության պարագաներին ե վերաբերում՝ դրանցից բավականաչափ կար։

Բնական ե, վոր հիվանդների այդպիսի հսկայական չափերի հասնող շարժման դեպքում ինչպես զորամասերում, այնպես ել առհասարակ Սանմասի տրամադրության տակ սանիտարական տրանսպորտ չլինելու հանգամանքը ահագին դժվարություններ եր առաջացնում։

Հիվանդներին Յերևանից Եջմիածին կամ Դարաչիչագ փոխադրելու համար բեռնակիր ավտոմոբիլներ եյին գործածում. ավտոմոբիլներն ել յուրաքանչյուր անգամ մեծ դժվարությամբ եյին ձեռք գալիս՝ մեկ բենզին, մեկ շիներ, մեկ ել ավտոմոբիլ չլինելու պատճառով։

Յերկաթուղագծով եվակուացիա կատարելն ավելի հեշտ եր, վորովհետև այդ ժամանակ Սանմասը ՌԿՍ.-ից մի սանիտարական գնացք ստացավ, վորը կահավորված եր—ուներ թե բաղնիք և թե բոլոր այլ անհրաժեշտիքները։ Ռուսական մասերի հիվանդ և վիրավոր կարմիր բանակայիններին Թիֆլիս փոխադրելու և յերկաթուղագծի շուրջը կայացած զորամասերի սանիտարական կարիքները հոգալու գործում այդ սանիտարական գնացքը մեծ դեր և խաղացել։

Այսպես և հոգացել բանակի սանիտարական կարիքները մեր Ռազմա-Սանիտարական մասը իր գոյության ամենածանր օրերին։ Պատերազմական գործողությունների շրջանն անցնելուց և մալարիայի սեզոնը վերջանալուց հետո՝ վրա հասավ համեմատական հանգստի շրջան, վորը Ռազմա-Սանիտարական բաժինը օգտագործեց բանակի բժշկա-սանիտարական գործը բարձրացնելու նպատակով մի շարք անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար։

Այդ ժամանակամիջոցում տեղի ունեցավ զինվորական հիվանդանոցների և լազարեթների փոխադրումը դեպի իրենց մըշտական գործունեության վայրերը, սկսվեցին շենքերի վորոշ նորոգումներ։ Զինվորական մասերի բժշկական կայաններին անհրաժեշտ գույք տրամադրվեց։

Բայց այդ սանիտարական տրանսպորտի կազմակերպման և բժշկական պերսոնալ զորակոչի միջոցով գոյություն ունեցող բացը լրացնելու համար միջոցներ ձեռք առնվեցին։ Բոլոր այդ աշխատանքները կանգ առան շնորհիվ բանակի մինչև մեկ հա-

վաքական Բրիգադ դարձնելը կրճատելու և Բրիգադն էլ իր հերթին, թե ադմինիստրատիվ և թե սանիտարական տեսակետից ՌԿԱ.-յին յենթարկելու վերահաս կարգադրությամբ։

Բանակի կրճատման պլանի համաձայն, զինվորական բաժնի տրամադրության տակ մնացին Յերևանի զինվորական հիվանդանոցը, Ղարաքիլիսայի տեղական լազարեթը և Ռազմա-Սանիտարական գնացքը, բացի այդ Յերևան և Ալեքպոլ քաղաքների կայազորական ամբուլատորիաները և հավաքական Բրիգադի մեջ չմտնող այլ մանր զորամասերի կարիքների հոգացումը։ Այնուհետև 1922 թվի ամառը, բանակի հետագա կրճատման հետևանքով, Ռազմա-Սանիտարական բաժնի և նրա յենթահիմնարկների լիկվիդացիայի խնդիր ծագեց, վորն և ավարտվեց նույն 1922 թ. նոյեմբերը։

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ

Առողջկոմատը կազմակերպելու ժամանակ, նրա բոլոր բաժիններից, թվում եր, թե ամենանպաստավոր պայմաններում պիտի գտնվեր Ֆինանսական—Տնտեսական Բաժինը, քանի վոր յեթե նախկին կառավարությունից վորևե նյութական ժառանգություն եր թողնված, դա թողնված եր հիշյալ բաժնում։ Բայց գործին ուշադիր կերպով մոտենալը ցույց տվեց, վոր այդ Բաժնի դժբախտությունը հենց կայանում է նրա ստացած ժառանգության մեջ։ Քանի վոր մինչև Հայաստանի Խորհրդայնացումը Ֆինանսական—տնտեսական բաժնում մի այնպիսի քաոս եր տիրում, վոր անհրաժեշտ եր ուժերի ստանձնահատուկ լարումն, գործին լավ ծանոթություն, անհրաժեշտ եր հատուկ աչալրջություն և զգուշություն հայտնաբերել նոր աշխատավորների ընդունելության ժամանակ, վորպեսզի հնարավորություն չտրվի մութ տարրերին ոգտվելու անցողական մոմենտից և հափշտակելու ժողովրդական գույքը։

Կրկնում ենք, Խնամատարության Մինիստրության ֆինանսական—տնտեսական ամբողջ գործը գտնվում եր ամենախառն վիճակի մեջ՝ բացարձակապես վոչ մի հաշիվ չեր պահվում տնտեսական իրերի, հիվանդանոցային գույքի համար, ինչպես նաև դրամական միջոցների ու հիվանդանոցների մթերքների շրջանառության համար։ Հիվանդանոցներում գտնվող հազվագյուտ, այսպես կոչված «ինվենտարը», կամ «գույքի» մատյաններ, ան-



ճշտապահ կերպով վարած լինելու հետևանքով փաստաթղթերի արժեք չեյին ներկայացնում։

Մթերքների մատյանները հիվանդանոցներում ել ավելի հազվագյուտ եյին և նույնպես անավարտ բնույթ եյին կրում։ Կանխավճար—գումարները, վոր ստանում եյին հիվանդանոցների վարիչները հիվանդները պահելու համար հազվագյուտ դեպքում եյին գրվում համապատասխան մատյաններում (քանի վոր մեծ մասամբ նման մատյաններ չկային), իսկ յեթե գրվում ել եյին նույնպես վոչ ճշտապահությամբ, ինչպես նաև գույքը և կահավորման այլ իրեր։

Պարբերական վերստուգությունները, թռուցիկ ստուգումներ այդ բոլորի համար շատ քիչ եյին կատարվում, իսկ յեթե ստուգումները տեղի եյին ունենում, նրանք վոչ մի շոշափելի արդյունք չեյին տալիս։ Ընդհանուր առմամբ հաշվետվության գործը ծայր աստիճան վատ եր դրված։ Բայց դա դեռ բոլորը չէ։ Նույնչափ վատ եյին դրված հիվանդներին պահելու, հիվանդանոցները կահավորելու և վերջապես հենց հիվանդանոցային շենքերի գործերը։ Այսպես որինակ՝ հիվանդները վատ եյին կերակրվում քանի վոր հիվանդանոցների համար համապետական մասշտաբով պլանային գնումներ չեյին կատարվում։ Ճիշտ է, գոյություն ունեյին թե իրերի և թե մթերքների պահեստներ, բայց այդ տեղից հիվանդանոցները մատակարարում եյին միայն ձրիապես կամ ամերիկացիներից ու անգլիացիներից ձեռք բերած միատեսակ բնույթ կրող մթերքներով, այն է՝ խտացրած կաթ, շաքար, բրինձ ու լոբի և ուրիշ վոչինչ։

Հիվանդանոցները կահավորված եյին ել ավելի վատ, քան վոր այդ ուղղությամբ նոր գնումներ չեյին կատարում, իսկ ցարական կառավարությունից մնացած պաշարը սպառվելու մոտ եր։ Հիվանդանոցների կահավորման պակասների հետ միաժամանակ իրերի պահեստները դատարկ եյին։ Դրա պատկերը տալիս է այն փաստը, վոր հիշյալ Մինիստրության պահեստների պաշարը հաշվառման ժամանակ յերևան է բերված որինակ՝ ընդամենը 238 հատ վերմակ, 172 հատ բարձ, 365 հատ ներքնակ և այլն, բոլորն ել այդպիսի փոքր քանակությամբ։

Իսկ ինչ վերաբերում է հիվանդանոցների շենքերին, նրանք չեյին համապատասխանում այն նվազագույն պահանջներին, վորոնք կարող եյին անվել նրանցից։ Նրանք այն աստիճան խարխուլ եյին ու քայքայված, վոր ակամա զարմանում

նե Հայաստանում բժշկական գործի վիճակը կանգնած անձնավորությունների համարձակությանը, վորոնք շարունակում եյին այդ շենքերում հիվանդանոցներ պահել։ Միակ փոքր ի շատե շնորքին շենք Յերևանի I-ին հիվանդանոցի շենքն եր, սակայն այն էլ դեռ ավարտված չեր և չուներ բոլոր անհրաժեշտ հարմարությունները։

Ահա այն ժառանգությունը, վորի վրա պիտի կառուցեր իր աշխատանքը Կոմիսարիատի Ֆինանսական—Տնտեսական բաժինը։

Այսպես թե այնպես, Առողջկոմատին առընթեր կազմակերպված Ֆինանսական—Տնտեսական բաժինը, ֆինանսական և տնտեսական յենթաբաժիններով՝ կենտրոնում և ֆին-տնտեսական յենթաբաժիններով գավառներում, Առբաժիններին կից, առաջին հերթին սկսեց զբաղվել՝ պարզելով, ժողվելով և հաշվի առնելով այն ամբողջ գույքը, վորը գտնվում եր ժառանգած պահեստներում, հիվանդանոցներում և ընդհանրապես Հայաստանի բուժարաններում։ Դրա համար մշակված եյին հաշվետվության առանձին ձևեր և հատուկ ձևով մատյաններ։ Մի շարք շրջաբերականներով և հրահանգներով բացատրվում եյին տեղերին այդ գրքերը կազմելու ձևը և ընդհանրապես ֆին-տնտեսական հաշվետվության գործը։

Վերջնականապես այդ գործը հաջողվեց կարգավորել հաշվետու շրջանի վերջում՝ ամբողջ գույքը հաշվի յեր առնված և ֆինանսական և իրերի հաշվետվությունների միաձևություն եր սահմանված։ Այդ կարգադրությունն առանձնապես դժվար եր կիրառել կյանքի մեջ, քանի վոր աշխատավորները (հներից), վարժվելով խորհրդայնումից առաջ վերջին տարիների անհաշվետու աշխատանքին՝ յերկար ժամանակ չեյին կարողանում կարգի գալ, ընտելանալ աշխատանքի նոր պայմաններին, նրանց առաջ դրած նոր պահանջներին։

Դրա հետ միաժամանակ Ֆին-Տնտեսական բաժինը վերջ դրեց հիվանդանոցներում տնտեսությունը վարելու խորհրդայնացումից առաջ տիրող սիստեմին։

Առողջապահության Կոմիսարիատը, կոչված լինելով պահպանելու ամբողջ Հայաստանի բնակչության առողջությունը կիրառելով Խորհրդային բժշկության սկզբունքները, հանձինս Ֆին-Տնտեսական բաժնի, պարզ է, վոր պիտի կենտրոնացներ ամբողջ մատակարարման գործը կենտրոնում, վորտեղից



Առբաժինները՝ տեղերում պիտի ստանան հիվանդանոցները պահպանելու անհրաժեշտ գույքն ու մթերքները։

Դա անշեղ կերպով և համառորեն իրականացված եր այդ բաժնի կազմակերպման առաջին իսկ որերից։

Այդ յերկու խոշոր հարցերը հարթելով զբաղված լինելով, Ֆին-Տնտեսական բաժինը միաժամանակ քայլեր եր անում պաշարներով լցնելու պահեստները, քանի վոր, ինչպես վերև հիշատակեցինք, այդ պաշարները չափազանց սուղ եյին։

Այդ գործում Ֆին-Տնտեսական բաժնին օգնության հասան Հ. Ս. Խ. Հ. և Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. պարենավորման մարմինները.

Հաշվետու շրջանում հիշյալ մարմիններից ստացված եյին հետևյալ իրերը, գլխավորապես սպիտակեղենի և անկողնու նյութերը, այն է՝

1. Գրիզբոն . . . . . . . . . . . . . . . . . 23,200,000
2. Քաթան . . . . . . . . . . . . . . . . . 17,372
3. Ֆասոնե . . . . . . . . . . . . . . . . . 8,374
4. Բարձի յերես . . . . . . . . . . . . . . . 249
5. Շապիկ և վարտիկ . . . . . . . . . . . . . 1,171
6. Հիվանդանոցային վերնաշապիկ (խալաթ) . . 299
7. Վերնաշապիկ (խալաթ) . . . . . . . . . . 289
8. Բայկա (վերմակի) . . . . . . . . . . . . 9,944
9. Թել կոճերով . . . . . . . . . . . . . . 1,025 կոճ

և այլ իրեր, (թվերը ցույց են տրված արշիններով)։

Ստացված սպիտակեղենն ու անկողնու պարագաները բաշխվել են ըստ կարգյաց Առբաժիններին, վորոնք իրենց հերթին, իրենց ֆին-տնտեսական յենթաբաժինների միջոցով մատակարարում եյին յենթակա հիվանդանոցներին։

Հիվանդանոցների պարենավորման մատակարարումը նույնպես կենտրոնացված եր Ֆին-Տնտեսական բաժնում և պարենը բաց եր թողնվում նույն կարգով, ինչ վոր կահավորման իրերը։

Մթերքները Ֆին-Տնտեսական բաժինը ստանում եր Պարժողկոմատից և յեթե 21 թվին պակասություն եր նկատվում վորոշ մթերքների մեջ (օրինակ՝ յուղի, շաքարի) և հիվանդները բավականաչափ բավարար սնունդ չեյին ստանում, արդեն 22 թվի կեսին և մանավանդ նրա վերջում, պարենավորման, ճգնաժամը հարթելուց հետո, այդ հարցը ևս կարգավորվեց։

Մթերքների շրջանառությունը հաշվետու շրջանում հետևյալ պատկերն եր ներկայացնում

| | | | |
|---|---|---|---|
| 1. Խտացրած կաթ | 72,000 | բանկա | |
| 2. Կակաո | 180 | փութ | |
| 3. Շաքար և շաքարավազ | 1,125 | » | |
| 4. Շոկոլադ | 74 | » | 18 ֆ. |
| 5. Թեյ | 15 | » | 25 ֆ. |
| 6. Յուղ | 562 | » | 20 ֆ. |
| 7. Բրինձ | 1,200 | » | |
| 8. Լոբի | 1,800 | » | |
| 9. Սապոն | 6,000 | » | |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Միսը և մնացած այլ մթերքները Պարժողկոմատը բաց եր թողնում անմիջապես Սաբաժիններին:

Իհարկե, հիվանդանոցների համար Ֆին-Տնտեսական բաժինը Կոմիսարիատի այլ բաժինների հետ միասին հիվանդների սննդառության համար կերակրեղենի նորմաներ մշակեց, համաձայն Պարժողկոմատի պաշարի ու տեղական շուկայի հետ: Սընընդի այդ չափը յերկրում տիրող պարենավորման ճգնաժամի ժամանակ (21թվին) չափազանց համեստ եր, և կյանքի պարենավորման փոփոխվող պայմանների համաձայն փոփոխությունների յենթարկվելով, 22 թվի վերջերքում բարելավվելով թե վորակով և թե քանակով հասցրված եր բավարար չափի:

Ժամանակ առ ժամանակ հիվանդները չեյին բավարարվում լրիվ չափով մշակված նորմայով, բայց դա արդեն Ֆին-Տնտեսական բաժնի մեղքը չեր:

Այդպիսով թե Սաբաժինները և թե Կոմիսարիատին անմիջական կերպով յենթակա հիմնարկները ստանում եյին գույքը, կահավորման իրերը և թե մթերքները Ֆինտնտես. բաժնի պահեստներից: Դրանով արդեն վերջ եր տրված խորհրդայնացումից առաջ գոյություն ունեցող՝ կանխավճար տալու յեղանակին:

Ընդհանրապես Կոմիսարիատի գործունեության այդ շըրջանում, սկզբնական շրջանում, դրամանիշներով օգտվելու կարիք եր զգացվում շատ հազվագյուտ դեպքերում, քանի վոր Ֆին-Տնտես. բաժնին անհրաժեշտ բոլոր իրերը ստացվում եր բնականով համապատասխան մարմիններից:

Տնտեսական նոր քաղաքականության հետ, յերբ Խորհրդային իշխանության պարենավորման բոլոր մարմինները պետական հաշվարկության անցան, յերբ կոմիսարիատները պահելու համար դրամական ձև մտցրվեց, վորոնց կարիքների



հաշվառումն արդեն նախահաշիվների կերպարանք եր ընդունում, Ֆին-Տնտես. բաժնի առաջ դրվում եյին արդեն նոր, ավելի բարդ և ընդարձակ խնդիրներ: Միևնույն ժամանակ Ֆին-Տնտեսական բաժնի պարենավորման մարմիններից և մասնավորապես ու գլխավորապես Պարժողկոմատից ազատվելը, արձակում եր Ֆին-Տնտես. բաժնի ձեռքերը. Հ. Ս. Խ. Հ. պարենավորման մարմիններից ստացվող նյութական միջոցների՝ Խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության նոր սկզբունքների հետևանքով պակասը Ֆին-տնտես. բաժինը կարող եր լրացնել սեփական պատրաստություններով:

Սակայն աշխատանքը վարելու նոր սիստեմի վրա դրած հույսերը լրիվ չափով չարդարացան, քանի վոր Ֆին-Տնտես. բաժնից անկախ պատճառներով հաշվետու շրջանի վոչ մի մասում չհաջողվեց լրիվ կերպով օգտագործել նախահաշվի վարկերը՝ Ֆինժողկոմատի բաց թողած գումարները չափազանց չնչին եյին (համեմատած նախահաշվի հետ) և չեյին բավարարում ամենաանհրաժեշտ կարիքներին, մինչդեռ բոլոր պարենավորման մարմինները առանց կանխիկ վճարի դադարեցին իրեր բաց թողնելը:

Բայց և այնպես, բաց թողնվող այդքան սուղ միջոցներով Ֆին-Տնտեսական բաժինը վորոշ պատրաստություններ՝ գնումներ կատարել է, որինակ վառելիք, կաթնեղեն, շաքար, բանջարեղեն, անասունների կեր և այլն:

Ֆին-Տնտեսական բաժնի պատրաստման գործունեության լրացումն է յեղել նրա գյուղատնտեսական աշխատանքը, վոր թեև, ճիշտ է, մեծ չափեր չի ընդունել: Այսպես որինակ՝ Սաբաժինները տեղերում կենտրոնի ցուցմունքներով բանջարանոցներ են կազմակերպել, վորոնց արդյունքը գավառներում չափազանց շոշափելի չե յեղել:

Մի ուրիշ վոչ պակաս կարևոր հարց եր լուծելու համար դրված Ֆին-Տնտեսական բաժնի առաջ. այդ այն է՝ հիվանդանոցները փոխադրել ավելի լավ շենքեր և յեղած շենքերը վերանորոգել և հարմարեցնել: Ինչպես վերևում հիշատակեցինք այդ շենքերը բոլորովին խարխուլ եյին և չեյին համապատասխանում պահանջներին: Այդ հարցը, վորը թերևս ամենադժվար հարցն եր Առժողկոմատի կողմից դրված բոլոր հարցերից և իր լուծման համար հսկայական դրամական միջոցներ եր պահանջում:

Փոքր ի շատե համապատասխան շենքերի բացարձակ չգո-

յությունը եվ ավելի եյին խորացնում այդ հարցի լուծման դժվարությունը:

Մեծ աշխատանք ու յեռանդ եր գործ դրված Ֆին-Տնտեսական բաժնի կողմից այդ ուղղությամբ: Շատ բան հաջողվեց անել (օրինակ. հիվանդանոցների շենքերի դրությունը ամենևին չի կարելի համեմատել այն դրության հետ ինչ գոյություն ուներ խորհրդայնացումից առաջ) բայց և մինչև այժմ մի քանի գավառներում այդ հարցը Առժողկոմատի ամենացավոտ հարցն է:

Այս հարցում ևս, ինչպես շատ ուրիշ հարցերում մեծ ինքնագործունեություն ցույց տվին Առբաժինները տեղերում, ինչպես օրինակ՝ Ղարաքիլիսայի, Լոռու, մանավանդ Ալեքսանդրապոլի, ուր շնորհիվ տեղական Գործկոմների ջանքերին հաջողվել Տնտեսության միջոցով հսկայական վերաշինություններ են կատարված: Հաշվետու ժամանակաշրջանում մանր վերանորոգումներ են կատարել Առժողկոմատի համարյա առանց բացառության բոլոր հիմնարկությունները:

Իսկ խոշոր վերանորոգություն կատարված է թվով մինչև տասը (Յերևանի հիվանդանոցները, Դիլիջանի առնատորիան Ալեքպոլի հիվանդանոցները և այլն):

Ֆին-Տնտեսական բաժնի գործունեության այս կողմն եվ ավելի լայն չափով կզարգանար, յեթե միայն Ֆինժողկոմատի կողմից նա բավական չափով բավարարվեր դրամանիշներով ըստ նախահաշվային պահանջների:

Սակայն Ֆինժողկոմատը բավական քանակությամբ դրամանիշներ չունենալու պատճառով, մանավանդ հաշվետու ժամանակաշրջանի սկզբներում, բավարարում եր դրամով չափազանց քիչ քանակությամբ:

Ընդամենը կարելի յե պարզ գաղափար կազմել թե ինչ չափով փոքր եր բաց թողնվող միջոցների տոկոսը համեմատած նախահաշվի տվյալների հետ:

1921 թվին Առժողկոմատին հատկացված գումարն եր՝ 3,747,260,000 ռուբլի Ռուսական Խորհրդային դրամանիշներով: Իսկ 1922 թվին՝ 941,590 ռուբլի վոսկով: Ըստ գավառների այդ գումարները հատկացրված եյին հետևյալ ձևով՝

| | 1921 թ. | 1922 թ. |
|---|---|---|
| Կենտրոնին . . . . . . | 1,897,146,000 | 633,688 |
| Յերևան . . . . . . . . | 373,600,000 | 85,316 |
| Ալեքպոլ . . . . . . . . | 379,200,000 | 68,695 |
| Եջմիածին . . . . . . | 238,500,000 | 33.732 |
| Ղարաքիլիսա . . . . | 177,500,000 | 20,952 |
| Դիլիջան . . . . . . . . | 227,170,000 | 20,601 |
| Լոռի . . . . . . . . . . | 125,380,000 | 20,213 |
| Նոր Բայազետ . . . . | 69,600,000 | 14,402 |
| Զանգեզուր . . . . | 151,470,000 | 13,552 |
| Դարալագյազ . . . . . | 34,430,000 | 5,324 |
| Ցերկաթուղագիծ . . . . | 73,270,000 | 25,115 |
| | 3,747,260,000 ր. | 941,590 ր. |



Այդ գումարներից Կոմիսարիատը ստացել է միայն 50%:

Այս բոլոր ֆինանսական դժվարությունները ամենևին չըթեթևացան, յերբ սկսեցին կիրառել վճարովի բժշկության ձևը: նոր տնտեսական քաղաքականության հետևանքով, ազգաբնակչության վորոշ—ունևոր կատեգորիայի նկատմամբ:

Առժողկոմատի յեկամուտները դեղատներից, հիվանդանոցներից և բուժարաններից այն աստիճան չնչին են, վոր դրա համար չարժե նույնիսկ խախտել ձրի բժշկության սկզբունքը, մինչդեռ նրա հասցրած վնասները անչափ եյին, այն մտքով, վոր դրանից հետո նվազեցին ազգաբնակչության կողմից բժշկական ոգնության դիմումները:

Այսպես օրինակ 23 թվին բոլոր դեղատներից, վճարով դեղորայք են ստացել 21.120 ռուբլու (Ֆինժողկոմի կուրսով), մինչդեռ այդ նույն դեղատներում դեղի ծախքը, բացի բոլոր կողմնակի ծախսերի հավասարվել է 82.046 ր, 60 կոպեկի:

Մի քանի բժշկա-սանիտարական հիմնարկների տեղական միջոցների անցնելը նույնպես չթեթևացրեց Կոմիսարիատի ֆինանսական դրությունը, քանի վոր անցնելը մեծ մասամբ կատարված եր թղթի վրա, այն ինչ փաստորեն այդ հիմնարկությունները շարունակվում եյին պահվել Առժողկոմատի միջոցներով:

Մի քանի տեղեր դեռ չեյին ամրացել, մի այլ տեղեր դեռ վաղ եյին գիտակցում Առողջապահության հարցերին շահակցությունը պետական շինարարության գործում և պատշաճ ուշադրություն չեյին դարձնում՝ կանոնավորելու համար հիշյալ հարցերը: Ճիշտ է չեյին էլ կարող, քանի վոր նրանք ևս միջոցներ չունեյին:

Ապագայում անհրաժեշտ է միջոցներ գտնել ստանձնա-

բար ավելացնելու Առժողկոմատի յեկամուտները։ Դա ապագայի հերթական խնդիրներից մեկն է։

Դրա համար բաժինը մտադիր է ընդլայնել իր գնման և գյուղատնտեսական գործունեությունը և դա չափազանց կըթեթևացնի Կոմիսարիատի ֆինանսական դժվարությունը։

Անհրաժեշտ է նույնպես ապագայում հաջողեցնել, վոր դրամանիշները նախահաշվի համաձայն ստացվեն կանոնավոր կերպով և լրիվ չափով, վորպեսզի այդպիսով հնարավորություն տրվի թե կենտրոնում և թե տեղերում դրամաբաշխման միջոցով լրիվ չափով ռեալիզացիայի յենթարկել այդ գումարները, այդպիսով իսկ բարձրացնելով Հայաստանի ազգաբնակչության առողջապահության գործը։

Այն ժամանակ արդեն հնարավոր կլինի տեղական Գործկոմների հետ միասին (գործի քաշելով նրանց) կատարել հիվանդանոցների շենքերի բոլոր վերանորոգչական աշխատանքները, վորը մտադրել է Կոմիսարիատը։

Ինչպես նաև հնարավոր կլինի գնել հիվանդանոցների և այլ հիմնարկների համար կահավորման բոլոր անհրաժեշտ իրերն ու պարագաները։

Վերջապես այն ժամանակ հնարավոր կլինի մասնագետներ հրավիրելով, բարձրացնել աշխատավոր ազգաբնակչության լայն խավերի բժշկական վորակավորյալ օգնության մակարդակը։



# ԲԱՆՎՈՐԱ—ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԱՏ

Բանվորա-Գյուղացիական Տեսչության Ժողկոմատը, վորպես սոցիալական վերահսկման օրգան, ըստ իր վերահսկողական գործունեության ծավալի խիստ տարբերվում է առաջ գոյություն ունեցող Պետական Վերահսկողությունից (Гасударств. контроль)։ Նա կատարում է վոչ միայն նախկին պետական Վերահսկողության դերը, այլ և ծառայում է վորպես միջոց գրավելու աշխատավոր մասսաները դեպի պետական ստեղծագործական աշխատանքը։ Բոլորովին հակառակ յերկրի քաղաքական կյանքից կտրված նախկին Պետական վերահսկողության՝ Բ. Գ. Տ. մյուս պետական կազմակերպություններից կողքին աչքի է ընկնում վորպես ռազմական քաղաքական օրգան, վոր խոշոր մասնակցություն ունի ինչպես հնացած պետական կարգերը քանդելու, նույնպես նաև բանվորա-գյուղացիական պետության նոր կարգերի ստեղծման մեջ։

Բանվորա-Գյուղացիական Տեսչությունը, վոչ միայն վերահսկողություն է աշխատավոր մասսաների՝ բանվորների և գյուղացիների վերաբերմամբ, այլ նաև հանդիսանում է վորպես դպրոց, ուր գյուղացին ու բանվորը հնարավորություն ունեն սովորելու կառավարել պետությունը և ղեկավարել նրան կյանքում։

Բանվորա-Գյուղացիական Ժողովրդական Տեսչության Կոմիսարիատը կանոնադրությամբ ունի ձգտումների մի ամբողջ շարք, վորոնց իրագործումը մտնում է նրա գործունեության շրջանակի մեջ։ Սակայն առանձին կոնկրետ խնդիրների շատությունը հանգում է չորս խոշոր ֆունկցիաների։ Դրանցից առաջինը նրա քննա-վերահսկչական գործունեությունն է, վորը միաժամանակ հանդիսանում է Բանգյուղտեսչության բուն խնդիրը։ Ինչ չափով վոր քննա-վերահսկչական նրա գործունեությունը սահմանված է պետության նյութական շահերի պաշտպանության նպատակով, նույն չափով նա հանդիսանում է ընդարձակ, (հա-

մաձայն նրա յենթակա օրինկանների) մի կազմակերպություն։ Նրա վերահսկողությունը տարածվում է վոչ միայն պետական ու հասարակական հիմնարկների, այլ և մասնավոր անձանց վրա֊ ինչ չափով վոր վերջինները ներկայանալով ինչպես պանձարանի կոնտրագենդներ՝ հայտնաբերում են իրենց գործունեության մեջ պետության հատուկ նյութական շահագրգռությունը։

Բ. Գ. Տ. յերկրորդ հիմնական ֆունկցիան կազմում է՝ իրականացումն օրենսդրական նախաձեռնության բնակավայրում յեղած քաղաքական-իրավական գործունեությունն՝ նույնպես պետական-տնտեսական շահերի սահմաններում։

Նրա յերրորդ, վոչ պակաս գլխավոր և հիմնական, ֆունկցիան հանդիսանում է «Բողոքների և հայտարարությանց բյուրոն»։ Այդ բյուրոն ունի նախկին Պետական վերահսկողության վոչ հատուկ և բոլորովին խորթ գործունեություն։ Նա յե միակ օրգանը, ուր հոսում են լայն մասսաների բազմաթիվ բողոքները, վորի մեջ անդրադառնում են խորհրդային առանձին մարմինների բոլոր սխալներն ու թերությունները։ Բյուրոն իր գործունեության մեջ հետապնդում է

ա) Զարգացնել և ամրացնել օրենսդրության սկզբունքները և կարգը ինչպես ազգաբնակչության, նույնպես և անհատ պաշտոնյաների մեջ։

բ) Իշխանության առանձին ներկայացուցիչների անձնական պատասխանատվության իդեայի յուրացումն նրանց կատարած զեղծումների ու օրինազանցության համար։

գ) Բողոքողի իրավանց վերականգնումը, յեթե այդպիսիք խախտված են իշխանության օրգանի ապօրինի և անկանոն գործունեությամբ։

դ) Իր միջամտությամբ կանխել գործադիր օրգանների այնպիսի գործունեությունը, վորոնց հետևանքը կարող է պատճառել անուղղելի վնաս պետության կամ անհատ քաղաքացիներին և

ե) Աշխատող լայն մասսաների գիտակցության մեջ ամրացնել խորհրդային իշխանության հեղինակությունը։

Բանվորա-Գյուղացիական Տեսչության չորրորդ հիմնական խնդիրն է ժողովրդական մասսաների դաստիարակությունը, այդ մասսաների մեջ իրենց դերի հասկացնելը, նրանց պետական գործի կառավարելը սովորեցնելու մաքով գործնական աշխատանքի կոչելով այդ մասսաներին օժանդակության բջիջների



և բանվորա-գյուղացիական տեսչության կից պրակտիկանտների ինստիտուտի միջոցով։

Բանվորա-Գյուղացիական Տեսչությունը 1922 թվի ընթացքում մասնակցություն է ունեցել պես պես հանձնաժողովների, կոլլեգիաների, զանազան ժամանակներում կայացած 1061 նիստերում, 800 ներկայացուցիչներով։ 117 նիստերի հրավիրելը մնացել են անկատար։ Տեսչությունը կազմակերպել է քաղաքներում 52 օժանդակության խմբեր, վորոնք աշխատել են Տեղկոմների հետ միասին և 381 խմբեր գյուղերում։ Վերջին խմբերը գյուղական միջավայրում աշխատել են 40.000 չափ գյուղացիության հետ, կազմակերպել են 15 դասախոսություններ և զրույցներ ու 3 համագումար՝ բաղկացած օժանդակության խմբերի անդամներից և հրահանգիչներից։

Բանվորա-Գյուղացիական Տեսչության հաշվետվության յենթակա բոլոր հիմնարկների կողմից ներկայացրված են տեսչության հետական քննության 295.413.441.378 ռուբլի հաշիվներ հայկական խորհրդային դրամով։

Դրանցից քննված են և հանաչված—73.491.263.724 ռուբ.
Թողնված է տեղեկություններ հավաքելու 5.786.292,979 »
Հետ են ուղարկված և ձևական չեն ընդ. 2.794.037.577 »
Դեռ չեն քննված — 213.401.797,098 »

Հետական քննության ներկայացված են նաև 10.001 ռուբլի 94 կոպեկի հաշիվներ վոսկով, դրանցից չքննված մնում է 40 ռուբլու հաշիվ։

Կանխական քննության մտած է տեսչության մեջ նախնական քննության և հաստատության համար 110 պայմանագիր, վորոնցից 84-ը հաստատված է 26-ը վոչ։ Բացի դրանից կանխական քննության առաջարկված են յեղել 723.855.133 202 ռուբլի տեխնիքական շինարարական նախահաշիվներ։ Բանգյուղտեսչության տեխնիքական շինարարական բաժինը, վոր կազմակերպված էր 1922 թվի Օգոստոսի 15-ին, այդ գումարից հաստատել է 589.506.685.202 ռուբլի նախահաշիվներ. Մնացած նախահաշիվները չեն հաստատված։ Տեղի են ունեցել 28 տեխնիքական քննություններ. ընդունված են 17 կատարված աշխատանքներ. կազմված են 17 նախնական արտոնագրություններ նորոգությանց աշխատանքների նկատմամբ և քննված են 17 նախնական պայմանագրեր։ Տեխնիքական շինարարական բաժինը մասնակցություն է ունեցել 42 հանձնաժողովի։

Փաստական քննություններ հիմնարկներում կատարվել են 305. Դրանցից Պարժողկոմատին ընկնում է-19, Բաղգավգործկոմին 10, Լուսժողկոմատին-10, Առժողկոմատին-8, Աշխժողկոմատին և Սոցապժողկոմատին-3. Զինժողկոմին-66, Փոստհեռժողկոմին-14, Ներքգործժողկոմատին-10, Ժողկոմխորհին-5, Արդժողկոմատին-6, Արտակարգ հանձնաժողովին-4, Կենտվիճվարչության-2, Հողժողկոմատին-11, Ֆինժողկոմատին-5, Ժողտնտխորհին-19 և Հայկոոպին 7։

Ընդունված են 706 բողոքներ, որոնցից մնացել են չլուծված-14։ Բողոքների համեմատական ճնշող մեծամասնությունը ուղղված է զինվորական իշխանության (100), Միլիցիայի (196) և Ֆին-վարչային հիմնարկների դեմ (77). Մնացած 333-ը մյուս խորհրդային և հասարակական հիմնարկների դեմ-ինչպես կենտրոնում նույնպես և տեղերում։

Կազմա-հրահանգչական հողի վրա Բանգյուղտեսչությունը մշակել է և ուղարկել է հաշվետվության յենթակա բոլոր հիմնարկներին և տեղերում իր ներկայացուցիչներին կանոններ խորհրդային և հասարակական հիմնարկների տնտեսական, ֆինանսական և արդյունաբերական գործունեության նախնական և փաստական քննությունների մասին, որոնքներ հետական քննության մասին և հրահանգներ բանգյուղտեսչության գավգործկոմներին կից լիազորների և գավգործկոմների փոխհարաբերության մասին։

Բանգյուղտեսչության Ցուրխկոնտրոլը անկախ ամենորյա իրավաբանական բնույթ կրող յեզրակացություններից, տվել է յեզրակացություն 48 մեծ քննական նյութ պարունակող գործերի, վորտեղ պետք է յեղել քննության յենթարկված այս կամ այն անձի գործունեության ճիշտ վորակը ի ցույց հանել. այդպիսի գործերից 37-ի հետևանքը յեղել է հանցավորների դեմ քրեական դատ բաց անելը։

Բանգյուղտեսչության յենթարկված հիմնարկներում քննություն կատարելու ժամանակ ընդգծվել է կանոնավոր հաշվապահության բացակայություն, հիմնարկների տրամադրության տակ յեղած գույքի դրամական և նյութական միջոցների հաշվառման բացակայություն, անկանոն, ապօրինի և իսկական կարիքից դուրս առհաշիվ գումարների ծախսումն, հիմնարկների բաժինների և յենթաբաժինների անգործունեություն, կենտրոնի կատարյալ անգիտություն տեղական մարմինների գործունեության մասին և այլն, և այլն։ Դրանցից և վոչ մեկը չի խուսափել բանգյուղտեսչության հայացքից ու ձեռք են առնվել համապատասխան միջոցներ նկատված թերերը վերացնելու։



# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ՝

## «Արմենտայի» գործունեությունը

Արմենտան նոր հիմնարկություն է։ Նախկին կառավարություններից նա չի ունեցել և վոչ մի ժառանգություն։ Խորհրդային իշխանությունից առաջ ինֆորմացիայի գործը Հայաստանում յեղել է շատ անմխիթար վիճակում։ Կազմակերպված ինֆորմացիա գրեթե գոյություն չի ունեցել։ Յերկիրը յեղել է ամբողջապես կտրված, վոչ միայն արտասահմանից այլ և հարևան յերկրներից—Ռուսաստանից, Անդրկովկասից և մյուս վայրերից։ Ավելին՝ ներքին ինֆորմացիոն կապակցություն յուրաքանչյուր գավառի, գավառների և կենտրոնի միջև չի յեղել։ Ինֆորմացիոն գործը ընդհանրապես (և՛ ներքին և՛ արտաքին) չի անցել պատահական բնույթի սահմանից։ Հին կառավարության օրոք այդ ամենը կանոնավորող և կազմակերպող ապարատ գոյություն չի ունեցել։

Հայաստանի սովետիզացիայի առաջին օրերից, Խորհրդային իշխանությունը ուշադիր վերաբերմունք է ցույց տալիս թե արտաքին և թե ներքին ինֆորմացիայի կազմակերպման գործին։ Դեռ 1920 թ. դեկտեմբերին, հիմնվում և կազմակերպվում է Հայաստանի հեռագրական գործակալությունը. վոր այդ շրջանում կոչվում էր «Արմկավրոստա»։

Սկզբնական շրջանում Արմենտան յեղել էր ընդարձակ և լայն ֆունկցիաներով մի հիմնարկություն։ Նրա անձնակազմը հասել է մինչև 150-ի, ունենալով մի շարք բաժիններ—ընդհանուր, ինֆորմացիոն, գեղարվեստական, ագիտացիոն և այլն։

Նոր տնտեսական քաղաքականության հետ հիմնարկությունը ունենում է բազմաթիվ կրճատումներ և նախկին ֆունկցիաների մասը յենթարկվում է լիկվիդացիայի։ Հիմնարկության ֆունկցիաները այսպիսով ամփոփվում է զուտ ինֆորմացիոն ասպարեզում, վերանվանվելով, «Հայաստանի հեռագրական գործակալություն— «Արմենտա»։ Անձնական կազմը 125-ից զեղչվում է մինչև 26-ի։ Այս շրջանում Արմենտան յեղել է Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին կից։ Այնուհետև համաձայն Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեի 1922 թ.

նոյեմբերի 2-ի որոշման՝ Արմենտան կցվում է Հայկենտգործկոմին, որի նախագահությունը մշակում և հրատարակում է Հայաստանի հեռագրական գործակալության կանոնադրությունը այլ և լիկվիդացիայի յե ենթարկում հանրապետության մյուս ինֆորմացիոն ապարատները բովանդակ ինֆորմացիան կենտրոնացնելով Արմենտայում։ Այսպիսով Արմենտան ներկայանում է հանրապետության միակ ինֆորմացիոն օրգանը, հանրապետական մասշտաբով։ Համաձայն վերոհիշյալ կանոնադրության նա ունենում է հետևյալ ֆունկցիաները և մասերը։

1. Հանրապետական մաս, որի նպատակն է կենտրոնացնել թե մայրաքաղաքի և թե գավառների պետական—հասարակական, տնտեսական, շինարարական, կուլտ-կրթական, ֆինանսա-հարկային, գյուղատնտեսական, կոոպերատիվ, արհեստակցական շարժման, և այլ ընթացիկ կյանքի վերաբերյալ ամբողջ ինֆորմացիան, այլ և հետևել հանրապետական համագումարներին, կոնֆերանսների նիստերին և այլն հրատարակելով նրանց յուր ամենօրյա բյուլլետենների «Խորհրդային Հայաստան» լրաբերում։ Արմենտան այս տեղեկությունները ստանում է իր գավառաժանմունքների և խրոնիկյորների կողմից հեռագրով, հեռախոսով և պոստի միջոցով ուղարկված թղթակցություններով։

2. Խորհրդային Ֆեդերացիայի մաս, որի նպատակն է Խորհրդային Ռուսաստանի, Անդրկովկասի և Խորհրդային մյուս հանրապետությունների քաղաքական, հասարակական և տնտեսական ընթացիկ կյանքին վերաբերող տեղեկությունները ստանալ և հրատարակել նրանց, իր ամենօրյա բյուլլետենների «Մոսկվա» և «Անդրկովկաս» լրաբերներում։ Արմենտան այս տեղեկությունները ստանում է «Ռոստա»-ից (Ռուսաստանի հեռագրական գործակալություն) և Զակռոստայից (Ռուսաստանի հեռագրական գործակալության Անդրկովկասի բաժանմունք) ամենօրյա հեռագրային և ռադիո-հաղորդագրությունների միջոցով։

3. Արտասահմանյան մաս, որի նպատակն է արտասահմանյան բոլոր յերկրների ընթացիկ քաղաքական սոցիալական կյանքի վերաբերյալ ինֆորմացիան ստանալ և հրատարակել նրանց իր ամենօրյա բյուլլետենների «Արտասահմանյան Տեղեկություններ» լրաբերում։

4. Գավառական բաժանմունքներ, որոնք տեղերում հանդիսանում են Արմենտայի ապարատները։ Նրանց ֆունկցիաները կայանում են նրանում, որ նրանք հավաքում են իրենց շրջանի ինֆորմացիան, փոխադրելով նրանից կենտրոն և փոխադարձաբար կենտրոնից ուղարկված ինֆորմացիա (բաղկացած վերոհիշյալ լրաբերներից) Արմենտայի պատի լրագրերի միջոցով հաղորդվում և տարածվում են բնակչության մեջ։ Արմենտան նույնպիսի պատի լրագրներ հրատարակում էր Յերևանում հայերեն և նաև ռուսերեն լեզուներով։



Բացի վերոհիշյալ ֆունկցիաներից Արմենտան պարտականություն ունի նաև փոխադարձաբար Խորհրդային Հայաստանի ինֆորմացիան հեռագրաթելի և ռադիոյի ամենօրյա հաղորդագրությունների միջոցով ուղարկել Խորհրդային Ֆեդերացիայի գլխավոր կենտրոնները՝ Մոսկվա, Բաքու, Թիֆլիս այլ և ռադիոլրատուներ «բոլորին, բոլորին»։

Ահա իր ամփոփ գծերում այն ֆունկցիաները, որոնց սահմանում աշխատել է Արմենտան, մեծ մասամբ իրագործելով նրանց մինչև ս. թ. ապրիլ ամիսը, որից հետո Արմենտան փոխանցվում է Ռուսաստանի հեռագրական գործակալության Անդրկովկասյան բաժանմունքին, վերակոչվելով Անդրկովկասի Ռուսաստանի հեռագրական գործակալության Հայաստանի բաժանմունք—Արմենտա։

Այսպիսով Արմենտան կազմակերպչական և ֆինանսական տեսակետից անմիջապես կապվում է Թիֆլիզ-Զակռոստայի վերահսկողությանը, որի միջոցով և Մոսկվա-Ռուսաստանի հեռագրական գործակալության հետ։ Այս փոփոխման իբրև անմիջական հետևանք, հիմնարկությունը անցնում է դեռ յերկրորդ կվարտալից տնտեսավարական հիմունքներին, իրեն կետ նպատակ ունենալով ձեռք բերել սմետայի հավասարակշռությունը։ Այս պարագան պատճառ է դառնում մի քանի նոր կրճատումների, բայց շնորհիվ Խորհրդային Միության հեռագրական գործակալությունների միացման, հիմնարկության ինֆորմացիոն ապարատը մեծ չափով ուժեղանում և բարելավման է ենթարկվում։ Արմենտան որպես հեռագրական գործակալություն, առաջացած նոր կրճատումներից չի տուժում, ընդհակառակը ավելի խտացման է ենթարկում հեռագրական գործակալության ֆունկցիաները, ազատվելով մի շարք յերկրորդական և մասամբ կողմնակի աշխատանքներից։ Այսպիսով առաջ է գալիս ծախսերի տնտեսում, իսկ կենտ. գրասենյակի անձնական կազմի, աշ-

խատակիցների թիվը 17-ից իջնում է 13-ի գավառում ունենա-լով նույնպես 12 թղթակիցներ։

Նոր կրճատումների հետևանքով գավառական մեր բաժանմունքները յենթարկվում են լիկվիդացիայի, վորոնց փոխարինում են թղթակիցները։ Թղթակիցների պարտականության մեջ չեն հաշվում այլևս կենտրոնի ինֆորմացիայի տարածման գործը, վորոնք գավառական մարմիններին շարունակվում են ուղարկվել միայն այն դեպքում, յերբ հաղորդագրությունների պոստ-հեռագրական ծախսը յենթակա յե լինում վճարման։ Այսպիսով գավթղթակիցների միակ պարտականությունն է դառնում հավաքել իրենց շրջանի ինֆորմացիան և ուղարկել նրանց կենտրոն պոստի, հեռագրի և հեռախոսի միջոցով։ Կրճատման են յենթարկվում նաև Արմենտայի Երևանի խրոնիկյորները, վորոնց պարտականությունները փոխանցվում են թերթին։ Երևան քաղաքում պահվում է միայն մի թղթակից։

Դադարում է լույս տեսնելուց «պատի լրագրներ»-ը։ Բայց մյուս կողմից ինֆորմացիոն ապպարատը կրում է մի շարք հավելումներ հասցնելով իր գործունեությունը գոնե ներկա պայմաններում մաքսիմումի։

Այժմ Արմենտան կազմակերպչորեն հետևյալ պատկերն է ներկայացնում։

1. Հիմնարկության Վարչություն, վոր վարիչի միջոցով անմիջապես ղեկավարում է հիմնարկության ֆին-տնտեսական, կազմակերպչական և խմբագրական մասը (լիստեր 3, 4, 5),

2. Ինֆորմացիոն ապպարատ (ստացող Ֆունկցիա՝)

| | | |
|---|---|---|
| ա) Մոսկվայի տեղեկություններ | լիստեր | 1. |
| բ) Անդրկովկասի » | » | 2. |
| գ) Արտասահմանյան » | » | 3։ |
| դ) Խորհրդային Հայաստանի » | » | 4. |
| ե) Մամուլի քաղվածք | » | 5. |

3. Ինֆորմացիոն ապպարատին կցված է նաև առևտրական ինֆորմացիայի մասը։

ա) Առևտրական ինֆորմացիայի մասը ստանում է Զակբոստայից Խորհրդային Ֆեդերացիայի և արտասահմանի գրեթե բոլոր խոշոր կենտրոնների (մոտ 100 կենտրոններ) ապրանքային վալյուտաների գների, նրանց ընթացքի, նրանց վրա յեղած գործարքների մասին տեղեկություններ, վորոնք հրատարակվում են առանձին բյուլլետեններով։ Այդ տեղեկությունները Թիֆլիս



գակրոստային հաղորդվում են հեռագրով և ռադիոյով, իսկ Թիֆլիսից Երևան-Արմենտային պոստով։ Բացի այդ Թիֆլիսի և այլ խորհրդային միության խոշոր կենտրոնների վալյուտային արժեքները ստացվում են ամենօրյա հեռագրի միջոցով և հաղորդվում մասնավոր տեղակատուների միջոցով։

բ) Երևանի շուկայի մթերային ապրանքների բյուլլետեն, վորը լույս է տեսնում շաբաթական յերեք անգամ, հաղորդելով Երևանի շուկայում յեղած գլխավոր ապրանքների գները։

4. Ինֆորմացիոն ապպարատ (ուղարկող Ֆունկցիա)

ա) Տեղեկատուներ Խորհրդային Հայաստանից, վորոնք ուղարկվում են ամենօրյա հեռագրական հաղորդագրությունների միջոցով Խորհրդային Ֆեդերացիայի գլխավոր կենտրոնները-Մոսկվա (Ռոստային), Բագու (Ազերտագին) Թիֆլիս (Զակրոստային)։

բ) Լրատուներ Խորհրդային Ֆեդերացիայի, Արտասահմանի, Երևանի և Խորհրդային Հայաստանի մյուս վայրերի, վորոնք ուղարկվում են Արմենտայի ամենօրյա հեռագրական հաղորդագրության բաժանորդներին Խորհրդային Հայաստանի գավառական կենտրոնները։

գ) Երևանի վալյուտային արժեքների գները, վորոնք ուղարկվում են հեռագրաթելի միջոցով Թիֆլիս՝ Զարկոստային։

դ) Երևանի վալյուտային մթերային ապրանքների գները, նրանց ընթացքը, նրանց վրա կատարված գործարքը և այլն, վորոնք ուղարկվում են մասնավոր տեղեկատուների միջոցով պոստով-Թիֆլիս Զարկոստային։

Ցույց տալու համար Արմենտայի գործունեության պատկերը քիչ վորը բերում ենք մի քանի թվեր, վորոնք պարզորեն են տալիս առաջխաղացման այն ընթացքը, վոր ունեցել է Արմենտան վերջին մոտավորապես մի տարվա ժամանակաշրջանում։

Խորհրդային յերկրներից ստացված ինֆորմացիան (Մոսկվա, Բագու, Թիֆլիս) 1922 թ. հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներում, ոգտագործված է 27.656 բառ, 1923 թ. հունվար, փետրվար, մարտ ամիսներում 42.242, ապրիլ, մայիս, հունիս ամիսներում 80.291, իսկ հուլիս, ոգոստոս ամիսներում 112.994։ Ինչպես պարզ յերևում է վերջին յերկու ամիսներում (հուլիս-ոգոստոս) բաղդատած I յեռամսյակի հետ՝ ավելացած է 409 $^0/_0$-ով (185.338 խոսք) 3-ի՝ 267 $^0/_0$-ով (70.752) 3-ի՝ 140 $^0/_0$-ով (32.703)։ Ուրիշ խոսքով՝ հուլիս ոգոստոս յերկու ամիսների

ընթացքում Խորհրդային Ֆեդերացիայից ստացված ինֆորմացի-
ան, վերոյիշյալ յերեք յեռամսյակի (9-ամիս) հետ բաղդատած
պակաս է միայն 10%-ը (37.129 խոսք)։ Խորհրդային Հայաս-
տանի գավառական ինֆորմացիան (Յերևան քաղաքը չի հաշ-
ված) պահպանում է իր նախկին քանակը (մի յեռամսյակում
26.634 խոսք) կրելով անկում միայն ապրիլ, մայիս, հունիս ա-
միսներում։ Այս պարագան բացատրվում է նրանով, վոր վերո-
յիշյալ ամիսներում վերացվեցին Արմենտայի գավառական բա-
ժանմունքները յենթարկվելով նոր ձևի վերակազմության։

Ինչ վերաբերում է Արտասահմանից ստացված տեղեկու-
թյունների (ռադիո հաղորդակցության) 1922 թ. հոկտեմբեր,
նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներում օգտագործված է 65,895 խոսք,
1923 թ. հունվար, փետրվար, մարտ ամիսներում՝ 73,060, ապ-
րիլ, մայիս, հունիս ամիսներում՝ 51,663 (այս անկման պատճա-
ռը յեղած է զուտ յեղանակի բերումով) իսկ հուլիս, օգոստոս
յերկու ամիսներում 60,482 խոսք։ Վերջին յերկու ամսվա ըն-
թացքում նկատված բարձրացումը շարունակվում է խոշոր չա-
փով, ի նկատի ունենալով հաջորդող ամիսների կլիմայական
բարեհաջող պայմանները և ռադիո-կայաններում տեղի ունեցած
մի քանի բարենորոգումները։

Վերցնելով վերջին յերկու ամիսների բոլոր տեսակի ինֆոր-
մացիան (178 467 խոսք) և բաղդատելով նրան առաջին յերկու
յեռամսյակների հետ (6 ամիս) (208-853 խոսք) տեսնում ենք
վոր պակաս է միայն 17%-ով։

Նույնպիսի առաջդիմություն պիտի տեսնենք նաև Արմեն-
տայի ակտիվին մեջ-այսինքն այն տեղեկատուների մեջ, վոր նա
ուղարկում է Հայաստանից դուրս Խորհրդային Միության կենտ-
րոնները-Մոսկվա, Բաքու, Թիֆլիս։

1922 թ. հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, ամիսներում
ուղարկված է ընդամենը 18.369 խոսք, 1923 թ. հունվար, փե-
տրվար, մարտ ամիսներում 29.988, 1923 թ. ապրիլ, մայիս,
հունիս 33.965 խոսք, վերջին յերեք ամիսներում ուղարկված
ինֆորմացիան բաղկացած I-ին յեռամսյակի հետ ավելացած է
11.595-%-ով (15.596 խոսք) յերկրորդի հետ 795-%-ով (3977
խոսք)։ Նկատվող սույն առաջադիմությունը շարունակվում է
հուլիս, օգոստոս ամիսներում։

Բյուլլետենի 5-րդ լիտերի և առևտրական մասի գործու-
նեության համար թվեր ենք տալիս, վորովհետև Արմենտայի



այդ ֆունկցիաները ամբողջապես նոր են։ Պետք է ավելացնել
նաև, վոր գործունեության այդպիսի արագ և օրեց-օր ընդար-
ձակվող առաջադիմություններից հետո, ֆինանսական տեսակետից,
շնորհիվ ձեռք առնված միջոցների, հնարավոր է յեղած հիմ-
նարկության մուտքը հավասարեցնել յելքի հետ։

Արմենտայի գործունեության այս կարճառոտ տեղեկագիրը
վերջացնելուց առաջ պետք է ավելացնենք նաև այն, վոր Ար-
մենտան առաջիկայում ունի իր առաջ կատարելիք մի շարք նոր
նվաճումներ։ Այդ նվաճումների շարքից են 8-крати ռադիո ապ-
պարատի գնահրումը, վորի համար Արմենտայի դիմումի հետե-
վանքով, տրված է Ժողկոմների Խորհրդի նախագահության
համապատասխան հավանությունը։ Այդ ապպարատի հաստա-
տումով հնարավորություն պիտի լինի ստանալ Ամերիկայի
Միացյալ Նահանգների ռադիո-կայանների հաղորդագրություն-
ները, վորպիսի փորձ Անդրկովկասում տեղի յե ունենալու ա-
ռաջին անգամ։ Յերկրորդ բարեփոխումը այն մի քանի հավե-
լումներն են, վորոնք պետք է կատարվեն Յերևանի ռադիո-կա-
յաններում, այլ և Անդրկովկասի ռադիո-հեռախոսի կայանի
հաստատումը, վոր վորոշված է կառուցել Անդրկովկասյան
Փոստ-Հեռագրական Կոմիսարիատի կողմից, վոր ինարկե իր հեր-
թին մեծապես նպաստելու յե ինֆորմացիոն գործի ավելի լա
կանոնավորման և արագացման։

Արմենտան ըստ եության սերտորեն կապված է պոստ-
հեռագրական գործի հետ։ Բանի կկանոնավորվի և կհառաջա-
դիմի ժողովրդական կապակցությունը —պոստը, քանի կընդար-
ձակվի ժողովրդական կապակցությունը

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1922 Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ

Կենտրոնական Վիճակագրական Վարչությունը իր նպատակներով ու գործի գիտական հիմքերով մի նոր հիմնարկություն ե Հայաստանում։ Նա չի ժառանգել և վոչ վոքից վոչինչ. վոչ պատրաստի ապարատ և վոչ նյութեր անցյալից։ Դրան պիտի ավելացնել և այն, վոր մեր յերկրում չկային վոչ քաղաքային, վոչ գավառային զեմստվոների վիճակագրական հիմնարկներ, ինչպես նաև վիճակագրական աշխատավորներ։

Այդ բոլորը միասին վերցրած ստեղծեցին խիստ ձախորդ պայմաններ և մասսայական դժվարություններ Կենտվիճվարչի համար, վորոնց պիտի հաղթեր նորածին հիմնարկը, վոր պաշտոնապես իր աշխատանքը սկսել եր 1922 թվի հունվարին։

Յերկրի վիճակագրական սուր, անհետաձգելի կարիքից ստիպված՝ Վիճակագրական Վարչությունը դեռ վորոշ չձևակերպված, առանց ունենալու իր շուրջ փորձված աշխատակիցների շարք՝ կազմակերպչական խնդիրների հետ միասին իր գոյության առաջին իսկ որերից ձեռնամուխ յեղավ Հայաստանում գյուղատնտեսական ցուցակագրության դժվարին և պատասխանատու աշխատանքին։

Այդ ցուցակագրությունը տեվեց ամբողջ յերեք ամիս— սկսած սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը։ Յերեք ամսվա ընթացքում Կենտվիճվարչին հարկ յեղավ դադարեցնել իր բաժինների գործունեությունը, մոբիլիզացիայի յենթարկել ամբողջ իր աշխատակիցների անձնական կազմը վիճակագրությունը կյանքում իրագործելու համար։

Գյուղատնտեսական ցուցակագրություն կատարելու աշխատանքներին զուգընթաց կազմակերպված եյին գավառներում գավառային վիճակագրական բյուրոներ, իսկ գավառամասերում վիճակագրողներ։ Շտատի փոքրաթվության պատճառով Վիճա-



կագրական Վարչությունը հարկադրված եր՝ ի վնաս կենտրոնին տալ գավառին աշխատակիցներ, հաշվի առնելով վոր տեղերում կատարված լրիվ աշխատանքը ապահովեցնում ե կենտրոնը. այնպես վոր 72 աշխատակիցներից 42-ը գտնվում եյին գավառներում։

Կենտրոնական Վիճակագրական Վարչությունը առայժմ ունի

1. **Գյուղատնտեսական բաժին.**— Գյուղատնտեսական բաժինը ընթացիկ վիճակագրության համար հավաքեց հոժարակամ թղթակից—դիտողների կադր ստանալու համար տեղերից հացի, խոտի ու բարձր կուլտուրայի բերքերի վերաբերյալ տեղեկություններ, համաձայն բաժնի մշակած ծրագրի։

Բաժնի հիմնական աշխատանքներից մեկը Հայաստանի գյուղատնտեսական ցուցակագրություն պատրաստելն ե։ Ներկայումս կարգի յեն բերվում այս բաժնում հետագա վերամշակման համար ցուցակագրության նյութերը։

**Առեվտրա-արդյունաբերական բաժին.**—Առաջին հերթին այս բաժինը ձեռնարկել ե փոխադրական վիճակագրության կազմակերպելուն։ Պատրաստված են յեղել հատուկ բլանկներ, վորոնց համաձայն յերկաթուղին տալիս եր տեղեկություններ բեռների շարժման մասին ամբողջ Հայաստանի տերրիտորիայի վրա. ստացված ամսական տեղեկությունները վերամշակվել և բաժանվել են կառավարականի, հասարակականի և մասնավորի։ Այդ բաժնի աշխատանքների հետեվանքները շուտով կհրատարակվեն։ Դրանից դանդաղ ընթացքը կապ ուներ մեր յերկաթուղիների կարողության և փոխադրունակության աստիճանը պարզելու հետ, վորոնց մասին Անդրկովկասյան յերկաթուղային վարչությունը սկզբներում հրաժարվում եր տալ տեղեկություններ, սակայն այժմ այդ վարչության համաձայնությունը առնված ե մեր նպատակների իրագործման համար։

Արդյունաբերական վիճակագրության գործում այս բաժինը մշակել եր աշխատանքի հատակագիծ և կարտեր՝ ցուցակագրելու առեվտրա-արդյունաբերական գործարանների Հայաստանում՝ սակայն դրանց իրագործելը կյանքի մեջ հետաձգվեց գյուղատնտեսական ցուցակագրության պատճառով։ Ժողովված և մշակված են միայն սկզբնական տվյալներ այդ հիմնարկների մասին։

Մշակված են նաև աշխատանքի հատակագիծ և ծրագիր տնայնագործական ցուցակագրության, բայց վորովհետև սկզբնա-

կան լուսաբանության անհրաժեշտ հարցերի մի մասը զետեղված է գյուղատնտեսական ցուցակագրության թերթերում, ուստի հետ մշակման այդ նյութին միայն պիտի ձեռնարկել տնայնագործության ուսումնասիրության գործին Հայաստանում, վորովհետև դա ունի տնտեսական հետաքրքրություն յերկրի համար։

**3. Դեմոգրաֆիկ բաժին.**—Այս բաժինը իր աշխատանքները սկսել է ապրիլ ամսից նպատակ ունենալով ցուցակագրել Հայաստանի ամբողջ ազգաբնակչությունը. սակայն նյութական միջոցներից վեր եր կատարել միաժամանակ յերկու ցուցակագրություն՝ և գյուղատնտեսական և ազգաբնակչության, ուստի նա կանգ առավ ավելի հարմարածային գյուղատնտեսականի վրա, սահմանափակվելով սոսկ կատարված Յերևան քաղաքի ցուցակագրությամբ։ Հերթի դրված է Ալեքպոլ քաղաքինը։ Յերևանի ցուցակագրությունը մշակված է ըստ սեռի, հասակի, ազգության և գրագիտության աստիճանի։ Հետագա վերամշակումը կանգնած է միջոցների սղության պատճառով։

**Բժշկա-սանիտարական ենթաբաժին.**— Կազմակերպած է 1922 թվի մայիս ամսից սկսած։ Մշակել է հիվանդանոցների և ամբուլատորիաների համար բլանկներ, համապատասխան դրանց ժողոված են տեղեկություններ, ներկայումս մշակվում է բոլոր հիվանդների ցուցակագրումը հիվանդանոցներում կարտային սիստեմով (карточная система)։ Առժողկոմատի գործնական հարցերին բավարարելու նպատակով մշակված և տպագրված են ամսական տեղեկությանց համար ձևավոր բլանկներ՝ լրացնելու հիվանդների շարժումը հիվանդանոցներում։

**5. Բարոյական վիճակագրության ենթաբաժին.**—Դա ևս գործի յե անցել մայիսից սկսած, նպատակ ունենալով բարոյական բնույթ կրող փաստերի հետազոտումը։ Պիտի ասել, վոր այդ յենթաբաժնի նկատմամբ Հայաստանում հնից մնացած նյութ չէ յեղել խպառ և հարկ է յեղել յենթաբաժնին ինքնուրույն մշակել աշխատանքների ծրագիր և բլանկներ։ Մշակված և հանձնված են մամուլին հետևյալ բլանկները.

1. Միլիցիայի որգանների և քրեյական և հետախուզման բաժնի գործունեության հաշվետվություն.
2. Բանտարկության տեղերի և բանտարկյալների մասին հաշվետվություն։
3. Դատաստանական մարմինների հաշվետվություն։
4. Քննական մարմինների հաշվետվություն։



5. Բեկման առյանների և գերագույն դատաստանական վերահսկողության բլանկներ.
րահսկողության բլանկներ.
6. Բլանկներ դատապարտվածների հաշվառման համար և այլն։
Բարոյական վիճակագրության ամբողջ ծրագիրը 1923 թ.
չի կիրարկվելու գործի նորության և տեղերում աշխատակիցների
սակավ աշխատունակության հետևանքով։

**6. Ժողովրդական կրթության ենթաբաժին.**—Վիճակագրական տեղեկությանց ամբողջության կանոնավորության համար Հայաստանի բոլոր առաջին և յերկրորդ աստիճանի դպրոցներում յենթաբաժինը մշակել է միաձև վիճակագրական ցուցակագրում՝ ինչպես հայտարարությանց գիրք, ուսուցանողների կագրում՝ ինչպես հայտարարությանց գիրք, ուսուցանողների դպրոց հաճախելը ցուցակագրելու գիրք, որագիր դպրոցի որվա պարապմանց ընթացքի և այլն. դրանք ուղարկված են Լուսժողկոմատին, վոր իր հերթին ուղարկել է բոլոր դպրոցներին վորպես պարտադիր ցուցակագրության ձև։

**7. Աշխատանքի և պրոֆմիության բաժին.**—Բաժինը մշակել է բլանկներ պրոֆեսիոնալ աշխատավորների հաշվառման համար և ուղարկել է Հայաստանի բոլոր վայրերը, այդ բլանկները լրացված են տեղերում և ստացված են արդեն կենտրոնում, ձեռնարկված է նրանց վերամշակմանը։

**8. Հրատարակչական բաժին.**—Սա ծառայում է բոլոր բաժիններին. հրատարակել է վիճակագրական վարչության «Ազգաբար» բյուլլետենի 5 համարներ հայերեն։ Թարգմանվում են հայերենի վիճակագրության վերաբերյալ գրքեր։

# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1920-1922 Թ.Թ.

## ՕՐԵՆՔ ՅԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

*Ինչպես ուրիշ Խորհրդային յերկրներում նույնպես և Խորհրդային Հայաստանում, օրենքի և արդարադատության աստիճանական զարգացումը կարելի յե բնորոշել յերեք հիմնական մոմենտներով, Սոցիալիստական Հեղափոխության հատուկ մոմենտներ՝ վորոնք անխուսափելի կերպով առաջ են գալիս և զարգանում իբրև հետևանք հեղափոխական ժամանակաշրջանի օբիեկտիվ պայմանների։*

*Առաջին հիմնական մոմենտը - դա հին պետական ապարատի արմատական ճեղքվածքն է։ Մինչև 1920 թ. ցարական Հայաստանի և «դաշնակցական, այսպես կոչված, դեմոկրատիկ Հայաստանի» ղեկավար օրենքները բղխել եյին ֆեոդալական և բուրժուական սոցիալական պայմաններից և կարգավորում Հայաստանի հասարակական զանազան խավերի իրավահարաբերությունները։ Դաշնակցական կառավարությունը վոչինչ չփոխեց հին օրենքներից և դրանով նվիրագործեց Հայաստանում տիրապետող տարրերի, ֆեոդալ—բուրժուաների, իրավական գերակայությունը։ Ռուսական փետրվարյան հեղափոխության և ժամանակավոր կառավարության կարգադրությունների ազդեցությունը մտավորական խավերում եր միայն զգացվում, վորոնք դրանում կարծում եյին տեսնել բուրժուական հեղափոխության նվաճումները, իսկ Հոկտեմբերյան Հեղափոխությունը և նրա իրավական նոր լոզունգները վոչ մի անդրադարձում չգտան դաշնակցական Հայաստանի իրավական կյանքում։ Հեղափոխական պրոլետարիատի իրավահայեցողությունը կարմիր լաթ եր Հայաստանի ֆեոդալաբուրժուական պետականության համար։*

*1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հայտարարվեց Սոցիալիստական Խորհրդային Իշխանությունը։ Հնի ամբողջա-*



*կան խորտակումը, առաջին օրից իսկ, դարձավ հիմնական մոմենտ։ Հայաստանի աշխատավորությունը պետք եր ամբողջովին խորտակեր նախկին իրավահարաբերությունների շղթաները։ Դրա համար եւ Հայաստանի Խորհրդային իշխանության բարձրագույն մարմինը յեղող Հայհեղկոմը, 1920 թ. դեկտ. 21-ին հատուկ դեկրետով վերջ է դնում նախկին բոլոր օրենքներին թե ցարական «հավաք օրինաց»ին և թե նախախորհրդային կառավա-*
*րության մի կարգ հրամանագրերին, օրենքներին և այլն։*

*Դեկրետը հայտարարում է, վոր «Հայաստանում գործելու յեն*
*Սոցիալիստական Ռուսաստանի օրենքները Հայաստանի Խոր-*
*հրդային իշխանության ընդունած փոփոխություններով ու լրա-*
*ցումներով»։ Այս կերպով Հեղափոխության Հայրենիքի, Ռուսաս-*
*տանի օրենքների փորձառությունները և հաղթական աշխատավո-*
*րության հեղափոխական խղճի և իրավագիտակցության արտա-*
*հայտությունը յեղող նորմաները հայ աշխատավորության համար*
*դառնում են ղեկավար հիմունքներ, վորոնցով Հայաստանի աշ-*
*խատավորությունը պիտի կարողանար նվաճումներ կատարել և*
*հիմնավորել իր Խորհրդային պետականությունը։*

*Սկզբական շրջանում պետական իրավունքը ձևակերպվեց*
*հանձին Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեյի, վոր 1920*
*թ. նոյեմբերի 29-ին հայտարարությամբ վերացված համարեց*
*նախկին կառավարության բոլոր վարչական և քաղաքական հիմ-*
*նարկությունները, պաշտոնեությունները, նահանգապետություն-*
*ները, նահանգական ատյանները, զեմստվոններն ու քաղաքային*
*ինքնավարությունները, դիվանագիտական ներկայացուցչություն-*
*ները և միսիաները և Ռազմահեղափոխական կոմիտեյում անձ-*
*նավորեց Հայաստանի արտաքին միջազգային սուվերենիտետը և*
*ներքին քաղաքական բովանդակ իշխանությունը։*

*Այսպիսի հանգամանք բղխում եր նույն ժամանակաշրջանի*
*օբիեկտիվ պայմաններից. հնի ամբողջական քայքայման առաջ*
*բերած հավանական ցնցումները և Հայաստանի աշխատավորու-*
*թյան ապահովությունը թելադրում եյին պրոլետարական դիկ-*
*տատուրայի այս ձևը։*

*Փետրվարյան հակահեղափոխական լիկվիդացիայից հետո*
*1921 թ. ապրիլի 22-ին Խորհրդային Հայաստանը թևակոխում է*
*Խորհրդային իրավունքի և օրենքի յերկրորդ մոմենտը, դա հե-*
*ղափոխական հայրենիքի և հեղափոխական կարգերի պաշտպանու-*
*թյան և զարգացման մոմենտն է։ Ապրիլի 2-ին գործի յե անց-*

նում Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը, վորը մեկ կողմից աշխատում է վերացնել քաղաքացիական կռվի ճակատը, իսկ մյուս կողմից ներքին նվաճումներով ամրացնում է նոր իրավակարգը։ Այդ առթիվ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հուլիսի 20-ին դեկրետներ է հրատարակում Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության վարչական վերաբաժանումների և գավառական, գավառակային և գյուղական հեղափոխական կոմիտեների մասին։ 1921 թ. Խորհրդային պետական հիմքերը ամրացան, աշխատավորական մասսաներին զգալի դարձան նոր իրավակարգի սոցիալիստական նվաճումները ու սույն թվի վերջին քառորդին կատարվեց Խորհուրդների ընտրությունը։

1922 թ. փետրվարի 2-ին հավաքվեց Հայաստանի բանվորների, գյուղացիների և Կարմիր բանակայինների համագումարը, վորը ձևակերպեց Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Սահմանադրությունը, ըստ վորում նվիրագործվեց Հայաստանի աշխատավորության դիկտատուրան զարգացնելու համար Սոցիալիստական հեղափոխության հիմունքները։ Ընտրվեց Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, վորը ներկայանում է յերկրի բարձրագույն օրգանը և սահմանադրության ընդունած հիմքերի վրա, զարգացնում կառավարական կազմակերպչական ձևերն ու մանրամասնությունները, գծում է գավառական և Խորհուրդների իրավական փոխհարաբերությունները. այդպիսով վերացվում է գավառական գործկոմների ռազմական դատական մարմինները և նրանց տեղը սահմադրանական իրավական նոր ձևակերպումների հիման վրա կազմակերպվում նոր հիմնարկություններ։

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հեղափոխական հայրենիքի պաշտպանության համար անհրաժեշտ է դառնում մշակել օրինական հաստատուն նորմաներ և այս ասպարեզում ևս հեղափոխական Ռուսաստանի փորձառությունը օգնության յեկավ Հայաստանին, վորտեղ ժողովրդական մասսաները անցած տարիների քաղաքական վայրիվերումների, մասսայական տեղափոխությունների, տնտեսական ամենավատ պայմանների պատճառով կորցրել էին իրենց հոգեկան կայունությունը և ընդունակ էին դարձել վճռական հակումների։ Մինչև 1922 թ. հունիսի 23-ը քրեական հաստատուն օրենք չկար Հայաստանում։ Հանցագործների նկատմամբ գործադրվում էին ռուսական օրենքների հետևողականությամբ՝ դատական մարմինների հեղափոխական խիղճն ու սոցիալիստական իրավագիտակցությունը։ Մի այնպիսի ժամանակաշրջանում, յերբ Հայաստանի հաղթական աշխատավորությունը ապրում էր փոխանցման դժվարին օրեր, յերբ նախկին քրոնիկական հանցանքների կողքին նոր հանցագործություններ էին յերևան գալիս՝ հանցագործություններ, վորոնք հաճախ ճնշում էին հայ աշխատավորության դիկտատուրայի պետական զարգացման վրա, բնական է, վոր փորձված հեղափոխական գործիչների սոցիալիստական իրավագիտակցությունը միայն պետք էր, վոր հիմք դառնար քրեական հանցավորներին դատելու համար։ Այս առթիվ սահմանված էին միայն մասնակի դեկրետներով առանձին կանոններ վաղաժամ ազատման մասին, փոքրահասակ հանցագործների վերաբերյալ, ազատազրկման ու դատակնիքներով իրավազրկելու մասին և այլն։



1922 թ. հուլիսի 23-ին Հայկենտգործկոմը ընդունեց Քրեական Օրենսգիրքը հիմնվելով Խորհրդային Ռուսաստանի օրենսգրքի վրա, խառացնելով Հայաստանի ուրույն պայմաններից բղխած մի կարգ պատժահարկություններ, ինչպիսին են օրինակ՝ գյուղացիների անասունների գողության, վեներական հիվանդությունը տարածողների և այլն։

1922 թ. վերջերին ծրագրվում է նաև քրեական դատավարության օրենքի խմբագրությունը։

## ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հեղափոխական ժամանակաշրջանի կարևորագույն հիմնարկություններից մեկն է սա, վոր լավագույն կերպով ծառայում է հեղափոխության պաշտպանության մեկ կողմից, մյուս կողմից նա կռվի օրգան է հակահեղափոխության դեմ։ Հայաստանի Արտակարգ Հանձնաժողովի օրինական կազմակերպությունը ըսկիզբ առավ 1920 թ. դեկտեմբեր 6-ի դեկրետով։

Համաձայն այս դեկրետի Արտակարգ Հանձնաժողովի կոչումն յեղավ մաքառել հակահեղափոխության դեմ, նաև շահադիտության և պաշտոնի վերաբերյալ հանցագործությունների դեմ։

1921 թ. ապրիլի 15-ի դեկրետով Արտակարգ Հանձնաժողովի իրավասությունը ավելի պարզորոշվեց ու ընդլայնվեց. նրան վերապահվեց նաև լրտեսության, հարբեցողության, հրձի-

ղության, յերկաթուղու գծերի և առհասարակ հաղորդակցության միջոցների փչացման հանցագործությունների դեմ մաքառելու պարտականությունը։

1920 թ. հունիսի 22-ի դեկրետով Արտակարգ Հանձնաժողովը լրացնում է իր կազմակերպությունը և մտնում է Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կազմի մեջ։ Նախագահին կից կազմվում է կոլեգիա, վորի անդամներին հաստատում է Հայկենտգործկոմը։ Նախագահը իր գործունեության համար պատասխանատու յե համարվում թե Հայկենտգործկոմի և թե Անդրկովկասյան Արտակարգ Հանձնաժողովի առաջ։

1922 թ. հունիսի 12-ի դեկրետով օրինականացված է վերջնականապես Հայաստանի Արտակարգ Հանձնաժողովի և Անդրկովկասյան Արտակարգ Հանձնաժողովի միջև յեղած օրգանական կապը։

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Քաղաքացիական իրավունքի ասպարեզում Հայաստանի ընդհանուր տնտեսական կառուցվածքից բղխող հրամայական վարքագիծը Հայաստանի Խորհրդային Իշխանության համար դարձավ ղեկավար հիմունք, վորի վրա մշակվեցին համապատասխան դեկրետներ և օրինագծեր—ամբողջովին քանդված տնտեսության զարգացումը և վերածնությունը,—ահա միակ և հիմնական բազան, վորի վրա քաղաքացիական իրավունքի ասպարեզում կառուցվեցին Հայաստանի կառավարության գործնական կարգադրություններն ու դեկրետները։

Յեթե Հայաստանի Խորհրդայնացումի առաջին օրերին անհրաժեշտությունն եր բռնագրավումներով հնարավորություն ստեղծել պետական մատակարարման համար, յերկրորդ շրջանին անհատական ու պետական տնտեսության նախաձեռնության համար արդեն ստեղծվում է նորմալ տնտեսական փոխհարաբերություններ, յելնելով յերկրի ընդհանուր տնտեսության պլանաչափ զարգացման տեսակետից։

Այս շրջանը զուգադիպում եր տնտեսական նոր քաղաքականության կիրառման շրջանին Խորհրդային մյուս յերկիրներում, ըստ վորում քաղաքացիական իրավունքի բնագավառում Հայաստանի կառավարության ղեկավար հիմունքները լիովին ճշգրտված եյին։

Մասնավոր նախաձեռնությունը արժանի չափով ազատ եր



թողնվում, այն չափով, ինչ չափով նրա ազատությունը դառնում եր բևալ ազդակ յերկրի ընդհանուր արտադրական ուժերի զարգացման։

Այս հիման վրա յետ վերադարձվեցին տերերին ազգայնացված մի շարք ջրաղացներ, գինգեր և այլն։ Վերահաստատվեց տերերի իրավունքը աների վրա։ Միայն հողային գույքերը, ինչպես նաև անտառները, հանքերը ու ջրերը վերջնականապես պետականացվեցին և հանվեցին մասնավոր իրավունքի շրջանակից։

1922 թ. հուլիսի 22-ի դեկրետով Հայաստանի կառավարությունը հիմնովին ճշտեց քաղաքացիական իրավունքի սահմանները «մասնավոր քաղաքացիական հիմնական իրավունքների դեկլարացիայի» մեջ։ Սույն դեկրետը հայտնաբերեց քաղաքացիական իրավունքի հիմնական սկզբունքները, ըստ վորում՝

1. Անհատական սեփականությունը սահմանափակ ծավալով թույլատրվում է վոչ իբրև անձնական իրավունք, այլ իբրև սոցիալական ֆունկցիա։

2. Մասնավոր իրավական հարաբերությունները հասարակական իրավունքի բնույթ են կրում։

Ռուսաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իր չորրորդ նստաշրջանում մշակել և խմբագրել է քաղաքացիական կոդեքս իբրև արտահայտություն նոր տնտեսական քաղաքականության հետևանքով ստեղծված նոր իրավական դրության։ Մեզ մոտ ևս մշակվում է քաղաքացիական օրենսգիրք, վորի հիմնական սկզբունքներն արդեն բնութագծվել են. ճանաչվում է յերկու տեսակ սեփականություն—կարականապես և վերջնականապես վերցված է անհատական սեփականությունից և շրջանառության առարկա չի հանդիսանում հողը, հանքերը, ջրերը, յերկաթուղիները իրենց կազմվածքով և այլն։ Փոքր ու միջին արդյունաբերություն զարգացնելու համար և այդ առթիվ մասնավոր նախաձեռնությունը քաջալերելու նպատակով մասնավոր սեփականություն են համարվում չազգայնացված և մունիցիպալիզացիայի չենթարկված ու սահմանափակ թվով բանվորներ ունեցող առևտրական ու արդյունաբերական ձեռնարկները, արդյունաբերության գործիքներն ու միջոցները, դրամ-արժեթղթերը, վոսկու, արծաթի արտասահմանյան վալյուտաները, տնային գործածության առարկաները, վաճառումը չարգելված պլտույքները և առհասարակ այն բոլոր առարկաները, վորոնք մասնավոր շրջանառությունից չեն հանվել։

Հեռագիր, ռադիո և պետական նշանակություն ունեցող այլ ձեռնարկությունները կարող են մասնավոր սեփականության առարկա դառնալ միայն կոնսեցիայի իրավունքով: Հակառակ բուրժուական սեփականության իրավունքին, մեր սեփականության իրավունքը բավականաչափ սահմանափակ է: Նախ՝ սեփականության իրավունքը թույլատրվում է օրենքով հաստատված սահմաններում և յերկրորդ սեփականության իրավունքը իրա մեջ պետք է պարունակի սոցիալական արժեքի տարրերը և օգտագործվի համապատասխան ձևով:

Քաղաքացիական օրենսգիրքը նախագծում է մի շարք հաստատություններ, վորոնք վորոշ չափով մասնավոր սեփականություն են ընդգրկում՝ շինարարական իրավունքը, ժառանգության և կտակի իրավունքը, գրավի իրավունքը և այլն:

Ապա գալիս է պարտավորական իրավունքների սիստեմատիզացիան, առևտուրը, կապալ, յերաշխավորություն, ընկերակցության այլազան տեսակները և այլն: Մեր պարտավորական իրավունքի բնորոշ կողմն այն է, վոր պետական շահերը գերակշռում են մասնավոր շահերին, և հակառակ բուրժուական իրավունքի՝ մեր իրավունքը թույլ է տալիս պետության միջոցով ջնջել մասնավոր մարդկանց այն փոխհարաբերությունները, վորոնք վնաս են հասցնում պրոլետարական պետության տնտեսական օրգանիզմին:

## ԴԱՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վորպես հետևանք այս զարգացման, զարգանում է նաև դատակազմությունը և ընդունում համապատասխան ձև:

Խորհրդային Հայաստանի Արդժողկոմատի 1920թ. դեկտեմբերի 1-ի հրամանով վերացվեց Հայաստանի սահմաններում գոյություն ունեցող հին դատաստանական ամբողջ սիստեմն ու կարգը: Հին իրավական նորմաների իսպառ վոչնչացման բնական հետևանքն էր դա: Հեղափոխական յերկրի դատաստանական սիստեմը պետք էր, վոր համապատասխաներ հեղափոխության ընդհանուր վոգուն, պետք է մտնեին աշխատավոր զանգվածներին և հնարավորություն տար նրանց մասնակցելու և դատելու իրենց հեղափոխական խղճով և գիտակցությամբ:

Այս հիման վրա Արդժողկոմատի 1920 թ. դեկտեմբերի 22-ի հրամանով հաստատվեցին ժողովրդական դատարանները: Դատավոր և ատենակալները ընտրվեցին աշխատավորական տարրերից՝



վորպեսզի դատարանում իշխի աշխատավորական տարրերի շահերն ու ձգտումները միայն: Միաժամանակ հաստատվեցին քննչական հանձնաժողովներ, ժողովրդական դատարաններին կից ժողքննիչների նախագահությամբ: Հետագայում վերացվեցին քննչական հանձնախմբերը և նրանց փոխարինեց միանձնյա քննիչ: Ժողդատարանը ղեկավարվեց 1921 թ. հունիսի կանոնադրությամբ:

Հին դատարանների վերացման հետ վերացվեցին նաև հին տիպի դատախազությունն ու փաստաբանությունը, վորոնց տեղ հաստատվեց իրավապաշտպանների կոլեգիա, ապա հասարակական մեղադրողներ և պաշտպաններ, վորպեսզի ավելի ժամանակաշրջանում մասսաները ծանոթանան Խորհրդային արդարադատության. աշխատավոր մասսաների դատելու իրավունքին միացվեց նաև մեղադրելու և պաշտպանելու իրավունքը:

1921 թ. հունվարի 15-ի դեկրետով Հայհեղկոմը հիմք դրեց գերագույն Հեղափոխական Տրիբունալների: Ըստ դեկրետին հեղափոխական Տրիբունալների տված մահվան պատիժը պիտի հաստատվեր Հայհեղկոմի կողմից: Յերևանում, Ալեքպոլում և Զանգեզուրում հաստատված հեղափոխական Տրիբունալները հանդիսացան Խորհրդային Արդարադատության ուժեղ և ձևակերպված հիմնարկություններ, Դատական Տրիբունը դարձավ Հեղափոխական սկզբունքի և իրավունքի Տրիբուն: Ժողովրդական մասսաները խորապես թափանցեցին սոցիալիստական խղճի և իրավագիտակցության և անցան նրա դասակարգային և քաղաքական ազդեցության շրջանակից ներս: 1922 թ. մարտի 3-ի Հայկենտգործկոմի դեկրետով վերացվեց Ալեք-Պոլի Հեղտրիբունալը, իսկ 1922 թ. հուլիսի 3-ի դեկրետով հիմնվեց վճռաբեկ կոլլեգիա Հեղտրիբունալի դատաքննիչների դեմ յեղած բեկման բողոքները և գանգատները քննելու համար:

Ժողդատավորների վճիռների դեմ բեկման բողոքներ և գանգատներ քննելու համար 1921 ապրիլից հետո հաստատվել եր Ժողովրդական Դատավորների Խորհուրդը: 1921 թ. սեպտեմբերի 21-ի վորոշումով հիմնվեցին ժողովրդական դատարանների նստաշրջաններ:

Սրանից բացի 1921 թ. նոյեմբերի 19-ի դեկրետով հիմնվեց Արդժողկոմատին կից բարձրագույն դատական վերհսկողությունը, վորը մեկ կողմից Խորհրդային օրենսդրության միակերպ և կանոնավոր գործադրության վրա պիտի հսկեր, մյուս կող-

մից Խորհրդային իշխանության քաղաքականության հիմունքների տեսակետից առաջնորդվելով՝ տան պիտի տա դատական հիմնարկություններին։

Դատակազմության այս սխեմով Հայաստանում Խորհրդային արդարադատության գործը կանոնավոր հիմունքների վրա դրվեց, բայց տնտեսական և իրավական նորագույն պայմանները հրամայողաբար թելադրեցին հարվածային խնդիր դարձնել դատական վերափոխման հարցը։ 1920 թ. հունիսի 29-ին Հայկենտգործկոմի վորոշմամբ ընդունվեց դատական պաշտպանությունը ու դատախազությունը. այս վերափոխման մեկ կողմն է միայն, պետք էր լրացնել թերին համաձայն վերամշակված ծրագրի, պետք էր հիմք դնել միասնական դատարանական սիստեմին, լրացնել օրինական նորմաները, հրատարակել քրեական և քաղաքացիական դատավարական օրենսգրքերը, քաղաքացիական օրենսգիրքը և ընդհանրապես հաստատուն նորմաներ տալ յերկրի ընդհանուր զարգացման հետևանք յեղող տնտեսական հասարակական իրավական նոր փոխ-հարաբերությունների համար։

Խոսք չի կարող լինել, վոր առաջիկային վերոհիշյալ ծրագիրները կգործնականանան, այժմ հեղափոխական օրինականությունը կյանքի մեջ է մտել. նոր օրենքների մշակումը ապացույց է այդ օրինականացման զարգացման։ Սոցիալիստական արդարադատության հիմքը դրված է, նրա բովանդակությունը ընդգծված է, արդեն կազմակերպված և միևնույն գաղափարի յերկու կողմերը՝ դատախազությունը և պաշտպանությունը, և տարակույս չի մնում դրանից հետո, վոր Արդժողկոմատը պիտի դառնա դատական հիմնարկությունը և Արդարադատության վրա վերին տեսչության մի հիմնարկություն. նա լինելու յե նոր օրենքների մշակույթի և օրենսդրության մի օրգան։

1923 թիվը պիտի լինի Խորհրդային օրինականության և իրավունքի 3-րդ ժամկետը յերբ կյանքում ամբողջովին պիտի կիրառվի իրականության ճանրի մեջ մտնող Հեղափոխական օրինականության լոզունգը։

---

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի հաշվետվությունը տպված է առանձին գըրքով։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/Ш. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0271639

40.280